թվայնացրել է 1915.info կայքը

ВЕНЕДИКТ ЕРОФЕЕВ

МОСКВА – ПЕТУШКИ

ՎԵՆԵԴԻԿՏ ԵՐՈՖԵԵՎ

ՄՈՍԿՎԱ–ՊԵՏՈՒՇԿԻ

ԳՐՔԵՐ ԱՐԳԵԼԿՍԾ
ԳՐՔԵՐ ԱՐԳԵԼ

ԳՐՔԵՐ ԱՐԳԵԼԿՍԾ
ԳՐՔԵՐ ԱՐԳԵԼԿՍԾ

Antares
«ԱՆՏԱՐԵՍ» ԱՌՈՒՄ ԳՐԱԿԱՆ

թվայնացրել է 1915.info կայքը

ՎԵՆԵԴԻԿՏ ԵՐՈՖԵԵՎ

ՄՈՍԿՎԱ–ՊԵՏՈՒՇԿԻ

ՎԱՍԻԼԻ ՌՈԶԱՆՈՎԸ ԷՔՍՑԵՆՏՐԻԿԻ ԱՉՔԵՐՈՎ

ԶՐՈՒՅՑՆԵՐ
ՎԵՆԵԴԻԿՏ ԵՐՈՖԵԵՎԻ ՀԵՏ

Երևան
«Անտարես»
2013

թվայնացրել է 1915.info կայքը

ՀՏԴ 821.161.1 Երոֆեև
ԳՄԴ 84Ռ
Ե 937

Թարգմանությունը՝
ՆԵՐՍԵՍ ԱԹԱԲԵԿՅԱՆԻ

Երոֆեև Վենեդիկտ
Ե 937 Մոսկվա-Պետուշկի: Վասիլի Ռոզանովը էքսցենտրիկի աչքերով: Զրույցներ Վ. Երոֆեևի հետ/ Վ. Երոֆեև: Թարգմ.՝ Ներսես Աթաբեկյան - Եր.: Անտարես, 2013., 188 էջ:

Ժողովածուն ներառում է 20-րդ դարի ռուս գրականության ամենաինքնատիպ ներկայացուցիչներից մեկի Վենեդիկտ Երոֆեևի ամենահայտնի ստեղծագործությունները՝ «Մոսկվա-Պետուշկի» վիպակը և «Վասիլի Ռոզանովը էքսցենտրիկի աչքերով» էսսեն, ինչպես նաև երկու հարցազրույց մեծ գրողի հետ:

ՀՏԴ 821.161.1 Երոֆեև
ԳՄԴ 84Ռ

ISBN 978-9939-51-468-0

© Editions Albin Michel - Paris, 1976
© Անտարես, 2013
© Աթաբեկյան Ն., թարգմ. համար, 2013

թվայնացրել է 1915.info կայքը

ՄՈՍԿՎԱ–ՊԵՏՈՒՇԿԻ

ՎԻՊԱԿ

թվայնացրել է 1915.info կայքը

ՀԵՂԻՆԱԿԻ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ

«Մոսկվա–Պետուշկիի» առաջին հրատարակությունը, քանզի ընդամենը մեկ օրինակ էր, արագ սպառվեց: Այդ ժամանակից բազմաթիվ հանդիմանություններ եմ ստացել «Մուրճ ու Մանգաղ–Կարաչարովո» գլխի համար ու՝ լրիվ անտեղի: Առաջին հրատարակության առաջաբանում բոլոր աղջիկներին զգուշացրել էի, որ «Մուրճ ու Մանգաղ–Կարաչարովո» գլուխը պետք է առանց կարդալու բաց թողնել, քանի որ «Ու ձեռաց խմեցի» արտահայտությանը էջուկես զտարյուն հայհոյանք է հաջորդում, զգուշացրել էի, որ ամբողջ գլխում ոչ մի բարեպատշաճ բառ չկա, բացի «Ու ձեռաց խմեցի» արտահայտությունից: Այդ բարեխիղճ ծանուցումով հասա միայն նրան, որ բոլոր ընթերցողները, և աղջիկները հատկապե՛ս, միանգամից վրա էին պրծնում «Մուրճ ու Մանգաղ–Կարաչարովո» գլխին՝ նույնիսկ նախորդ գլուխները չկարդալով, նույնիսկ «Ու ձեռաց խմեցի» դարձվածքը չկարդալով: Դրա համար էլ նպատակահարմար գտա երկրորդ հրատարակության «Մուրճ ու Մանգաղ–Կարաչարովո» գլխից դուրս նետել ամբողջ հայհոյանքը: Այդպես ավելի լավ կլինի, քանի որ, նախ՝ ինձ կսկսեն անընդմեջ կարդալ, և երկրորդ՝ իրենց վիրավորված չեն զգա:

թվայնացրել է 1915.info կայքը

Վադիմ Տիխոնովին
Իմ սիրելի առաջնեկին է նվիրում
հեղինակն այս ողբերգական էջերը

ՄՈՍԿՎԱ: ԿՈՒՐՍԿԻ ԿԱՅԱՐԱՆԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Բոլորն ասում են՝ Կրե՛մլ, Կրե՛մլ: Բոլորից լսում եմ նրա մասին, իսկ ինքս ոչ մի անգամ չեմ տեսել: Քանիցս արդեն (հազար անգամ) հարբած կամ խումհարի մեջ կտրել եմ Մոսկվան հյուսիսից հարավ, արևմուտքից՝ արևելք, մի ծայրից մյուսը, միջաթափանց և ինչպես պատահի,- ու ոչ մի անգամ չեմ տեսել Կրեմլը:

Ահա երեկ էլ նորից չտեսա,- բայց չէ՞ որ մի ամբողջ երեկո պտույտ էի տալիս այդ վայրերի շուրջը ու չասեմ թե շատ էի խմած. հենց Սավելովսկի իջա, սկզբի համար մի բաժակ ընդախոտի օղի խմեցի, քանզի սեփական փորձից գիտեմ, որ իբրև առավոտվա դեկոխտ՝ մարդիկ ավելի լավ բան դեռ չեն հորինել:

Այդպե՛ս: Մի բաժակ ընդախոտի օղի: Իսկ հետո,- Կալյանսկին,- էլի մի բաժակ, բայց ոչ թե ընդախոտի, այլ՝ գինձօղի: Ծանոթներիցս մեկն ասում էր, որ գինձի օղին մարդու վրա հակահումանիստական ազդեցություն է ունենում, այսինքն՝ բոլոր անդամներն ամրացնելով՝ թուլացնում է հոգին: Ինձ, չգիտես ինչու, հակառակը պատահեց, այսինքն հոգիս ծայրաստիճան ամրապնդվել էր, իսկ անդամներս թուլացան, բայց համաձայն եմ, որ դա էլ հակահումանիստական է: Ուստի, հենց այնտեղ՝ Կալյանսկիում, ավելացրի էլի երկու գավաթ ժիգուլևյան գարեջուր ու շշից՝ ալբ-դը-դեսերտ:

Դուք, իհարկե, կհարցնեք, իսկ հետո՞, Վե՛նիչկա, հետո՞ ինչ խմեցիր: Ճիշտն ասած, ես էլ կարգին չգիտեմ՝ ինչ խմեցի: Հիշում եմ՝ Զեխովի փողոցում երկու բաժակ որսորդական խմեցի: Բայց չէի կարող, չէ՞, առանց խմելու հատել Սադովոյե կոլցոն: Չէի՞ կարող: Նշանակում է՝ էլի ինչ-որ բան խմել եմ:

թվայնացրել է 1915.info կայքը

Իսկ հետո ուղևորվեցի Կենտրոն, քանի որ միշտ այդպես է. հենց փնտրում եմ Կրեմլը, անխուսափելիորեն ընկնում եմ Կուրսկի կայարան: Ճիշտն ասած, ինձ հենց պետք էր, որ Կուրսկի կայարան գնայի, ոչ թե՝ կենտրոն, բայց համենայնդեպս կենտրոն գնացի, որ գոնե մի անգամ տեսնեմ Կրեմլը. մեկ է, մտածում եմ, ոչ մի Կրեմլ էլ չեմ տեսնի, այլ ուղիղ կընկնեմ Կուրսկի կայարան:

Հիմա վիրավորանքից լացս գալիս է: Նրա համար չեմ, իհարկե, վիրավորվել, որ երեկ այդպես էլ Կուրսկի կայարան չհասա (դատարկ բան է. երեկ չհասա, այսօր կհասնեմ): Ու հաստատ ոչ նրա համար, որ առավոտն արթնացա ինչ-որ մեկի անհայտ-անծանոթ շքամուտքում (պարզվում է՝ երեկ շքամուտքում նստել եմ աստիճաններին, ներքևից քառասներորդին, սրտիս սեղմել փոքրիկ ճամպրուկս,- և այդպես էլ քնել եմ): Ո՛չ, դրա համար չեմ վիրավորված: Վիրավորված եմ ահա թե ինչի համար. հենց նոր հաշվեցի, որ Չեխովի փողոցից մինչև այդ շքամուտքը էլի վեց ռուբլի խմել եմ,- բայց ի՞նչ ու որտե՞ղ եմ խմել և ի՞նչ հաջորդականությամբ, ի բարօրությո՞ւն ինձ եմ խմել, թե՝ ի չարս: Ոչ ոք չգիտի և արդեն երբեք չի իմանա: Չգիտենք, չէ՞, մինչ օրս՝ Բորիս արքա՞ն սպանեց արքայազն Դմիտրիին, թե՝ հակառակը:

Ի՞նչ շքամուտք էր. մինչ օրս գաղափար չունեմ. բայց հենց այդպես էլ պիտի լինի: Ամեն ինչ է այդպես: Աշխարհում ամեն բան պիտի կատարվի դանդաղ և անստույգ, որ մարդը գոռոզանալ չկարողանա, որ մարդը լինի տխուր ու շլմորած:

Ես բաց օդի ելա, երբ լույսն արդեն բացվել էր: Բոլորը գիտեն,- բոլորը, որ երբևէ ուշակորույս հայտնվել են շքամուտքում, իսկ լուսաբացին դուրս եկել այնտեղից, բոլորը գիտեն, թե ի՞նչ բեռ են տարել իրենց սրտում օտար շքամուտքի այդ քառասուն աստիճաններն ի վեր և ինչ բեռ են հանել այնտեղից:

Ոչի՞նչ, ոչի՞նչ,- ասացի ինձ,- ոչի՞նչ: Ահա դեղատունը, տեսնո՞ւմ ես: Իսկ այնտեղ, ահա, դարչնագույն բաճկոնով հարիֆը մայթն է ճանկոտում: Դա էլ ես տեսնում: Դե, ուրեմն, հանգստացի՛ր: Ամեն

թվայնացրել է 1915.info կայքը

ինչ՝ կարգին և ըստ հարկի է: Եթե ուզում ես ձախ գնալ, Վե՛նիչկա, գնա ձախ, ես քեզ ոչինչ չեմ պարտադրում: Եթե ուզում ես գնալ աջ, աջ գնա:

Ես աջ գնացի՝ փոքր-ինչ օրորվելով ցրտից ու վշտից, այո՛, ցրտից ու վշտից: Օ՜, այգաբացի այդ բեռը՝ մարդու սրտում: Օ՜, պատրականությունն աղետի: Օ՜, անուղղելիություն: Ի՞նչն է ավելի շատ այդ բեռան մեջ, որը դեռ ոչ ոք չի կոչել իր իսկական անունով: Ի՞նչն է ավելի շատ՝ կաթվա՛ծը, թե՛ սրտխառնուքը: Ջղերի հյուծո՛ւմը, թե՛ մահացու թախիծը՝ ինչ-որ տեղ, սրտի շրջակայքում: Իսկ եթե բոլորը հավասար չափով, ապա ի՞նչն է, այնուամենայնիվ, շատ՝ կարկամա՛խտը, թե՛ տենդը:

Ոչի՛նչ, ոչի՛նչ,- ասացի ինձ,- փակվի՛ր քամու դեմ ու կամա՛ց գնա: Ու ընդհատ շնչիր: Այնպես շնչիր, որ ոտքերդ փաթ չընկնեն: Որևէ տեղ գնա: Մեկ է, թե՝ ուր: Եթե նույնիսկ ձախ գնաս՝ կընկնես Կուրսկի կայարան, եթե՝ ուղիղ, մեկ է՝ Կուրսկի կայարան: Որեմն գնա աջ, որ հաստատ այնտեղ ընկնես: Օ՜, ունայնություն:

Օ՜, փութանցություն: Օ՜, ամենից ուժատ ու ամոթալի ժամանակ՝ իմ ժողովրդի կյանքում՝ լուսաբացից մինչև խանութների բացվելը ժամանակ: Քանի՜ ճերմակ հերք է ներհյուսել նա ամեն մեկիս մեջ: Գնա՛, Վե՛նիչկա, գնա՛:

ՄՈՍԿՎԱ: ԿՈՒՐՍԿԻ ԿԱՅԱՐԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿ

Դե ահա, գիտեի, չէ՞, ինչ եմ ասում. աջ գնաս՝ անպայման կընկնես Կուրսկի կայարան: Ձանձրալի էր քեզ համար այդ նրբանցքներում, Վե՛նիչկա, եռուզե՛ռ էիր ուզում, ուրեմն ստացի՛ր եռուզեռդ:

- Վե՛րջ տուր,- ինձ դեն քշեցի ինձնից,- մի՞թե քո եռուզեռն է ինձ պետք: Քո մարդի՛կ են հարկավոր միթե: Չէ՞ որ Փրկիչը նույնիսկ, և անգամ հարազատ Մայրիկին, ասում էր. «Ի՞նչ կապ ունեմ քեզ հետ»:

թվայնացրել է 1915.info կայքը

Առավել ևս ես՝ ի՞նչ գործ ունեմ ես այդ փութագարների ու տաղտկալիների հետ:

Ավելի լավ է հենվեմ սյանն ու աչքերս կկոցեմ, որ սիրտս այսպես չխառնի...

– *Իհարկե, Վենիչկա, իհարկե,*– բարձրերում մեղմ ու քնքուշ երգեց ինչ-որ մեկը, այնպե՛ս մեղմ, այնպե՛ս քնքուշ,– *կկոցիր, որ այդպես չխառնի:*

Օ՛, ճանաչեցի: Դարձյալ նրանք են: Հրեշտակները Տիրոջ: Այդ դո՛ւք եք նորից:

– *Դե, իհարկե, մենք ենք,*– ու կրկին՝ այնպե՛ս քնքուշ:

– Գիտե՞ք ինչ, հրեշտակնե՛ր,– ասացի ես՝ նույնպես կամացո՛ւկ, կամացո՛ւկ:

– *Ինչ,*– հարցրին հրեշտակները:

– Ծանր է ինձ համար...

– *Այո, մենք գիտենք, որ ծանր է,*– գեղգեղացին հրեշտակները:– Իսկ դու ման արի՝ կթեթևանաս, կես ժամից էլ խանութը կբացվի, օղին այնտեղ, ճիշտ է, իննից է, բայց կարմիրից հենց միանգամից էլ կտան:

– Կարմիրի՞ց:

– *Կարմիրի՛ց,*– երգաձայն կրկնեցին Տիրոջ հրեշտակները:

– Սառը-սա՞ռը...

– *Իհարկե՝ սառը...*

Օ՛, որքա՛ն, որքա՛ն հուզված էի ես...

– Ասում եք՝ ման արի, ման արի՝ կթեթևանաս: Բայց ախր քայլելս էլ չի գալիս... Ինքներդ էլ գիտեք, թե քայլելն ինչ է իմ վիճակում...

Այս խոսքիս վրա սկվեցին հրեշտակները: Ու հետո նորից գեղգեղացին.

– *Իսկ դու ահա թե ինչ արա. մտիր կայարանի ռեստորանը: Գուցե այնտե՛ղ որևէ բան ճարվի: Երեկ իրիկուն այնտեղ խերես կար: Չէին կարող, չէ՞, մի երեկոյի ընթացքում ամբողջ խերեսը խմել...*

– Այո՛, այո՛: Կգնամ: Անհապաղ կգնամ, կպարզեմ: Շնորհակալությո՛ւն, հրեշտակնե՛ր:

թվայնացրել է 1915.info կայքը

Եվ նրանք այնպես մե՛ղմ-մե՛ղմ ձայնարկեցին.

- *Մնո՛ւշ լինի, Վենյա...*

Իսկ հետո այնպե՛ս քնքուշ.

- *Զարժի՛...*

Ինչ լա՛վն են նրանք... Դե ինչ... Գնալ՝ ուրեմն գնալ: Ինչ լավ է, որ երեկ երեկոյան ընծաներ առա,- հո առանց ընծաների չէի՞ գնա Պետուշկի: Ոչ մի կերպ չի կարելի առանց ընծաների գնալ Պետուշկի: Այդ հրեշտակներն էին, որ ինձ հիշեցրին ընծաների մասին, որովհետև նրանք, ում համար դրանք գնվել են, իրենք են հրեշտակներ հիշեցնում: Լավ է, որ գնեցի... Իսկ երեկ երեկոյան ե՞րբ գնեցիր... Հիշի՛ր... Գնա ու հիշիր...

Ես երեկ անցնում էի հրապարակով,- ավելի ճիշտ՝ ոչ թե անցնում, այլ քարշ էի գալիս: Երկու թե երեք անգամ կանգ առա ու քարացա տեղում, որ սրտխառնոցս զսպեմ: Չէ որ մարդը միայն ֆիզիկական կողմ չունի, նաև հոգևոր կողմ ունի և ունի ավելին,- միստիկական, գերհոգևոր կողմ: Եվ ահա ամեն վայրկյան սպասում էի, որ հրապարակի կենտրոնում սիրտս կսկսի խառնել այդ երեք կողմից: Ու նորից կանգ էի առնում, ու նորից քարանում:

- Եվ, ուրեմն, երեկ երեկոյան ե՞րբ գնեցի ընծաներս: Որսորդականի՞ց հետո: Ո՛չ, որսորդականից հետո ցավս ընծաները չէին: Որսորդականի առաջին ու երկրորդ բաժակների արանքո՛ւմ: Դարձյալ ոչ: Դրանց արանքում մի երեսուն վայրկյանանոց դադար կար, իսկ ես գերմարդ չեմ, որ երեսուն վայրկյանում որևէ բան հասցնեմ: Ասենք, գերմարդն էլ կտապալվեր որսորդականի առաջին բաժակից հետո՝ երկրորդին չհասած... Ուրեմն ե՞րբ... Ողորմա՛ծ Աստված, որքա՛ն առեղծվածներ կան աշխարհում: Գաղտնիքի անթափանց վարագույր: Մինչև գինձողին կամ գարեջրի ու ալբ-դը-դեսերտի արանքում:

թվայնացրել է 1915.info կայքը

ՄՈՍԿՎԱ: ԿՈՒՐՍԿԻ ԿԱՅԱՐԱՆԻ ՌԵՍՏՈՐԱՆ

Ո՛չ, միայն թե ոչ գարեջրի և ալբ-դը-դեսերտի արանքում, այնտեղ հաստատ ոչ մի դադար չկար: Իսկ այ մինչև գինձի օղին՝ շատ հնարավոր է: Ավելի շուտ այսպես. ընկույզը գնել եմ մինչ այդ, իսկ կոնֆետներն՝ արդեն հետո: Գուցե և հակառակը. գինձի օղին խմելով՝ ես...

– Սպիրտային ոչինչ չունենք,– ասաց բարապանը: Ու ոտից գլուխ չափեց ինձ, ինչպես որևէ սատկած թռչնակի կամ կեղտոտ գորտնուկը կզննեն:

Սպիրտային ոչի՛նչ չկա:

Չնայած կծկվեցի հուսահատությունից, բայցևայնպես, հասցրի մրմնջալ, որ բոլորովին էլ դրա համար չեմ եկել: Քի՛չ բան կա, որի համար կարող էի գալ: Գուցե Պերմի ճեպընթացը չի կամենում մեկնել Պերմ, և ահա այստեղ եմ՝ բեֆստրոգանով ուտելու և լսելու Իվան Կոզլովսկուն կամ «Սափրիչից» որևէ բան:

Ճամպրուկս համենայնդեպս հետս վերցրի և, ինչպես նորերս շքամուտքում, սեղմեցի սրտիս՝ սպասելով, որ պատվերս բերեն:

Սպիրտային ոչի՛նչ չկա: Երկնայի՛ն տիրուհի: Չէ որ, եթե հավատալու լինենք հրեշտակներին՝ խերեսն այստեղ անսպառ է: Իսկ հիմա՝ միայն երաժշտություն, ասենք՝ երաժշտությունն էլ մի տեսակ շնական գեղգեղանքներ ունի: Չէ որ սա իսկապես Իվան Կոզլովսկին է երգում. այդ ձայնից գարշելի ձայն չկա: Բոլոր երգիչների բոլոր ձայները նույնքան գարշելի են, բայց յուրաքանչյուրը՝ յուրովի: Դրա համար էլ ես դրանք հեշտ եմ տարբերակում... Դե, իհարկե, Իվան Կոզլովսկին է... «Օ՛-օ՛-օ՛, գավաթն իմ նախնիների... Օ՛-օ՛-օ՛, թող հագենամ՝ քեզ նայելով գիշերաստղերի լույսի ներքո»... Դե, իհարկե, Իվան Կոզլովսկին է... «Օ՛-օ՛-օ՛, ինչո՞ւ եմ այսպես հմայված քեզնով... Ինձ մի՛ վանիր»...

– Որևէ բան պատվիրելո՞ւ եք:

– Իսկ դուք ի՞նչ է՝ միայն երաժշտությո՞ւն ունեք:

– Ինչու «միայն երաժշտություն»: Բեֆստրոգանով կա, հրուշակեղեն, կուրծ...

թվայնացրել է 1915.info կայքը

Սիրտս նորից խառնեց:

- Իսկ խերե՞ս:

- Իսկ խերես չկա:

- Հետաքրքիր է՝ կուրծ կա, իսկ խերես՝ ոչ:

- Շա՛ա՛ա՛տ հետաքրքիր է: Այո՛: Խերես չկա, իսկ կուրծ կա:

Եվ ինձ հանգիստ թողեցին: Ես, որ սիրտս շատ չխառնի, սկսեցի ուսումնասիրել գլխավերևս կախված ջահը:

Լավ ջահ է: Բայց՝ չափից դուրս ծանր: Եթե հիմա պոկվի ու ընկնի մեկնումեկի գլխին, անտանելի ցավոտ կլինի: Չէ՛, երևի նույնիսկ ցավոտ էլ չլինի, քանի դեռ պոկվել ու թռչում է, նստած ես ու ոչինչ չկասկածելով՝ խերես ես խմում: Իսկ որ հասավ քեզ՝ արդեն ողջ չես լինի: Շա՛տ ծանր միտք է... Դու նստած ես, իսկ նա՝ գլխի՛դ, վերևի՛ց, ջա՛հը: Շա՛տ ծանր միտք է...

Բայց՝ ոչ, ինչո՞ւ է ծանր... Եթե, ենթադրենք, խերես ես խմում, եթե նստած ես ու դեռ խումհարաթող չես եղել, իսկ քեզ խերես չեն տալիս, և այդ պահին էլ ջահը՝ գլխի՛դ,- այ դա արդեն ծանր է: Շա՛տ ճնշող է այդ միտքը: Միտք, որ ամեն մեկի ուժի բանը չէ: Հատկապես՝ նախորդ օրվա խմածությունը վրադ...

Իսկ դու կհամաձայնեի՞ր, եթե այսպիսի բան առաջարկեին. մենք քեզ, ասենք, հիմա 800 գրամ խերես ենք բերում ու դրա դիմաց գլխիդ վերևը արձակում ենք ջահը և...

- Դե ինչ, որոշեցի՞ք, որևէ բան վերցնելո՞ւ եք:

- Խնդրում եմ խերես բերեք: 800 գրամ:

- Բայց դու լա՛վ-լավ ես, ոնց որ տեսնում եմ: Ասվեց, չէ՞, մայրենի լեզվով՝ խերես չունե՞նք:

- Դե... ես կսպասեմ... երբ որ լինի...

- Սպասի՛, սպասի՛... Կտեսնես, բա չէ՞... Հրես քեզ համար խերես կլինի...

Եվ ինձ նորից հանգիստ թողեցին: Զզվանքով նայեցի այդ կնոջ ետևից: Հատկապես նրա սպիտակ գուլպաներին՝ առանց որևէ կարի. կարն ինձ գուցե և հաշտության տաներ, գուցե բեռնաթափեր հոգիս ու խիղճս...

թվայնացրել է 1915.info կայքը

Ինչո՞ւ են դրանք բոլորն այդքան կոպիտ: Ինչո՞ւ: Եվ կոպիտ, հատկապես կոպիտ են այն պահերին, երբ չի կարելի կոպիտ լինել, երբ խումհարից մարդու բոլոր ջղերը կախկխված են, երբ նա փոքրոգի է ու կծկված: Ինչո՞ւ է այդպես: Օ՜, եթե ամբողջ աշխարհը, եթե ամեն ոք աշխարհում այնպիսին լիներ, ինչպիսին ես եմ հիմա՝ կծկված ու վախլուկ, և նույնքան չհավատար՝ ոչ իրեն, ոչ իր տեղի լրջությանը այս երկնքի ներքո,- ի՜նչ լավ կլիներ: Ո՛չ մի խանդավառում, ո՛չ մի սխրանք, ո՛չ մի մոլեգնում,- համատարած փոքրոգություն: Ես կհամաձայնեի այս երկրի վրա մի ամբողջ հավերժություն ապրել, եթե ինձ նախ ցույց տային մի անկյուն, ուր միշտ չէ, որ սխրանքը տեղ ունի: «Համատարած փոքրոգություն»,- չէ՞ որ դա փրկությունն է բոլոր աղետներից, դա համադարման է, ստորոգյալն է բարձրագույն կատարելության: Իսկ ինչ վերաբերում է խառնվածքի գործնական նկարագրին...

– Այստեղ ո՞վ էր խերես ուզում...

Գլխավերևս՝ երկու կին ու մի տղամարդ, երեքն էլ ճերմակազգեստ: Հայացքս հառեցի նրանց,- օ՜, աչքերիս մեջ հիմա որքան այլանդակություն ու պղտորություն կա. ես դա հասկացա նրանց հայացքից, նրանց աչքերում կարդացի, քանզի նրանց աչքերում էր արտացոլվել և՛ այդ պղտորությունը, և՛ այլանդակությունը... Ես կուչ եկա հոգեկորույս...

– Դե, ես, ասենք... համարյա չեմ էլ խնդրում: Դե, թող որ խերես չկա, ես կսպասեմ... ես այնպես...

– Ինչպե՜ս թե՝ «այնպես»... Այդ ինչի՞ն «կսպասեք»...

– Դե, համարյա ոչ մի բանի... Ես պարզապես Պետուշկի եմ գնում՝ սիրած աղջկաս մոտ (հա՜-հա՜, «սիրած աղջկաս մոտ»), ահա ընծաներ եմ գնել...

Նրանք՝ դահիճները, լուռ սպասում էին, թե էլ ինչ եմ ասելու:

– Ես, ախր, Սիբիրից եմ, որբ եմ ես... Ու պարզապես, որ սիրտս այսպես չխառնի... խերես եմ ուզում...

Իզուր նորից հիշեցի այդ խերեսը, իզո՛ւր: Դա միանգամից պայթեցրեց նրանց: Երեքով բռնեցին թևատակերիցս ու դահիճի

թվայնացրել է 1915.info կայքը

միջով,- օ՛, ցա՛վը, ցա՛վը նման խայտառակության,- դահլիճի միջով տարան ինձ ու դուրս շպրտեցին դռներից: Ետևիցս՝ ճամպրուկը՝ ընծաներով,- նույնպես շպրտեցին:

Դարձյալ բաց օդի: Օ՛, դատարկություն: Օ՛, գազանային երախը կեցության:

ՄՈՍԿՎԱ: ԽԱՆՈՒԹՈՎ ԴԵՊԻ ԳՆԱՑՔԸ

Թե ինչ եղավ հետո,- ռեստորանից մինչև խանութ և խանութից մինչև գնացքը,- մարդկային լեզուն չի կարող արտահայտել: Ես էլ չեմ փորձի: Իսկ եթե փորձեն հրեշտակները, պարզապես լաց կլինեն, և արտասուքը չի թողնի խոսել:

Ավելի լավ է, եկեք այսպես անենք. եկեք մեկ րոպե լռությամբ հարգենք այդ երկու մահկանացու ժամերը: Հիշի՛ր, Վե՛նիչկա, այդ ժամերը: Ամենախանդավառ, ամենակայծացայտ օրերին քո կյանքի՝ հիշիր նրանց մասին: Երանության և արբեցման պահերին չմոռանաս նրանց: Դա չպիտի՛ կրկնվի: Ես դիմում եմ բոլոր հարազատներին ու մերձավորներին, բարի կամքի տեր բոլոր մարդկանց, ես դիմում եմ բոլոր նրանց, ում սիրտը բաց է պոեզիայի և գթասրտության համար:

Թողե՛ք ձեր գործերը: Ոտքի՛ կանգնեք ինձ հետ, և հարգենք մեկ րոպե լռությամբ այն, ինչն անարտահայտելի է: Եթե ձեռքի տակ որևէ դեն ընկած շչակ ունեք՝ հնչեցրե՛ք:

Այդպե՛ս: Ես էլ եմ կանգնում... Ուղիղ մեկ րոպե, պղտոր աչքերս հառած կայարանի ժամացույցին, ես կանգնում եմ ինչպես արձանասյունը Կուրսկի կայարանի հրապարակի կենտրոնում: Իմ մազերը փողփողում են քամուց, մերթ բիզ-բիզ են կանգնում, մերթ փողփողում նորից: Տաքսիները շրջհոսում են ինձ բոլոր չորս կողմերից: Մարդիկ՝ նույնպես, և այնպես ապշած են նայում. մտածում են երևի՝ քանդակե՞նք սրան հենց այսպես, իբրև խրատ հնագույն ժողովուրդներին, թե՛ չքանդակենք:

թվայնացրել է 1915.info կայքը

Եվ այդ լռությունը խախտում է միայն խռպոտ կանացի բասը, որ հորդում է ոչմիտեղից.

– Ուշադրությո՛ւն: Ժամը 8-ն անց 16 րոպեին գնացքը չորրորդ փակուղուց մեկնում է Պետուշկի: Կանգառները՝ Մուրճ ու Մանգաղ, Զուխլինկա, Ռեուտովո, Երկաթուղային, այնուհետև՝ բոլոր բնակավայրերում, բացի Եսինոյից:

Իսկ ես դեռ կանգնած եմ:

– Կրկնում եմ...

Դե, ահա և վերջ: Ռոպեն անցավ: Հիմա երևի բոլորդ կհարձակվեք վրաս՝ հարցնելով. «Չէ՞ որ խանութից ես գալիս, Վե՛նիչկա»:

– Այո,– ասում եմ ձեզ,– խանութի՛ց:– Ու շարունակում եմ քայլել դեպի կառամատույց՝ գլուխս ձախ ուսիս հակած:

– Քո ճամպրուկը հիմա ծանրացած է: Այո՞: Իսկ սրտումդ սրինգն է գեղգեղում: Ճիշտ չէ՞:

– Դե, նայա՛ծ, նայա՛ծ,– ասում եմ՝ գլուխս աջ ուսիս հակելով:– ճամպրուկս իսկապես շատ ծանր է: Իսկ սրնգի մասին խոսելը վաղ է դեռ:

– Համենայնդեպս, Վե՛նիչկա, համենայնդեպս՝ ի՞նչ ես առել: Սարսափելի հետաքրքիր է:

– Ես հասկանում եմ, որ հետաքրքիր է: Հիմա, հիմա կթվարկեմ. նախ՝ երկու շիշ կուբանյան, հատը երկուս ու վաթսուներկուսով, ընդամենը՝ հինգ ու քսանչորս: Հետո՝ երկու հատ քառորդանոց ռուսական, հատը՝ մի ռուբլի վաթսունչորս, ընդամենը՝ հինգ ու քսանչորս, գումարած երեք ու քսանութ: Ութ ռուբլի հիսուներկու կոպեկ: Եվ էլի կարմիրից: Հիմա կհիշեմ: Հա՛, վարդագույն թունդ, մեկ ռուբլի երեսունյոթով:

– Այդպե՛ս-այդպե՛ս-այդպե՛ս,– ասում եք դուք,– և ընդամե՛նը: Չէ՞ որ դա սարսափելի՛ հետաքրքիր է:

– Հիմա ձեզ կասեմ ընդհանուր արդյունքը... Ընդամենը՝ ինը ռուբլի ութսունինը կոպեկ,– ասում եմ ես՝ ոտքս կառամատույցին դնելով:– Բայց դա այնքան էլ ընդամենը չէ: Երկու հատ բուտերբրոդ էլ եմ առել, որ ետ չտամ...

թվայնացրել է 1915.info կայքը

- Վե՛նիչկա, ցանկանում էիր ասել՝ «սիրտս չխառնի»:

Ոչ, ինչ ասացի՝ ասացի: Առաջին բաժինն առանց մի բան ծամելու ընդունել չեմ կարողանում, որովհետև կարող է ետ տամ: Իսկ ահա երկրորդն ու երրորդը կարող եմ իրագլխու էլ խմել, որովհետև սիրտս կարող է և խառնի, բայց արդեն ոչ մի դեպքում ետ չեմ տա: Եվ այդպես՝ մինչև ինը: Իսկ այդ ժամանակ նորից բուտերբրոդի կարիք կլինի:

- Ինչո՛ւ, նորի՛ց սիրտդ կխառնի:

- Չէ, խառնելն արդեն ոչ մի դեպքում չի խառնի, բայց հաստատ ետ կտամ:

Դուք, իհարկե, այս խոսքիս վրա գլուխներդ եք օրորում: Ես նույնիսկ տեսնում եմ այստեղից՝ թաց կառամատույցից, թե ինչպես եք բոլորդ, սփռված իմ երկրով մեկ, օրորում գլուխներդ ու սկսում հեգնել.

- Ինչ բա՛րդ է այդ ամենը, Վե՛նիչկա, և ինչքա՛ն նուրբ:

- Էն էլ ո՛նց:

- Մտածողության որպիսի՛ հստակություն: Եվ ընդամենն այդքա՞նը: Ընդամենը այդքա՛ն է քեզ պետք երջանիկ լինելու համար: Եվ ուրիշ ոչի՞նչ:

- Այսինքն, ինչպես թե ոչինչ,- ասում եմ՝ մտնելով վագոն:- Եթե ավելի շատ փող ունենայի, գարեջուր ու մի երկու շիշ պորտվեյն էլ կվերցնեի, բայց...

Դուք այստեղ պարզապես սկսում եք տնքալ.

- Օ՛, Վե՛նիչկա, օ՛-օ՛-օ՛, պարզամիտ...

Դե, ինչ կա որ: Թող որ՝ պարզամիտ, ասում եմ: Ու դրանով էլ փակում եմ մեր խոսակցությունը: «Թող որ պարզամիտ»: Եվ այլևս չեմ պատասխանում ձեր հարցերին: Ավելի լավ է՝ նստեմ՝ ճամպրուկը սրտիս սեղմած՝ ու լուսամուտից դուրս նայեմ: Այ այսպես: «Թող որ պարզամիտ»:

Իսկ դուք ձեռ չեք քաշում.

- Ի՞նչ է, նեղացա՞ր:

- Չէ,- պատասխանում եմ:

թվայնացրել է 1915.info կայքը

– Մի նեղանա: Մենք քո լավն ենք ուզում: Միայն թե ինչո՞ւ ես դու, հիմա՛ր, շարունակ սրտիդ սեղմում ճամպրուկը: Որ այնտեղ օղի կա, հա՞:

Այստեղ իսկապես վիրավորվում եմ. օղին ի՞նչ կապ ունի:

– Քաղաքացի ուղևորնե՛ր, մեր գնացքը մեկնում է մինչև Պետուշկի կայարան: Կանգառները՝ Մուրճ ու Մանգաղ, Զուխլինկա, Ռեուտովո, Երկաթուղային, այնուհետև՝ բոլոր բնակավայրերում, բացի Եսինոյից:

Իսկապես, ի՞նչ կապ ունի օղին: Տեսնում եմ, որ օղուց բացի ուրիշ ոչնչի մասին չեք կարողանում խոսել: Խելքներդ առել է էդ օղին: Ես ախր ռեստորանում էլ, եթե կուզեք, սեղմում էի սրտիս, իսկ մեջը դեռ օղի չկար: Եվ շքամուտքում էլ, եթե հիշում եք, սեղմում էի, իսկ այնտեղ դեռ օղու հոտ անգամ չկար... Եթե ուզում եք ամեն ինչ իմանալ, ես ձեզ ամե՛ն ինչ կպատմեմ,– միայն թե համբերեք: Այ, խումհարաթող կլինեմ Մուրճ ու Մանգաղում և

ՄՈՍԿՎԱ–ՄՈՒՐՃ ՈՒ ՄԱՆԳԱՂ

և ամեն ինչ կպատմեմ: Համբերե՛ք: Ես համբերում եմ, չէ՞:

Դե, իհարկե, նրանք բոլորն ինձ անպիտան մարդ են համարում: Առավոտները՝ խմածությունը դեռ վրաս՝ ինքս էլ իմ մասին այդ կարծիքին եմ: Բայց չի կարելի, չէ՞, վստահել կարծիքին մի մարդու, որը դեռ չի հասցրել խումհարաթող լինել: Դրա փոխարեն երեկոները,– ի՞նչ անդունդներ կան իմ մեջ,– եթե, իհարկե, լավ լիցքավորվեմ օրվա ընթացքում,– ի՞նչ անդունդներ են իմ մեջ երեկոյան:

Բայց թող որ այդպես: Թող որ ես անպիտան մարդ եմ: Ես ընդհանրապես նկատել եմ. եթե մարդն իրեն զզվելի է զգում առավոտները, իսկ երեկոյան լի է մտահոգացումներով ու երազանքներով ու ջանքով,– ապա շա՛տ անպիտանն է նա, այդ մարդը: Առավոտյան վատ է, երեկոյան՝ լավ. սա ստույգ հայտանիշն է անպիտան մարդու: Այ, եթե հակառակը լինի.

թվայնացրել է 1915.info կայքը

եթե մարդն առավոտյան առույգ է ու կատարելապես հուսավառ, իսկ երեկոյան նրան տիրում է ուժատությունը,- դա արդեն հաստա՛տ անպետքություն է, գործ դրստող մարդ ու միջակություն: Գարշում եմ ես այդ տեսակ մարդուց: Դուք չգիտեմ ոնց, բայց ես գարշում եմ:

Իհարկե, պատահում են և այնպիսիք, ում համար լավ է և՛ առավոտյան, և՛ երեկոյան, նրանք ուրախ են և՛ արշալույսի համար, և՛ մայրամուտի համար նույնպես ուրախ են.- դրանք արդեն պարզապես սրիկաներ են, ու նրանց մասին խոսելն անգամ զզվելի է: Դե, իսկ եթե որևէ մեկի համար վատ է թե՛ առավոտյան, թե՛ երեկոյան, այստեղ արդեն չգիտեմ էլ ինչ ասեմ. դա արդեն անհուսալի սրիկա է ու տականք: Որովհետև խանութները մեզ մոտ բաց են մինչև ինը, իսկ Ելիսեևյանը՝ նույնիսկ մինչև տասնմեկը, և եթե դու վիժվածք չես, միշտ էլ կհասցնես երեկոյան կողմ բարձրանալ-հասնել որևէ բանի, որևէ չնչին անդունդի:

Եվ այսպես՝ ի՞նչ ունեմ իմ տնօրինության տակ:

Ճամպրուկիցս հանեցի ողջ ունեցածս ու հատ-հատ տնտղեցի՝ բուտերբրոդից մինչև մեկ ու երեսունյոթանոց վարդագույն թունդը: Տնտղեցի և հանկարծ գույն տվի ու կարկամեցի: Տե՛ր Աստված, տեսնո՛ւմ ես, ահա, ինչեր եմ տնօրինում: Բայց մի՞թե դ ա է ինձ հարկավոր: Մի՞թե դ ր ա ն է ձգտում իմ հոգին: Ահա թե ինչ տվեցին ինձ մարդիկ այն ամենի փոխարեն, ինչին հոգիս ձգտում է: Եվ եթե դ ա տային, մի՞թե ես կունենայի ս ր ա կարիքը: Նայի՛ր, տեր Աստված, ահա վարդագույն թունդը՝ մեկ ռուբլի երեսունյոթով...

Եվ, ամբողջովին կապույտ կայծակներ զգեցած, Աստված այսպես պատասխանեց.

- Իսկ ստիգմատները սուրբ Թերեզայի ինչի՞ն են պետք: Դրանք, չէ՞ որ, նրան նույնպես հարկավոր չեն: Բայց ցանկալի են նրան:

- Հենց այդ է որ կա,- արձագանքում էի ցնծագին,- ի՞նձ էլ, ի՞նձ էլ ցանկալի է դա, բայց բոլորովին հարկավոր չէ:

- Դե, քանի որ ցանկալի է, Վե՞նիչկա, ուրեմն խմի՛ր,- կամացուկ մտածեցի ես, բայց դեռ հապաղում էի՝ Աստված ինձ էլի որևէ բան կասի, թե՝ ոչ:

թվայնացրել է 1915.info կայքը

Աստված լուռ էր:

Լա՛վ: Վերցրի քառորդանոցն ու ելա վագոնի փակ հարթակ: Այսպե՛ս: Հոգիս չորսուկես ժամ բանտված չարչարվել էր, հիմա ես նրան ազատ կարձակեմ: Բաժակ կա, բուտերբրոդ՝ նույնպես, որ ս ի ր տ ս չ խ ա ռ ն ի: Եվ կա հոգիս՝ առայժմ մի՛ քիչ բացված առ կեցության տպավորությունները: Սեղանակի՛ց լեր, տե՛ր Աստված:

ՄՈՒՐՃ ՈՒ ՄԱՆԳԱՂ-ԿԱՐԱՉԱՐՈՎՈ

Ու ձեռաց խմեցի:

ԿԱՐԱՉԱՐՈՎՈ-ՉՈՒԽԼԻՆԿԱ

Եվ խմելուց հետո,- ինքներդ եք տեսնում,- երկար կնճռոտվում ու զապում էի սրտխառնոցս, անիծում ու հայհոյում էի. ոչ այն է հինգ րոպե, ոչ այն է՝ յոթ րոպե, ոչ այն է՝ մի ամբողջ հավերժություն կոկորդս բռնած պատեպատ էի խփվում չորս պատերի մեջ և աղերսում իմ Աստծուն, որ չնեղացնի ինձ:

Եվ ընդհուպ մինչև Կարաչարովո, Մուրճ ու Մանգաղից մինչև Կարաչարովո, Աստվածն իմ անկարող էր լսել պաղատանքս. խմածս բաժակը մեկ քուլա-քուլա հավաքվում էր ինչ-որ տեղ՝ որովայնիս ու կերակրափողիս արանքում, մեկ ճախրում էր վեր, մերթ կրկին գահավիժում: Վեզուվի պես էր, Հերկուլանումի, Պոմպեյի, մայիսմեկյան հրավառության պես էր՝ իմ երկրի մայրաքաղաքում: Եվ ես տառապում ու աղոթում էի:

Եվ ահա միայն Կարաչարովոյում Աստվածն իմ լսեց ու ականջալուր եղավ ինձ: Ամեն ինչ հանդարտվեց ու խաղաղվեց: Իսկ եթե իմ ներսում որևէ բան հանդարտվում ու խաղաղվում է, ապա՝ անդառնալի: Վատա՛հ եղեք: Ես հարգում եմ բնությունը, տգեղ կլիներ վերադարձնել բնության ընծաները...

թվայնացրել է 1915.info կայքը

Ես մի կերպ հարդարեցի մազերս ու վերադարձա վագոն: Հասարակությունն ինձ համարյա անտարբեր էր նայում՝ կլոր և ասես ոչնչով չծանրաբեռնված աչքերով...

Դա ինձ դուր է գալիս: Ինձ դուր է գալիս, որ իմ երկրի ժողովուրդն այդպիսի դատարկ ու դուրս պրծած աչքեր ունի: Դա ինձ օրինական հպարտության զգացում է ներշնչում: Կարելի է պատկերացնել, թե ինչպիսին են աչքերն այնտեղ, որտեղ ամեն ինչ վաճառվում ու գնվում է... խորունկ թաքցված, դարանակալած, գիշատիչ ու վախվորած աչքեր... Կոռուպցիա, արժեզրկում, գործազրկություն, պաուպերիզմ... Նայում են խոժոռ, անդադրում մտահոգությամբ ու տառապանքով. ահա թե ինչպիսին են աչքերը Դեղին դևի աշխարհում...

Բայց դրա փոխարեն իմ ժողովրդինը՝ ինչպիսի՜ աչքեր: Շարունակ դուրս պրծած են, բայց ներսում՝ ոչ մի լարվածություն: Ցանկացած իմաստի կատարյալ բացակայություն,- բայց՝ որպիսի՜ հզորություն: (Որպիսի հոգևո՛ր զորություն): Այդպիսի աչքերը չեն ծախի: Ոչինչ չեն ծախի ու ոչինչ չեն առնի: Ինչ էլ պատահի իմ երկրին: Կասկածի օրերին, ծանր տվայտանքի օրերին, ցանկացած փորձությունների և աղետների ժամանակներում,- չե՞ն թարթի այդ աչքերը: Նրանց համար ամենը ցող է աստվածային...

Ինձ դուր է գալիս իմ ժողովուրդը: Ես երջանիկ եմ, որ ծնվել ու հասակ եմ առել այդ աչքերի հայացքի ներքո: Վատը միայն ահա թե որն է. հանկարծ ու նրանք նկատել են, թե ես այնտեղ՝ հարթակին, ինչով էի զբաղված: Գլխկոնծում էի անկյունից անկյուն, ինչպես մեծ ողբերգակ Ֆյոդոր Շալյապինը, ձեռքովս կոկորդս բռնած, ասես ինչ-որ բան ինձ խեղդելիս լիներ:

Բայց, ասենք, թող այդպես լինի: Եթե մեկնումեկը տեսել է՝ թող այդպե՛ս լինի: Գուցե ես այնտեղ դերափորձ էի անում: Գուցե ես այնտեղ խաղում էի «Օթելլո. Վենետիկի մավրը» անմահ պիեսում: Խաղում էի մեն-մենակ և միանգամից բոլոր դերերը: Ես, օրինակ, դավաճանել եմ ինձ, իմ համոզմունքներին, ավելի ճիշտ՝ սկսել եմ

թվայնացրել է 1915.info կայքը

կասկածել, որ դավաճանել եմ ինձ, իմ համոզմունքներին. ես իմ մասին ականջիս շշնջում էի,- օ՛, ինչեր էի շշնջում,- և ահա ես՝ սիրելով ինձ տառապանքիս համար, ինչպես ինքս ինձ կսիրեի,- խեղդում եմ ինձ: Ճանկել եմ կոկորդս ու խեղդում եմ: Ինչե՛ր ասես չէի անում այնտեղ:

Ահա աջից պատուհանի տակ նստած են երկու հոգի: Մեկն այսպես բո՛ւթ-բո՛ւթ ու մգդակած բաճկոնով: Իսկ մյուսը՝ խելացի՛-խելացի՛ և կովերկոտե վերարկուով: Եվ խնդրեմ, ոչ մեկից չեն ամաչում, լցնում ու խմում են: Չեն վազում հարթակ ու չեն կոտրատում մատները: Բո՛ւթ-բո՛ւթը խմում է, կոնչում ու ասում. «Հա՛, լա՛վ գնաց, իմացա՛ր»: Իսկ խելացի՛-խելացի՛ն խմում ու ասում է. «Տրանս-ցեն-դենտալ է»: Եվ այնպիսի՛ տոնական ձայնով: Բո՛ւթ-բո՛ւթը մի կտոր բան է գցում բերանն ու ասում. «Մեր ուտելիքն էսօր փայլուն է: Ոնց որ ասած, «Կերեք ինձ, խնդրեմ» կարգի ուտելիք»: Իսկ խելացի՛-խելացի՛ն ծամում ու ասում է.. «Այո՛ո՛ո՛, տրանս-ցեն-դեն-տալ է»:

Ապշեցուցիչ է: Ես մտա վագոն ու նստել, տառապում եմ այն մտքից, թե ինձ ում տեղն են դրել՝ մավրի՞, ո՞չ մավրի, վա՞տն են իմ մասին մտածում, թե՝ լավը: Իսկ նրանք տաք-տաք ու բացահայտ խմում են, ասես արարչագործության պսակներ, խմում են աշխարհի հանդեպ սեփական գերազանցության զգացումով... «Կերեք ինձ, խնդրեմ» կարգի ուտելիք»... Ես առավոտները խումհարաթող լինելիս թաքնվում եմ երկնքից ու երկրից, որովհետև դա ամենաինտիմ բանն է աշխարհում... Մինչև աշխատանքի սկիզբը խմում եմ՝ թաքնվում եմ: Աշխատանքի ժամին խմում եմ՝ թաքնվում եմ... Իսկ սրանք՝ «Տրա՛նս-ցե՛ն-դե՛ն-տա՛լ է»:

Ինձ շատ է վնասում իմ նրբանկատությունը, այն խեղեց իմ պատանեկությունը: Իմ մանկությունն ու պարմանությունը: Ավելի շուտ այսպես. դա նրբանկատութուն էլ չէ, այլ՝ անսահման ընդլայնել եմ ինտիմի ոլորտը. քանի՛ անգամ է դա ինձ կործանել...

Հիմա կպատմեմ: Հիշում եմ, տասը տարի առաջ բնակություն հաստատեցի Օրեխովո-Զուևոյում: Այն ժամանակ, երբ բնակություն

թվայնացրել է 1915.info կայքը

հաստատեցի, իմ սենյակում արդեն չորս հոգի էին կենում, ես եղա հինգերորդը: Համերաշխ էինք ապրում, վեճ ու կռիվ չկար: Եթե մեկն ուզում էր պորտվեյն խմել, վեր էր կենում ու ասում «Տղե՛րք, ես ուզում եմ պորտվեյն խմեմ»: Եվ բոլորն ասում էին. «Լա՛վ, պորտվեյն խմի: Մենք էլ հետդ պորտվեյն կխմենք»: Եթե մեկի սիրտը գարեջուր էր ուզում, բոլորի սիրտն էր ուզում գարեջուր:

Հրաշալի է: Բայց ահա մի անգամ անսպասելիորեն սկսեցի նկատել, որ այդ չորսը մի տեսակ ինձ օ տ ա ր ում է ն իրենցից, մի տեսակ փ ս փ ս ում է ն, ինձ նայելիս մի տեսակ ն ա յ ում է ն, թե ուր կգնամ: Դա տարօրինակ էր և նույնիսկ մի քիչ տագնապալի... Եվ նրանց մոութներին էլ կարդում էի նույն մտահոգվածությունն ու կարծես նույնիսկ վախը... «Բանն ի՞նչ է,- տանջվում էի ես:- Ինչո՞ւ է այսպես»:

Եվ ահա վրա հասավ այն երեկոն, երբ հասկացա բանն ինչ է և ինչու է այդպես: Ես, հիշում եմ, այդ օրը նույնիսկ վեր չէի կացել անկողնուց. գարեջուր էի խմել ու թախծում էի: Դարզապես պառկել ու թախծում էի:

Եվ ի՞նչ տեսնեմ. չորսով կամաց շրջապատում են ինձ. երկուսը նստեցին աթոռներին՝ գլխավերևս, երկուսը՝ ոտքերիս տակ: Ու նայում են աչքերիս մեջ, հանդիմանանքո՛վ են նայում, նայում են չարացածությամբ մարդկանց, որոնք չեն կարողանում վերծանել իմ ներսի չարաբաստիկ առեղծվածը... Հաստա՛տ, հաստա՛տ ինչ-որ բան էր պատահել:

- Լսի՛ր,- ասացին նրանք:- Դ ու ձ ե ռ քաշի է դ բանից:

- Ինչի՞ց «ձեռ քաշեմ»,- ես ապշած՝ մի քիչ վրա նստեցի:

- Ձեռ քաշի երևակայելուց, թե մյուսներից բարձր ես... որ մենք ոնց ասած մանրապճեղ ենք, իսկ դու Կայենն ու Մանֆրեդը...

- Բայց ինչի՞ց ենթադրեցիք...

- Հենց դրանից էլ ենթադրեցինք: Դու էսօր գարեջուր խմե՞լ ես:

թվայնացրել է 1915.info կայքը

ՉՈՒԽԼԻՆԿԱ–ԿՈՒՍԿՈՎՈ

– Խմել եմ:

– Շա՛տ ես խմել:

– Շա՛տ:

– Դե, ուրեմն վեր կաց ու գնա:

– Բայց ո՞ւր «գնամ»:

– Կարծես թե չգիտես: Ստացվում է, որ մենք բզեզիկներ ենք, իսկ դու Կայենն ու Մանֆրեդը...

– Թույլ տվեք,– ասում եմ,– ես նման բան չեմ պնդել...

– Ո՛չ, պնդել ես: Մեզ մոտ տեղավորվելուն պես ամեն օր հենց դա ես պնդում: Եթե ոչ խոսքով, ապա գործով: Նույնիսկ ոչ գործով, այլ այդ գործի բացակայությամբ: Դու ժ խ տ ո ղ ա բ ա ր դա ես հաստատում, դա ես պնդում...

– Բայց ախր ի՞նչ «գործ», ինչի՞ «բ ա ց ա կ ա յ ու թ յ ա մ բ»,– զարմանքից աչքերս արդեն կլորացել էին:

– Պարզ է՝ թե ինչ գործ: Դուրս չես գնում դու. ահա թե ինչ գործ: Մենք անմիջապես զգացինք՝ ինչ-որ բան այնպես չէ: Հենց այն ժամանակից, որ այստեղ տեղավորվեցիր, մենք ոչ մի անգամ չենք տեսել, որ զուգարան գնաս: Լա՛վ, մեծ գործով՝ դեռ էլի ոչինչ, բայց ոչ մի անգամ՝ նույնիսկ փոքրո՛վ... Նույնիսկ փոքրո՛վ:

Եվ այդ ամենն անժպիտ էր ասվում, մահացու վիրավորվածի տոնով:

– Չէ՛, տղե՛րք, դուք ինձ ճիշտ չեք հասկացել...

– Ո՛չ, մենք քեզ ճիշտ ենք հասկացել...

– Չէ՛, ախր, չէ՛, չե՛ք հասկացել: Չեմ կարող, չէ՞, ձեզ նման վեր կենալ անկողնուց և ի լուր ամենքի ասել. «Դե, տղե՛րք, ես գնացի ...ելու» կամ «Տղե՛րք, ես գնացի ...ելու»: Ես այդպես չեմ կարող:

– Իսկ ինչո՞ւ չես կարող: Մենք կարող ենք, իսկ դու չե՞ս կարող: Ստացվում է, որ դու մեզանից լավն ես: Մենք կեղտոտ անասուններ ենք, իսկ դու՝ ոնց որ շուշա...

թվայնացրել է 1915.info կայքը

- Չէ՛, այդպես չի... Ձեզ ո՞նց բացատրեմ...

- Մեզ բացատրելու կարիք չկա... Ամեն ինչ պարզ է...

- Լսե՛ք, ախր, լսե՛ք, հասկացե՛ք վերջապես... աշխարհում կան բաներ...

- Մենք քեզնից վատ չգիտենք՝ ինչ բաներ կան և ինչ բաներ չկան...

Ու ես ոչ մի կերպ չկարողացա համոզել: Նրանք մռայլ հայացքնե-
րով խոցեցին հոգիս... Ես սկսեցի անձնատուր լինել...

- Դե, իհարկե, ես նույնպես կարող եմ... Ես նույնպես կկարողանայի...

- Հենց էդ է որ կա: Նշանակում է՝ դու կարող ես մեզ նման: Իսկ մենք քո պես չենք կարող: Դու Մանֆրեդն ես, դու Կայենն ես, իսկ մենք՝ ոտնատակիդ ցեխը:

- Դե, ո՛չ, ո՛չ,- այստեղ ես արդեն լրիվ խճճվեցի:- Աշխարհում կան այնպիսի բաներ... այնպիսի ոլորտներ կան... չի կարելի, չէ՞, այդքան հեշտ ու հասարակ վեր կենալ ու գնալ: Ոնց ասեմ՝ ինքնասահմանափակում կա, չէ՞, մի նվիրական ամոթխածություն կա՝ Իվան Տուրգենևի ժամանակներից... և ապա՝ երդումը Վորոբյովյան բլուրների վրա... Եվ այդ ամենից հետո վեր կենալ ու ասել. «Տղե՛րք...»: Մի տեսակ վիրավորական է... Չէ՞ որ եթե մեկը նրբանկատ սիրտ ունի...

Նրանք, չորսն էլ, ոչնչացնող հայացքներով նայում էին ինձ: Ես թոթվեցի ուսերս ու հուսահատված լռեցի:

- Դու վերջ տուր դրան՝ Իվան Տուրգենևի մասին: Խոսի, բայց չափդ ճանաչի, մենք էլ ենք կարդացել: Դու ավելի լավ է ահա թե ինչ ասա՝ էսօր գարեջուր խմե՞լ ես:

- Խմել եմ:

- Քանի՞ գավաթ:

- Երկու մեծ, մի փոքր:

- Դե, ուրեմն, վեր կաց ու գնա: Էնպես, որ բոլորս տեսնենք՝ գնացիր: Մի նվաստացրու մեզ ու մի չարչարի: Վեր կաց ու գնա:

Ինչ արած, ես վեր կացա ու գնացի: Ո՛չ թեթևանալու: Նրա համար, որ նրա՛նց թեթևացնեմ: Իսկ երբ վերադարձա, նրանցից մեկն ասաց. «Այդպիսի խայտառակ հայացքներով դու միշտ մենակ ու դժբախտ կլինես»:

թվայնացրել է 1915.info կայքը

Այո՛: Միանգամայն իրավացի էր: Ես շատ բանի եմ տեղյակ Աստծո մտահղացումներից, բայց ինչո՞ւ է նա ինձ այսքան ողջախոհություն պարգևել՝ մինչև օրս չեմ հասկանում: Եվ այդ ողջախոհությունը,- սա ամենաածիծաղելին է,- այդ ողջախոհությունը այնպես շուռտված է մեկնաբանվում, որ հերքվում է նույնիսկ տարրական դաստիարակվածությունս:

Օրինակ, Պավլովո-Պոսադում: Ինձ տանում են երկու տիկնանց մոտ ու ներկայացնում այսպես.

- Ահա և ինքը՝ նշանավոր Վենիչկա Երոֆեևը: Նա շատ առումներով է նշանավոր, բայց ամենից ավելի, իհարկե, նշանավոր է նրանով, որ ամբողջ կյանքում ոչ մի անգամ չի տռել...

- Ինչպե՜ս: Ոչ մի անգա՜մ,- զարմանում են տիկնայք ու աչքները չռած՝ սկսում ուսումնասիրել ինձ:- Ոչ մի անգա՜մ:

Ես, իհարկե, սկսում եմ անհարմար զգալ. տիկնանց ներկայությամբ անհարմար չզգալ չեմ կարող: Ասում եմ.

- Դե, այնքան էլ ոչ մի անգամ չի... Երբեմն... Համենայնդեպս...

- Ինչպե՜ս,- ավելի են զարմանում տիկինները:- Երոֆեևը և... դժվար է մտածե՛լն անգամ... «Երբե՜մն, համենայնդե՜պս»:

Ես դրանից վերջնականապես մոլորվում ու ասում եմ.

- Ախր... դրա ի՞նչն է տ ա ր օ ր ի ն ա կ, ես, չէ՞ որ... դա, ախր... տ ռ ե լը... չէ՞ որ այնքան հասարակ է, և ի՞նչ արտակարգ բան, որ տռում ես...

- Այ քե՛զ բան,- ապշում են տիկինները:

Իսկ հետո պետուշկինյան ամբողջ ամբողջ ուղեգծով մեկ տարածում են. «Նա այդ ամենը բարձրաձայն է անում և ասում է, որ վ ա տ չի անում: Որ լ ա վ՝ է անում»:

Դե, ահա, տեսնո՛ւմ եք: Եվ այսպես՝ ամբողջ կյանքում: Ամբողջ կյանքում ճնշում է ինձ այդ մղձավանջը. մղձավանջի էությունն այն է, որ ինձ ոչ թե թ յ ու ր են ըմբռնում,- «թյուրը» դեռ ոչինչ,- ճ շ գ ր ի տ հ ա կ ա ռ ա կ ն են հասկանում, այսինքն՝ կատարելապես խոզաբար, այսինքն՝ հ ա կ ա օ ր ի ն ա բ ա ր:

թվայնացրել է 1915.info կայքը

Ես այս հարցի շուրջ շատ բան կարող էի պատմել, բայց եթե ամբողջն ասեմ՝ կձգվի մինչև Պետուշկի հասնելը: Ավելի լավ է ամբողջը չպատմեմ, այլ միայն մեկ դեպք, քանի որ ամենաթարմն է. թե ինչպես մի շաբաթ առաջ ինձ ազատեցին բրիգադավարի պաշտոնից՝ «անհատական գրաֆիկների արատավոր համակարգի ներդրման համար»: Մեր ամբողջ մոսկովյան վարչությունը ցնցվում է ս ա ր ս ա փ ի ց՝ հիշելով այդ գրաֆիկները: Եվ անհասկանալի է՝ իսկապես ի՞նչն էր այդտեղ ս ա ր ս ա փ ե լ ի...

Այո՛, այս ո՛ւր հասանք...

Կուսկովոն է: Առանց կանգառի անցնում ենք Կուսկովոն: Դրա առթիվ արժե, որ մի հատ էլ խմեմ, բայց ավելի լավ է պատմեմ,

ԿՈՒՍԿՈՎՈ–ՆՈՎՈԳԻՐԵԵՎՈ

իսկ հետո նոր կգնամ ու կխմեմ:

Եվ այսպես, մի շաբաթ առաջ ինձ գահընկեց արին բրիգադիրությունից, իսկ դրանից հինգ շաբաթ առաջ նշանակել էին: Չորս շաբաթվա ընթացքում, ինքներդ եք հասկանում, կտրուկ փոփոխություններ չես անի, ասենք, որևէ կտրուկ փոփոխություն չէի էլ անում, իսկ եթե մեկնումեկին նույնիսկ թվում էր, թե անում էի, համենայնդեպս՝ ինձ կտրուկ փոփոխությունների համար չէ, որ վոնդեցին:

Ամեն ինչ շատ պարզ սկսվեց: Մինչև իմ գալը մեր արտադրական գործընթացն այսպիսի տեսք ուներ. առավոտից նստում՝ սեկա էինք խաղում, փողով (դուք սեկա խաղալ գիտե՞ք): Այդպե՛ս, հետո վեր էինք կենում, հետ կծկում մալուխի թմբուկն ու մալուխը թաղում հողի տակ: Իսկ հետո, պա՛րզ բան է, նստում էինք, և ամեն մեկը յուրովի էր սպանում ժամանակը, չէ որ, համենայնդեպս, ամեն մեկն իր երազանքն ու խառնվածքն ունի. մեկը վերմուտ էր խմում, մյուսը, ով ավելի պարզ ու հասարակ էր՝ «Թարմություն» օդեկոլոն,

թվայնացրել է 1915.info կայքը

հավակնություններ ունեցողը կոնյակ էր խմում Շերեմետևո միջազգային օդանավակայանում: Ու պառկում էինք քնելու:

Իսկ առավոտյան՝ այսպես. նախ նստում ու վերմուտ էինք խմում: Հետո վեր էինք կենում և նախորդ օրվա մալուխը հանում հողի տակից ու դեն շպրտում, քանի որ արդեն լրիվ թաց էր լինում, իհարկե: Իսկ հետո,- դե ի՛նչ,- նստում էինք սեկա խաղալու, փողո՛վ: Այդպես էլ՝ խաղը կիսատ, պառկում էինք քնելու:

Վաղ առավոտյան արդեն արթնացնում էինք իրար. «Լյո՛խա, վեր կաց՝ սեկա խաղանք», «Ստա՛սիկ, վեր կաց՝ վերջացնենք երեկվա խաղը»: Իսկ հետո լուսումութին, առանց «Թարմություն» կամ վերմուտ խմելու, վերցնում էինք մալուխի թմբուկն ու սկսում հետ կծկել, որ թրջվի ու մինչև հաջորդ օրն այլևս պիտանի չլինի: Իսկ հետո արդեն՝ ամեն մեկն իր ժամանցին, քանի որ ամեն ոք իր իդեալներն ունի: Եվ այդպես՝ ամեն ինչ սկզբից:

Բրիգադիր դառնալով՝ ես այդ գործընթացը պարզեցրի մինչև հնարավորի սահմանը: Արդեն այսպես էինք անում. մի օր սեկա էինք խաղում, մյուս օրը վերմուտ էինք խմում, երրորդ օրը նորից սեկա էինք խաղում, չորրորդ օրը նորից վերմուտ էինք խմում: Իսկ նա, որ ինտելեկտուալ էր, ընդհանրապես կորավ-մնաց Շերեմետևո օդանավակայանում. նստել՝ կոնյակ էր խմում: Թմբուկին, իհարկե, մատով էլ չէինք դիպչում. եթե փորձեի առաջարկել, որ դիպչենք, կհռհռային վրաս աստվածների պես, հետո բռունցքներով կջնջխեին երեսս ու կցրվեին՝ մեկը փողով սեկա խաղալու, մյուսը՝ վերմուտ խմելու, երրորդը՝ «Թարմություն»:

Միառժամանակ ամեն ինչ հրաշալի էր. մենք ամիսը մեկ նրանց սոցպարտավորություններ էինք ուղարկում, իսկ նրանք մեզ՝ ռոճիկ, ամիսը երկու անգամ: Մենք, օրինակ, գրում ենք. առաջիկա հարյուրամյա հոբելյանի առթիվ պարտավորվում ենք վերջ տալ արտադրական վնասվածքներին: Կամ այսպես. փառապանծ հարյուրամյակի առթիվ կհասնենք նրան, որ յուրաքանչյուր վեցերորդը հեռակայի բարձրագույն ուսումնական հաստատությունում: Բայց ի՛նչ

թվայնացրել է 1915.info կայքը

վնասվածք ու հաստատություն, երբ սեկա խաղալիս աչքներիս ուրիշ բան չի գալիս, ու մենք էլ ընդամենը հինգ հոգի ենք:

Օ՛, ազատություն ու հավասարություն: Օ՛, եղբայրություն ու ձրիակերություն: Օ՛, անհաշվետվության քաղցրություն: Օ՛, երանելի ժամանակ իմ ժողովրդի կյանքում՝ խանութները բացելուց մինչև խանութների փակվելը ժամանակ:

Ամոթն ու հեռավոր հոգսերը մի կողմ թողած՝ ապրում էինք բացառապես հոգևոր կյանքով: Ես ուժերիս ներածին չափ ընդարձակում էի նրանց մտահորիզոնը, և նրանց շատ էր դուր գալիս, որ ընդարձակում էի. հատկապես երբ խոսքը վերաբերում էր Իսրայելին ու արաբներին: Այստեղ նրանք կատարյալ ցնծության մեջ էին. ցնծություն՝ Իսրայելի համար, ցնծություն՝ արաբների համար, ցնծություն՝ հատկապես Գոլանի բարձունքների համար: Իսկ Աբբա Էբանին ու Մոշե Դայանին բերնից բաց չէին թողնում: Առավոտը բ...-ությունից գալիս են, օրինակ, ու մեկը մյուսին հարցնում է. «Հը՞, 13 սենյակի Նինկան դայա՞ն էբան»: Իսկ սա ինքնագոհ ժպտալով պատասխանում է. «Ո՛ւր պիտի փախներ քածը: Իհարկե՝ դայան»:

Իսկ հետո (լսե՛ք), իսկ հետո, երբ տեղեկացան, թե ինչից է մահացել Պուշկինը, ես նրանց կարդալու տվի «Սոխակների պարտեզը»՝ Ալեքսանդր Բլոկի պոեմը: Պոեմի միջնամասում, եթե, իհարկե, մի կողմ թողենք այդ բոլոր հրաշաբույլ ուսերն ու միգամած մշուշները և վարդագույն աշտարակները՝ ծխամած շուրջառներով, այդտեղ, պոեմի միջնամասում, քնարական կերպարն է, որ աշխատանքից հեռացվել է հարբեցողության, բ...-թյան և պարապուրդների համար: Ես նրանց ասացի՝ «Խիստ արդիական գիրք է,- ասացի,- ընթերցանությունը մեծ օգուտ կբերի ձեզ»: Դե ինչ, նրանք կարդացին: Եվ ի հեճուկս ամեն ինչի՝ նրանց վրա ծանր ու մտահոգիչ տպավորություն թողեց: Անհասկանալի է, թե՝ ինչու, բայց սեկան մոռացվեց, վերմուտը մոռացվեց, միջազգային օդանավակայան Շերեմետևոն մոռացվեց,- ու հաղթանակեց «Թարմությունը». բոլորը միայն «Թարմություն» էին խմում:

թվայնացրել է 1915.info կայքը

Օ՛, անհոգություն: Օ՛, երկնային թռչուններ, որ չեք ամբարում: Օ՛, Սողոմոնից շքեղ զգեցած դաշտային շուշաններ:- Նրանք խմեցին ամբողջ «Թարմությունը»՝ Դոլգոպրուդնայա կայարանից մինչև Շերեմետևո միջազգային օդանավակայան:

Եվ այստեղ ուղեղս պայծառացավ. ախր, դու ոչմիբանացու ես, Վե՛նիչկա, մաքուր ապուշ ես դու. հիշի՛ր, ինչ-որ իմաստունի գրքում կարդացել ես, որ տեր Աստված հոգում է միայն արքայազնների համար՝ ժողովուրդների ճակատագրի համար հոգալը թողնելով նրանց: Բայց չէ՞ որ դու բրիգադիր ես, և ուրեմն՝ «փոքրիկ արքայազն»: Ինչպե՞ս ես հոգում քո ժողովրդի հոգսը: Դու նայե՞լ ես այդ պարազիտների հոգու խորխորատները: Այդ չորս ապուշների սրտի դիալեկտիկան հայտնի՞ է քեզ: Եթե հայտնի լիներ, կհասկանայիր, թե ինչ ընդհանրություններ ունեն «Սոխակների պարտեզն» ու «Թարմությունը», և ինչու «Սոխակների պարտեզը» չկարողացավ գոյակցել ո՛չ սեկայի, ո՛չ էլ վերմուտի հետ, այն դեպքում, երբ նրանց հետ հրաշալի համարվում էին թե՛ Մոշե Դայանը, թե՛ Աբբա Էբանը...

Եվ այդ ժամանակ, ահա, ես մտցրի իմ նշանավոր «անհատական գրաֆիկները», որոնց համար էլ ինձ, ի վերջո, դուրս շպրտեցին:

ՆՈՎՈԳԻՐԵԵՎՈ–ՌԵՈՒՏՈՎՈ

Պատմե՞մ, թե ինչ գրաֆիկներ էին: Դե, շատ պարզ է. կաշեփայլ թղթի վրա, սև տուշով, երկու առանցք է նկարվում՝ մի առանցքը հորիզոնական, մյուսը՝ ուղղահայաց: Հորիզոնականի վրա հաջորդաբար շարվում են անցած ամսվա բոլոր աշխատանքային օրերը, իսկ ուղղահայացի վրա՝ խմվածը՝ գրամներով, մաքուր ալկոհոլի հաշվարկով: Հաշվի է առնվում, իհարկե, միայն արտադրության մեջ ու մինչ այդ խմածը, քանի որ երեկոյան խմածը բոլորի համար, այսպես թե այնպես, հաստատուն մեծություն է և լուրջ ուսումնասիրության համար հետաքրքրություն ներկայացնել չի կարող:

թվայնացրել է 1915.info կայքը

Եվ այսպես. բանվորը ամսվա վերջին հաշվետվությամբ ներկայանում է ինձ. այսինչ օրը խմվել է այսքան ու այսքան, այնինչ օրը՝ այսքան ու այսքան, իսկ ես սև տուշով ու կաշեփայլ թղթի վրա գեղեցիկ դիագրամով նկարում եմ այդ ամենը: Ահա տեսեք, օրինակ, սա կոմերիտական Վիկտոր Տոտոշկինի գիծն է.



Իսկ սա Ալեքսեյ Բլինդյանն է. ՍՄԿԿ անդամ 1936 թվականից, ճմռթված ու մաշված քավթառի մեկը:

Իսկ սա արդեն ձեր խոնարհ ծառան է՝ մոնտաժորդների էքսբրիգադավարը, «Մոսկվա-Պետուշկի» պոեմի հեղինակը.



Իսկապես հետաքրքիր գծեր են, չէ՞: Նույնիսկ ամենահպանցիկ հայացքով նայելիս հետաքրքիր են: Մեկինը՝ Հիմալայները, Տիրոլը,

թվայնացրել է 1915.info կայքը

Բաքվի նավթահանքերը կամ նույնիսկ Կրեմլի պարսպի վերին շուրթը, որը ես, ի դեպ, երբեք չեմ տեսել:

Մյուսինը՝ վաղորդայնի ծփանքը Կամա գետի վրա, մեղմիկ ճոռփյունը և մարգարիտները կապույտ ծփանքի: Երրորդինը՝ հպարտ սրտի զարկ, երգ մրրկահավի մասին և իններորդ ալիք: Եվ այդ ամենը՝ հենց միայն գծերի արտաքին տեսքը նայելիս:

Իսկ նրան, ով ավելի պրպտող է (ինձ, օրինակ), այդ գծերը պատմում են այն ամենը, ինչ հնարավոր է պատմել մարդու և մարդկային հոգու մասին. նրա բոլոր հատկությունները՝ սեռականից մինչև գործարար, նրա բոլոր թերությունները՝ գործարար ու սեռական: Եվ նրա հավասարակշռվածության աստիճանը, և դավաճանելու ունակությունը, և ենթագիտակցականի բոլոր գաղտնիքները, եթե միայն այդպիսիք կան:

Ցանկացած բ...-ի հոգին ես արդեն դիտարկում էի ուշադրությամբ, քննախույզ ու սևեռուն: Բայց երկար չդիտարկեցի. մի չարաբաստիկ օր բոլոր դիագրամներս չքացան իմ սեղանից: Պարզվեց՝ այդ քավթառ անբանը՝ Ալեքսեյ Բլինդյանը, ՍՄԿԿ անդամ 1936 թվականից, վարչություն է ուղարկել մեր նոր սոցպարտավորությունները, որտեղ բոլորս երդվել էինք առաջիկա հարյուրամյակի առթիվ կենցաղում լինել այնպիսին, ինչպիսին արտադրության մեջ ենք,- և հիմարաբար կամ հարբած լինելով,- նույն ծրարի մեջ էր դրել իմ անհատական գրաֆիկները:

Կորուստը նկատելուն պես խմեցի ու բռնեցի գլուխս: Եվ այնտեղ, վարչությունում՝ նույնպես. ստացել էին ծրարը, գլուխները բռնել, խմել էին ու հենց նույն օրը «Մոսկվիչով» ժամանեցին մեր տեղամասը: Ի՞նչ տեսան՝ մեր գրասենյակը խուժելով: Նրանք ոչինչ էլ չտեսան, բացի Լյոխայից ու Ստասիկից. Լյոխան կծկված քնել էր հատակին, իսկ Ստասիկը սիրտ էր թափում: Ամեն ինչ վճռվեց տասնհինգ րոպեում. իմ աստղը, որ բռնկվել էր չորս շաբաթ առաջ, մարեց: Խաչելությունը կատարվեց համբարձումից ուղիղ երեսուն օր անց: Ընդամենը մեկ ամիս էր բաժանում իմ Տոլոնը իմ Հեղինեից: Կարճ. նրանք ինձ

թվայնացրել է 1915.info կայքը

պաշտոնանկ արին, իսկ իմ տեղը նշանակեցին Ալեքսեյ Բլինդյանին, այդ քավթառ ապուշին, ՍՄԿԿ անդամ 1936 թվականից: Իսկ նա նշանակվելուն պես զարթնեց, վեր կացավ հատակից ու նրանցից մի ռուբլի խնդրեց. նրանք ռուբլին չտվին: Ստասիկը սիրտ թափեց-պրծավ ու նույնպես մի ռուբլի խնդրեց. նրան էլ չտվին: Կարմիր գինի խմեցին, նստեցին իրենց «Մոսկվիչն» ու ետ գնացին:

Եվ ահա, ես հանդիսավոր հայտարարում եմ. մինչև օրերիս վերջը չեմ նախաձեռնելու ոչինչ, որպեսզի չկրկնեմ վեհացման փորձս: Ես մնում եմ ներքևում ու ներքևից թքում եմ ձեր հասարակական սանդուղքի վրա: Այո՛: Սանդուղքի ամեն աստիճանին՝ մեկ թքացայտ: Այդ սանդուղքով բարձրանալու համար ջհուդի մռութ պիտի լինես՝ առանց ահի և ամոթի, պիդառած պիտի լինես՝ ոտից գլուխ պողպատից կոփված: Իսկ ես այդպիսին չեմ:

Մի խոսքով, ինձ խռիկ տվին: Ինձ՝ խորախոհ արքայազն-վերլուծաբանիս, որ սիրաբար տարտղնում էր մարդկանց հոգիները, ինձ,- ներքևից,- շտրեյկբրեխեր համարեցին ու կոլաբորացիոնիստ, իսկ վերևից՝ պորտաբույծի մեկը՝ անհավասարակշիռ ներաշխարհով: Ներքևներն ինձ տեսնել չէին ուզում, իսկ վերևները անկարող էին իմ մասին խոսել առանց ծիծաղելու: «Վերևները չէին կարող, ներքևները չէին ուզում»: Սա ի՞նչ է կանխագուշակում, պատմության ճշմարիտ փիլիսոփայության գիտակնե՛ր: Միանգամայն ճիշտ է. մոտակա կանխավճարին մերը կլացացնեն բարու և գեղեցիկի բոլոր կանոններով, իսկ մոտակա կանխավճարը վաղը չէ մյուս օրն է. նշանակում է վաղը չէ մյուս օրը կկրզըցնեն ինձ:

- *Թո՛ւ:*

- Ո՞վ ասաց «Թո՛ւ»: Հրեշտակնե՛ր, այդ դո՞ւք ասացիք «Թո՛ւ»:

- *Այո, մենք ասացինք: Թո՛ւ, Վե՛նյա, այդ ինչպես ես հայհոյում:*

- Բայց ինքներդ դատեք. ո՞նց չհայհոյեմ: Այս ամբողջ կենցաղային ցնդաբանությունը այնպես է կոտրել ինձ, որ այդ նույն օրից սկսած՝ խմելուց աչք չեմ բացում: Մինչ այդ էլ, չասեմ թե առանձնապես բացում էի, բայց համենայնդեպս, հիշում էի՝ ինչ եմ խմում և ինչ

թվայնացրել է 1915.info կայքը

հաջորդականությամբ, իսկ հիմա դա էլ չէի կարողանում մտաբերել... Իմ ամեն ինչը շերտավոր է, ամբողջ կյանքս՝ մի տեսակ շերտերով. մեկ չեմ խմում մի շաբաթ շարունակ, հետո խմում եմ 40 օր, հետո նորից չորս օր չեմ խմում, իսկ հետո նորից վեց ամիս՝ առանց շունչ քաշելու... Ահա հիմա էլ...

– Մենք հասկանում ենք: Մենք ամեն ինչ հասկանում ենք: Քեզ վիրավորել են, և քո սքանչելի սիրտը...

Այո՛, այո՛, այդ օրն իմ սիրտը ուղիղ կես ժամ կռիվ էր տալիս բանականության հետ: Ինչպես Պիեռ Կոռնելի՝ դափնեկիր–պոետի ողբերգություններում. պարտքը պայքարում է սրտի մղումների դեմ: Միայն թե իմ դեպքում հակառակն էր. սրտի մղումն էր բանականության ու պարտքի դեմ պայքարում: Սիրտն ասում էր. «Քեզ վիրավորել են, քեզ հավասարեցրել են թրիքի հետ: Գնա՛, Վե՛նիչկա, գնա՛ ու խմի՛ր. Վե՛ր կաց ու գնա՛ ու հարբի՛ր շան պես»: Այդպես էր ասում իմ սքանչելի սիրտը: Իսկ իմ բանականությո՛ւնը: Նա փնթփնթում ու համառում էր. «Դու վեր չես կենա, Երոֆե՛և, ու ոչ մի տեղ չես գնա ու ոչ մի կաթիլ չես խմի»: Իսկ սիրտն՝ ի պատասխան. «Դե լավ, Վե՛նիչկա, հերի՛ք է: Շատ խմել պետք չէ, պետք չէ հարբել խոզի պես. խմիր չորս հարյուր գրամ ու՝ վերջ»: «Ոչ մի գրամ,– կտրում էր բանականությունը,– եթե առանց դրա ուղղակի անհնար է, գնա ու երեք գավաթ գարեջուր խմիր, իսկ գրամներիդ մասին, Երոֆե՛և, հիշելն անգամ մոռացիր»: Իսկ սիրտը նվում էր. «Դե՛, գոնե երկու հարյուր գրամ: Դե՛...

ՌԵՈՒՏՈՎՈ–ՆԻԿՈԼՍԿՈՅԵ

դե, գոնե հարյուր հիսուն...»: Եվ այդ ժամանակ բանականությունը՝ «Դե լավ, Վե՛նյա,– ասաց,– լա՛վ, խմիր հարյուր հիսուն, միայն թե ոչ մի տեղ չգնաս, մնա տանը...»:

Եվ ի՞նչ եք կարծում: Խմեցի հարյուր հիսուն ու նստեցի տա՛նը: Հա՛–հա՛: Այդ օրվանից խմում էի օրական հազար անգամ հարյուր

թվայնացրել է 1915.info կայքը

հիսուն, որպեսզի տանը նստեմ, բայց էլի չդիմացա: Որովհետև վեցերորդ օրն արդեն այնպես էի կակղել, որ բանականության ու սրտի սահմանագիծը չքացել էր, ու երկուսը միաձայն պնդում էին. «Գնա՛, գնա Պետուշկի: Պետուշկիում է քո փրկությունը և խնդությունը քո: Գնա՛»:

«Պետուշկին մի վայր է, որտեղ չեն լռում թռչունները գիշեր ու զօր, որտեղ ամառ-ձմեռ հասմիկն է ծաղկում: Նախածին մեղքը,- գուցե և եղել է,- այնտեղ չի ճնշում ոչ մեկին: Այնտեղ նույնիսկ նրանք, որ շաբաթներ շարունակ աչք չեն բացում խմելուց, նույնիսկ նրանց հայացքն անհուն է ու պայծառ...»:

«Այնտեղ ամեն ուրբաթ, ուղիղ տասնմեկին, կայարանի կառամատույցին ինձ դիմավորում է ա յ դ ա ղ ջ ի կ ը՝ ճերմակի անցնող ճերմակավուն աչքերով, այդ ամենասիրելին բոլոր լրբերից, այդ ճեփ-ճերմակ մազերով դևուհին: Իսկ այսօր ուրբաթ է, և ամենաքիչը երկու ժամից տասնմեկը կլինի, և՛ կլինի նա, և՛ կլինի կայարանի կառամատույցը, և՛ կլինի այդ ճեփ-ճերմակ հայացքը, որի մեջ ո՛չ խիղճ կա, ո՛չ ամոթ: Եկեք ինձ հետ և այնպիսի՛ բաներ կտեսնեք...»:

«Ասենք, ի՞նչ եմ թողել այնտեղ, որտեղից մեկնել և ահա գնում եմ: Մի զույգ շունչը փչած փաթաթան ու պետական շալվար, հաստաշուրթ աքցան ու խարտոց, կանխավճար ու վերադիր ծախսեր.- ահա թե ինչ եմ թողել: Իսկ ի՞նչ կա առջևում, ի՞նչ կա Պետուշկիում, կառամատույցին,- իսկ կառամատույցին շեկ թարթիչներն են՝ հակած վար, և՛ մարմնաձևերի ծփանքը, և՛ հյուսքը՝ ծոծրակից մինչև հետույք: Իսկ կառամատույցից հետո՝ հիպերիկի թրմոզի ու պորտվեյն, երանություններ ու ցնցումներ, ցնծություններ ու ջղաձգումներ: Երկնայի՛ն տիրուհի, դեռ որքան հեռու է Պետուշկին»:

«Իսկ այնտեղ, Պետուշկիից այն կողմ, որտեղ խառնվում են երկինք ու հող, և գայլուհին ոռնում է աստղերի վրա, այնտեղ ամեն ինչ ուրիշ է, բայց և՝ նույնը, այնտեղ՝ ծխահար ու ոջլոտ ապարանքներում, որ անհայտ են այդ ճերմակամազին, ծաղկում է իմ մանկիկը՝ ամենաթմբլիկն ու ամենահեզը բոլոր մանկիկներից: Նա գիտի «յու»

թվայնացրել է 1915.info կայքը

տառը և դրա համար ինձնից ընկույզներ է սպասում: Ձեզնից որի՞ն է երեք տարեկանում հայտնի եղել «յու» տառը: Ոչ մեկի՛դ. դուք հիմա էլ այն կարգին չգիտեք: Իսկ նա ահա գիտի և դրա համար ոչ մի ուրիշ պարգև չի սպասում, բացի մի բաժակ ընկույզից»:

– Աղոթե՛ք, հրեշտակնե՛ր, ինձ համար: Թող լուսավոր լինի իմ ուղին, թող ոտքս քարին չառնի, թող տեսնեմ քաղաքն այն, որին այնքան կարոտել եմ, որի համար տառապել եմ այնքան: Իսկ մինչ այդ,– ներողամի՛տ եղեք,– հսկեք իմ փոքրիկ ճամպրուկը. ես տասը րոպեով կբացակայեմ: Պիտի կուբանյան խմեմ՝ պոռթկումը չմարելու համար:

Եվ ահա, ես նորից վեր կացա ու կես վագոն կտրելով՝ անցա հարթակ:

Եվ խմեցի ոչ այնպես, ինչպես խմել էի Կարաչարովոյի մոտ, ո՛չ, արդեն խմում էի առանց սրտխառնոցի ու բուտերբրոդի, շշից, գլուխս ետ գցած, դաշնակահարի պես, և գիտակցելով վեհությունն այն ամենի, որ նոր է միայն սկսվում է ու դեռ պիտի լինի:

ՆԻԿՈԼՍԿՈՅԵ–ՍԱԼՏԻԿՈՎՍԿԱՅԱ

– Քեզ ուրախություն չի բերի այս տասներեք կումը,– մտածեցի ես՝ տասներեքերորդ կումն անելով:

– Ինքդ էլ գիտես, որ առավոտվա երկրորդ բաժինը, մանավանդ շշից խմելիս, մռայլում է հոգին. թեկուզև ոչ տևական՝ մինչև երրորդ՝ բաժակով բաժինը,– բայցևայնպես, մռայլում է: Դո՞ւ ես, որ դա պիտի չիմանաս:

– Թող որ այդպես: Թող որ պայծառ է քո վաղվա օրը: Թող քո վաղն ավելի պայծառ լինի: Բայց ինչո՞ւ են խռովվում հրեշտակները՝ հենց խոսում ես հաճույքների մասին՝ Պետուշկիի կառամատույցում ու հետո:

– Ի՞նչ են մտածում: Որ այնտեղ ինձ ոչ ոք չի՞ դիմավորի, կամ գնացքը կգլորվի՞ ռելսերից, կամ Կուպավնայում հսկիչները կիջեցնե՞ն,

թվայնացրել է 1915.info կայքը

կամ ինչ-որ տեղ, 105 կիլոմետրին խմածությունից քնով կանցնեմ, և ինձ՝ քնածիս կճզմե՞ն ինչպես տղեկի, կամ կմորթե՞ն աղջնակի պես: Ինչո՞ւ են հրեշտակներն, ուրեմն, վեհերոտ ու լուռ: Պայծառ է վաղվա իմ օրը: Այո՛: Մեր վաղը պայծառ է ավելի, քան մեր այսօրն է պայծառ: Բայց ո՞վ կերաշխավորի, որ մեր վաղը չէ մյուս օրը վատը չի լինելու մեր երեկ չէ մյուս օրվանից:

- Հենց այդ է որ կա: Լա՛վ ասացիր, Վե՛նիչկա: Մեր վաղը և այլն: Շատ սահուն ու խելացի ասացիր, միշտ չէ, որ այդպես սահուն ու խելացի ես խոսում:

- Եվ ընդհանրապես, ուղեղդ այնքան էլ մեծ չէ: Դո՞ւ ես, կրկնեմ, որ դա չպիտի իմանաս: Հնազանդվի՛ր, Վե՛նիչկա, մխիթարվիր թեկուզև նրանով, որ քո հոգին ավելի տարողունակ է, քան ուղեղդ: Բայց և ինչի՞դ է պետք ուղեղը, երբ կա խիղճը ու վերադիր՝ ճաշակը: Խիղճ ու ճաշակ,- սա արդեն այնքան շատ է, որ ուղեղը պարզապես ավելորդ է դառնում:

- Իսկ դու առաջին անգամ ե՞րբ նկատեցիր, Վե՛նիչկա, որ հիմար ես:

- Ահա թե երբ: Երբ առաջին անգամ միանգամից երկու հակաբևեռ հանդիմանություն լսեցի՝ և՛ ձանձրալի ես, և՛ թեթևամիտ: Որովհետև եթե մարդը խելացի ու ձանձրալի է, չի իջնի թեթևամտության աստիճանի: Իսկ եթե թեթևամիտ է ու խելացի, իրեն թույլ չի տա ձանձրալի լինել: Իսկ ես, ահա, դանդալոշս, հաջողացրի համատեղել:

- Եվ ասե՛մ՝ ինչու: Որովհետև հիվանդ է հոգիս, բայց ցույց չեմ տալիս: Որովհետև այն օրվանից, ինչ ինձ հիշում եմ, նրանով եմ զբաղված միայն, որ հոգևոր առողջություն եմ խաղում, ամե՛ն վայրկյան, ու դրա վրա ծախսում եմ (անմնացո՛րդ) և՛ մտավոր, և՛ ֆիզիկական, և՛ ցանկացած ուժերս: Հենց դրանից է, որ ձանձրալի եմ... Այն ամենը, ինչի մասին խոսում եք, այն ամենը, որ օրնիբուն զբաղեցնում է ձեզ,- այդ ամենն ինձ չի հետաքրքրում, այո՛, այդ ամենի մասին ես երբեք ու ոչ մեկին բառ անգամ չեմ ասի: Հնարավոր է՝ խփնվածի անուն հանելու վախից, հնարավոր է՝ ուրիշ պատճառով, բայց մեկ է՝ չեմ ասի:

թվայնացրել է 1915.info կայքը

– Հիշում եմ՝ վաղուց դեռ, վաղո՛ւց, երբ իմ ներկայությամբ խոսքուզրույց կամ վեճ էին սկսում որևէ ցնդաբանության շուրջ, ասում էի. «Է՛, ինչ էլ այդ ցնդաբանությունից խոսելու սեր ունեք»: Իսկ նրանք զարմանում ու ասում էին. «Սա ի՞նչ ցնդաբանություն է: Եթե սա էլ է ցնդաբանություն, ուրեմն ի՞նչն է, որ ցնդաբանություն չէ»: Իսկ ես ասում էի. «Օ՛, չգիտե՛մ, չգիտե՛մ, բայց կա»:

– Ես չեմ պնդում, որ հիմա,– ինձ,– ճշմարտությունն արդեն հայտնի է կամ ընդհուպ մոտեցել եմ նրան: Բնա՛վ: Բայց արդեն այնքան եմ մոտեցել, որ կարելի է ամեն ինչ տեսանել:

– Եվ ես նայում ու տեսնում եմ. դրա համար էլ տրտում եմ: Եվ չեմ հավատում, որ ձեզնից որևէ մեկն էլ իր հոգում կրելիս լինի այդ դառնագույն շփոթը. ինչի՞ց է այդ շփոթը բաղկացած՝ դժվար է ասել,– ասենք, մեկ է՝ չեք հասկանա,– բայց նրա մեջ ամենից ավելի «վիշտն» ու «վախն» են: Այդպես կոչենք: Ահա. «վիշտն» ու «վախն» են ամենից ավելի ու մեկ էլ՝ համրությունը: եվ ամեն օր, առավոտից «իմ սքանչելի սիրտը» զեղում է այդ թուրմն ու լողում նրա մեջ մինչև երեկո: Ուրիշների, ես գիտե՛մ, ուրիշների կյանքում դա պատահում է՝ եթե մեկը մահանում է անսպասելի, եթե աշխարհում ամենակարևոր արարածը հանկարծ մահանում է: Բայց իմ կյանքում դա մի՛շտ է. գոնե սա՛ հասկացեք:

– Ինչպես, ուրեմն, ձանձրալի չլինեմ ու կուբանյան չխմեմ: Ես վաստակել եմ դրա իրավունքը: Ես ձեզնից լավ գիտեմ՝ «համաշխարհային վիշտը» հորինվածք չէ, որ շրջանառության մեջ են դրել անցյալի գրողները, քանի որ ինքս այն կրում եմ հոգուս մեջ, և գիտեմ՝ ինչու է այդպես, և չեմ ցանկանում դա թաքցնել: Հարկավոր է վարժվել սեփական արժանիքները խիզախորեն մարդկանց երեսին նետելուն: Մեզնից լավ ո՞վ կիմանա, թե որքան լավն ենք:

– Օրինակ, տեսե՞լ եք Կրամսկոյի «Անամոք վիշտը»: Իհարկե տեսել եք: Դե ահա, եթե այդ վշտից կարկամած իշխանուհու կամ բոյարուհու կատուն այդ պահին հատակին գցեր որևէ բան, ասենք՝ Սեվրի ճենապակուց գավաթը, կամ, ենթադրենք, պատառ–պատառ աներ որևէ աներևակայելի գնի գիշերազգեստ, ի՞նչ կաներ տիկինը. իրար

թվայնացրել է 1915.info կայքը

կանցներ ու ծա՛փ կզարկեր ապշահար: Երբե՛ք. քանի որ այդ ամենը նրա համար ցնդաբանություն է, որովհետև մեկ օրով, թե երեք՝ նա «վեր է ցանկացած գիշերազգեստից ու կատվից, ու ցանկացած սեվրից»:

Եվ ուրեմն, ինչպե՞ս վարվենք: Ձանձրալի՞ է այդ իշխանուհին:- Ահավոր ձանձրալի է և ինչպե՞ս ձանձրալի չլինի: Թեթևամի՞տ է:- Անպատկերացնելի՛ թեթևամիտ:

- Հենց այդպես է՝ ես: Հիմա հասկացա՞ք, թե ինչու ամենատխուրն եմ բոլոր հարբեցողներից: Ինչու թեթևն եմ բոլոր ապուշներից, բայց նաև մոայլ՝ ցանկացած աղբից: Թե ինչու միաժամանակ և՛ հիմար եմ, և՛ դև, և՛ դատարկախոս:

- Ահա և հրաշալի է, որ ամեն ինչ հասկացաք: Խմենք ըմբռնման կենացը կուբանյանի այս մնացորդով, հենց շշից և՝ ձեռաց խմենք:

- Տեսեք, թե դա ինչպես է արվում...

ՍԱԼՏԻԿՈՎՍԿԱՅԱ-ԿՈՒՉԻՆՈ

Կուբանյանի մնացորդը դեռ քուլա-քուլա բարձրանում էր դեպի կոկորդս, դրա համար էլ, երբ երկնքից հարցրին.

- *Ինչո՞ւ ամբողջը խմեցիր, Վե՛նյա, դա չափազանց շատ է...*

Խեղդվելով մի կերպ կարողացա պատասխանել.

- Ողջ երկրով մեկ... ողջ երկրով մեկ, Մոսկվայից մինչև Պետուշկի, չկա ոչինչ, որ ինձ համար չափազանց շատ լինի... Եվ ինչո՞ւ եք վախենում ինձ համար, հրեշտակնե՛ր երկնային...

- *Վախենում ենք, որ դու նորից...*

- Որ նորից կսկսեմ հայհոյե՞լ: Օ՛, ոչ, պարզապես չգիտեի, որ միշտ ինձ հետ եք. ես առաջ էլ չէի համարձակվի... Ես բոպե առ բոպե ավելի ու ավելի երջանիկ եմ... և եթե հիմա սկսեմ հայհոյաբանել, ապա միայն՝ որևէ երջանիկ բան, ինչպես գերմանացի պոետների բանաստեղծություններում. «Ես ձեզ ծիածա՛ն ցույց կտամ» կամ «Դե, գնացեք դուք մարգարտածաղիկների ծոցը»... Ինչ հիմա՛ր-հիմա՛ն եք դուք...

թվայնացրել է 1915.info կայքը

– *Ոչ, մենք հիմար չենք, պարզապես վախենում ենք, որ նորից չես հասնի...*

– Ո՞ւր չեմ հասնի: Նրանց մոտ, Պետուշկի՞ չեմ հասնի: Նրա՞ն չեմ հասնի՝ իմ անամոթ թագուհո՞ւն ամպաչյա... Ինչ ծիծաղելի՜ն եք դուք...

– *Ոչ, մենք ծիծաղելի չենք, մենք վախենում ենք, որ դու ն ր ա ն չես հասնի, և նա կմնա առանց ընկույզների...*

– Ի՜նչ եք ասում, ի՜նչ եք ասում: Քանի դեռ ողջ եմ... ի՜նչ եք ասում: Անցած ուրբաթ, ճիշտ է, անցած ուրբաթ թույլ չտվեց ն ա, որ մոտը գնամ... Կակղեցի ես անցած ուրբաթ, հրեշտակնե՛ր, նրա կլորիկ փոքրին նայելով ընկա, կլոր, ինչպես երկինքն ու երկիրը... Բայց այսօր կհասնե՛մ, եթե չսատկեմ, իհարկե, ճակատագրից զարկված... Ավելի ճիշտ՝ ո՛չ, այսօր չեմ հասնի, այսօր ես նրա մոտ կլինեմ, մինչ առավոտ կարածեմ նրա ճերմակ շուշանների մեջ, իսկ ահա վա՜ղը...

– *Խեղճ տղա...*,– հառաչեցին հրեշտակները:

– «Խեղճ տղա՞»: Ինչո՞ւ «խեղճ»: Բայց ասացեք, հրեշտակնե՛ր, դուք ինձ հետ կլինե՞ք մինչև Պետուշկի: Դուք չե՞ք հեռանա...

– *Օ՜, ոչ, մինչև Պետուշկի չենք կարող: Կթռչենք-կգնանք՝ հենց դու ժպտաս... Այսօր դեռ ոչ մի անգամ չես ժպտացել, հենց ժպտացիր՝ կհեռանանք և արդեն հանգիստ կլինենք քեզ համար...*

– Եվ այնտեղ կառամատույցին կդիմավորեք ինձ, այո՞:

– *Այո, այնտեղ կդիմավորենք:*

Սքանչելի արարածներ են այդ հրեշտակները: Միայն թե ինչու «Խեղճ տղա»: Նա բոլորովին էլ խեղճ չէ: Մանկիկը, որ հինգ մատի պես գիտի «յու» տառը, մանկիկը, որ սիրում է իր հորը, ինչպես ինքն իրեն,– մի՞թե խղճահարության կարիք ունի:

Դե, ենթադրենք հիվանդ է եղել նախանցյալ ուրբաթ, և բոլորն այնտեղ տագնապած էին... Բայց չէ՞ որ անմիջապես էլ լավացավ, ինձ տեսնելուն պես... Այո՛, այո՛... Ողորմա՜ծ Աստված, թող նրան ոչինչ չպատահի ու երբե՛ք ոչինչ չպատահի...

Այնպե՛ս արա, Տե՛ր, որ նա, եթե նույնիսկ ընկնի սանդղամուտից կամ վառարանից, չկոտրի ո՛չ ձեռքը, ո՛չ ոտքը: Եթե աչքին ընկնեն

թվայնացրել է 1915.info կայքը

դանակը կամ ածելին, թող չխաղա դրանցով. ուրի՛շ խաղալիք գտիր նրա համար, Տե՛ր: Երբ մայրը վառարան վառելիս լինի,- նա շատ է սիրում, որ մայրը վառարանն է վառում,- հեռու տար նրան, եթե կարող ես: Ցավում է հոգիս այն մտքից, որ կարող է վառվել: Ու եթե նույնիսկ հիվանդանա, ինձ տեսնելուն պես թող առողջանալ սկսի...

Այո՛, այո՛, երբ անցած անգամ հասա տեղ, ինձ ասացին՝ նա քնած է: Ինձ ասացին՝ հիվանդ է նա ու ջերմություն ունի: Ես կիտրոնօղի էի խմում նրա մահճակալի մոտ, ու մեզ մենակ թողեցին: Նա իսկապես վառվում էր, և նույնիսկ թշիկի փոսիկը վառվում էր ջերմությունից, և տարօրինակ էր, որ այդքան պստիկ բանն անգամ կարող է ջերմություն ունենալ...

Ես երեք բաժակ կիտրոնօղի խմեցի, մինչև նա արթնացավ և նայեց ինձ ու չորրորդ բաժակին, որ ձեռքիս էր... Ես այն ժամանակ երկար զրուցեցի նրա հետ և ասում էի.

- Դու... գիտե՞ս ինչ, տղա՛, դու չմեռնես, ինքդ մտածիր (չէ՞ որ արդեն նկարում ես տառերը, ուրեմն կարող ես ինքնուրույն մտածել). հիմար բան է մեռնելը, երբ միայն «յու» տառը գիտես ու՝ ոչինչ ավելի... Ինքդ գոնե հասկանո՞ւմ ես, որ դա հիմարություն է:

- *Հ ա ս կ ա ն ում ե մ, հ ա՛ յ ր...*

Եվ ինչպե՞ս ասաց: Եվ ամենը, որ ասում են անմահ հրեշտակներն ու մահացող երեխաները,- այդ ամենն այնքան նշանակալից է, որ ես բառերը գրում եմ ձգված շեղատառով, իսկ ամենը, որ ասում ենք մենք՝ պուճուրիկ տառիկներով, քանզի այդ ամենը, ավելի կամ պակաս, հիմարություն է: *«Հ ա ս կ ա ն ում ե մ, հ ա՛ յ ր»...*

- Դու դեռ վեր կկենաս, տղա՛, ու նորից կպարես իմ «խոճկորային ֆարանդոլան»,- հիշո՞ւմ ես: Երբ երկու տարեկան էիր, պարում էիր: Երաժշտությունը՝ հայրիկինը, բառերը՝ նույնպես: «Պուճու՛ր, սիրո՛ւն սա-տա-նիկ-ներն էնտեղ ճանկում-ճանկռո՛ւմ էին, կծում էին իմ փոր-ի՛-կը»: Իսկ դու մի ձեռքով հատակին հենված, մյուսով թաշկինակը թափահարելով՝ թռչկոտում էիր պուճուրիկ ապուշիկի պես... «Փետրը-վարից մինչ օգոստոս թնկթնկացի՛, վնգվնգացի՛, օգոստոսի

թվայնացրել է 1915.info կայքը

վեր-ջին արդեն տոտիկներս ես տըն-կեցի՛»... Դու սիրո՞ւմ ես հորդ, տղա՛:

- *Շատ եմ սիրում...*

- Ուրեմն մի՛ մեռի... Երբ դու չմեռնես ու լավանաս, ինձ համար նորից որևէ բան կպարես... Բայց՝ ո՛չ, ֆարանդոլա չենք պարի: Այնտեղ խոսքեր կան, որ գործին չեն բռնում... «Օգոստոսի վեր-ջին արդեն տոտիկներս ես տըն-կեցի՛»... Բանի նման չէ: Ավելի լավ է՝ այսպես. «Մեկ-երկու-հագի-կոշիկներդ-շուտ-ամոթ-է-էդքան-քնած-մնաս-դու»... Ես այս զգվանքը սիրելու առանձնահատուկ պատճառներ ունեմ...

Խմեցի չորրորդ բաժակն ու հուզվեցի.

- Երբ դու չկաս, տղա՛, ես լրիվ մենակ եմ... Հասկանո՞ւմ ես... Դու այս ամառ վազվզում էիր անտառում, հիշո՞ւմ ես... Ու երևի հիշում ես՝ ինչ սոճիներ կան այնտեղ... Ահա ես էլ սոճու պես եմ... Նա այնքան բոյո՛վ-բոյո՛վ է ու մենա՛կ-մենա՛կ, և ահա ես էլ... Նա,- ինձ պես,- նայում է միայն երկինք, իսկ թե ինչ կա ոտքերի տակ՝ չի տեսնում ու չի ցանկանում տեսնել... Նա այնպես կանաչ է ու կանաչ կլինի, մինչև տապալվելը: Ահա և ես էլ,- մինչև չտապալվեմ, հավետ կանաչ եմ լինելու...

- *Կանաչ*,-արձագանքեց երեխան:

- Դե, ահա, օրինակ, խատուտիկը: Օրորվում ու ցրիվ է գալիս քամուց, ու տխուր է նրան նայելը... Ահա և ես էլ. մի՞թե ցրիվ չեմ գալիս - թոչում, մի՞թե զզվելի չէ տեսնել, թե ինչպես եմ օրեր շարունակ թոչո՛ւմ ու թոչո՛ւմ ամենուր:

- *Զզվելի է*,-կրկնեց երեխան ու երանությամբ ժպտաց:

Ահա և ես էլ հիմա հիշում եմ նրա *«Զզվելի ն»* ու ժպտում եմ, նույնպես երանությամբ: Եվ տեսնում եմ՝ հեռվից գլխով են անում ինձ հրեշտակներն ու թոչում-հեռանում, ինչպես խոստացել էին:

թվայնացրել է 1915.info կայքը

ԿՈՒԶԻՆՈ-ԺԵԼԵԶՆՈԴՈՐՈԺՆԱՅԱ

Բայց սկզբում համենայնդեպս՝ նրա մոտ: Սկզբում՝ նրա մոտ: Տեսնել նրան կառամատույցին, հյուսքը՝ հետույքից մինչև ծոծրակը, և՛ հուզմունքից շառագունել, և՛ բռնկվել, և՛ խմել պառկած, և՛ արածե՛լ, արածե՛լ շուշանների մեջ, ճիշտ այնքան, մինչև մահու չափ հոգնես:

Բեր ապարանջան ու բեր վզնոցներ,
Մարգարիտներ ու մետաքս ու թավիշ:
Թագուհու պես եմ ուզում հագնվել.
Վերադարձե՛լ է թագավորը իմ:

Այդ աղջիկը բոլորովին էլ աղջիկ չէ: Այդ սատանան ոչ թե աղջիկ է, այլ լյա բեմոլ մաժոր բալլադ: Այդ կինը, այդ շեկ անառակը կին չէ, այլ՝ կախարդանք: Կհարցնեք՝ որտեղի՞ց ես դու, Վե՛նիչկա, դրան պեղել, որտեղի՞ց է հայտնվել այդ շեկ քածը: Եվ կարո՞ղ է, արդյոք, Պետուշկիում որևէ խելամիտ բան լինել:

- Կարո՞ղ է,- ասում եմ ձեզ և ասում այնքան բարձր, որ ցնցվում են և՛ Մոսկվան, և՛ Պետուշկին,- Մոսկվայում՝ ո՛չ, Մոսկվայում չի կարող լինել, իսկ Պետուշկիում կարող է: Հետո՞ ինչ, որ «քած» է: Դրա փոխարեն՝ ինչպիսի՛ ներդաշնակ քած: Իսկ եթե ձեզ հետաքրքիր է, թե որտեղից և ինչպես եմ պեղել, եթե հետաքրքիր է, լսե՛ք, անամոթնե՛ր, ես ձեզ ամեն ինչ կպատմեմ:

Պետուշկիում, ինչպես ձեզ արդեն ասել եմ, հասմիկն է հար ծաղկում, ու չի լռում թռչունների երգը: Ահա այդ օրն էլ, ուղիղ տասներկու շաբաթ առաջ, կային թռչունները և հասմիկը կար: Ու նաև՝ հայտնի չէ, թե ում ծննդյան օրն էր: Ու նաև՝ ծով խմիչք. տասը թե տասներկու, գուցեև քսանհինգ շիշ: Եվ կար ամենը, որ կարող է երազել այդքան ոգելից խմած մարդը, այսինքն՝ բացարձակապե՛ս ամեն ինչ՝ սկսած լցնովի գարեջրից մինչև շշովը: Իսկ ուրի՞շ,- կհարցնեք դուք,- իսկ ուրի՞շ ինչ կար:

թվայնացրել է 1915.info կայքը

– Իսկ ուրիշ,– կային երկու պուճուր-մուճուր տղամարդ, և կային երեք շիլաչք արարածներ, մեկը մյուսից հարբած, և կար աղաղակ, աղմուկ ու անկապություն: Ուրիշ, կարծես թե, ոչինչ չկար:

Եվ ես խառնում էի ու խմում, ռուսականը բացում էի ժիգուլևյան գարեջրով ու նայում այդ «երեքին», ու քիչ-քիչ ինչ-որ բան էի կռահում: Թե հատկապես ինչ՝ չեմ կարող ասել, դրա համար էլ բացում էի ու խմում, և որքան հաճախակի էի բացում ու խմում, այնքան ավելի էի սկսում նրանց մեջ կռահել «այդ բանը», և ավելի հաճախ էի բացում ու խմում, և նույնքան ավելի սուր էի կռահում:

Բայց ահա պատասխան կռահումը նրանցից միայն մեկի մեջ զգացի, միայն մեկի՛: Օ՛, թարթիչները շեկ, ավելի երկար, քան մազերը ձեր գլխին: Օ՛, անմեղությունն ակնաճահիճների: Օ՛, ճերմակությունն այդ՝ ճերմակին անցնող: Օ՛, կախարդանքն ու թևերն աղավնու:

– Ուրեմն դո՞ւք եք Երոֆեևը,– մի փոքր մղվեց առաջ ու գոցեց թարթիչները, ու բացեց...

– Դե, իհարկե: Ուրիշ էլ ո՞վ:

(Օ՛, համահո՛ունչս, ինչպե՛ս կռահեց):

– Ես ձեր գործերից մեկը կարդացել եմ: Եվ գիտե՞ք՝ երբևէ չէի պատկերացնի, որ կեսհարյուրյակ էջում հնարավոր է այդքան անհետեթություն դուրս տալ: Դա մարդկային ուժերից վեր է:

– Իսկապե՞ս վեր է,– ես՝ շոյված՝ խառնեցի ու խմեցի:– Եթե կամենաք՝ ավելին դուրս կտամ: Ավելի ավելի՛ն դուրս կտամ...

Ահա սրանից էլ հենց սկսվեց: Ճիշտն ասած, սկսվեց ուշաթափությունը. երեք ժամանոց անդունդ: Ի՞նչ էի խմում: Ինչի՞ մասին էի խոսում: Ի՞նչ համամասնությամբ էի խառնում: Գուցե և չլիներ այդ անդունդը, եթե առանց բացելու խմեի: Բայց,– այսպես թե այնպես,– երեք ժամից ուշքի եկա և ահա թե ինչ վիճակում ուշքի եկա. նստած եմ սեղանի մոտ և խառնում ու խմում եմ:

Ու երկուսիցս բացի ոչ ոք չկա: Եվ նա՝ կողքիս, բարեծնունդ երեխա՝ ծիծաղում է վրաս: Մտածեցի. «Չտեսնված բան է: Ահա մի կին,

թվայնացրել է 1915.info կայքը

ում կուրծքը մինչև օրս միայն նախազգացումներն են ճմլել: Ահա մի կին, ում զարկերակն անգամ մինչ ինձ չի շոշափել ոչ ոք: Օ՛, երանելի եղքն իմ հոգու մեջ և ամենուրեք»:

Իսկ նա վերցրեց ու խմեց էլի հարյուր գրամ: Կանգնած խմեց՝ գլուխը դաշնակահարի պես ետ գցելով: Ու խմելով՝ ամբողջն արտաշնչեց իր ներսից, ամեն ինչ, որ սուրբ է ու սրբազան,- արտաշնչե՛ց: Իսկ հետո կորացրեց մեջքն ու սկսեց ազդրերով ալիքաձև շարժումներ անել,- և այդ ամենն այնպես ճկուն, որ չէի կարողանում առանց ցնցվելու նայել:

Դուք, իհարկե, կհարցնեք, դո՛ւք, անամոթնե՛ր, իհարկե կհարցնեք. «Եվ ուրեմն ի՞նչ, Վե՛նիչկա, ուրեմն նա՞..... Ի՞նչ պատասխանեմ: Դե, իհարկե, նա..... Դե, եթե ոչ նա, էլ ո՞վ..... Նա շիտակ ասաց. «Ուզում եմ, որ ինձ տիրաբար գրկես աջ ձեռքով»: Հա՛-հա՛: «Տիրաբա՛ր» և «աջ ձեռքո՛վ»:- Ես արդեն այնքան եմ խմել, որ ոչ միայն տիրաբար գրկել, մեջքին ձեռ տալն ինչ է՝ դա էլ չեմ կարողանում, վրիպո՛ւմ եմ, անվերջ վրիպո՛ւմ եմ...

- Դե ինչ, խաղացրու պինդ ազդրերդ,- մտածեցի ես՝ խառնելով ու խմելով:- Խաղացրու, գայթակղի՛չ: Խաղացրո՛ւ, Կլեոպա՛տրա, խաղացրու, փարթա՛մ բ..., որ չարչարում ես պոետի սիրտը: Ամենը, որ ունեմ, ամենը, որ,- գ ու ց ե,- ունեմ, ամենը նետում եմ այսօր Աֆրոդիտեի ճերմակ զոհասեղանին:

Այդպես էի մտածում: Իսկ նա ծիծաղում էր: Այդպես մոտեցավ սեղանին ու մի շնչում էլի հարյուր հիսուն խմեց, քանզի կատարյալ է նա, իսկ կատարելությունը սահման չունի...

ԺԵԼԵԶՆՈԴՈՐՈԺՆԱՅԱ-ՉՅՈՒՆՈՅԵ

խմեց ու հագից գցեց ինչն ավելորդ էր: «Եթե,- մտածեցի,- եթե նա այդ ավելորդի ետևից տակինն էլ հանի, կցնցվի երկիրն ու քարերը կոռնան»:

թվայնացրել է 1915.info կայքը

Իսկ նա ասաց «Դե ինչ, Վե՛նիչկա, լա՛վն է իմ.....»: Իսկ ես՝ ցանկությունից ճզմված՝ սպասում էի մեղքին՝ շնչակտուր: Ես նրան ասացի. «Ուղիղ երեսուն տարի ապրում եմ այս աշխարհում ու չեմ տեսել՝ որևէ մեկը երբևէ այդքան լավ.....»:

Դե, ինչ անեմ հիմա: Լինեմ շողոքորթ-քնքո՛ւշ: Լինեմ կոպիտ ու գերո՛ղ: Սատանան գիտի. երբեք չեմ իմացել, թե որ պահին ինչպես պիտի վարվես գինովցած կնոջ հետ... Մինչ այդ,- պե՞տք է, որ ասեմ,- մինչ այդ ես նրանց վատ գիտեի՝ թե՛ խմածներին, թե՛ սթափներին: Ես նրանց ճգտում էի մտոք, բայց հենց սրտով էի ճգտում, միտքը կանգ էր առնում սարսափահար:

Ես հակասական էի: Մի կողմից ինձ դուր էր գալիս, որ նրանք գոտկատեղ ունեն, իսկ մենք ոչ մի գոտկատեղ էլ չունենք, դա իմ մեջ,- ինչպես ասեմ,- «քնքշանք» էր արթնացնում մի տեսակ:- Այո՛, այո՛, դա իմ մեջ քնքշանք էր արթնացնում: Բայց, մյուս կողմից, չէ՞ որ նրանք գրչահատով մորթեցին Մարատին, իսկ Մարատն Անկաշառ էր, և պետք չէր նրան մորթել: Դա արդեն սպանում էր ցանկացած քնքշանք: Մի կողմից ինձ, ինչպես Կարլ Մարքսին, նրանց մեջ դուր էր գալիս թուլությունը, այսինքն, ահա ստիպված են պպզած միզել, դա ինձ դուր էր գալիս, դա ներսս ողողում էր, ինչո՞վ էր ողողում,- քնքշանքով, հա՞:- Դե, այո, ներսս ողողում էր քնքշանքով: Բայց մյուս կողմից՝ չէ՞ որ նրանք նագանով կրակեցին Ի-ի վրա: Եվ դա կրկին սպանում է քնքշանքը. պպզելը՝ պպզի, բայց ինչո՞ւ ես նագանով կրակում Ի-ի վրա: Եվ այդ ամենից հետո ծիծաղելի կլիներ խոսել քնքշանքի մասին... Բայց ես շեղվեցի:

Եվ այսպես՝ հիմա ինչպիսին լինեմ, լինեմ՝ ահե՞ղ, թե՞ լինեմ գերիչ:

Նա ի՛նքը, ի՛նքը իմ փոխարեն արեց իմ ընտրությունը՝ մեջքի ընկնելով ու ոտնակոճով շոյելով երեսս: Դրա մեջ ինչ-որ բան կար՝ խրախուսանքից ու խաղից մինչև թեթև ապտակը: Եվ օդային համբույրից նույնպես ինչ-որ բան կար: Եվ հետո՝ այդ պղտոր, այդ քած շան ճերմակը՝ բիբերի մեջ, ավելի ճերմակ, քան զառանցանքն ու յոթերորդ երկինքը: Եվ ինչպես երկինք ու երկիր՝ փորը: Հենց տեսա

թվայնացրել է 1915.info կայքը

նրան, քիչ էր մնում հեծկլտայի ոգեշնչումից, լրիվ սկսեցի մխալ: Եվ ամեն ինչ խառնվեց: Ե՛վ վարդերը, և՛ շուշանները, և՛ գանգուրներում կորած խոնավ ու թրթռուն մուտքը Եդեմ, և՛ ուշագնացությունը, և՛ շեկ թարթիչները: Օ՛, հեծեծանքը այդ ընդերքների: Օ՛, ակնաճահիճներն անամոթ: Օ՛, անառակ՝ ամպե աչքերով: Օ՛, քաղցրանուշ պորտ:

Ամեն ինչ խառնվեց իրար, որ նոր միայն սկսվի, որ ամեն ուրբաթ կրկնվի ու կրկնվի նորից և դուրս չգա սրտից ու մտքից: Ես գիտեմ՝ այսօր էլ նույնն է լինելու՝ նույն գինովությունն ու հոգեառությունը...

Ինձ կասեք՝ և ի՞նչ, Վե՛նիչկա, կարծում ես՝ դո՞ւ ես նրա միակ հոգեառը:

Իսկ իմ ի՞նչ գործն է: Ձերն՝ առավել ևս: Թող որ նույնիսկ հավատարիմ չէ: Ծերությունն ու հավատարմությունը մարդուս մոութին դրոշմակնիքներ են դնում, իսկ ես չեմ ուզում, օրինակ, որ նրա մոութին կնիք լինի: Թող որ հավատարիմ չէ, ոչ այնքան, իհարկե, «թող», բայց համենայնդեպս՝ թո՛ղ: Սակայն դրա փոխարեն ամբողջովին հյուսված է քնքշանքից ու բույրերից: Նրան ոչ թե ձեռ գցել կամ ...–ին շխկացնել է պետք, այլ ներծծել: Ես մի անգամ փորձեցի հաշվել նրա բոլոր նվիրական կորությունները ու չկարողացա. հասա քսանյոթին և այնպես ապուշացա խոնջանքից, որ ընդախոտի թրմոզի խմեցի ու չավարտած՝ թողեցի հաշվելը:

Ամենից գեղեցիկը, սակայն, նախաբազուկներն են, իհարկե: Հատկապես երբ շարժում է, զմայլված ծիծաղում ու ասում. «Ա՛խ, Երոֆե՛և, մեղսավոր բ... ես դու»: Օ՛, դևուհի: Մի՞թե կարելի է չներծծել նմանին:

Պատահել է, իհարկե պատահել է, որ նա էլ թունավոր է եղել, բայց այդ ամենը ցնդաբանություն է, այդ ամենը ինքնապաշտպանության նպատակով է և կնոջական ինչ-որ բանի պատճառով. դրանից այնքան էլ գլուխ չեմ հանում: Համենայնդեպս, երբ նրան ցմրուր ճանաչեցի, ոչ մի թույն էլ չկար. ազնվամորի էր՝ կաթի սերուցքով: Մի ուրբաթ, օրինակ, երբ լրիվ կակղել էի ընդախոտի օղուց, նրան ասացի.

թվայնացրել է 1915.info կայքը

- Արի ողջ կյանքում միասին լինենք: Ես քեզ կտանեմ Լոբնո, ես քեզ պուրպուր ու ոլորուն վիսոն կհագցնեմ, ես կվաստակեմ հեռախոսատուփեր տեղադրելով, իսկ դու կհոտոտես որևէ բան, օրինակ, շուշաններ կհոտոտես: Գնա՛նք:

Իսկ նա լուռումունջ ինձ թզանշան ցույց տվեց: Ես այն խոնջանքով մոտեցրի ռունգերիս, հոտոտեցի ու լաց եղա.

- Բայց ինչո՞ւ... Ինչո՞ւ...

Նա ինձ՝ երկրորդ թզանշանը: Դա էլ հոտոտեցի, կկոցեցի աչքերս ու լաց եղա.

- Բայց ինչո՞ւ,- աղաչո՛ւմ եմ,- պատասխանիր,- ինչո՞ւ...

Հենց այդ ժամանակ էլ ահա նա փղձկաց ու կախվեց վզիցս.

- Խելագա՛ր, խելագա՛ր, ախր ինքդ գիտես, թե ինչու, ի՛նքդ գիտես, խելա՛ռս...

Ու դրանից հետո, համարյա ամեն ուրբաթ, նույնն էր կրկնվում՝ և՛ արցունքները, և՛ թզանշանները, բայց այսօր,- այսօր ինչ-որ բան կվճռվի, քանի որ այս ուրբաթը տասներեքերորդն է: Եվ Պետուշկին մոտենում է շարունակ: Երկնայի՛ն Տիրուհի...

ՉՅՈՌՆՈՅԵ-ԿՈՒՊԱՎՆԱ

Ես վագոնի հարթակ ելա ահավոր հուզված ու շարունակ ծխո՛ւմ էի, ծխո՛ւմ էի...

- Եվ դու այդքանից հետո ասում ես, թե միայնակ ես ու չհասկացվա՞ծ: Դու, որ ա յ դ ք ա ն բան ունես հոգուդ մեջ և հոգեպահուստ՝ ա յ դ ք ա ն: Դու, որ ա յ դ պ ի ս ի ն ունես Պետուշկիում: Եվ ա յ ն պ ի ս ի ն՝ Պետուշկիից այն կողմ... Միայնա՞կ ես...

- Ո՛չ, ո՛չ, արդեն միայնակ չեմ, արդեն հասկացված եմ, արդեն տասներկու շաբաթ է, որ հասկացված եմ: Ամբողջ անցածն անցել է: Ահա հիշում եմ, երբ լրացավ քսան տարիս.- այն ժամանակ անհուսալիորեն մենակ էի: Եվ ծննդյան օրս տրտում էր: Ինձ մոտ

թվայնացրել է 1915.info կայքը

եկավ Յուրի Պետրովիչը, եկավ Նինա Վասիլևնան, բերել էին մի շիշ մայրաքաղաքային ու մի բանկա բանջարեղենով տոլմա,- և այդ տոլմայից, այդ մայրաքաղաքայինից ինձ այնքա՜ն մենակ, այնքա՜ն անտանելի մենակ զգացի, որ արտասվել չուզելով՝ լաց եղա:

Իսկ երբ երեսունս էր լրանո՞ւմ, անցած աշուն: Իսկ երբ անցած աշնանը երեսունս լրացավ, օրը տրտում էր, ինչպես քսանամյակիս օրը: Ինձ մոտ եկավ Բորյան՝ ինչ-որ կիսախելագար բանաստեղծուհու հետ, եկան Վադյան ու Լիդան, Լեդիկն ու Վոլոդյան: Ու բերել էին ինձ,- ի՞նչ էին բերել,- երկու շիշ մայրաքաղաքային օղի և երկու բանկա լցոնած լոլիկ: Եվ այնպիսի՛ հուսահատություն, այնպիսի՛ տառապանք պատեց ինձ այդ լոլիկներից, որ ցանկացա լաց լինել, բայց արդեն չէի կարող...

Նշանակո՞ւմ է դա, արդյոք, որ տասը տարվա ընթացքում մենակությունս նվազել էր: Ո՛չ, չի նշանակում: Եվ ուրեմն, նշանակո՞ւմ է, որ հոգիս կոշտացել էր այդ տասը տարվա ընթացքում: Նույնպես չի նշանակում: Ավելի շուտ՝ հակառակը, բայց այնուամենայնիվ, լաց չեղա...

Ինչո՞ւ: Թերևս կարողանամ բացատրել ձեզ, եթե դրա համար որևէ համանմանություն գտնեմ գ ե ղ ե ց ի կ ի աշխարհում: Ենթադրենք այսպես. եթե որևէ խաղաղաբարո մարդ յոթհարյուրհիսուն խմի, կդառնա ուրախ ու կռվազան: Իսկ եթե էլի յոթհարյուր ավելացնի, ավելի ուրախ ու կռվազան կդառնա՞: Ո՛չ, նորից կխաղաղվի: Կողքից նույնիսկ կթվա, թե խմածությունն անցավ: Բայց՝ ոչ. նա արդեն խոզի պես հարբած է, դրա համար էլ սկվել է:

Ճիշտ այդպես էլ՝ ես. մենակությունս չի պակասել այս երեսուն տարում, ու սիրտս էլ չի կոպտացել, ճիշտ հակառակը: Իսկ եթե կողքից նայենք, իհարկե...

Ոչ, հենց հ ի մ ա է, որ պիտի ապրես ու ապրես: Եվ ապրելն այնքան էլ ձանձրալի չէ: Ապրելը ձանձրալի էր միայն Նիկոլայ Գոգոլի և Սողոմոն թագավորի համար: Իսկ եթե երեսուն տարի ապրել ես, պիտի փորձես մի երեսուն տարի էլ ապրել, այո՛, այո՛: «Մարդը մահկանացու

թվայնացրել է 1915.info կայքը

է». սա է իմ կարծիքը: Բայց եթե արդեն ծնվել ենք, ոչինչ անել չես կարող՝ պիտի մի քիչ ապրենք: «Կյանքը հրաշալի է»՝ սա է իմ կարծիքը:

Եվ գիտե՞ք արդյոք, թե աշխարհում որքան գաղտնիքներ կան. չուսումնասիրված ինչպիսի՛ խորխորատներ և ի՞նչ տարածություններ նրանց համար, ում գրավում են այդ գաղտնիքները: Դե, ահա ամենապարզ օրինակը. ինչի՞ց է, որ դու երեկ խմել ես, ասենք, ութհարյուր հիսուն, իսկ առավոտյան խումհարաթողի հնարավորություն չես ունեցել,- ծառայության ես և այլն, և այլն,- ու միայն կեսօրից ահագին անց, վեց կամ յոթ ժամ տառապելուց հետո, խմել ես, որ թեթևացնես հոգիդ (ինչքա՞ն ես խմել, ասենք՝ հարյուրհիսուն), ինչի՞ց է, որ հոգիդ չի թեթևանում: Սրտխառնոցը, որ առավոտից ուղեկցում էր քեզ, այդ հարյուրհիսունից փոխարկվում է մի ուրիշ՝ ամոթխած սրտխառնոցի, այտերդ շիկնում են բ...-ի այտերի պես և աչքերիդ տակերն այնպես է կապտում, ասես նախորդ օրը չես էլ խմել քո յոթհարյուրհիսունը, ասես նախորդ օրը դրա փոխարեն ամբողջ իրիկուն հասցրել են մռութիդ:

Ես ձեզ կասեմ՝ ինչո՛ւ: Որովհետև մարդն այդ վեց կամ յոթ ծառայողական ժամերի զոհն է դարձել: Պիտի կարողանա՛ս քեզ համար աշխատանք գտնել. վատ աշխատանք չկա: Վատ մասնագիտություններ չկան, ցանկացած կոչում պետք է հարգել. պետք է արթնանալուն պես որևէ բան խմել, նույնիսկ, ո՛չ, խաբո՛ւմ եմ, ոչ թե «որևէ բան», այլ հենց այն, ինչ խմել ես նախորդ օրը, ու խմել դադարներով՝ քառասուն-քառասունհինգ րոպե, այնպես, որ երեկոյան արդեն նախորդ օրվանից երկու հարյուր հիսուն ավելի խմես: Ահա այդ ժամանակ ո՛չ սրտխառնոց կլինի, ո՛չ ամոթահարություն, և ինքդ էլ այնպես ճերմակադեմ կլինես, ասես կես տարի ոչ ոք մռութիդ չի հասցրել:

Ահա տեսնո՞ւմ եք բնության մեջ ի՞նչ առեղծվածներ կան՝ ճակատագրական և ուրախալի, որքա՞ն սպիտակ բծեր՝ ամենուրեք:

Իսկ այս դմբո ջահելությունը, որ գալիս է մեզ փոխարինելու, ասես չի էլ նկատում կեցության գաղտնիքները: Նրան պակասում են թափն ու նախաձեռնողականությունը, և ես ընդհանրապես կասկածում եմ՝ նրանց ուղեղներում որևէ բան կա՛: Ի՞նչը կարող է, օրինակ,

թվայնացրել է 1915.info կայքը

ավելի ազնվաբարո լինել, քան սեփական անձիդ վրա կատարված փորձարարությունը: Ես նրանց տարիքում այսպես էի անում. հինգշաբթի երեկոյան մի շնչում խմում էի երեքուկես լիտր յորշ, խմում ու առանց կոշիկներս հանելու պառկում էի քնելու՝ միայն մի մտահոգությամբ. կարթնանա՞մ ուրբաթ առավոտ, թե՞ չեմ արթնանա:

Բայցևայնպես, ուրբաթ առավոտ չէի արթնանում: Արթնանում էի շաբաթ առավոտյան՝ առանց կոշիկների և արդեն ոչ թե Մոսկվայում, այլ երկաթգծի հողաթմբի տակ, Նարո-Ֆոմինսկի շրջանում: Իսկ հետո, հետո ջանք անելով հիշում էի ու փաստեր կուտակում, ու կուտակելով՝ համադրում էի: Եվ համադրելով՝ նորից սկսում էի վերականգնել՝ հիշողության լարումով ու ամենաթափանց վերլուծականությամբ: Իսկ հետո ստեղծագործումից անցնում էի վերացարկման, այլ խոսքով՝ խոհուն կերպով խումհարաթող էի լինում և ի վերջո հասկանում, թե, համենայնդեպս, ուրբաթն ուր է չքացել:

Համարյա փոքրուց, համարյա ծծկերությունից իմ սիրելի բառը «խիզախումն» է եղել, և Աստված է վկա, թե ինչպե՞ս էի խիզախում: Եթե դուք այդպես խիզախեք, կամ անդամալույծ կդառնաք, կամ կաթվածահար կլինեք: Եթե նույնիսկ չլինեք էլ. եթե խիզախեիք այնպես, ինչպես ձեր տարիքում ես էի խիզախում, մի գեղեցիկ առավոտ կբռնեիք ու չէիք արթնանա: Իսկ ես արթնանանում էի, համարյա ամեն առավոտ արթնանում ու կրկին սկսում էի խիզախել...

Օրինակ, այսպես. տասնութ տարեկանում կամ դրա մոտերքը նկատեցի, որ առաջին բաժակից մինչև հինգը ներառյալ՝ առնականանում եմ, այսինքն՝ առնականանում եմ անհաղթահարելիորեն, իսկ այ վեցերորդից սկսած

Ողջույն սիրելի ընթերցող: Այս գրքի էլեկտրոնային տարբերակը պատրաստել է 1915.info կայքը ընթերցողի խնդրանքով: Դուք ևս կարող եք առաջարկել գրքեր և մենք անվճար կթվայնացնենք դրանք Ձեզ համար:

ԿՈՒՊԱՎՆԱ-33-ՐԴ ԿԻԼՈՄԵՏՐ

ու մինչև իններորդը ներառյալ՝ կակղում եմ: Այնպես եմ կակղում, որ տասներորդից սկսած՝ աչքերս փակվում են՝ նույնքան

թվայնացրել է 1915.info կայքը

անհաղթահարելիորեն: Եվ պարզամտորեն ինչ էի կարծում: Կարծում էի՝ կամային ճիգով ինձ պիտի ստիպեմ հաղթահարել նինջն ու խմեմ տասնմեկերորդը. այդ դեպքում հնարավոր է առնականացման վերակրկնություն սկսվի: Բայց՝ ո՛չ, ոչինչ էլ չէր ստացվում: Ոչ մի ռեցիդիվ էլ չկա. փորձել եմ:

Ես այդ առեղծվածի վրա գլուխ էի ջարդում երեք տարի շարունակ, ամեն օր էի գլուխ ջարդում, բայց և ամեն օր քնով էի անցնում տասներորդից հետո:

Բայց արի ու տես, որ ամեն ինչ այնքա՛ն հեշտ գաղտնաբացվեց. պարզվում է՝ եթե արդեն խմել եք հինգերորդը, պիտի և՛ վեցերորդը, և՛ յոթերորդը, և՛ ութերորդը, և՛ իններորդը միանգամի՛ց խմեք, մի շնչո՛ւմ, բայց անպայման խմեք կ ա տ ա ր յ ա լ, այսինքն՝ խմեք միայն ձեր երևակայության մեջ:

Ապա, առանց դադարի, անմիջաբար անցնեք տասներորդին,– և ճիշտ այնպես, ինչպես Անտոնին Դվորժակի տասներորդ սիմֆոնիան. փաստորեն՝ իններորդը, պայմանականորեն կոչում են հինգերորդ, ճիշտ այդպես էլ՝ դուք. պայմանականորեն տասներորդ կոչեք ձեր վեցերորդը ու վստահ եղեք. հիմա արդեն անարգել առնականանալու և առնականանալու եք բուն վեցերորդից (տասներորդից) և ընդհուպ մինչև քսանութերորդը (երեսուներկուերորդը),– այսինքն առնականանալու եք մինչև այն սահմանը, որին հաջորդում են խելահեղությունն ու խոզությունը:

Ո՛չ, ազնիվ խոսք, ես արհամարհում եմ սերունդը, որ գալիս է մեր ետևից: Այն ինձ սարսափ ու զզվանք է ներշնչում: Մաքսիմ Գորկին նրանց մասին երգեր չի երգի, հույս անգամ չունենաք: Չեմ ասում, թե նրանց տարիքում մենք մի ամբողջ բեռ սրբություններ էինք քարշ տալիս: Քա՛վ լիցի. սրբություններն իրականում քիչումիչ էին, բայց որքան կարևոր բաներ կային, որոնց վրա մ ե ն ք թ ք ա ծ չ ու ն ե ի ն ք, իսկ նրանք, ահա, ամեն ինչի վրա թքած ունեն:

Իսկ ինչո՞ւ նրանք չզբաղվեն ահա թե ինչով. ես նրանց տարիքում մեծ ընդմիջումներով էի խմում. խմում–խմում՝ թողնում էի, խմում–խմում՝ նորից էի թողնում: Դրա համար էլ իրավունք չունեմ դատելու՝

թվայնացրել է 1915.info կայքը

ոգեշո՛ւնչ է, արդյոք, առավոտվա դեպրեսիան, եթե ամենօրյա սովորություն է դառնում, այսինքն՝ եթե տասնվեց տարեկանից սկսած՝ խմում ես չորսհարյուր գրամ, իրիկվա ժամը յոթին: Իհարկե, եթե վերադարձնեի տարիներս ու կարողանայի կյանքս նորից սկսել, կփորձեի, իհարկե, բայց ախր ն ր ա՛ ն ք: Չէ՞ որ ն ր ա՛ ն ք...

Բայց միայն դա՞: Իսկ ինչքա՛ն անհայտություն կա մարդկային կյանքի մյուս բնագավառներում: Ահա, պատկերացրեք, օրինակ. մի ամբողջ օր, առավոտից երեկո, բացառապես սպիտակ օղի եք խմում և ուրիշ ոչինչ, իսկ հաջորդ օրը՝ բացառապես կարմիր գինիներ: Առաջին օրը, կեսգիշերին մոտ, մոլագարի պես կլինեք: Կեսգիշերին այնպես կբոցավառվեք, որ աղջիկներն Իվան Կուպալայի գիշերը կարող են թռչել ձեր վրայով: Եվ, պարզից էլ պարզ է, լավ էլ կթռչեն, եթե առավոտից գիշեր բացառապես սպիտակ օղի եք խմել:

Իսկ եթե առավոտից մինչև գիշեր միայն թնդացված կարմիր գինիներ եք խմել: Աղջիկների մտքով անգամ չի անցնի ձեր վրայով թռչել Իվան Կուպալայի գիշերը: Նույնիսկ հակառակը. կնստի աղջիկն Իվան Կուպալայի գիշերով, ու դուք վրայից թռչել չեք կարողանա՝ չխոսելով արդեն որևէ այլ բանի մասին: Իհարկե, պայմանով, որ առավոտից միմիայն կարմիր խմած լինեք...

Այո՛, այո՛, իսկ ինչքան գայթակղիչ փորձարարություններ են պահված նեղ մասնագիտական ոլորտներում: Օրինակ, վերցնենք զկոտոցը: Իմ հիմար հայրենակից Սոլոուխինը ձեզ անտառ է կանչում աղ դրած սունկ հավաքելու: Դե, թքե՛ք դուք նրա աղ դրած սնկերին: Ավելի լավ է զբաղվեք զկոտոցով, այսինքն՝ հարբած զկոտոցի ուսումնասիրությամբ՝ նրա մաթեմատիկական տեսանկյունից:

- Խի՛ղճ ունեցեք,- գոռում են վրաս բոլոր կողմերից:- Մի՞թե աշխարհում դ ր ա ն ի ց բացի ուրիշ բան չկա, որ կարողանար...

- Հենց այդ է որ՝ չկա,- գոռում եմ ես բոլոր կողմերի վրա:- Ոչի՛նչ չկա դրանից բացի: Չկա ոչինչ, որ կարողանար: Ես հիմար չեմ, ես գիտեմ, որ աշխարհում նաև հոգեբուժություն կա, կա արտագալակտիկական աստղագիտություն: Այդ ամենը ճիշտ է:

թվայնացրել է 1915.info կայքը

Բայց չէ՞ որ այդ ամենը մերը չէ, այդ ամենը Պյոտր Մեծն ու Ալեքսանդր Կիբալչիչն են փաթաթել մեր վզին, իսկ մեր կոչումը բնավ էլ այստեղ չէ, մեր կոչումը միանգամայն ուրիշ կողմերում է: Այն կողմերում, ուր կառաջնորդեմ ձեզ, եթե, իհարկե, չհամառեք: Դուք կասեք. «Կոչումը զզվելի ու կեղծ բան է»: Իսկ ես ձեզ կասեմ, ես կրկին կկրկնեմ ձեզ. «Չկա՛ն կեղծ կոչումներ, պետք է հարգել ցանկացած կոչում»:

Եվ թքած ունեմ ձեզ վրա, վերջապես: Ավելի լավ է յանկիներին թողեք արտագալակտիկական աստղաբաշխությունը, իսկ գերմանացիներին՝ հոգեբուժությունը: Թող իսպանացիների պես ամեն կարգի տականքներ գնան իրենց ցլամարտը նայելու, թող սրիկա աֆրիկացին իր Ասուանի ջրամբարտակը կառուցի, թող կառուցի՛ սրիկան, մեկ է՝ քամին քշելու է, տանի, թող Իտալիայի բկին մնա իր ապուշային բելկանտոն, թո՛ղ...

Իսկ մենք, կրկնում եմ, կզբաղվենք զկռտոցով:

33–ՐԴ ԿԻԼՈՄԵՏՐ–ԷԼԵԿՏՐՈՈՒԳԼԻ

Ուսումնասիրությունն սկսելու համար, հասկանալի է, այն պիտի առաջացնենք. կամ՝ ան զիխ (Էմմանուիլ Կանտի տերմինն է), այսինքն՝ առաջ բերենք ինքնին, կամ էլ՝ մեկ ուրիշի մեջ, բայց սեփական շահերից ելնելով, այսինքն՝ ֆյուր զիխ: Էմմանուիլ Կանտի տերմինն է: Ամենից լավն իհարկե՝ և՛ ան զիխ, և՛ ֆյուր զիխ. այն է՝ երկու ժամ անընդմեջ որևէ թունդ բան խմեք, ստարկա կամ ընդախոտի թրմոդի, կամ որսորդական: Խմեք մեծ բաժակներով, ամեն կես ժամը՝ մի բաժակ, հնարավորության դեպքում խուսափելով ցանկացած ուտելիքից: Եթե դա մեկնումեկի համար դժվար է, կարող եք ձեզ նվազագույն նախուտեստ թույլ տալ, բայց որևէ շարքային բան՝ ոչ այնքան թարմ հաց, սովորական աղ դրած մանրաձուկ, լոլիկի մածուկով մանրաձուկ:

թվայնացրել է 1915.info կայքը

Իսկ հետո ժամանոց ընդմիջում: Ոչի՛նչ մի կերեք, ոչի՛նչ մի խմեք, թուլացրեք մկաններն ու մի՛ լարվեք:

Եվ կհամոզվեք ինքներդ. այդ ժամի ավարտին ա յ ն կսկսվի: Երբ առաջին անգամ զկոտաք, ձեզ կապշեցնի սկզբի անսպասելիությունը. հետո կզարմացնի երկրորդ անգամի անկրկնելիությունը, երրորդ անգամինն՝ էթ սեթերա: Բայց եթե հիմար չեք, արագ կդադարեք զարմանալ ու գործի կանցնեք. գրի առեք, թե զկոտոցն ինչ դադարներով է ձեզ արժանի անում իր տեսությանը,- անշուշտ, վայրկյաններով.

- ութ-տասներեք-յոթ-երեք-տասնութ:

Կարող եք, իհարկե, այստեղ որևէ փուլայնություն փնտրել, թեկուզև՝ ամենից մոտավոր, փորձեք, եթե համենայնդեպս հիմար եք, փորձեք որևէ ցնդած բանաձև արտածել, որպեսզի ինչ-որ կերպ կանխատեսեք հաջորդ փուլի տևողությունը: Խնդրե՛մ: Կյանքը, մեկ է, ոտնատակ կանի ձեր բոլոր հորթային մտակառույցները.

- տասնյոթ-երեք-չորս-տասնյոթ-մեկ-քսան-երեք-չորս-յոթ-տասնութ:

Ասում են՝ համաշխարհային պրոլետարիատի առաջնորդները՝ Կարլ Մարքսն ու Ֆրիդրիխ Էնգելսը, մանրակրկիտ ուսումնասիրել են հասարակական ֆորմացիաների հերթագայումը և այդ հիմքի վրա կարողացել են շ ա տ բ ա ն կանխատեսել: Սակայն այս դեպքում անզոր կլինեին կանխատեսել նույնիսկ ամենանվազագույնը: Դուք, սեփական կամքով, ոտք եք դրել ճակատագրապաշտության ոլորտը,- հնազանդվե՛ք ուրեմն ու եղեք համբերատար: Կյանքը խայտառակության կմատնի ձեր և՛ տարրական, և՛ բարձրագույն մաթեմատիկան.

- տասներեք-տասնհինգ-չորս-տասներկու-չորս-հինգ-քսանութ:

Այդպիսին չէ՞ յուրաքանչյուր առանձին մարդու վերելքների և անկումների, խնդումների և փորձանքների հերթագայությունը.- կանոնականության և ոչ մի նշույլ, չէ՞: Նույնքան անկարգ չե՞ն փոխհաջորդվում համամարդկային աղետները: Օրենքը բոլորիցս վեր է: Զկոտոցը վեր է ցանկացած օրենքից: Եվ ինչպես նորերս ձեզ ապշեցրել էր

թվայնացրել է 1915.info կայքը

նրա սկզբի անսպասելիությունը, այնպես էլ կապշեցնի վախճանը, որը դուք, ինչպես մահը, չեք կանխատեսի ու չեք կանխի.

– քսաներկու-տասնչորս-վերջ: Եվ լռություն:

Եվ այդ լռության մեջ ձեր սիրտը ձեզ ասում է. անհնար է ա յ ն ուսումնասիրել, իսկ մենք անզոր ենք: Մենք բացարձակապես զուրկ ենք կամքի ազատությունից, մենք կամայականության իշխանության տակ ենք, որն անուն չունի, և փրկություն որից՝ նույնպես չկա:

Մենք դողահար արարածներ ենք, իսկ ա յ ն՝ ամենազոր: Ա յ ն, այսինքն Աստծո Աջը, որ պարզված է բոլորիս վրա, և որին չեն ցանկանում խոնարհվել միայն ապուշներն ու դուրսպրծուկները: Ա յ ն անհասանելի է մտքին, հետևաբար Ա յ ն գոյություն ունի:

Եվ ուրեմն, կատարյալ եղեք, ինչպես կատարյալ է Հայրը ձեր Երկնային:

ԷԼԵԿՏՐՈՈՒԳԼԻ-43-ՐԴ ԿԻԼՈՄԵՏՐ

Այո՛, շատ խմեք, քիչ կերեք: Դա լավագույն միջոցն է ինքնահավանության ու մակերեսային աթեիզմի դեմ: Նայեք զկոտացող անհավատին. նա ցրված է ու սներես, նա տառապում է և այլանդակ է: Շրջեք նրանից դեմքը ձեր, թքեք ու նայեք ինձ, երբ կսկսեմ զկոտալ. նախախնամությանը հավատացող ու որևէ հակամարտության մասին չմտածող՝ ես հավատում եմ, որ Նա բարիք է, և ինքս էլ դրա համար բարի եմ ու պայծառ:

Նա բարիք է: Նա ինձ տառապանքներից դեպի լույսն է տանում: Մոսկվայից՝ Պետուշկի: Տառապանքների միջով՝ Կուրսկի կայարանում, քավության միջով՝ Կուչինոյում, երազանքների միջով՝ Կուպավնայում՝ դեպի լույս ու Պետուշկի: Դուրխ լյայդեն – լիխտ:

Ես հարթակում ետուառաջ էի անում՝ ավելի ու ավելի հուզվելով, սարսափելի՛ հուզվելով: Եվ շարունակ ծխո՛ւմ էի, շարունակ ծխո՛ւմ էի: Եվ այստեղ մի պայծառ միտք կայծակի պես շանթեց ուղեղս.

թվայնացրել է 1915.info կայքը

- Էլի՛ ինչ խմեմ, որ ա յ ս պոոթկումն էլ չմարի: Ի՞նչ խմեմ Հանուն Քեզ:

Ա՛յ քեզ դժբախտություն: Չունեմ մի բան, որ Քեզ արժանի լինի: Կուբանյանն այնպիսի՛ աղբ է: Իսկ ռուսակա՞նը:- Քո ներկայությամբ ծիծաղելի է ռուսականի մասին խոսելն անգամ: Եվ վարդագույն թունդը՝ մի ռուբլի երեսունյոթ կոպեկով: Աստվա՛ծ իմ...

Ոչ, եթե ես այսօր Պետուշկի հասնեմ,- անփորձա՛նք,- կստեղծեմ մի կ ո կ տ ե յ լ, որը կարելի կլինի առանց ամաչելու խմել Աստծու և մարդկանց ներկայությամբ, մարդկանց ներկայությամբ և հանո՛ւն Աստծու: Ես այն կանվանեմ «Հորդանանյան շիթեր» կամ «Բեթղեհեմի աստղ»: Եթե Պետուշկիում մոռանամ դրա մասին, հիշեցրե՛ք, խնդրում եմ:

Մի՛ ծիծաղեք: Ես կոկտեյլներ ստեղծելու հարուստ փորձ ունեմ: Երկրով մեկ, Մոսկվայից մինչև Պետուշկի, մինչև օրս խմում են այդ կ ո կ տ ե յ լ ն ե ր ը, առանց իմանալու հեղինակի անունը, խմում են «Քանաանի բալասանը», խմում են «Կոմերիտուհու արցունքը», և ճիշտ էլ անում են, որ խմում են: Մենք չենք կարող սպասել բնության ողորմած ընծաներին: Ու որպեսզի վերցնենք դրանք, պիտի, հասկանալի է, իմանանք ճշգրիտ բաղադրատոմսերը. եթե կուզեք, կտամ այդ բաղադրատոմսերը: Լսե՛ք:

Պարզապես օղի խմելը, նույնիսկ շշից, այլ բան չէ, քան անձկություն ոգու և ունայնություն: Օղին խառնել օդեկոլոնի հետ,- դրա մեջ որոշակի քմահաճություն կա, բայց՝ ոչ մի պաթոս: Իսկ ահա մի բաժակ «Քանաանի բալասանն» իր մեջ և՛ քմահաճույք ունի, և՛ գաղափար, և՛ ի լրումն՝ ինչ-որ հղում բնազանցությանը:

«Քանաանի բալասանի» ո՛ր բաղադրամասն ենք ամենից ավելի գնահատում: Իհարկե, դենատուրատը: Բայց չէ՞ որ դենատուրատը, ո գ ե շ ն չ մ ա ն օ բ յ ե կ տ լինելով՝ ինքը կատարելապես զուրկ է ոգեղենությունից: Այդ դեպքում դենատուրատի մեջ ի՞նչն ենք գնահատում ամենից ավելի: Իհարկե, զուտ համային զգացողությունը: Իսկ ավելի՝ այն ժանտահոտը, որ զեղում է: Այդ ժանտահոտն ընդգծելու համար գոնե մի պտղունց բուրմունք է պետք: Դրա

թվայնացրել է 1915.info կայքը

համար դենատուրատին 1:2:1 հարաբերությամբ թավշյա գարեջուր են ավելացնում, ցանկալի է՝ օստանկինյան կամ սենատոր, ու՝ զտած ողորկալաք:

Չեմ հիշեցնի, թե ինչպես են զտում ողորկալաքը: Դա ցանկացած մանկիկ գիտի: Չգիտես ինչու՝ ոչ մեկը Ռուսաստանում չի իմանում, թե ինչից մեռավ Պուշկինը, բայց ողորկալաքն ինչպես է զտվում՝ հայտնի է բոլորին:

Կա՛րճ. գրի առեք «Քանաանի բալասանի» բաղադրատոմսը: Կյանքը մարդուն տրվում է մեկ անգամ, և պետք է այնպես ապրել, որ չսխալվես բաղադրատոմսերի հարցում.

Դենատուրատ—100 գ
Թավշյա գարեջուր—200 գ
Զտած ողորկալաք—100 գ

Եվ այսպես, ձեր առջև «Քանաանի բալասանն» է (ժողովրդյան լեզվով՝ «սևագորշենի»),- հեղուկն իսկապես սևագորշ է՝ չափավոր թնդությամբ ու կայուն բույրով: Դա նույնիսկ բույր էլ չէ, այլ՝ օրհներգ: Դեմոկրատական երիտասարդության օրհներգը: Հենց այդպե՛ս, քանի որ այդ կոկտեյլը խմողի մեջ արթնանում են գոռհկությունն ու խավար ուժերը: Քանի՛ անգամ եմ տեսել...

Ու որպեսզի այդ խավար ուժերի արթնացումն ինչ-որ կերպ կանխվի, կա երկու միջոց: Նախ՝ չխմել «Քանաանի բալասանը», իսկ երկրորդ՝ փոխարենը խմել «Ժնևի ոգի» կոկտեյլ:

Նրա մեջ ոչ մի կաթիլ ազնվազարմություն չկա, բայց առկա է փունջը: Դուք ինձ կհարցնեք՝ ո՞րն է այդ փնջի գաղտնիքը: Ես ձեզ կպատասխանեմ՝ չգիտեմ որն է այդ փնջի գաղտնիքը: Այդ ժամանակ դուք միտք կանեք ու կհարցնեք՝ իսկ ո՞րն է հանելուկի լուծումը: Իսկ լուծումն այն է, որ «Սպիտակ եղրևանին»՝ «Ժնևի ոգու» բաղադրիչը, պետք չէ փոխարինել ուրիշ ոչ մի բանով՝ ոչ հասմիկով, ոչ շիպրով, ոչ հովտաշուշանով: «Բաղադրիչների աշխարհում համարժեքներ չկան»՝ ինչպես ասում էին

թվայնացրել է 1915.info կայքը

հին ալքիմիկոսները, իսկ նրանք գիտեին՝ ինչ են ասում: Այսինքն՝ «Արծաթագույն հովտաշուշանը» ձեզ համար «Ճերմակ եղրևանի» չէ, նույնիսկ բարոյականության տեսանկյունից, չխոսելով արդեն փնջերի մասին:

«Հովտաշուշանն», օրինակ, փոթորկում է միտքը, տագնապեցնում խիղճը, ամրապնդում իրավագիտակցությունը: Իսկ «Ճերմակ եղրևանին», հակառակը, ամոքում է խիղճը և մարդուն հաշտեցնում կյանքի արատների հետ...

Իմ դեպքում այսպես էր. կխմեի մի ամբողջ սրվակ «Արծաթագույն հովտաշուշան», հետո կնստեի ու լաց կլինեի: Ինչո՞ւ եմ լալիս,- որովհետև մայրիկիս եմ հիշել, այսինքն՝ հիշել ու չեմ կարողանում մոռանալ մայրիկիս: «Մայրի՛կ»՝ ասում եմ: Ու լաց եմ լինում: Ու հետո նորից. «Մայրի՛կ»՝ ասում եմ ու կրկին լաց եմ լինում: Մեկ ուրիշը, ավելի հիմարը, այդպես էլ կնստեր ու լաց կլիներ: Իսկ ե՞ս: Վերցրի «Եղրևանու» սրվակը ու խմեցի: Եվ ի՞նչ եք կարծում: Արցունքներս չորացան, մի հիմար ծիծաղ բռնեց, իսկ մայրիկիս,- նույնիսկ անուն-հայրանունն էի մոռացել:

Եվ որքա՞ն ծիծաղելի է ինձ համար նա, ով «Ժնևի ոգի» պատրաստելիս ոտների քրտինքի դեղամիջոցին «Արծաթագույն հովտաշուշան» է խառնում:

Ահա ճշգրիտ բաղադրատոմսը.

Սպիտակ եղրևանի—50 գ
Դեղամիջոց ոտքերի քրտնելու դեմ—50 գ
Ժիգուլևյան գարեջուր—200 գ
Սպիրտային լաք—150 գ

Բայց եթե մարդը չի ուզում ոտնատակ անել տիեզերքը, թող գրողի ծոցն ուղարկի թե՛ «Քանաանի բալասանը», թե՛ «Ժնևի ոգին»: Ավելի լավ է նստի սեղանի մոտ և իր համար «Կոմերիտուհու արցունք» պատրաստի: Բուրավետ ու տարօրինակ է այդ կոկտեյլը: Թե ինչու է բուրավետ՝ կիմանաք հետո: Սկզբում բացատրեմ, թե ինչով է տարօրինակ:

թվայնացրել է 1915.info կայքը

Զուտ օղի խմողը պահպանում է և՛ մտքի սթափությունը, և՛ պայծառ հիշողությունը, կամ հակառակը՝ միանգամից կորցնում է թե՛ առաջինը, թե՛ երկրորդը: Իսկ «Կոմերիտուհու արցունքի» պարագայում պարզապես ծիծաղելի է. խմում ես հարյուր գրամ այդ արցունքից՝ հիշողությունդ պայծառ է, իսկ մտքի սթափություն ասես երբևէ չես էլ ունեցել: Խմում ես էլի հարյուր գրամ ու զարմանում քեզ վրա. որտեղի՞ց հայտնվեց այսքան մտքի սթափություն և ո՞ւր չքացավ ամբողջ պայծառ հիշողությունը:

«Արցունքի» բաղադրատոմսն անգամ բուրավետ է: Իսկ պատրաստի կոկտեյլից, նրա բուրմունքից կարելի է մի պահ կորցնել զգացմունքներն ու գիտակցությունը: Ես, օրինակ, կորցրել եմ:

Նարդոս—15 գ
Աղավնիճ—15 գ
Օդեկոլոն «Անտառային ջուր»—30 գ
Եղունգի լաք—2 գ
Ատամի հեղուկ—150 գ
Լիմոնադ—150 գ

Այս եղանակով պատրաստված լուծույթը պետք է քսան րոպե խառնել ցախկեռասենու ճյուղով: Ոմանք, ճիշտ է, պնդում են, թե անհրաժեշտության դեպքում ցախկեռասենին կարելի է փոխարինել գայլուկով: Դա սխալ ու հանցավոր մոտեցում է: Կտոր-կտոր արեք ինձ, մեկ է՝ չեք ստիպի «Կոմերիտուհու արցունքը» խառնել գայլուկով. ես ցախկեռասով կխառնեմ: Ուղղակի ծիծաղից կոտորվում եմ, երբ իմ ներկայությամբ «Արցունքը» ոչ թե ցախկեռասով, այլ գայլուկով են խառնում...

Բայց հերիք է խոսենք «Արցունքի» մասին: Հիմա ձեզ առաջարկում եմ վերջինն ու լավագույնը: «Գործոց պսակը թանկ է պարգևից»՝ ինչպես ասել է բանաստեղծը: Կարճ. ես ձեզ առաջարկում եմ «Շան փորոտիք» կոկտեյլը, ըմպելիք, որ մթագնում է մնացյալ ամեն ինչ: Դա արդեն ըմպելիք չէ,- դա մեղեդին է երկնոլորտների: Աշխարհում

թվայնացրել է 1915.info կայքը

ի՞նչն է ամենահրաշալին՝ պայքարը մարդկության ազատագրման համար: Ու նաև հրաշալի է ահա թե ինչը (գրե՛ք).

Ժիգուլևյան գարեջուր—100 գ
Շամպուն «Սադկո՝ հարուստ հյուր»—30 գ
Մազերի թեփը մաքրելու լուծույթ —70 գ
ԲՖ սոսինձ — 12 գ
Արգելակային հեղուկ —35 գ
Միջատասպան լուծույթ—20 գ

Այդ ամենը մեկ շաբաթ թրմվում է սիգարի տարատեսակ թութունով ու մատուցվում...

Ես նամակներ էի ստանում, ի դեպ. պարապ-սարապ ընթերցողներն առաջարկում էին ահա թե էլի ինչ. այս եղանակով ստացված թուրմը ի լրումն անցկացնել նաև քամիչով: Այսինքն՝ լցնել քամիչն ու պառկել քնելու... Դա արդեն սատանան գիտի, թե ինչ է, և բոլոր այդ լրացումներն ու ճշտումները երևակայության զառամությունից են, մտքի թռիչքի անբավարարությունից. ահա թե որտեղից են այդ անհեթեթ ճշտումները...

Եվ այսպես, «Շան փորոտիքը» մատուցված է սեղանին: Խմեք առաջին աստղի հայտնվելուն պես, մեծ կումերով: Այդ կոկտեյլի արդեն երկու գավաթից հետո մարդն այնպես է ոգեշնչվում, որ կարելի է մոտենալ ու մեկուկես մետրից կես ժամ շարունակ թքել ռեխին, ու նա քեզ ոչինչ չի ասի:

43-ՐԴ ԿԻԼՈՄԵՏՐ-ԽՐԱՊՈՒՆՈՎՈ

Գոնե հասցրի՞ք որևէ բան գրի առնել: Դե, ուրեմն այդքանն էլ բավական է, առայժմ... Իսկ Պետուշկիո՛ւմ, Պետուշկիում խոստանում եմ ձեզ բացել «Հորդանանյան շիթերի» գաղտնիքը, եթե ողջ տեղ հասնեմ, եթե Աստված ողորմած է:

թվայնացրել է 1915.info կայքը

Իսկ հիմա եկեք միասին մտածենք՝ ի՞նչ խմեմ հիմա: Ի՞նչ կոմբինացիա կարելի է ստանալ այս ոջլոտությունից, որ մնացել է իմ ճամպրուկում: «Մորաքույր Կլավայի համբո՛ւյրը»: Երևի թե՝ այո: Իմ փոքրիկ ճամպրուկից արդեն որևէ ուրիշ «Համբույր» չես էլ քաղի, բացի «Առաջին համբույրից» ու «Մորաքույր Կլավայի համբույրից»: Բացատրե՛մ ձեզ՝ ինչ ասել է՝ «Համբույր»: «Համբույրը» կարմիր գինին է՝ մեկին մեկ խառնած ցանկացած օղու հետ: Ասենք՝ խաղողի չոր գինին պլյուս պղպեղօղին կամ կուբանյանը՝ «Առաջին համբույրն» է: Տնաքաշ օղու և 33 պորտվեյնի խառնուրդը՝ «Զոռով համբույրը» կամ, ավելի պարզ, «Համբույրն առանց սիրո» կամ, ավելի ավելի պարզ, «Ինեսա Արմանդ»: Ինչ համբույր ասես կա: Ու որպեսզի սիրտդ այդ «Համբույրներից» չխառնի, մանկուց պիտի վարժվես:

Իմ ճամպրուկում կուբանյան կա: Բայց խաղողի չոր գինի չունեմ: Նշանակում է՝ «Առաջին համբույրն» էլ ինձ համար բացառված է, կարող եմ միայն երազել նրա մասին: Բայց իմ ճամպրուկում մեկուկես քառորդ ռուսական կա ու վարդագույն թունդ՝ մի ռուբլի երեսունյոթով: Նրանց միագումարն էլ մեզ տալիս է «Մորաքույր Կլավայի համբույր»: Համաձայն եմ. համային որակներով աչքի չի ընկնում, սրտխառնոցի համար մի հատ է, ամենաճիշտը դրանով ֆիկուս ջրելը կլիներ, քան շշից խմելը,- համաձայն եմ, բայց ի՞նչ անես, եթե չոր գինի չկա, եթե նույնիսկ ֆիկուս չկա: Ստիպված ես խմել «Մորաքույր Կլավայի համբույրը»:

Մտա վագոն, որ իմ ունեցած անպետքությունը խառնեմ «Համբույրին»: Օ՛, ինչ վաղուց այստեղ չեմ եղել: Այն ժամանակներից, որ խմեցի Նիկոլսկում...

Ինձ վրա, ինչպես և նախորդ անգամ, տասնյակ աչքերով, խոշոր, ամեն ինչի պատրաստ, ուղեծրերից դուրս պրծնող աչքերով՝ իմ աչքերի մեջ էր նայում իմ հայրենիքը՝ ուղեծրից դուրս պրծնող, ամեն ինչի պատրաստ և մեծ: Մի ժամանակ, հարյուր հիսուն գրամ ռուսականից հետո, ինձ դուր էին գալիս այդ աչքերը: Հիմա կուբանյանի հինգ հարյուրից հետո սիրահարված էի այդ աչքերին, սիրահարված՝

թվայնացրել է 1915.info կայքը

խենթի պես: Վագոն մտնելով՝ մի քիչ օրորվեցի, սակայն իմ նստարանին մոտեցա միանգամայն անկախ տեսքով ու համենայնդեպս՝ թեթև ժպտալով:

Մոտեցա ու քար կտրեցի: Որտե՞ղ է ռուսականի իմ քառորդանոցը: Ո՞ւր է այն քառորդանոցը, որ Մուրճ ու Մանգաղի մոտ հազիվ կես էի գցել: Մուրճ ու Մանգաղից սկսած՝ ճամպրուկիս կողքին էր, մեջը համարյա հարյուր գրամ կար,- ո՞ւր է հիմա:

Հայացքով տնտղեցի բոլորին. ոչ ոք աչք չթարթեց: Ո՛չ, հաստատ սիրահարված ու խենթ եմ: Ե՞րբ չվեցին հրեշտակները: Նրանք իմ բացակայությամբ համենայնդեպս պահպանում էին ճամպրուկս,- ե՞րբ թռան-հեռացան ինձնից: Կուչինոյի շրջանո՞ւմ: Այդպե՞ս: Ուրեմն, գողացել են Կուչինոյի և 43-րդ կիլոմետրի արանքում: Քանի դեռ զգացումներիս խնդությունն էի կիսում ձեզ հետ, քանի դեռ ձեզ հաղորդակից էի անում կեցության գաղտնիքներին,- ինձ այդ ընթացքում գրկեցին «Մորաքույր Կլավայի համբույրից»... Ես պարզամտորեն ոչ մի անգամ ներս չէի նայել այդ ամբողջ ընթացքում,- մաքուր կոմեդիա... Բայց հիմա,- «վերջ պարզամտությանը», ինչպես ասել է թատերագիր Օստրովսկին: Եվ՝ ֆինիտա լյա կոմեդիա: Ամեն պարզամտություն չէ, որ սուրբ է: Եվ ամեն կատակերգություն չի աստվածային... Բավական է պղտոր ջրում ձկնիկ բռնենք,- մարդի՛կ որսալու ժամանակն է...

Բայց ինչպե՞ս որսաս և ո՞ւմ որսաս...

Սատանան գիտի, թե որ ժանրում կհասնեմ Պետուշկի... Մոսկվայից սկսած զուտ փիլիսոփայական էսսեներ ու հուշագրություններ էին, լրիվ՝ արձակ բանաստեղծություններ՝ ինչպես Իվան Տուրգենևինը... Հիմա սկսվում է դետեկտիվ վիպակը: Ես նայեցի ճամպրուկիս մեջ. մնացած ամե՞ն ինչ տեղում է: Ամեն ինչ տեղում էր: Բայց ո՞ւր է այդ հարյուր գրամը և ո՞ւմ բռնել...

Ես նայեցի աջ. այնտեղ դեռ նստած էին այն երկուսը՝ բո՛ւթ-բո՛ւթն ու խելացի՛-խելացի՛ն: Բամբակաբաճկոնով բութը վաղուց արդեն թմրել ու քնած էր: Իսկ կովերկոտե վերարկուով խելացին նստել է բութի դիմաց ու արթնացնում է: Ու մի տեսակ անմարդկային է

թվայնացրել է 1915.info կայքը

արթնացնում. բռնում է կոճակից ու կիպ մոտ քաշում՝ աղեղ լարելու պես,- ու բաց է թողնում. ու բամբակաբաճկոնով բո՛ւթ-բո՛ւթը թռչում է նախկին տեղը՝ մխրճվելով նստարանի թիկնակի մեջ, ինչպես Ամուրի բութ նետը մարդու սիրտն է խրվում...

«Տրանսցենդենտալ է»,- մտածեցի ես: Տեսնես՝ վաղո՞ւց է նրան այդպես... Չէ՛, այս երկուսը գողանալ չէին կարող: Նրանցից մեկը բամբակած բաճկոնով է, ճիշտ է, իսկ մյուսը քնած չէ,- նշանակում է՝ սկզբունքորեն երկուսն էլ կարող էին գողանալ: Բայց չէ՞ որ մեկն, ախր, քնած է, իսկ մյուսը՝ կովերկոտե վերարկուով. ուրեմն ո՛չ սա, ո՛չ մյուսը գողանալ չէին կարող...

Ես ետ նայեցի.- ո՛չ, այնտեղ նույնպես չկա մի բան, որ խելոք միտք հուշեր. այն երկուսն, իհարկե, հուշում են, բայց լրիվ ուրիշ միտք: Շատ տարօրինակ մարդիկ են այդ երկուսը. տղամարդ ու կին: Նստել են վագոնի հակառակ կողմերում, հակադիր պատուհանների տակ և ակնհայտորեն անծանոթ են իրար: Բայց, այդ ամենով հանդերձ, տարօրինակության աստիճանի նման են. տղամարդը՝ կարճլիկ ժակետով ու կինը՝ կարճլիկ ժակետով, սա՝ դարչնագույն բերետով ու բեղերով, և նա՝ բեղերով ու դարչնագույն բերետով...

Ես տրորեցի աչքերս ու մի անգամ էլ նայեցի... Ապշեցուցիչ նմանություն է. ու երկուսն էլ ժամանակ առ ժամանակ զննում են իրար՝ հետաքրքրությամբ ու զայրույթով... Պարզ բան է. նրանք չէին կարող գողանալ:

Իսկ առջևո՞ւմ: Ես նայեցի առաջ:

Իսկ առջևում՝ նույնը: Տարօրինակ են միայն երկուսը՝ պապ ու թոռնիկ: Թոռնիկը երկու գլուխ երկար է պապից և՝ ի ծնե խելապակաս: Պապիկը երկու գլուխ կարճ է, բայց նույնպես խելապակաս: Երկուսն էլ ուղիղ նայում են աչքերիս ու շրթունքներն են լպստում...

«Կասկածելի է»,- մտածեցի ես: Ինչո՞ւ պիտի այդպես լպստեին: Մյուսներն էլ, չէ՞, նայում են աչքերիս մեջ, բայց չեն լպստում: Խի՛ստ կասկածելի է... Ես սկսեցի զննել նրանց, նույնքան սևեռուն, որքան՝ իրենք ինձ:

Ոչ, թոռնիկը կատարյալ ապուշ է: Նրա վիզն էլ մի տեսակ մյուսների նման չէ, նրա վիզը ոչ թե ներաճում է իրանի մեջ, այլ մի տեսակ դուրս է աճում՝ անրակների հետ ձգվելով դեպի ծոծրակը: Ու շնչելն

թվայնացրել է 1915.info կայքը

էլ մի տեսակ ապուշավարի է. սկզբում արտաշնչում է, հետո՝ ներշնչում, այն դեպքում՝ երբ բոլոր մարդիկ հակառակն են անում. նախ ներշնչում, ապա արտաշնչում են: Իսկ նա նայում է վրաս, նայում է՝ աչքերը չռած ու բերանը կկոցելով...

Եվ պապիկն էլ. սա ավելի լարված է նայում, նայում է՝ ինչպես հրանոթի փողի մեջ: Եվ այնպիսի՛ կապույտ, այնպիսի՛ ուռուցվորած աչքերով, որ այդ երկու աչքերից, ինչպես երկու ջրահեղձներից, խոնավությունը կաթկթում է ուղիղ սապոգներին: Եվ ինքն էլ ամբողջովին՝ ասես բարձրագույն պատժի դատապարտված, և մեռելություն է ճաղատ գլխին: Ու սֆաթը՝ չեչոտ, ինչպես դիմահար գնդակահարվածինը: Եվ գնդակահար սֆաթի կենտրոնում ուռած ու կապտած քիթը կախվել ու ճոճվում է խեղդամահ ծերունու պես...

«Շա՛ա՛ա՛տ կասկածելի է»,- մի անգամ էլ մտածեցի ես: Ու տեղս կանգնելով՝ մատի շարժումով մոտ կանչեցի նրանց:

Երկուսն էլ անհապաղ վեր թռան ու նետվեցին ինձ մոտ՝ շարունակելով լպստել շրթունքները: «Սա նույնպես տարօրինակ է,- մտածեցի,- նրանք, իմ կարծիքով, նույնիսկ ավելի շուտ վեր թռան, քան մատով կանեի»...

Ես նրանց հրավիրեցի նստել դեմուդեմ:

Երկուսն էլ նստեցին՝ սևեռուն զննելով փոքրիկ ճամպրուկս: Թոռնիկը մի տեսակ տարօրինակ էր նստել: Բոլորս նստում ենք հետույքին, իսկ նա նստել էր՝ մի տեսակ հակվելով ձախ կողին, և ասես մի ոտքն՝ ինձ, իսկ մյուսը պապիկին առաջարկելով:

- Անունդ ի՞նչ է, հայրի՛կ, և ո՛ւր ես գնում...

ԽՐԱՊՈՒՆՈՎՈ-ԵՍԻՆՈ

- Ինձ Միտրիչ են ասում: Սա էլ թոռնիկս է, ինքն էլ է Միտրիչ... Օրեխովո ենք գնում, զբոսայգի... կարուսել նստենք...

Իսկ թոռնիկն ավելացրեց.

թվայնացրել է 1915.info կայքը

– Ի–ի–ի–ի–ի...

Անսովոր էր այդ ձայնը, ու չափազանց ցավալի է, որ չեմ կարողանում ինչպես հարկն է վերարտադրել: Նա չէր խոսում, ծղրտում էր: Եվ ոչ բերանով, քանի որ բերանը շարունակ կկոցված էր ու մի տեսակ ծոծրակից էր սկսվում, այլ՝ ձախ քթանցքով, և այնպիսի ջանքով, ասես ձախ քթանցքը աջով էր բարձրացնում. «Ի–ի–ի–ի–ի... ինչ արա՛գ ենք գնում Պետուշկի, փառապանծ Պետուշկի»... «Ի–ի–ի–ի–ի... ինչ հարբած պապի՛կ է, լավ պապիկ է»...

– Այդպե՛ս: Ասում ես, ուրեմն, կարուսել նստելու...

– Կարուսե՛լ:

– Իսկ գուցե, համենայնդեպս, ո՛չ կարուսել...

– Կարուսել,– մի անգամ էլ հաստատեց Միտրիչը նույն դատապարտված տեսքով, և խոնավությունն աչքերից ծորում ու ծորում էր...

– Իսկ ասա ինձ, Մի՛տրիչ, ի՞նչ էիր անում դու այստեղ, քանի դեռ ես վագոնի հարթակին թաղված էի մտորումներիս մեջ: Մտորումներիս մեջ իմ զգացմունքի շուրջ՝ առ սիրած կինը: Հը՞: Ասա՛...

Միտրիչը անշարժ մնալով՝ մի տեսակ սկսեց վազել:

– Ես... ոչինչ: Ես պարզապես ուզում էի կոմպոտ ուտել... Կոմպոտ՝ սպիտակ հացով...

– Կոմպոտ՝ սպիտակ հացո՛վ...

– Կոմպոտ՝ սպիտակ հացով...

– Հրաշալի՛ է: Նշանակում է՝ այսպես. ես կանգնած եմ հարթակին և ամբողջովին սուզված իմ զգացմունքի մասին մտքերի մեջ: Իսկ դուք այդ ընթացքում տնտղում եք՝ իմ նստարանին սպիտակ հացով կոմպոտ կա՛... Եվ կոմպոտ չգտնելով...

Պապիկն առաջինը տեղի տվեց ու լրիվ ողողվեց արցունքներով: Իսկ նրա ետևից՝ թոռնիկը. վերին շրթունքն ամբողջությամբ ինչ-որ տեղ չքացավ, իսկ ստորինը կախվեց մինչև պորտը՝ դաշնակահարի մազերի նման... Երկուսն էլ լալիս էին...

– Ես ձեզ հասկանում եմ, այո՛: Ես ամեն ինչ կարող եմ հասկանալ, եթե ցանկանամ ներել... Իմ հոգին, տրոյական ձիու փորի պես,

թվայնացրել է 1915.info կայքը

շ ա տ բ ա ն կտեղավորի: Ես ամեն ինչ կներեմ, եթե ցանկանամ հասկանալ: Իսկ ես հասկանում եմ. դուք պարզապես կոմպոտ ու սպիտակ հաց եք ուզում: Բայց իմ նստարանին չեք գտնում ո՛չ մեկը, ո՛չ մյուսը: Եվ դուք ուղղակի ս տ ի պ վ ա ծ ե ք խմել այն, ինչ գտնում եք,- նրա փոխարեն, ինչը չէիք ցանկանա...

Ես նրանց ճգմեցի հանցանշաններով. նրանք ծածկել էին դեմքերը, երկուսն էլ, ու ճոճվում էին՝ իմ մեղադրանքների տակտով:

- Դուք ինձ հիշեցնում եք մի ծերուկի, Պետուշկիից: Նա՝ նույնպես, նա էլ դրսային էր խմում, միայն գողոն. կգողանա, օրինակ, դեղատնից մի սրվակ օդեկոլոն, կմտնի կայարանի զուգարանն ու սուսուփուս կխմի: Դրան ասում էր «բրուդերշաֆտ խմել», լրջորեն համոզված էր, որ հենց դա է «բրուդերշաֆտ խմելը», նա այդպես էլ մեռավ մոլորության մեջ... Եվ ուրե՛մն... Նշանակում է՝ որոշել եք բրուդերշա՛ֆտ...

Նրանք անվերջ օրորվում ու լալիս էին, իսկ թոռնիկը վշտից նույնիսկ սկսեց թևատակերը թարթել...

- Սակայն՝ վե՛րջ արտասուքին: Ես եթե ցանկանամ հասկանալ, ամեն ինչ կպարունակեմ: Իմ գլուխը գլուխ չէ, այլ հասարակաց տուն: Եթե ուզում եք, կարող եմ էլի հյուրասիրել: Արդեն հիսունական գրամ խմել եք. կարող եմ էլի հիսունական լցնել...

Այդ պահին ինչ-որ մեկը ետևից մոտեցավ մեզ ու ասաց.

- Ես էլ եմ ուզում ձեզ հետ խմել:

Բոլորս միանգամից նայեցինք նրան: Սևաբեղն էր՝ կարճ ժակետով ու դարչնագույն բերետով:

- Ի-ի-ի-ի-ի-ի-ի-ի,- մնչաց ջահել Միտրիչը,- ի՞նչ քեռի է, ի՞նչ խորամանկ քեռի...

Սևաբեղը բեղատակից նայելով՝ կտրեց նրա խոսքը.

- Ոչ էլ խորամանկ եմ: Ես չեմ գողանում, ինչպես ոմանք: Ես անծանոթ մարդկանցից չեմ գողանում առաջին անհրաժեշտության պիտույքները: Ես իմ ունեցածով եմ եկել. ահա՛...

Եվ նստարանիս մի շիշ մայրաքաղաքային դրեց:

թվայնացրել է 1915.info կայքը

– Իմից չե՞ք հրաժարվի,– հարցրեց:

Ես նեղ արեցի, որ նրան տեղ տամ նստարանի վրա:

– Չէ, հետո գուցե և չհրաժարվեմ, բայց մինչ այդ իմն եմ ցանկանում: Մորաքույր Կլավայի համբույրը:

– Մորաքույր Կլավայի՞:

– Մորաքույր Կլավայի:

Մենք լցրինք. ամեն մեկս՝ իրենը: Պապ ու թոռ ինձ պարզեցին իրենց ամանեղենը. պարզվում է՝ վաղուց պատրաստած պահել էին, շա՛տ ավելի վաղուց, քան կսկսեի հասկանալ նրանց: Պապը դուրս քաշեց դատարկ քառորդ լիտրանոցը. ես այն ճանաչեցի: Իսկ թոռնիկը. սա արդեն մի ամբողջ շերեփ հանեց, և հանեց ցայլքի ու ստոծանու տակից...

Ես նրանց համար լցրի՝ ինչքան խոստացել էի, ու նրանք ժպտացին:

– Բրուդերշա՛ֆտ, բալիկնե՛ր:

– Բրուդերշա՛ֆտ:

Բոլորը խմեցին, գլուխները ետ գցելով, դաշնակահարների պես...

«Մեր գնացքը Եսինո կայարանում չի՛ կանգնում: Կանգառը՝ բոլոր բնակավայրերում, բացի Եսինոյից»:

ԵՍԻՆՈ–ՖՐՅԱԶԵՎՈ

Խշխշոց ու չմփչմփոց սկսվեց: Ասես դաշնակահարը, որ մի գլուխ խմում ու խմում էր, հիմա արդեն խմել էր ամբողջն ու թաղվելով իր մազերի մեջ՝ սկսեց նվագել Ֆերենց Լիստի «Անտառի աղմուկ» դոդդիեզ մինոր էտյուդը:

Առաջինը խոսեց ժակետով սևաբեղը: Ու, չգիտես ինչու, միայն ինձ էր դիմում:

– Իվան Բունինի մոտ կարդացել եմ, որ շիկահերները շատ խմելուց անպայման կարմրում են:

– Ասենք թե, և ի՞նչ:

թվայնացրել է 1915.info կայքը

- Այսինքն, ինչպե՞ս թե «և ինչ»: Իսկ Կուպրինն ու Գորկին. ընդհանրապես աչք չէին բացում:

- Հրաշալի է, հետո՞:

- Այսինքն, ինչպե՞ս թե «հետո»: Անտոն Չեխովի մահառաջի խոսքն ի՞նչ էր: Նա ասաց. «Իխ շտերբե», այսինքն՝ «Ես մեռնում եմ»: Հետո ավելացրեց. «Շամպայն լցրեք ինձ համար»: Ու նոր միայն մեռավ:

- Այդպե՞ս ուրեմն...

- Իսկ Ֆրիդրիխ Շիլլերը. ոչ միայն մեռնել, նույնիսկ ապրել չէր կարողանում առանց շամպայնի: Նա գիտե՞ք ինչպես էր գրում: Կդներ ոտները սառցաջրով կոնքի մեջ, իր համար շամպայն կլցներ ու կգրե՞ր: Մի գավաթ կգցեր՝ ողբերգության մի ամբողջ գործողություն պատրաստ է: Հինգ գավաթ կգցեր՝ պատրաստ է ամբողջ ողբերգությունը՝ հինգ գործողությամբ:

- Այդպե՞ս, այդպե՞ս, այդպե՞ս... Դե՛, և...

Նա վրաս մտքեր էր շպրտում, ինչպես հաղթահերոսը՝ տասնոցներ, ու ես մի կերպ էի հասցնում հավաքել: «Դե՛, և...»:

- Դե՛, և Նիկոլայ Գոգոլը...

- Նիկոլայ Գոգոլն ի՞նչ...

- Նա միշտ, երբ Ակսակովների մոտ էր լինում, խնդրում էր իր համար առանձնահատուկ, վարդագույն գավաթը դնել...

- Եվ վարդագույն գավաթո՞վ էր խմում:

- Այո՛: Եվ խմում էր վարդագույն գավաթով:

- Իսկ ի՞նչ էր խմում:

- Ո՞վ գիտի: Դե, ինչ կարելի է խմել վարդագույն գավաթով: Իհարկե, օղի...

Ե՛վ ես, և՛ երկու Միտրիչները ուշադիր լսում էինք: Իսկ նա՝ սևաբեղը, ծիծաղում ու ծիծաղում էր՝ ասես կանխավ ճաշակելով նորանոր հաղթանակների հաճույքը...

- Իսկ Մոդե՞ստը, Մուսորգսկին: Աստվա՛ծ իմ, իսկ Մոդեստ Մուսորգսկի՞ն: Գիտե՞ք ինչպես է գրել իր «Խովանշչինա» անմահ

թվայնացրել է 1915.info կայքը

օպերան: Մոդեստ Մուսորգսկին, ուրեմն, հարբած-ընկած է առվի մեջ, ու մոտով անցնում է Նիկոլայ Ռիմսկի-Կորսակովը՝ սմոքինգը հագին, բամբուկե ձեռնափայտով: Կանգ է առնում Նիկոլայ Ռիմսկի-Կորսակովը, բոթում է Մոդեստին իր ձեռնափայտով ու ասում է. «Վե՛ր կաց: Գնա լվացվիր ու նստիր ավարտելու քո «Խովանշչինա» անմահ օպերան»:

Եվ ահա նստած են. Նիկոլայ Ռիմսկի-Կորսակովը բազկաթոռի մեջ է նստած, ոտքը ոտքին, ցիլինդրը ձեռքին բռնած: Իսկ նրա դիմաց՝ Մոդեստ Մուսորգսկին. տառապա՛ծ, անթրա՛շ, նստարանին կծկված՝ քրտնում ու գրում է իր նոտաները: Մոդեստը, նստարանին կծկված, ուզում է խումհարաթող լինի. նրա ինչի՛ն են նոտաները: Իսկ Նիկոլայ Ռիմսկի-Կորսակովը, ցիլինդրը ձեռքին, չի թողնում խումհարաթող լինի:

Բայց հենց որ փակվում է դուռը Ռիմսկի-Կորսակովի ետևից, թողնում է Մոդեստն իր «Խովանշչինա» անմահ օպերան ու թրը՛մփ՝ առվի մեջ: Հետո վեր է կենում ու՝ նորի՛ց խումհարաթողի, ու նորից՝ թրը՛մփ... Իմիջիայլոց, սոցիալ-դեմոկրատներ են...

- Կարդացա՛ծ է սատանան,- հիացմունքով ընդհատեց նրան տարեց Միտրիչը, իսկ ջահելն ուշադրությունը չափազանց լարելուց ինքն իր մեջ ամփոփեց բոլոր մազերն ու եղյամակալեց...

- Այո՛, այո՛, ես կարդալ շատ եմ սիրում: Աշխարհում այնքա՛ն հրաշալի գրքեր կան,- շարունակում էր ժակետով մարդը,- ես, օրինակ, կխմեմ մի ամիս, երկու, հետո կբռնեմ ու որևէ գրքույկ կկարդամ, և այնքան լավը կթվա ինձ այդ գրքույկը, իսկ ինքս՝ այնպիսի՛ հիմար, որ տրամադրությունս լրիվ կփչանա ու չեմ կարողանա շարունակել, կթողնեմ գիրքն ու կսկսեմ խմել, մի ամիս կխմեմ, երկու, իսկ հետո...

- Սպասի՛ր,- արդեն ես ընդմիջեցի նրան,- սպասի՛ր: Իսկ սոցիալ-դեմոկրատնե՞րն ինչ:

- Ինչ սոցիալ-դեմոկրատներ: Ինչո՞ւ միայն սոցիալ-դեմոկրատները: Ռուսաստանի բոլոր արժեքավոր մարդիկ, նրան պ ի տ ա ն ի բոլո՛ր մարդիկ,- բոլորը խմել են, խոզի պես: Իսկ ավելորդները,

թվայնացրել է 1915.info կայքը

ապաշնորհները՝ ո՛չ, չե՛ն խմել: Վերցնենք Եվգենի Օնեգինին. ընդամենը հապալասի ջուր խմեց Լարիններին հյուր եղած ժամանակ ու դրանից փորհարինք ընկավ: Իսկ Օնեգինի ազնիվ ժամանակակիցներն այդ ընթացքում «լաֆիտի ու կլիկոյի արանքում» (նկատի առեք՝ «լաֆիտի ու կլիկոյի արանքում») «խռովարար գիտություն» ու դեկաբրիզմ էին երկնում... Ու երբ նրանք վերջապես արթնացրին Գերցենին...

- Բա ո՛նց, կարթնացնես դրան, ձեր էդ Գերցենին,- աջից գոմռաց ինչ-որ մեկը: Մենք ցնցվեցինք ու դարձանք դեպի աջ: Կովերկոտե վերարկուով Ամուրն էր գոմռացողը:- Նա դեռ Խրապունովոյում պիտի իջներ, էդ Գերցենը, բայց գնում ու գնում է շան որդին...

Բոլոր նրանք, որ ի վիճակի էին ծիծաղել, ծիծաղեցին. «Դե, հանգիստ թող դու դրան, գրողի՛ տարած, դեկաբրիստի՛ մեկը», «Ականջները լվա, ականջնե՛րը», «Ի՞նչ տարբերություն՝ Խրապունովո՛ կգնաս, թե՛ Պետուշկի: Կարող է՝ մարդու սիրտը Պետուշկի է ուզել, իսկ դու նրան քշում ես Խրապունովո»: Բոլորն իրար աննկատ աչքով էին անում, աննկատ ու ցնծագին, աննկատ ու այլանդակ... Ու ես էլ՝ նրանց հետ...

Ես դարձա ժակետով սևաբեղին.

- Դե՛, ենթադրենք, արթնացրին նրանք Ալեքսանդր Գերցենին, բայց ի՞նչ կապ ունեն դրա հետ դեմոկրատներն ու «Խովանշչինան»...

- Հենց լավ էլ կապ ունեն: Դրանից էլ հենց սկսվեց ամենագլխավորը՝ արա՛ղը սկսվեց կլիկոյի փոխարեն, ռազնոչինությունը սկսվեց, տուրուդմփոցն ու խովանշչինան: Բոլոր այդ Ուսպենսկիները, բոլոր այդ Պոմյալովսկիները. նրանք բառ անգամ չէին կարողանում գրել առանց խմելու: Ես կարդացել եմ, ես գիտեմ: Մոլեգի՛ն էին խմում, կատաղի՛: Ռուսաստանի բոլոր ազնիվ մարդիկ: Իսկ ինչո՞ւ էին նրանք խմում. հուսահատությունից էին խմում, խմում էին, որովհետև ազնիվ էին, որովհետև ուժ չունեին թեթևացնելու ժողովրդի վիճակը: Ժողովուրդը խեղդվում էր աղքատությունից ու տգիտությունից: Կարդացեք Դմիտրի Պիսարևի գործերը: Նա հենց այդպես

թվայնացրել է 1915.info կայքը

էլ գրում է. Ժողովուրդը չի կարողանում միս գնել, իսկ օրին մսից էժան է, դրանից էլ խմում է ռուս գեղջուկը, իր աղքատությունից է խմում: Նա իր համար գիրք չի կարող գնել, քանի որ բազարում ո՛չ Գոգոլ կա, ո՛չ Բելինսկի, հենց մենակ օրին է՝ թե՛ մենաշնորհային, թե՛ ուզածդ, թե՛ լցնովի, թե՛ տանելու: Դրանից էլ նա խմում է, իր տգիտությունից է խմում:

Դե, էստեղ ո՞նց չհուսահատվես, ո՞նց չգրես գեղջուկի մասին, ո՞նց չփրկես նրան, ո՞նց չխմես հուսահատությունից: Սոցիալ-դեմոկրատը գրում ու խմում է և խմում է՝ ինչպես գրում է: Գեղջուկը չի կարդում ու խմում է, խմում է առանց կարդալու: Եվ այդ ժամանակ Ուսպենսկին վեր է կենում ու կախվում է, իսկ Պոմյալովսկին պանդոկում պառկում է նստարանի տակ ու շունչը փչում, իսկ Գարշինը ելնում ու հարբած-հարբած իրեն ցած է գցում բազրիքի վրայով...

Սևաբեղն արդեն վեր էր թռել, հանել բերետն ու ձեռքերն էր թափահարում կատաղածի պես. խմածը մտրակում էր նրան, խփում էր գլխին, շարունակ խփում էր ու խփում... Նույնիսկ կովերկոտե վերարկուով դեկաբրիստը, նույնիսկ նա թողեց իր Գերցենին, ավելի մոտ նստեց ու հոետորին հառեց իր պղտոր, մոխրագույն աչքերը:

– Բայց դուք նայեք, թե ի՛նչ է կատարվում: Տգիտության խավարը շարունակ խտանում է, և սկսվում է բացարձակ աղքատացումը: Դուք Մարքս կարդացե՞լ եք: Բ ա ց ա ր ձ ա՛ կ: Այլ խոսքով՝ խմում են ավելի ու ավելի: Համամասնաբար աճում է նաև սոցիալ-դեմոկրատի հուսահատությունը, այստեղ արդեն ի՛նչ լաֆիտ, ի՛նչ կլիկո. նրանք գոնե մի կերպ արթնացրին Գերցենին: Իսկ հիմա ամբողջ մտածող Ռուսաստանը, գեղջուկի համար թախծելով, խմելուց աչք չի բացում: Զարկի՛ր բոլոր զանգերը ամբողջ Լոնդոնով մեկ,- Ռուսաստանում ոչ ոք գլուխ չի բարձրացնի. ամբողջը թաղված է փսխուքի մեջ, ու ծանր է բոլորի համար:

Եվ այսպես՝ մինչև մեր օրերը, ընդհուպ մեր օրերը: Այս շրջանը, կեցության արատավոր շրջանը խեղդում է ինձ՝ կոկորդս բռնած: Ու բավական է լավ գիրք կարդամ, ոչ մի կերպ չեմ կարողանում

թվայնացրել է 1915.info կայքը

հասկանալ՝ ով ինչից է խմում. ներքևնե՛րը վերև նայելուց, թե՛ վերևները՝ ներքև: Ու ես արդեն չեմ կարող, շպրտում եմ գրքույկը: Խմում եմ մի ամիս, երկու, հետո...

- Կա՛ց,- ընդհատեց դեկաբրիստը,- բայց մի՞թե հնարավոր չէ չ խ մ ե լ: Քեզ բուռդ հավաքես ու չխմես: Ահա գաղտնի խորհրդական Գյոթեն, օրինակ, ընդհանրապես չէր խմում:

- Չէ՞ր խմում: Ընդհանրապե՞ս,- սևաբեղը նույնիսկ վեր թռավ տեղից ու գլխին քաշեց բերետը:- Չի՛ կարող պատահել:

- Արի ու տես, որ կարող է: Մարդը կարողացել է հավաքել իրեն ու ոչ մի գրամ չ ի խ մ ե լ ...

- Դուք նկատի ունեք Յոհան ֆոն Գյոթեի՞ն:

- Այո: Ես նկատի ունեմ Յոհան ֆոն Գյոթեին, որը ոչ մի գրամ չէր խմում:

- Տարօրինա՛կ է... Իսկ եթե Ֆրիդրիխ Շիլլերը նրան հյուրասիրեր... մի գավաթ շամպայն...

- Մեկ է՝ չէր խմի: Իրեն բուռը կհավաքեր ու չէր խմի: Կասեր՝ մի գրամ անգամ չեմ խմում:

Սևաբեղը թոշնեց, ու տխրություն իջավ վրան: Հասարակության աչքի առաջ փլուզվում էր նրա ողջ համակարգը, կառուցիկ համակարգը, որ հյուսվել էր կրքոտ ու փայլուն չափազանցումներից: «Օգնի՛ր նրան, Երոֆե՛և,- շշնջացի ինքս ինձ,- օգնի՛ր մարդուն: Որևէ այլաբանություն դուրս տուր, կամ...»:

- Ուրեմն, դուք պնդում եք, որ գաղտնի խորհրդական Գյոթեն ոչ մի գրամ չի՞ խմել,- ես դարձա դեկաբրիստի կողմը:- Իսկ ինչու չէր խմում՝ գիտե՞ք: Ի՞նչն էր նրան ստիպում չխմել: Բոլոր ազնիվ մտածողները խմում էին, իսկ նա՝ ոչ: Ինչո՞ւ: Ահա մենք գնում ենք Պետուշկի, և, չգիտես ինչու, ամենուր կանգառներ կան, բացի Եսինոյից: Ինչո՞ւ, հարցնում եմ, կանգառ չանեին նաև Եսինոյում: Բայց արի ու տես, որ չկանգնեցինք: Քշեցին առանց կանգառի: Որովհետև Եսինոյում ուղևոր չկա, բոլորը նստում են կամ Խրապունովոյում, կամ Ֆրյազևոյում: Այո՛: Բուն Եսինոյից գնում են մինչև

թվայնացրել է 1915.info կայքը

Խրապունովո կամ Ֆրյազևո և այնտեղից նստում: Որովհետև մեկ է՝ գնացքն առանց կանգառի կտա-կանցնի Եսինոն: Հենց այդպես էլ վարվում էր Յոհան Ֆոն Գյոթեն, ծեր հիմարը: Կարծում եք խմել չէ՞ր ուզում: Իհարկե, ուզում էր: Ու որպեսզի ոտները չտնկեր, ստիպում էր, որ իր փոխարեն իր կերպարները խմեն: Վերցրեք, թեկուզ, «Ֆաուստը». այնտեղ ով է, որ չի խմում, բոլորն էլ խմում են: Ֆաուստը խմում ու ջահելանում է, Զիբելը խմում ու հեծնում է Ֆաուստին, Մեֆիստոֆելը մի գլուխ հենց այն է անում, որ խմում ու հյուրասիրում է բուրշերին՝ հետն էլ նրանց համար «Լուն» երգելով: Կհարցնեք՝ դա գաղտնի խորհրդական Գյոթեի ինչի՞ն էր պետք: Ասեմ ձեզ, ուրեմն. իսկ ինչի՞ համար Վերթերին ստիպեց, որ գնդակն արձակի իր ճակատին: Որովհետև,- վկայությո՛ւն կա,- ինքը ինքնասպանության եզրին էր ու գայթակղությունից զերծ մնալու համար Վերթերին ստիպեց այդ անել իր փոխարեն: Ինքը ողջ մնաց, բայց մի տեսակ ինքնասպան էլ եղավ: Ու լրիվ բավարարված էր: Դա նույնիսկ ինքնասպանությունից վատ է: Դրա մեջ ավելի շատ են վախկոտությունն ու եսամոլությունը, և ստեղծագործական ստորությունը...

Նա հենց այդպես, ինքնասպան լինելու պես էլ խմում էր, ծեր էդ գաղտնի խորհրդականը: Մեֆիստոֆելը կխմեր՝ ինքը լավ կզգար, քավթառ շունը: Ֆաուստը կում կաներ, իսկ նա, ծեր հիմարը, արդեն լուլ հարբած է... Հետս ուղեգծում մի քեռի Կոլյա էր աշխատում, ճիշտ դրա պես էր. ինքը չի խմում, վախենում է՝ մի քիչ խմեց՝ կապը կկտրի, շաբաթով, ամսով ձեռից կգնա: Իսկ մեզ համարյա թե ստիպում է: Լցնում է մեզ համար, խմելիս հաճույքից կոնչում մեր փոխարեն, երանության գիրկն է ընկնում, սողո՛ւնը, ման է գալիս շշկլվածի պես...

Ճիշտ այդպես էլ՝ ծեր գովական Յոհան ֆոն Գյոթեն: Շիլլերը նրան հյուրասիրում է, իսկ սա հրաժարվում է: Բա ո՛նց: Գինեմոլ է եղել, հարբեցող, ծեր գաղտնի խորհրդականը, Յոհան ֆոն Գյոթեն: Ու ձեռքերն էլ վայ թե դողում էին...

թվայնացրել է 1915.info կայքը

- Ա՛յ քեզ բան,- զարմացած ինձ էին զննում դեկաբրիստն ու սևաբեղը: Կառուցիկ համակարգը վերականգնված էր, ու դրա հետ մեկտեղ վերահաստատվեց ուրախությունը: Դեկաբրիստը կովերկոտե վերարկուի գրպանից լայն ու հյուրասեր շարժումով դուրս քաշեց իր պղպեղօղու շիշն ու դրեց սևաբեղի ոտքերի տակ: Սևաբեղը հանեց իր մայրաքաղաքայինը: Բոլորը տարօրինակ ոգևորությամբ սկսեցին ձեռքերը շփել:

Ինձ բոլորից շատ լցրին: Եվ ծեր Միտրիչի համար լցրին: Զահելին նույնպես մի բաժակ տվին, որը աջ ազդրով ցնծագին սեղմեց իր ձախ պտուկին, ու զույգ պնչերից հոսեցին արցունքները...

- Եվ ուրեմն, գաղտնի խորհրդական Յոհան ֆոն Գյոթեի կենա՛ցը...

ՖՐՅԱԶԵՎՈ - 61-ՐԴ ԿԻԼՈՄԵՏՐ

- Այո՛: Խմենք գաղտնի խորհրդական Յոհան ֆոն Գյոթեի կենացը:

Խմելուն պես զգացի, որ հարբում եմ ամենայն չափից դուրս, ու որ մնացած բոլորը՝ նույնպես...

- Իսկ... Թույլ տվեք մի այսպիսի պստիկ հարց,- ասաց սևաբեղը բեղի ու բեղերում խրված բուտերբրոդի տակից. նա դարձյալ միայն ինձ էր դիմում:

- Թույլ տվեք հարցնել՝ ինչից է, որ ձեր աչքերում այդքան շատ է տխրությունը... Մի՞թե կարելի է տխրել, երբ այդքան բան գիտես: Տեսնողը կմտածի՝ առավոտից բան չեք խմել:

Ես նույնիսկ նեղացա.

- Այսինքն՝ ինչպե՞ս՝ ոչ մի բան: Եվ մի՞թե սա տխրություն է: Սա՝ պարզապես աչքերս են պղտորվել: Ուղղակի մի քիչ համը հանել եմ...

- Ո՛չ, ո՛չ, այս պղտորությունը տխրությունից է: Դուք ասես Գյոթեն լինեք: Դուք ձեր ամբողջ տեսքով հերքում եք իմ լեմմաներից մեկը. փոքր-ինչ մտարկված լեմմա է, բայց, համենայնդեպս, փորձից բխած: Դուք ոնց որ Գյոթեն լինեք, ամեն ինչ ժխտում եք...

թվայնացրել է 1915.info կայքը

– Բայց ինչո՞վ եմ ժխտում: Իմ պղտորությա՛մբ...

– Հենց էլ դրանով: Ձեր պղտորությա՛մբ: Լսե՛ք, ահա, իմ նվիրական լեմման. երբ երեկոյան խմում ենք, իսկ առավոտյան չենք խմում, ինչպիսի՞ն ենք լինում երեկոյան և ինչպիսին ենք դառնում առավոտը: Ես, օրինակ, որ խմեցի՝ ահավոր ուրախ եմ լինում և անդադրում ու վտվտիկ, տեղուդադար չեմ ունենում, այո՛: Իսկ առավոտյա՞ն. առավոտյան ես ոչ թե զուտ ա ն ու ր ա խ եմ, ո՛չ թե զուտ ա ն շ ա ր ժ ու ն ա կ եմ: Ես ճիշտ այնքան մռայլ եմ սովորական ինձնից, չխըմած ինձնից, որքան սովորականից ուրախ եմ եղել նախօրեին: Եթե նախօրեին դիվահարված էի Էրոսով, ապա իմ առավոտյան խորշանքը ճիշտ հավասարամեծ է երեկվա երազանքներին: Ինչ եմ ուզում ասել. ահա, տեսեք.

Ու սևաբեղը թղթին մի այսպիսի ցնդաբանություն պատկերեց: Ու բացատրեց. հորիզոնական գիծը սովորական սթափության գիծն է, ա մ ե ն օ ր յ ա գիծը: Կորի ամենաբարձր կետը քնելու պահն է, ամենացածրը՝ խումհարից դուրս գալունը...

– Տեսնո՞ւմ եք, ախր սա մաքուր հայելայնություն է: Հիմա՛ր, հիմա՛ր բնություն, ոչնչի մասին այնպիսի եռանդով հոգ չի տանում, ինչպես հավասարակշռության: Չգիտեմ՝ բարոյակա՞ն է, արդյոք, այդ հավասարակշռությունը, բայց ճշգրիտ երկրաչափական է: Տեսեք, ախր այս կորը միայն մեր կենսական տոնուսը չի պատկերում, չէ՞: Ամե՞ն ինչ է պատկերում: Երեկոյան՝ խիզախություն, եթե նույնիսկ վախենալու պատճառ էլ կա, խիզախություն ու բոլոր արժեքների

թվայնացրել է 1915.info կայքը

թերարժևորում: Առավոտյան՝ գերարժևորում, որ փոխարկվում է վախի, կատարելապես պատճառազուրկ վախի:

Եթե նախորդ երեկոյան բնությունը, քեֆը լավ, մեզ համար «գերակշռել» է, ապա առավոտյան նույնքան էլ կթերակշռի, մաթեմատիկական ճշգրտությամբ: Երեկոյան ձեր մեջ մղում էր հայտնվել առ կատարյալը, խնդրեմ՝ խումհարի մեջ հակակատարյալի պոռթկում կունենաք: Ահա ձեզ, կարճ ու կոնկրետ, իմ նվիրական լեմման: Այն համընդհանրական է ու կիրառելի՝ յուրաքանչյուրիս համար: Իսկ ձեր դեպքում ամեն ինչ ոնց որ մարդավարի չլինի, ոնց որ գյոթեավարի լինի:

Ես ծիծաղեցի. «Բայց, համենայնդեպս, ինչո՞ւ է լեմմա, երբ համընդհանրական է»:

Ու դեկաբրիստն էլ ծիծաղեց. «Եթե համընդհանրական է, էլ ինչո՞ւ լեմմա»:

- Հենց դրա համար էլ լեմմա: Հենց նրա համար, որ կնանիք հաշվի մեջ չեն: Մարդուն, մաքուր տեսքով, լեմման ընդունում է, իսկ կնկան չի՛ ընդունում: Կնիկ հայտնվելուն պես ցանկացած հայելայնություն ավիրվում է: Ու եթե կնիկը կնիկ չլիներ, լեմման էլ լեմմա չէր լինի: Լեմման համընդհանրական է, քանի դեռ կնիկը չկա: Կնիկը հայտնվեց՝ լեմման արդեն չկա... Մանավանդ երբ կնիկը վատն է, իսկ լեմման՝ լավը:

Բոլորը միանգամից սկսեցին խոսել. «Էդ ի՞նչ բան է, ընդհանրապես էդ լեմման»: «Եվ ի՞նչ բան է վատ կնիկը»: «Վատ կնիկ չի լինում, մենակ լեմմաներն են, ծերից ծեր, վատը»:

- Ես, օրինակ,- ասաց դեկաբրիստը,- երեսուն կնիկ ունեմ, ու՝ մեկը մեկից լավ, չնայած որ անբեղ եմ: Իսկ դուք, ենթադրենք, բեղեր ունեք ու մի լավ կնիկ: Համենայնդեպս, ես գտնում եմ, որ երեսուն թեկուզև ամենավատ կնանիք ավելի լավ են, քան մեկ թեկուզև ամենալավը...

- Բեղե՞րն ինչ կապ ունեն: Խոսքը կնկա մասին է, ոչ թե բեղերի:

թվայնացրել է 1915.info կայքը

– Բեղերի մասին էլ է: Բեղերը չլինեին՝ խոսակցությունն էլ չէր լինի...

– Սատանան գիտի՝ ինչ եք դուրս տալիս: Համենայնդեպս, ես գտնում եմ, որ մի լավն արժի մնացած բոլորին: Դրա՞ն ոնց եք նայում...,– սևաբեղը նորից դարձավ ինձ:– Գիտական տեսանկյունից դրան ո՞նց եք նայում...

Ես ասացի.

– Գիտական տեսանկյունից, իհարկե, արժի: Պետուշկիում, օրինակ, երեսուն դատարկ շշին մի լիքը շիշ հիպերիկոնի են տալիս, ու եթե, ասենք, բերես...

«Ո՞նց, երեսունը մեկո՞վ: Ինչի՞ էդքան շատ»,– վերսկսվեց հարայհրոցը:

– Ախր ուրիշ կերպ ո՞վ կփոխի: Երեսունը տասներկուսով՝ 3.60 է: Իսկ հիպերիկոնին արժի 2.62: Դա երեխան էլ գիտի: Թե Պուշկինն ինչից մեռավ՝ նրանք դեռ չգիտեն, բայց դա արդեն գիտեն: Համենայնդեպս, մանրը չի վերադարձվում: 3.60–ն, իհարկե, լավ է, ավելի լավ է, քան 2.62–ը, բայց, համենայնդեպս, մանրը չեն վերադարձնում, քանի որ վաճառասեղանի ետևը լավ կնիկ է կանգնած, իսկ լավ կնկան պետք է հարգել...

– Բայց ինչո՞վ է լավ, ախր, վաճառասեղանի էդ կնիկը:

– Հենց նրանով է լավ, որ վատը ձեզնից ընդհանրապես դատարկ շիշ չէր ընդունի: Իսկ լավ կնիկը ձեզնից վատ շիշը առնում՝ լավը տալիս է: Ու դրա համար էլ պետք է հարգել... Ինչի՞ համար է կնիկն ընդհանրապես:

Բոլորը նշանակալից լռեցին: Ամեն մեկն իրենն էր մտածում կամ էլ բոլորը՝ նույն բանը. չգիտե՛մ:

– Նրա համար է, որ հարգենք ու պատվենք: Ի՞նչ էր ասում Մաքսիմ Գորկին Կապրի կղզում: «Ցանկացած քաղաքակրթության չափորոշիչը կնոջ հանդեպ վերաբերմունքի կերպն է»: Ահա և ես էլ. գալիս եմ Պետուշկիի խանութ, ձեռիս՝ երեսուն դատարկ շիշ: Ասում եմ. «Տիրուհի՛»,– խմելուց խոպոտած ու թախծոտ ասում եմ,– «Տիրուհի՛, բարի եղեք, հիպերիկոնի տվեք ինձ»: Ու գիտեմ, չէ՞, ախր, որ

թվայնացրել է 1915.info կայքը

համարյա մի ռուբլի կորչում է. 3.60 հանած 2.62: Ափսո՛ս է: Իսկ նա նայում է վրաս. տա՞մ էս սողունին մանրը, թե՞ չտամ: Ու ես էլ իրեն եմ նայում. կտա՞ էս սողունը մանրը, թե՞ չի տա: Ավելի ճիշտ՝ այդ պահին նրան չեմ նայում: Ես նայում եմ նրա միջով ու դեպի հեռուն: Եվ ինչ է հառնում իմ անմիտ հայացքի դեմ: Կապրի կղզին է հառնում: Հառնում են ագավաներն ու հնդկարմավները, ու դրանց տակ նստած է Մաքսիմ Գորկին՝ սպիտակ շալվարի տակից փոչոտ ոտերը տնկած: Ու մատ է թափ տալիս վրաս. «Չվերցնե՛ս մանրը: Չվերցնե՛ս մանրը»: Ես աչքով եմ անում. ծամելուն, ախր, բան չի՛ մնա: «Լավ, ասենք, խմեցի, բերանս մի բան չգցե՛մ»:

Իսկ նա. «Ոչի՛նչ, Վե՛նյա, կդիմանաս, առանց դրա խմի»: Այդպես էլ թողնում-գնում եմ, առանց մանրը վերցնելու: Զղայնանում եմ, իհարկե. «Չափորոշի՛չ», «Քաղաքակրթությո՛ւն», «Վա՛խ, Մաքսիմ Գորկի, բայց Մաքսիմ ես, հա՛, ա՛յ Գորկի, խելքդ հետ էիր տվե՛լ, թե՞ հարբած էիր քո Կապրի կղզում, որ մոգոնեցիր էդ բոլորը: Քեզ համար լավ է՝ ագավաներդ կխժռես, բա ե՞ս ինչ ծամեմ...»:

Հասարակությունը ծիծաղում էր, իսկ թոռնիկը՝ ծղրտում. «Ի՛-ի՛-ի՛-ի՛-ի՛, ի՛նչ լավ ագավաներ են, ի՛նչ լավ կապրի է...»:

- Իսկ վատ կնի՞կը,- հարցրեց դեկաբրիստը:- Չի՞ պատահում, որ վատ կնիկն էլ պետք գա:

- Իհարկե, իհարկե, պետք է,- պատասխանեցի նրան:- Լավ մարդուն վատ կնիկը ե ր բ ե մ ն նույնիսկ ուղղակի անհրաժեշտ է լինում: Ես ձեզ օրինակ՝ տասներկու շաբաթ առաջ. ես դագաղի մեջ էի, ես արդեն չորս տարի պառկած էի դագաղում, այնպես, որ արդեն նույնիսկ չէի գարշահոտում: Եվ նրան ասում են. «Ահա նա՝ դագաղում: Եվ հարություն տուր, եթե կարող ես»: Ու մոտեցավ նա դագաղին,- եթե միայն տեսնեիք՝ ինչպե՛ս մոտեցավ:

- Գիտենք,- ասաց դեկաբրիստը:- «Գնում է՝ ոնց որ գրում է: Իսկ գրում է Լյովայի հանգի: Լյովայի գրածն էլ՝ զիբիլ»:

- Այդպես է որ կա: Մոտեցավ դագաղին ու ասում է. «Տալիթա կումի»: Դա նշանակում է՝ հին ջհուդերենից թարգմանած. «Քեզ ասում

թվայնացրել է 1915.info կայքը

եմ՝ վեր կաց ու գնա»: Եվ ի՞նչ եք կարծում. վեր կացա ու գնացի: Եվ արդեն երեք տարի է՝ գնում եմ-պղտորված...

– Պղտորությունը տխրությունից է,– կրկնեց բերետավոր սևաբեղը:– Իսկ տխրությունը՝ կնկանից:

– Պղտորությունը նրանից է, որ մի քիչ համը հանել է,– նրա խոսքը կտրեց դեկաբրիստը:

– Բայց ի՞նչ կապ ունի «համը հանելը»: Եվ ինչո՞ւ էի «համը հանում»: Որովհետև, ենթադրենք, մարդը տխուր է ու կնկա մոտ է գնում: Չի կարելի, չէ՞, կնկա մոտ գնալ ու չխմել,– կնշանակի վատն է կնիկը: Ու եթե նույնիսկ վատն էլ է, մեկ է՝ պետք է խմել: Ընդհակառակը, ինչքան կնիկն ավելի վատն է, այնքան ավելի շատ պիտի համը հանես...

– Ազնիվ խո՛սք,– գոռաց դեկաբրիստը:– Ինչ լավ է, որ բոլորս այսքան զարգացած ենք: Ճիշտ ոնց որ Տուրգենևի մոտ. բոլորը նստել ու վիճում են սիրուց: Եկեք ես էլ ձեզ մի բան պատմեմ՝ բացառիկ սիրո մասին և այն մասին, թե որքան պիտանի են լինում վատ կնանիք... Եկեք Տուրգենևի պես անենք: Թող ամեն մեկը մի բան պատմի...

«Եկե՛ք»: «Եկեք՝ Տուրգենևի պես»: Նույնիսկ ծեր Միտրիչը, նույնիսկ նա ասաց. «Եկե՛ք»:

61–ՐԴ ԿԻԼՈՄԵՏՐ–65–ՐԴ ԿԻԼՈՄԵՏՐ

Առաջինը սկսեց դեկաբրիստը.

– Մի ընկեր ունեի. նրան երբեք չեմ մոռանա: Միշտ էլ մի տեսակ դիվոտած էր, իսկ օրերից մի օր ասես սատանա մտավ մեջը: Ու խփնվել էր գիտե՞ք ում վրա: Օլգա Էրդելիի, հոչակավոր սովետական տավղահարուհու: Հնարավոր է, որ Վերա Դուլովան նույնպես հոչակավոր սովետական տավղահարուհի է: Բայց նա խփնվել էր հատկապես Էրդելիի վրա: Ու որ ասեմ՝ կյանքում ոչ մի անգամ չէր

թվայնացրել է 1915.info կայքը

էլ տեսել, մենակ ռադիոյով էր լսել՝ ոնց է իր տավիղը ծնգծնգացնում,- ու՝ ոչ դես, ոչ դեն՝ խփնվել էր:

Խփնվել ու պառկել է: Չի աշխատում, չի սովորում, չի ծխում, չի խմում, անկողնուց վեր չի կենում, աղջիկ չի սիրում ու պատուհանից դուրս չի ցցվում... Օլգա Էրդելի է ուզում ու՝ վերջ: Կհագենամ, խոսքի՛, Օլգա Էրդելիով ու մենակ էդ ժամանակ հարություն կառնեմ. կելնեմ անկողնուց, կաշխատեմ ու կսովորեմ, կծխեմ ու կխմեմ ու դուրս կցցվեմ պատուհանից: Մենք նրան ասում ենք.

- Բայց ինչի՞դ է հատկապես Էրդելին: Վերցրու, թեկուզ, Վերա Դուլովային, Էրդելու փոխարեն: Վերա Դուլովան հրաշալի է նվագում:

Իսկ նա.

- Ձեզ լինի ձեր Վերա Դուլովան: Աչքերս քոռացել են ձեր Վերա Դուլովայի համար: Ես ձեր Վերա Դուլովայի հետ նույնիսկ ...- ելու չեմ պպզի:

Դե, նայում ես՝ ջահելը լրիվ խելքը գցել է: Երեք օր հետո նորից ենք մոտենում:

- Հը՞, ուշումիտդ էլի՞ Օլգա Էրդելուն է: Դեղդ գտել ենք. ուզո՞ւմ ես էգուց Վերա Դուլովային քաշ տանք մոտդ:

- Բա ո՞նց,- պատասխանում է,- թե որ ուզում եք նրան՝ ձեր էդ Վերա Դուլովային խեղդեմ տավիղի լարով, էդ ժամանակ խնդրեմ՝ բերե՛ք: Ես էլ կխեղդեմ...

Դե, ի՞նչ անես: Ջահելը լրիվ ձեռից գնում է, փրկել է պետք: Գնացի ես Օլգա Էրդելիի մոտ, ուզում էի բացատրեմ բանն ինչ է, բայց էդպես էլ սիրտ չարեցի: Ուզում էի նույնիսկ Վերա Դուլովայի մոտ գնամ, բայց՝ չէ, մտածում եմ, կխեղդի, ախր, սրան անմոռուկի պես: Ու շրջում եմ Մոսկվայով, իրիկունը, ու տխո՛ւր-տխո՛ւր եմ. նրանք էնտեղ նստել են իրանց տավիղների վրա ու նվագում են, չաղանում ու փքվում են իրանց տավիղների վրա, իսկ մեր ջահելից ավերակ ու մոխիր է մնացել:

թվայնացրել է 1915.info կայքը

Ու էստեղ ճամփիս մի կնիկ պատահեց. չասեմ, թե շատ տարիքով, բայց լրիվ խմած-պրծած, լրիվ հարբած: «Մի ռռուբլի՛ տու,- ասում է,- տո՛ւր մի ռռուբլի»: Ու էստեղ պայծառություն եկավ վրաս: Տվեցի ռուբլին ու ամեն ինչ բացատրեցի. սա էդ հալին Էրդելիից հասկացող դուրս եկավ, իսկ ավելի համոզիչ լինելու համար ստիպեցի՝ հետը բալալայկա վերցնի...

Եվ ահա, քարշ տվի նրան ընկերոջս մոտ: Ներս մտանք. նա առաջվա պես պառկել ու թախծում է: Ես գլխանց բալալայկան շպրտեցի վրան, հենց շեմից: Հետո էդ Օլգային շպրտեցի երեսին, Օլգայով շխկացրի նրան. «Էս էլ Էրդելիդ: Զե՛ս հավատում՝ հարցրու»:

Իսկ առավոտյան նայեմ՝ բացվեց պատուհանը, նա դուրս ցցվեց ու մանրի՛ց ծխում է: Հետո մանրից աշխատեց էլ, սովորեց էլ, խմեց էլ... Ու մարդու պես եղավ մարդը: Ահա, տեսնո՛ւմ եք...

- Բայց այստեղ ո՛ւր է Տուրգենևը ու սե՛րն ուր է,- հարցրինք մենք՝ համարյա չթողնելով, որ ավարտի:- Զէ՛, դու արի սիրո մասին պատմիր: Դու Իվան Տուրգենևի գործերը կարդացե՞լ ես: Դե, որ կարդացել ես, պատմի՛: Առաջին սիրո մասին պատմի, Զինոչկայի, դիմաքոդի մասին, ու թե ոնց մտրակով շխկացրին մոթիդ,- մոտավորապես հենց էսքանն էլ պատմի...

- Իհարկե,- ավելացրի ես,- Տուրգենևի մոտ այդ ամենը մի քիչ այլ կերպ է. հավաքվում են բուխարու առաջ, ցիլինդրներով ու ժաբոները թևքից հեռու պահած... Բայց՝ ոչինչ, մենք առանց բուխարու էլ տաքանալու ձևը գիտենք: Իսկ ժաբո՞ն: Ժաբոն մեզ ի՞նչ: Մենք առանց ժաբոյի էլ վատ չենք նայվում...

- Իհարկե, իհարկե:

- Սիրել տուրգենևաբար՝ նշանակում է կարողանալ զոհել ամենայն ինչ հանուն ընտրյալ արարչագործության: Կարողանալ այն, ինչ անհնար է առանց տուրգենևաբար սիրելու: Ահա, օրինակ, դու (մենք աննկատ անցնում էինք «դու»-ի): Այ դու, դեկաբրի՛ստ: Դու կկարողանայի՞ր այդ, որ պատմում էիր, ընկերոջդ մատը կծել հանուն սիրած կնոջ:

- Բայց ինչո՞ւ մատը: Ի՞նչ կապ ունի մատը,- տնքաց դեկաբրիստը:

թվայնացրել է 1915.info կայքը

- Չէ՛, չէ՛, լսի՛: Կկարողանայի՞ր գիշերով անաղմուկ մտնել կուսկաբինետ, հանել շալվարդ ու մի սրվակ թանաք խմել, հետո սրվակը դնել տեղը, հագնել շալվարն ու անաղմուկ վերադառնալ տուն: Հանուն սիրած կնոջ: Կկարողանայի՞ր...

- Աստվա՛ծ իմ: Ո՛չ, չէի կարող:

- Հենց էդ է որ կա...

- Իսկ ես կկարողանայի,- հանկարծ խոսեց Միտրիչ պապիկը: Այնքան անսպասելի, որ մենք նորից վեր-վեր թռանք ու շփեցինք ձեռքներս:- Իսկ ես կկարողանայի որևէ բան պատմել:

- Դո՞ւ: Պ ա տ մ ե՞ լ: Դու վայ թե Իվան Տուրգենևից ոչ մի բան կարդացած էլ չլինես:

- Թող որ չեմ կարդացել... Փոխարենը թոռնիկս է ամբողջը կարդացել...

- Լա՛վ, լա՛վ, լա՛վ, թոռնիկը հետո կպատմի, թոռնիկին հետո խոսք կտանք: Արի, հայրի՛կ, սկսի՛, պատմի՛ սիրո մասին:

«Պատկերացնում եմ,- մտածեցի ես,- թե ինչ ցնդաբանություն է լինելու, ի՞նչ աննկարագրելի դատարկաբանություն»: Ու նորից պարծենալս հիշեցի իմ Թագուհու հետ ծանոթանալու օրը. «Ես ավելի շատ ցնդաբանություն դուրս կտամ: Ավելի՞ն դուրս կտամ»: Դե ինչ, թող պատմի այս արցունքածոր Միտրիչը: Պետք է հարգել, կրկնում եմ, խորխորատները ուրիշի հոգու, պետք է նայել ներսը, եթե նույնիսկ այնտեղ ոչինչ չկա, կամ թեկուզ աղբ է այնտեղ.- մեկ է՝ նայի՛ր ու հարգի՛ր, նայի՛ր ու մի՛ թքի...

Պապիկը սկսեց պատմել.

65-ՐԴ ԿԻԼՈՄԵՏՐ-ՊԱՎԼՈՎՈ-ՊՈՍԱԴ

- Մի նախագա ունեինք... Լոէնգրին էին ասում, խիստ մարդ էր... ու լրիվ չիբանոտ... ու ամեն իրիկուն շարժիչավոր նավակ էր քշում: Կնստեր նավակն ու գետակով լող կտար... լող կտար ու չիբանները կպզտացներ...

թվայնացրել է 1915.info կայքը

Պատմողի աչքերը խոնավություն էին թորում, ու հուզված էր.

– Լող կտար իրա համար, լող կտար... կգար վարչություն, կպառկեր գետնին... ու էդ ժամանակ լավ է հետը գործ չբռնեիր... կպառկեր ու՝ ոչ ձեն, ոչ ծպտուն: Ու թե բան է՝ հակառակվեիր, կշրջվեր պատի կողմն ու լաց կլիներ... կկանգներ ու լաց կլիներ ու չիշիկ կաներ գետնին, ոնց որ պուճուր էրեխա...

Պապիկը հանկարծ սկվեց: Շրթունքները ծռվեցին, քիթը կապույտ բռնկվեց ու մարեց: Նա լաց էր լինում: Լալիս էր կնոջ պես՝ գլուխը ձեռներով բռնած, ուսերը դողում ու թրթռում էին, իրար էին գալիս ալիքների նման...

– Էդքա՜նն ու՝ վե՞րջ, Միտրի՛չ...

Վագոնը դղրդաց քրքիջից: Բոլորը ծիծաղում էին՝ այլանդակ ու ցնծագին: Իսկ թոռնիկը մինչևիսկ ջղաձգվեց ներքևից վերև, որ ձախից աջ չպզզացնի իր կոճին: Սևաբեղը բարկացավ.

– Բայց ո՞ւր է այստեղ Տուրգենևը: Պայմանավորվեցինք, չէ՞՝ ամեն ինչ՝ Տուրգենևի պես: Իսկ սա սատանան գիտի, թե ինչ է: Լրիվ չիբանոտ, հետն էլ՝ «չիշի՛կ կաներ»:

– Նա, ախր, երևի կինոն էր պատմում,– կողքից մոլտաց ինչ-որ մեկը:– «Նախագահը» կինոնկարը:

Իսկ ես նստել ու հասկանում էի ծեր Միտրիչին, հասկանում էի նրա արցունքները. նա պարզապես խղճում էր ամենքին ու ամենայն ինչ. մեղք է նախագահը, նրա համար, որ այդպիսի ամոթալի մականուն են տվել, ու պատն է մեղք, որ թրջել է, ու նավակը, ու չիբանները. բոլո՛րն են մեղք... Առաջին սեր կամ վերջին գթասրտություն. տարբերությունը ո՞րն է: Աստված խաչի վրա մահանալիս մեզ գթասրտություն պատվիրանեց, մեզ լնդերը քշտած հռհռալ չպատվիրանեց: Գթասրտությունն ու սերն առ աշխարհ՝ միասնական են: Սեր յուրաքանչյուր ճակատագրի հանդեպ, սեր յուրաքանչյուր արգանդի հանդեպ: Եվ ցանկացած արգանդի պտղի հանդեպ՝ գթասրտություն:

– Արի՛, հայրի՛կ,– ասացի նրան,– արի հյուրասիրեմ քեզ, վաստակել ես: Լավ պատմեցիր սիրո մասին...

թվայնացրել է 1915.info կայքը

- Եվ բոլորս, և բոլորս եկեք խմենք: Օրյոլցի ազնվական Իվան Տուրգենևի, սքանչելի Ֆրանսիայի քաղաքացու կենացը:

- Եկեք խմե՛նք: Օրյոլցի ազնվականի կենացը:

Նորից սկսվեց նույն բլթբլթոցն ու նույն զնգզնգոցը, իսկ հետո՝ խշխշոցն ու չմփչմփոցը: Դո դիեզ մինոր էտյուդը՝ Ֆերենց Լիստի ստեղծագործությունը կրկնվում էր բիսի պահանջով...

Ոչ ոք միանգամից չնկատեց էլ, թե ինչպես մեր «կուպեում» (այդպես անվանենք՝ «կուպե») ծլեց կնոջ կերպարանքը՝ գլխին դարչնագույն բերետ, հագին կարճլիկ ժակետ, բեղերը՝ սև: Նա տակից գլուխ հարբած էր, ու բերետն էլ կողքի էր փախել...

- Ես էլ եմ Տուրգենև ու խմել ուզում,- որովայնաձայն բարբառեց նա...

Շփոթությունը երկու վայրկյանից ավելի չտևեց:

- Ախորժալին ուտելիս է գալիս,- խայթեց դեկաբրիստը: Բոլորը ծիծաղեցին:

- Ծիծաղելու ի՞նչ կա,- ասաց պապիկը:- Սովորական կնիկ է, սիրուն, փափուկ:

- Էդտեսակ սիրուն կնանիքանց,- մռայլ արձագանքեց սևաբեղն ու բերետը հանեց,- էդտեսակ սիրուն կնանիքանց պետք է Ղրիմ ուղարկել, որ արջուգելերն էնտեղ ուտեն դրանց...

- Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ,- բողոքեցի ու իրար անցա ես:- Թող նստի: Թող ինքն էլ մի բան պատմի:- Տուրգենև ենք կարդացել, Մաքսիմ Գորկի ենք կարդացել. մե՞ջն ինչ...

Ես նեղ արեցի ու տեղ տվի նրան: Ես նրան նստացրի կողքիս ու կես բաժակ «Մորաքույր Կլավա» լցրի:

Նա խմեց ու շնորհակալության փոխարեն հանեց բերետը: «Ահա՝ սա, տեսնո՞ւմ եք»: Ու բոլորին ցույց տվեց սպին, որ ականջի վերևն էր: Հետո հանդիսավոր լռեց ու նորից բաժակը պարզեց ինձ. «Մի քիչ կաթացրու, ջահե՛լ, թե չէ ուշքս կգնա»:

Ես նրա համար կես բաժակ էլ լցրի:

թվայնացրել է 1915.info կայքը

ՊԱՎԼՈՎՈ-ՊՈՍԱԴ-ՆԱԶԱՐՅԵՎՈ

Դա էլ խմեց ու դարձյալ մի տեսակ մեքենայաբար: Եվ խմելով՝ կրնկի վրա բացեց բերանն ու ցույց տվեց բոլորին. «Տեսնո՞ւմ եք, չորս ատամս չկա»: «Բայց ո՞ւր են»: «Ի՞նչ իմանամ: Ես՝ ուսյալ կին, և ահա անատամ եմ մնացել: Նա ատամներս Պուշկինի համար թափեց: Ես, ահա, լսում եմ, գրական զրույց եք վարում, մտածում եմ՝ նստեմ հետները՝ կխմեմ, հետն էլ կպատմեմ, թե ոնց Պուշկինի համար ջարդեցին գլուխս ու դեմի չորս ատամս թափեցին»:

Ու նա սկսեց պատմել, և ահա թե ինչպիսին էր նրա պատումի ոճը...

– Ամեն բան հենց Պուշկինից էլ սկսվեց: Մեզ մոտ կոմսոմոլի կազմակերպիչ ուղարկեցին՝ Եվտյուշկինին. մի գլուխ ճմկթում էր ու ոտանավոր ասում: Մի անգամ էլ չանթեց ոտս ու հարցնում է. «Դյութիչ հայացքս տոչորո՞ւմ էր քեզ»: Ես ասում եմ. «Դե, ենթադրենք տոչորում էր»: Իսկ նա՝ նորից ձեռը ոտերիս. «Հոգուդ մեջ ձայնն իմ արձագանքո՞ւմ էր»: «Իհարկե,– ասում եմ,– արձագանքե՛ց»: Այստեղ արդեն ինձ գիրկն առավ ու քաշ տվեց տարավ ինչ-որ տեղ: Իսկ երբ արդեն քաշ տվեց բերեց ինչ-որ տեղից՝ ինձ լրիվ կորցրել ու մի գլուխ կրկնում էի. «Պուշկին-Եվտյուշկին-արձագանքում էր ու տոչորում էր»: «Տոչորում էր ու արձագանքում էր-Եվտյուշկին-Պուշկին»: Եվ ապա՝ նորից. «Պուշկին-Եվտյուշկին»...

– Դու գործից խոսա, դեմի ատամներիցդ խոսա,– ընդհատեց սևաբեղը:

– Հիմա, հիմա ատամներն էլ կլինեն: Ատամներն էլ կտեսնեք... Հետո՞ ինչ եղավ... Այդ օրից ամեն ինչ լավ էր, ամբողջ կես տարի խոտանոցում նրա հետ Աստծու զայրույթն էինք հարուցում, ամեն ինչ լավ էր: Իսկ հետո նորից այդ Պուշկինն ամեն ինչ փչացրեց... Ես, ախր, Ժաննա դ'Արկի պես եմ: Նա էլ, ասենք, փոխանակ կով արածացներ ու արտ հնձեր, թռավ ձիու մեջքին ու սուրաց Օռլեան՝ իր գլխին փորձանք բերելու: Ահա և ես էլ. հենց մի քիչ խմում էի, վրա էի պրծնում

թվայնացրել է 1915.info կայքը

նրան. «Իսկ քո փոխարեն երեխաներին ո՞վ պիտի դաստիարակի: Պուշկի՞նը, հա՛»: Իսկ նա գոմռում էր. «Ի՞նչ երեխա, ի՞նչ բան: Ախր մեջտեղ երեխա էլ չկա: Պուշկի՞նն ինչ կապ ունի»: Իսկ ես՝ նրան. «Երբ որ լինեն, երեխաները, Պուշկինին հիշելն արդեն ուշ կլինի»:

Եվ այսպես շարունակ. հերիք էր, որ մի քիչ խմեի:

«Քո փոխարեն ով պիտի,- ասում եմ,- երեխաներին... Պուշկի՞նը, հա՛»: Իսկ նա կատաղում է. «Թող–գնա՛, Դա՛րյա,- գոռում է,- գնա՛: Մի՛ վառի մարդու հոգին»: Ես նրան ատում էի այդ պահերին, այնպես էի ատում, որ աչքիս առաջ գլուխս պտտվում էր: Իսկ հետո, համենայնդեպս, ոչինչ, էլի սիրում էի, այնպես էի սիրում, որ գիշերները զարթնում էի դրանից...

Եվ ահա մի անգամ խմելու չափը լրիվ անցա: Մոտ եմ թռչում նրան ու գոռում եմ. «Պուշկի՞նը պիտի քո փոխարեն երեխաներին դաստիարակի: Հա՛: Պուշկի՞նը»: Իսկ նա Պուշկինի անունը լսելուն պես դողաց ամբողջ մարմնով ու սևակնեց. «Խմի՛, հարբի՛, ոնց կուզես, բայց Պուշկինին ձեռ չտաս: Երեխաներին ձեռ չտա՛ս: Խմի ամե՛ն ինչ: Արյո՛ւնս խմի, բայց քո Տեր Աստծուն փորձության մի՛ տար»: Իսկ ես այդ ժամանակ հիվանդ էի՝ ուղեղս ցնցվել էր, աղիքներս՝ ոլորվել, իսկ հարավում այդ ժամանակ աշուն էր, և ահա թե ինչ գոռացի նրա երեսին. «Հեռացիր ինձնից, հոգեա՛ռ, իսպա՛ռ հեռացիր: Կդիմանա՛մ: Մի ամիս բ...–ություն կանեմ ու ինձ կգցեմ գնացքի տակ: Իսկ հետո վանք կգնամ ու միանձնուհի կդառնամ: Կգաս ինձանից թողություն հայցելու, ընդառաջ կելնեմ լրիվ սև հագած, այնպե՛ս հմայիչ ու երեսդ լրիվ կճանկռոտեմ մատնեմատով: Հեռացի՛ր»: Իսկ հետո նորից գոռում եմ. «Դու գոնե հոգիս սիրո՛ւմ ես, հոգի՛ս»: Իսկ նա մի գլուխ դողում ու սևակնում է. «Սրտո՛վ,- գոռում է,- սրտով՝ հա՛, սրտով սիրում եմ քո հոգին, բայց հոգով՝ չէ՛, չե՛մ սիրում»:

Ու մի տեսակ՝ վայրենու նման, մի տեսակ՝ օպերային, բռնեց ինձ, ջարդեց գանգս ու մեկնեց Կլյազմայի Վլադիմիր: Ինչո՞ւ մեկնեց: Ո՞ւմ մոտ մեկնեց: Իմ տարակուսանքը ողջ Եվրոպան էր կիսում: Իսկ

թվայնացրել է 1915.info կայքը

տատիկս, խուլուհամրը, վառարանի վրայից ասում է. «Այ տեսնո՛ւմ ես, Դաշենկա, թե որքան հեռուն գնացիր «ես»-իդ որոնումների մեջ»:

Հա՛: Իսկ մի ամսից վերադարձավ: Իսկ ես այդ ժամանակ լրիվ հարբած, ոտուձեռից ընկած էի, հենց տեսա նրան, ընկա սեղանին ու ոտերս քշտած՝ քրքջացի. «Ահա՛,- գոռացի:- Փախել էիր քո Կլյազմայի Վլադիմիրը, իսկ ո՞վ պիտի քո փոխարեն երեխաներին...»: Իսկ նա,- առանց մի խոսքի,- մոտեցավ, թափեց չորս ատամս ու կոմսոմոլի ուղեգրով մեկնեց Դոնի Ռոստով:

- Ուշըս գնալու վրա է, ջահե՛լ, մի քիչ էլ լցրու...

Բոլորը մարում էին ծիծաղից: Վրաները հատկապես խուլուհամր տատիկն էր ազդել:

- Իսկ որտե՞ղ է հիմա քո այդ Եվտյուշկինը:

- Ո՞վ գիտի: Կամ Սիբիրում է, կամ Միջին Ասիայում: Եթե մեկնել է Ռոստով ու դեռ կենդանի է, նշանակում է որևէ տեղ՝ Միջին Ասիայում է: Իսկ եթե Ռոստով չի հասել ու մեռել է, ուրեմն Սիբիրում է...

- Ճիշտ ես ասում,- պաշտպանեցի նրան,- Միջին Ասիայում չես մեռնի, Միջին Ասիայում կարելի է դիմանալ: Ինքս այնտեղ չեմ եղել, բայց, այ, ընկերս՝ Տիխոնովը, եղել է: Ասում է՝ գնում ես, գնում, նայում ես՝ ղշլաղ է, ու կրակն աթարով են անում, խմելու հեչ բան չկա, բայց ուտելիքը լիքն է՝ ակըններ, սաքսաուլ... Համարյա կես տարի հենց ակընով ու սաքսաուլով էր սնվել: Ու ոչինչ. վերադարձավ չաղացած ու չռված աչքերով...

- Իսկ Սիբիրո՞ւմ...

- Իսկ Սիբիրում՝ ոչ, Սիբիրում չես դիմանա: Սիբիրում ընդհանրապես ոչ ոք չի ապրում, մենակ նեգրեր են ապրում: Նրանց համար ուտելիք չեն տանում, խմիչք չեն տանում, չխոսենք արդեն «մի բան ծամելու» մասին: Մենակ տարին մեկ Ժիտոմիրից նրանց համար ասեղնագործ սրբիչներ են ուղակում, ու նեգրերը դրանցով կախվում են...

- Ախր էդ ի՞նչ նեգրեր են,- վեր թռավ դեկաբրիստը, որին քունը համարյա հաղթահարել էր:- Սիբիրում՝ ի՞նչ նեգրեր: Նեգրերը

թվայնացրել է 1915.info կայքը

Նահանգներում են ապրում, ոչ թե Սիբիրում: Դուք, ենթադրենք, Սիբիրում եղել եք: Բայց դուք եղե՞լ եք Նահանգներում...

– Եղել եմ Նահանգներում և այնտեղ ոչ մի նեգր էլ չեմ տեսել:

– Ոչ մի նե՞գր: Նահանգներո՞ւմ...

Բոլորը մի տեսակ դմբրեցին, և այնքան մշուշ կար ամեն գլխում, որ այլևս տարակուսանքի համար տեղ չէր մնում: Բարդ ճակատագրի տեր, սպիավոր և անատամ կնոջը բոլորը միանգամից և անհապաղ մոռացան: Եվ ինքն էլ մի տեսակ ինքնամոռացման մատնվեց, մյուսներն էլ. միայն պատանի Միտրիչն էր, որ տիկնոջ ներկայությամբ կտրիճ երևալու համար ժամանակ առ ժամանակ մեզը թքում էր ծոծրակի լայնքով...

– Ուրեմն դուք եղել եք Նահանգներում,– ծամծմեց սևաբեղը,– դա արտակարգ է, խիստ արտակարգ է: Այնտեղ երբեք էլ ոչ մի նեգր չի եղել, հնարավոր եմ համարում... Ես ձեզ հավատում եմ, ինչպես հարազատին... Բայց ասացեք. ազատություն նույնպե՞ս այնտեղ չի եղել ու չկա... ազատությունն այդպես էլ ուրվակա՞ն է մնում այդ վշտի մայրցամաքում. ասացե՛ք...

– Այո,– պատասխանեցի նրան,– ազատությունն այդպես էլ ուրվական է մնում այդ վշտի մայրցամաքում, ու նրանք այնպես են վարժվել, որ դա համարյա չեն նկատում: Պատկերացրեք միայն: Նրանց մոտ,– ես շատ եմ շրջել և ուսումնասիրել,– ոչ դիմախաղի մեջ, ոչ ժեստի, ոչ ակնարկի՝ չկա այն շփոթմունքը, որին մենք այնպես վարժվել ենք: Ամեն մեկի մռութին այնքան արժանապատվություն/ոպե է նկարված, որը բոլորիս կհերիքեր մեր մեծ հնգամյակում: «Ինչի՞ց է,– մտածում էի և Մանհեթընից թեքվում 5-րդ ավենյու, և ինքս էլ պատասխանում էի,– նրանց նողկալի ինքնահավանությունից, միա՛յն դրանից»: Բայց որտեղի՞ց է այդ ինքնահավանությունը. ես քարացա ավենյուի մեջտեղը՝ այդ հանգույցը լուծելու համար. «Քարոզչական խաբկանքների ու գովազդային քմայքների աշխարհում որտեղի՞ց այդքան ինքնահավանություն»: Ես գնում էի դեպի Հաուլեմ ու թոթվում ուսերս. «Որտեղի՞ց: Մոնոպոլիաների

թվայնացրել է 1915.info կայքը

գաղափարախոսների խաղալիքներին, թնդանոթային արքաների խամաճիկներին որտեղի՞ց այդքան ախորժակ: Օրը հինգ անգամ լափում են ու կուշտ են լափում և միշտ՝ արժանապատվության նույն զգացումով,- բայց մի՞թե կարգին մարդը կարող է ախորժակ ունենալ, առավել ևս՝ Նահանգներում...»:

- Հա՛, հա՛, հա՛,- գլխով էր անում ծեր Միտրիչը,- նրանք էնտեղ ուտում են, իսկ մենք էստեղ համարյա թե արդեն չենք էլ ուտում... ամբողջ բրինձը կրում ենք Չինաստան, ամբողջ շաքարը կրում ենք Կուբա... բա մե՞նք ինչ ուտենք...

- Ոչի՞նչ, հայրի՛կ, ոչի՞նչ... Դու քո բաժինն արդեն կերել ես, մեղք է բողոքելը: Նահանգներում որ լինես, հիշիր գլխավորը. չմոռանաս մայր Հայրենիքն ու բարությունը նրա չմոռանաս: Մաքսիմ Գորկին միայն կնանիքանց մասին չի գրել, Հայրենիքի մասին էլ է գրել: Հիշո՛ւմ ես ինչ է գրել...

- Բա ոնց.. հիշում եմ...,- և ամբողջ խմածը ծորում էր նրա կապույտ աչքերից,- հիշում եմ... «մենք տատիկի հետ ավելի ու ավելի ենք խորանում անտառում...»:

- Բայց դա ի՞նչ կապ ունի Հայրենիքի հետ, Մի՛տրիչ,- ապշահար զայրանում էր սևաբեղը:- Դա, ախր, տատիկի մասին է, ոչ թե Հայրենիքի...

Ու Միտրիչը նորից լաց եղավ...

ՆԱԶԱՐՅԵՎՈ-ԴՐԵԶՆԱ

Ու սևաբեղն ասաց.

- Դուք շատ բան եք տեսել, շատ եք ճամփորդել: Ասացեք. որտե՞ղ են ավելի շատ գնահատում ռուս մարդուն՝ Պիրենեյների ա՛յս, թե՞ այն կողմում:

- Չգիտեմ՝ այն կողմն ինչպես, բայց այս կողմում ընդհանրապես չեն գնահատում: Ես, օրինակ, եղել եմ Իտալիայում. այնտեղ ռուս

թվայնացրել է 1915.info կայքը

մարդուն ոչ ոք ուշադրություն չի դարձնում: Նրանք միայն երգում ու նկարում են: Մեկը, ենթադրենք, կանգնել ու երգում է: Մյուսը կողքին նստած նկարում է նրան, որ երգում է: Իսկ երրորդը,- ավելի հեռվում,- երգում է նրա մասին, որը նկարում է... Եվ այնքա՜ն տխուր է այդ ամենը: Իսկ նրանք մեր տխրությունը չեն հասկանում...

- Բայց ախր իտալացինե՛րը... մի՞թե նրանք որևէ բան հասկանում են,- հաստատեց սևաբեղը:

- Հենց այդ է որ կա: Երբ Վենետիկում էի, սուրբ Մարկոսի օրը, ուզեցի թիանավակների մրցարշավը դիտել: Եվ ինձ մի այնպիսի տխրություն պատեց այդ մրցումներից: Սիրտս արցունք էր լալիս, սակայն համր էին շուրթերս: Իսկ իտալացիները չեն հասկանում, ծիծաղում են, մատով ցույց տալիս. «Տեսե՛ք, տեսե՛ք, Երոֆեևն էլի ...վածի պես է ման գալիս»: Բայց մի՞թե ես ...վածի նման եմ: Պարզապես շուրթերս են լռում...

Ասենք, Իտալիայում, ճիշտն ասած, ինձ ոչ մի բան էլ պետք չէր: Միայն երեք բան էի ուզում տեսնել՝ Վեզուվը, Հերկուլանումը և Պոմպեյը: Բայց ինձ ասացին, որ Վեզուվը վաղուց գոյություն չունի և ուղարկեցին Հերկուլանում: Իսկ Հերկուլանումում ասում են. «Բայց հիմարիդ ինչի՞ն է պետք Հերկուլանումը: Ավելի լավ է Պոմպեյ գնաս»: Գալիս եմ Պոմպեյ, իսկ ինձ ասում են. «Խելքդ տարել է այդ Պոմպեյը: Գնա Հերկուլանում...»: Հույսս կտրեցի ու գնացի Ֆրանսիա: Գնում եմ, գնում եմ, մոտենում եմ արդեն Մաժինոյի գծին, ու հանկարծ հիշեցի. արի՛, մտածում եմ, վերադառնամ, մի քիչ ապրեմ Լուիջի Լոնգոյի մոտ, անկյուն կվարձեմ, գրքեր կկարդամ, որ իզուր դեսուդեն չընկնեմ... Ավելի լավ կլիներ, իհարկե, Պալմիրո Տոլյատտիի մոտ մահճակալ վարձեի, բայց ախր վերջերս մեռավ... Իսկ Լուիջի Լոնգոն ինչո՞վ է պակաս...

Բայց, համենայնդեպս, չվերադարձա: Տիրոլով ուղիղ գնացի Սորբոնի կողմը: Գալիս եմ Սորբոն, ասում եմ՝ ուզում եմ սովորեմ բակալավրի աստիճանի համար: Հարցնում են ինձ. «Եթե ուզում ես բակալավրի աստիճանի համար սովորել, քեզ որևէ բան պիտի ներհատուկ լինի որպես երևույթի: Իսկ ի՞նչ է քեզ որպես երևույթի՝

թվայնացրել է 1915.info կայքը

ներհատուկ»: Դե, ինչ պատասխանեմ: Ասում եմ. «Ինձ ի՞նչ կարող է որպես երևույթի ներհատուկ լինել. ես որբ եմ, ախր»: «Սիբիրի՞ց»՝ հարցնում են: Ասում եմ՝ «Սիբիրից»: «Դե որ՝ Սիբիրից, այդ դեպքում գոնե հոգեկանիդ պիտի որևէ բան ներհատուկ լինի: Իսկ հոգեկանիդ ի՞նչ է ներհատուկ»: Ես մտածեցի՝ սա համենայնդեպս Խրապունովոն չէ, այլ՝ Սորբոնը, պետք է որևէ խելացի բան ասել: Մտածեցի ու ասացի. «Ինձ որպես երևույթի հատուկ է ինքնազարգացող Լոգոսը»: Իսկ Սորբոնի ռեկտորը, քանի դեռ մտածում էի խելացի բանի մասին, թիկունքից կամաց մոտեցավ ու շրը՛ը՛ը՛ը՛խկ վզակոթիս. «Հիմար ես դու,- ասում է,- ու ոչ մի Լոգոս էլ չես: Կորի՛,- գոռում է,- կորի՛, Երոֆե՛և, մեր փառապանծ Սորբոնից»: Ես այդ ժամանակ առաջին անգամ զղջացի, որ չեմ մնացել ընկեր Լուիջի Լոնգոյի բնակարանում...

Ուրիշ ինչ էր մնում, եթե ոչ գնալ Փարիզ: Տեղ եմ հասնում: Գնում եմ Նոտր Դամի կողմը, գնում ու զարմանում եմ. շուրջը զուտ լրբանոցներ են: Կանգնած է միայն Էյֆելյան աշտարակը, ու գագաթին գեներալ դը Գոլը շագանակ է ուտում ու հեռադիտակով նայում չորսբոլորը: Իսկ չորսբոլորը նայելը հեչ իմաստ չունի. հենց մենակ լրբանոցներ են չորսբոլորը...

Բուլվարներով շրջելու, ասենք, հնարավորություն էլ չկա այնտեղ: Բոլորն անվերջ ելումուտ են անում՝ լրբանոցից հիվանդանոց, հիվանդանոցից՝ էլի լրբանոց: Ու շուրջբոլորն այնքա՛ն տրիպեր կա, որ դժվար է շնչվում: Մի անգամ խմեցի ու գնացի Ելիսեյան դաշտերում ման գալու, իսկ շուրջը տրիպերն այնքա՛ն շատ է, որ ոտքերդ դժվարությամբ ես շարժում: Նայեմ՝ երկու ծանոթ դեմք. կին ու տղամարդ, երկուսն էլ շագանակ են ծամում ու երկուսն էլ զառամ են: Որտե՞ղ եմ տեսել, թերթերո՞ւմ, չեմ հիշում, կարճ ասած՝ ճանաչեցի. Լուի Արագոնն ու Էլզա Տրիոլեն: «Հետաքրքիր է,- առկայծեց միտքը,- որտեղի՞ց. հիվանդանոցից՝ լրբանո՞ց, թե՞՝ լրբանոցից հիվանդանոց»: Եվ ինքս էլ ինձ ընդհատեցի. «Ամաչի՛ր, դու Փարիզում ես, ոչ թե Խրապունովոյում: Ավելի լավ է՝ սոցիալական հարցեր տուր նրանց, ամենատառապագին սոցիալական հարցերը...»:

թվայնացրել է 1915.info կայքը

Հասնում եմ Լուի Արագոնի ետևից և ասում նրան, բացում եմ սիրտս, ասում եմ, որ հուսահատվել եմ ամեն ինչից, որ, սակայն, կասկածի նշույլ անգամ չկա իմ մեջ, և որ մեռնում եմ ներքին հակասություններից, և էլի նման բաներ, իսկ նա միայն նայեց վրաս, պատվի առավ ծերուկ վետերանի պես, թևանցուկ արեց իր Էլզային ու թողեց գնաց: Ես նորից հասնում եմ ետևներից և արդեն խոսում եմ ոչ թե Լուիի, այլ Տրիոլեի հետ, ասում եմ, որ մեռնում եմ տպավորությունների պակասից, և որ ինձ խեղդում են կասկածները հատկապես այն ժամանակ, երբ այլևս չեմ հուսահատվում, այն դեպքում, երբ հուսահատության պահերին...,- իսկ նա պառավ բ...-ի պես տպտպացրեց թշիս, թևանցուկ արեց իր Արագոնին ու թողեց գնաց...

Հետո, իհարկե, մամուլից տեղեկացա, որ բոլորովին էլ նրանք չեն եղել, որ, պարզվում է, Ժան-Պոլ Սարտրն ու Սիմոնա դը Բովուարն էին, բայց, դե, ի՞նչ տարբերություն: Ես գնացի Նոտր Դամով և այնտեղ ձեղնասենյակ վարձեցի: Ձեղնասենյակ, կիսավերնասենյակ, կողաշենք, բաց վերնահարկ, ձեղնահարկ,- ես այս ամենը խառնում եմ և առանձնակի տարբերություն չեմ տեսնում: Կա՛րճ. վարձեցի մի բան, որտեղ կարելի էր պառկել, գրել ու ծխամորճ ծխել: Ծխեցի ես տասներեք ծխամորճ ու «Ռեվյու դը Պարի» ուղարկեցի խոհագրությունս՝ ֆրանսերեն վերտառությամբ՝ «Շուք ու փայլ իմմեր էլեգանտ»: Խոհագրությունը նվիրված էր սիրո խնդիրներին:

Բայց չէ՞ որ ինքներդ գիտեք, թե Ֆրանսիայում որքան դժվար է գրել սիրո մասին: Քանի որ Ֆրանսիայում այն ամենի մասին, որ սիրուն է վերաբերվում, վաղուց ամեն ինչ գրված է: Ցույց տուր միջնակարգ կրթությամբ մեր մարդուն, ցույց տուր նրան կարծր շանկրը և հարցրու. «Սա ի՞նչ շանկր է, կա՛րծր, թե՞ փափուկ», նա անպայման վրա կտա. «Իհարկե՝ փափուկ», իսկ եթե փափուկը ցույց տաս, լրիվ գլուխը կկորցնի: Իսկ Ֆրանսիայում՝ ոչ: Ֆրանսիայում գուցե և չգիտեն հիպերիկոզին ինչ արժե, բայց եթե շանկրը փ ա փ ու կ է, ապա փափուկ է բոլորի համար, և ոչ ոք այն կարծր չի անվանի...

թվայնացրել է 1915.info կայքը

Կա՛րճ. «Ռեվյու դը Պարին» վերադարձրեց խոհագրությունս այն պատրվակով, թե ռուսերեն է, թե ֆրանսերեն է միայն վերնագիրը: Եվ ի՞նչ եք կարծում՝ հուսահատվեցի՞: Ես վերնասրահում էլի տասներեք ծխամորճ ծխեցի ու ստեղծեցի մի նոր խոհագրություն, դարձյալ նվիրված սիրուն: Այս անգամ ամբողջովին, սկզբից մինչև վերջ, գրված էր ֆրանսերեն, ռուսերեն էր միայն վերնագիրը. «Լրբությունը որպես բ...ավունության բարձրագույն ու վերջին փուլ»: Եվ ուղարկեցի «Ռեվյու դը Պարի»:

– Ու նորի՞ց վերադարձրին,– հարցրեց սևաբեղը՝ ի նշան կարեկցանքի ու մի տեսակ քնի միջից...

– Հասկանալի է, որ վերադարձրին: Գտել էին, որ լեզուն փայլուն է, իսկ հիմնական գաղափարը՝ կեղծ: Ռուսական պայմանների համար,– ասացին,– գուցե և կիրառելի է, բայց ֆրանսիականի համար՝ ոչ. լրբությունն ասացին, մեզանում դեռ բարձրագույնը չէ ու ոչ էլ վերջինը. ձեզ մոտ, ռուսներիդ, ձեր բ...ավունությունը, հասնելով լրբության սահմանին, բռնի կլուծարվի ու կփոխարինվի օնանիզմի պարտադիր ծրագրով. մեզ մոտ, ֆրանսիացիներիս, ապագայում թեկուզև բացառված չէ ռուսական օնանիզմի որոշ տարրերի օրգանական պատվաստումը, ավելի ազատ ծրագրով, մեր հայրենական սոդոմականությանը, որին,– արնապղծության միջով,–փոխակերպվում է ձեր լրբությունը,– այդ ներաճումը, սակայն, կընթանա մեր ավանդական բ...ավունության հունով ու միանգամայն պերմանենտ...

Կարճ ասած, գլուխս լրիվ ...եցին: Այնպես որ, թքեցի, վառեցի ձեռագրերս ձեղնասենյակի ու բաց վերնասրահի հետ միասին ու Վերդենով քշեցի դեպի Լամանշ: Ես գնում էի դեպի Ալբիոն: Գնում ու մտածում էի. «Ինչո՞ւ, համենայնդեպս, չմնացի Լուիջի Լոնգոյի բնակարանում»: Ես գնում էի ու երգում. «Բրիտանիայի թագուհին ծանր հիվանդ է, և հաշված են նրա գիշերներն ու ցերեկները...»: Իսկ Լոնդոնի արվարձաններում...

– Թույլ տվեք,– ընդհատեց սևաբեղը,– ինձ ապշեցնում է ձեր թափը, ո՛չ, ես հավատում եմ ձեզ, ինչպես հարազատի, ինձ ցնցում է այն թեթևությունը, որով հաղթահարել եք պետական սահմանները...

թվայնացրել է 1915.info կայքը

ԴՐԵԶՆԱ – 85-ՐԴ ԿԻԼՈՄԵՏՐ

- Բայց այդտեղ ի՞նչն է զարմանալի: Եվ ի՞նչ սահմանների մասին է խոսքը: Սահմանները նրա համար են, որ ազգերը չշփոթենք: Մեզ մոտ, օրինակ, կանգնած է սահմանապահը ու միանշանակ գիտի, որ սահմանը մտապատրանք չէ ու ոչ էլ խորհրդանշան, քանի որ սահմանի մի կողմում խոսում են ռուսերեն և ավելի շատ են խմում, իսկ մյուս կողմում ավելի քիչ են խմում ու խոսում են չռուսերեն...

Իսկ այնտե՞ղ: Ի՞նչ սահմաններ կարող են լինել այնտեղ, երբ բոլորը միատեսակ են խմում ու խոսում են չռուսերեն: Այնտեղ գուցե և ուրախ էլ կլինեին, թե կարողանային որևէ տեղ դնել սահմանապահին, բայց դնելու տեղ չկա պարզապես: Եվ ահա թրև են գալիս սահմանապահներն անբանուգործ, թախծում ու ծխախոտ են խնդրում... Այնպես որ, այնտեղ այդ առումով լրիվ ազատ է... Ուզո՞ւմ ես, օրինակ, Էբոլիում մնալ, խնդրե՛մ, կանգ առ Էբոլիում: Ուզո՞ւմ ես մեկնել Կանոսսա, ոչ ոք չի խանգարում՝ գնա Կանոսսա: Ուզո՞ւմ ես Ռուբիկոնն անցնել, անցի՛ր:

Այնպես որ, զարմանալի բան չկա... Ըստ Գրինվիչի՝ տասներկու զրո-զրոյին ես արդեն ներկայացվել էի Բրիտանական թանգարանի տնօրենին, որը մի տեսակ զնգուն ու հիմար ազգանուն ուներ, Կոմբի Կորմի պես մի բան. «Ի՞նչ եք ուզում մեզնից»,- հարցրեց Բրիտանական թանգարանի տնօրենը: «Ես ուզում եմ վարձահրավիրվել ձեզ մոտ: Ավելի ճիշտ, որ դուք վարձահրավիրեք ինձ, ահա թե ինչ եմ ուզում...»:

«Ուզում եք, որ էդ շալվարով, ու ես վարձահրավիրե՛մ ձեզ»,- ասաց Բրիտանական թանգարանի տնօրենը: «Իսկ ի՞նչ վատ շալվար է որ»,- հարցրի թաքուն սրտմտությամբ: Իսկ նա, ասես հարցս լսած չլիներ, չոքեց իմ առաջ ու սկսեց հոտոտել գուլպաներս: Հոտոտեցպրծավ, վեր կացավ, կնճռոտեց դեմքը, թքեց, ապա հարցրեց. «Ու որ էս գուլպաներով, ու ես վարձահրավիրե՛մ ձեզ»:

- Բայց ի՞նչ գուլպաներով,- խոսեցի ես՝ արդեն առանց սրտմտությունս թաքցնելու:- Այդ ի՞նչ գուլպաներով: Այ էն գուլպաները,

թվայնացրել է 1915.info կայքը

որ Հայրենիքում հագնում էի, իսկապես հոտավետ էին, այո՛: Բայց մեկնելուց առաջ փոխեցի, որովհետև մարդու մեջ ամե՛ն ինչ պիտի սքանչելի լինի՝ և՛ հոգին, և՛ մտքերը, և՛...

Իսկ նա լսել անգամ չուզեց: Գնաց լորդերի պալատ և ասաց. «Լորդե՛ր, ահավասիկ դռան ետևը մի սրիկա է կանգնած: Նա ծյունառատ Ռուսաստանից է, բայց կարծես այնքան էլ հարբած չէ: Ի՞նչ անեմ էդ անբախտին: Վարձահրավիրե՛մ այդ խրտվիլակին, թե՞ ոչ մի վարձահրավեր էլ չանեմ դրան»: Եվ լորդերն ինձ մոնոկլների միջով զննելով՝ ասում են. «Իսկ դու փորձի՛ր, Ուիլյա՛մ, փորձի՛ր, նրան հանիր ի ցույց, այդ փոշոտ ապուշը կսազի ցանկացած ինտերյերի»: Այստեղ խոսք առավ Բրիտանիայի թագուհին: Նա բարձրացրեց ձեռքն ու ծղրտաց.

– Հսկիչնե՛րը, հսկիչնե՛րը,– դղրդաց վագոնով մեկ, դղրդաց ու պայթեց. «Հսկիչնե՛րը»:

Իմ պատմությունն ընդհատվեց: Բայց ոչ միայն պատմությունը. նաև՝ սևաբեղի հարբած կիսանիրհը, նաև դեկաբրիստի քունը.– ամե՛ն ինչ հատվեց կեսճանապարհին: Ծեր Միտրիչը սթափվեց ու լրիվ կորած էր արցունքների մեջ, իսկ ջահելը բոլորին կուրացրեց իր սուլող հորանջով, որ փոխարկվում էր ծիծաղի ու կղկղման: Եվ միայն ծանր ճակատագրի տեր կինն էր ջարդված ատամները բերետով ծածկած քնել, ինչպես ֆատամորգանա...

Անկեղծ ասած, պետուշկինյան երկաթուղագծում հսկիչներից ոչ ոք չի վախենում, որովհետև բոլորն էլ անտոմս են: Եթե որևէ հարբած հերձվածող նույնիսկ տոմս էլ առնի, ապա հենց ինքը կընկնի անհարմար վիճակի մեջ, երբ հայտնվեն հսկիչները. երբ մոտենում ու տոմս են պահանջում, նա չի կարողանում նայել ոչ մեկի երեսին՝ ո՛չ ստուգողի, ո՛չ հասարակության, ու թվում է՝ ուզում է գետինը պատռի, մտնի մեջը: Իսկ հսկիչը մի տեսակ զզվանքով զննում է տոմսը և նրան նայում ոչնչացնող հայացքով, ինչպես սողունին կնայեն: Իսկ հասարակությո՛ւնը, հասարակությունը «նապաստակին» նայում է խոշոր, գեղեցիկ աչքերով և կարծես ասում է. խոնարհեցի՛ր

թվայնացրել է 1915.info կայքը

հայացքդ, այլանդա՛կ, խի՛ղճդ է տանջում, ջհուդի՛ մոութ: Իսկ հսկիչի աչքերի մեջ ավելի վճռական են նայում. ահա թե ինչպիսին ենք, և կարո՞ղ ես մեզ դատապարտել: Մոտեցի՛ր, մոտեցի՛ր, Սեմյո՛նիչ, մենք քեզ չենք նեղացնի...

Մինչև Սեմյոնիչի ավագ հսկիչ կարգվելը ամեն ինչ այլ էր. այդ օրերին անտոմս ուղևորներին հինդուսների պես քշում էին ռեզերվացիաները և գլխներին շխկացնում էֆրոնով ու Բրոքհաուզով, իսկ հետո տուգանում ու դուրս էին անում վագոնից: Այդ օրերին, հսկիչից մազապուրծ, նրանց խուճապահար նախիրները սուրում էին վագոնով մեկ, իրենց հետ տանելով նույնիսկ նրանց, ով տոմս ուներ: Մի անգամ, աչքիս առաջ, երկու փոքրիկ տղաներ, խուճապին տրված վազեցին ընդհանուր նախրի հետ ու մահացու ոտնակոխ եղան. այդպես էլ պառկել էին անցուղում՝ կապտած բռունցքների մեջ իրենց տոմսերը սեղմած...

Ավագ հսկիչ Սեմյոնիչն ամեն ինչ փոխեց. նա լուծարեց բոլոր տուգանքներն ու ռեզերվացիաները: Նա ավելի պարզ վարվեց. ամեն անտոմսից մեկական գրամ էր գանձում կիլոմետրի համար: Ամբողջ Ռուսաստանով մեկ շոֆերները «գրդոններին» կիլոմետրը կոպեկով են տանում, իսկ Սեմյոնիչը մեկուկես անգամ էժան էր վերցնում՝ մի գրամ՝ կիլոմետրի համար: Եթե, օրինակ, Զուխլինկայից Ուսադ ես գնում, տարածությունն իննսուն կիլոմետր է, Սեմյոնիչի համար լցնում ես, ուրեմն, իննսուն գրամ ու կատարելապես հանգիստ շարունակում ճամփադ՝ մեծահարուստի պես նստարանին փռված...

Եվ այսպես, Սեմյոնիչի նորամուծությունը ամրապնդում էր հսկիչի կապը լայն զանգվածների հետ, էժանացնում էր այդ կապը, պարզեցնում ու դարձնում ավելի մարդասիրական... Եվ այդ համընդհանուր դողի մեջ, որ ծնվում է «Հսկիչնե՛րը» բղավոցից, ընդհանրապես վախ չկա: Այդ դողի մեջ միայն կանխագիտություն է...

Սեմյոնիչը գիշատչի ժպիտով մտավ վագոն: Արդեն հազիվ էր մնում ոտքի վրա. սովորաբար գնում էր ընդամենը մինչև Օրեխովո-Զուևո, իսկ Օրեխովո-Զուևոյում ցած էր թռչում ու սիրտ թափելու աստիճան լակած՝ հասնում իրենց գրասենյակը...

թվայնացրել է 1915.info կայքը

– Էլի դո՞ւ ես, Միտրի՛չ: Էլի Օրեխովո՞ ես գնում, կարուսել նստելո՞ւ. երկուսիցդ՝ հարյուր ութսուն: Հա՛, էդ էլ դո՞ւ ես, սևաբե՛ղ: Սալտիկովսկայա–Օրեխովո–Զո՞ւևո: Յոթանասուներկու գրամ: Արթնացրեք էդ բ...–ին ու հարցրեք՝ ինչքա՞ն պիտի տա: Իսկ դո՞ւ, կովերկո՛տ, ո՞ւր ու որտեղի՞ց: Մուրճ ու Մանգաղ–Պոկրո՞վ: Բարի եղեք, հարյուր հիսուն: «Նապաստակները» գնալով քչանում են: Մի ժամանակ դա «ցասում ու զայրույթ» էր հարուցում, իսկ հիմա հարուցում է «օրինական հպարտություն»... Իսկ դո՞ւ, Վե՛նյա...

Ու Սեմյոնիչը արնախումի պես ինձ համակեց օղու խանձահոտով.

– Իսկ դո՞ւ, Վե՛նյա, ինչպես միշտ՝ «Մոսկվա–Պետուշկի՞»...

85–ՐԴ ԿԻԼՈՄԵՏՐ–ՕՐԵԽՈՎՈ–ԶՈՒԵՎՈ

– Այո, ինչպես միշտ: Ու հիմա արդեն ընդմիշտ. Մոսկվա–Պետուշկի...

– Եվ կարծում ես՝ այս անգա՞մ էլ ես դուրս պրծնելու: Հա՞: Շեհերեզադե՛...

Այստեղ ես պիտի մի փոքրիկ շեղում անեմ, ու քանի դեռ Սեմյոնիչը խմում է իր հասանելիք տուգանային գրամները, արագ–արագ ձեզ կբացատրեմ, թե ինչու «Շեհերեզադե» և ինչ է նշանակում դուրս պրծնել:

Արդեն երեք տարի է անցել այն օրից, երբ առաջին անգամ հանդիպեցի Սեմյոնիչին: Այն ժամանակ նոր–նոր էր նշանակվել պաշտոնին: Նա մոտեցավ ինձ ու հարցրեց. «Մոսկվա–Պետուշկի՞: Հարյուր քսանհինգ»: Ու երբ չհասկացա, թե բանն ինչ է, նա ինձ բացատրեց, թե բանն ինչ է: Ու երբ նրան ասացի, որ մոտս ոչ մի գրամ չունեմ, ասաց ի պատասխան. «Ի՞նչ անեմ, ուրեմն, հիմա, մոռ՛ութդ ջարդեմ՝ որ մոտդ ոչ մի գրամ չունես»: Ես պատասխանեցի, որ ջարդելու կարիք չկա և ինչ–որ բան մոթմոթացի Հռոմեական իրավունքի ոլորտից: Նա դրանով շատ հետաքրքրվեց ու խնդրեց ավելի մանրամասն պատմել ամենայն անտիկի ու հռոմեականի մասին: Ես սկսեցի պատմել և արդեն

թվայնացրել է 1915.info կայքը

հասել էի Լուկրեցիայի ու Տարկվինոսի սկանդալային պատմությանը, բայց նա պիտի ցած թռչեր Օրեխովո-Զուրոյում, և այդպես էլ չհաջողեց լսել՝ համենայնդեպս՝ ինչ կատարվեց Լուկրեցիայի հետ, հասա՞վ իր ուզածին ավարա Տարկվինոսը, թե՞ չհասավ...

Իսկ Սեմյոնիչը, մեր մեջ ասած, հազվագյուտ կնամոլ է և ուտոպիստ, համաշխարհային պատմությունը նրան գրավում էր միայն իր անկողնային եզրով: Ու երբ մի շաբաթից Ֆրյազևոյի շրջանում հսկիչները նորից վրա տվին, Սեմյոնիչն ինձ արդեն չասաց. «Մոսկվա-Պետուշկի՞: Հարյուր քսանհինգ»: Ո՞չ, արագ գտավ ինձ ու պահանջեց շարունակությունը. «Հը՞, ո՞նց եղավ, մի բան արե՞ց. համենայնդեպս, Լուկրեցիային»:

Ու ես նրան պատմեցի, թե հետո ինչ էր կատարվել: Ես հռոմեական պատմությունից անցա քրիստոնեականին և արդեն հասել էի Հիպատիայի պատմությանը: Ես նրան ասում էի. «Եվ ահա պատրիարք Կիրիլի հրահրմամբ՝ մոլեռանդությամբ բռնված Ալեքսանդրիայի վանականները պատառոտեցին սքանչելի Հիպատիայի զգեստներն ու...», բայց այստեղ մեր գնացքը մեխվածի պես կանգնեց Օրեխովո-Զուևոյում, ու Սեմյոնիչը, որի հետաքրքրասիրությունը վերջնականապես գրգռվել էր, թռավ կառամատույց:

Եվ այսպես՝ երեք տարի շարունակ, ամեն շաբաթ: Ես «Մոսկվա-Պետուշկի» երթուղագծի միակ անտոմս ուղևորն էի, որը ոչ մի անգամ ոչ մի գրամ չէր մատուցել Սեմյոնիչին, բայց և այնպես, ողջ էր ու չծեծված: Սակայն ցանկացած պատմություն վախճան է ունենում, համաշխարհայինը՝ նույնպես...

Անցած ուրբաթ հասա Ինդիրա Գանդիին, Մոշե Դայանին ու Դուբչեկին: Այլևս գնալու տեղ չկար...

Եվ ահա Սեմյոնիչը խմեց իր տուգանային բաժնեչափն ու նայեց վրաս՝ վիշապի և սուլթան Շահրիյարի պես.

- Մոսկվա-Պետուշկի՞: Հարյուր քսանհինգ:

- Սեմյո՛նիչ,- համարյա աղերսեցի ես:- Սեմյոնի՛չ, դու այսօր շա՞տ ես խմել:

թվայնացրել է 1915.info կայքը

- Բավականաչափ,- պատասխանեց Սեմյոնիչը՝ ոչ առանց ինքնագոհության: Լուլ հարբած էր:

- Նշանակում է՝ երևակայություն պիտի՛ որ ունենաս: Նշանակում է՝ դեպի ապագան մղվելը ուժերիցդ վեր չէ: Նշանակում է՝ ինձ հետ միասին կարող ես խավար անցյալի աշխարհից տեղափոխվել ոսկեդար, որն «Աստված վկա, վրա է հասնում»...

- Կարող եմ, Վե՛նյա, կարո՛ղ եմ, այսօր ես ամեն ինչ կարող եմ...

- Երրորդ ռայխից, չորրորդ ողից, հինգերորդ հանրապետությունից ու տասնյոթերորդ համագումարից կարո՞ղ ես ինձ հետ քայլ անել բոլոր հրեաների ըղձած հինգերորդ թագավորության, յոթերորդ թագավորության ու երկրորդ գալստյան աշխարհը...

- Կարող եմ,- դղրդաց Սեմյոնիչը:- Խոսի՛ր, խոսի՛ր, Շեհերեզադե՛:

- Դե, ուրեմն լսիր: Այդ օրը լինելու է «ընտրելագույնը բոլոր օրերից»: Այդ օրը ուժահատ Սիմեոնը կասի վերջապես. «Եվ արդ արձակեա զստրուկդ, Տե՛ր»... Եվ կասի հրեշտակապետ Գաբրիելը. «Կո՛ւյս Աստվածածին, ցնծա՛, օրհնյալ ես դու կանանց մեջ»: Իսկ դոկտոր Ֆաուստը կմրմնջա. «Ահա՛ ակնթարթը: Տևի՛ր, ակնթա՛րթ, ու կանգնի՛ր»: Եվ բոլորը, ում անունը գրված է կյանքի գրքում, կսաղմոսերգեն. «Ցնծա՛, Եսայի՛», և Դիոգենեսը կհանգցնի իր լապտերը: Եվ կլինեն բարին ու գեղեցիկը, և ամեն ինչ լավ կլինի, և բոլորը լավ կլինեն, և չի լինի ոչինչ բարուց ու գեղեցիկից բացի, և կձուլվեն համբույրի մեջ...

- Կձուլվեն համբույրի մե՞ջ,- անհանգիստ շուռումուռ եկավ Սեմյոնիչը, որ արդեն վառվում էր անհամբերությունից...

- Այո՛, և կձուլվեն համբույրի մեջ դահիճն ու զոհը, և չարությունը, և դիտավորությունը, և հաշվարկը կքաշվեն սրտերից, և կինը...

- Կի՛նը,- թրթռաց Սեմյոնիչը,- կինը ի՞նչ, ի՞նչ կինը...

- Եվ Արևելքի կինը կնետի փարաջան, վերջնականապես կնետի փարաջան Արևելքի ճնշված կինը: Եվ կպառկի...

- Կպառկի՞՛,- այստեղ արդեն ցնցվեց:

- Եվ կպառկի գայլը գառնուկի կողքին, ու ոչ մի արցունք չի ընկնի, և ասպետները կընտրեն օրիորդներին, ինչպիսին ում դուր է գալիս, և...

թվայնացրել է 1915.info կայքը

- Օ՛-օ՛-օ՛,- տնքաց Սեմյոնիչը:- Եվ շո՛ւտ կլինի, շո՛ւտ կլինի դա...,- ու հանկարծ կարկառեց ձեռքերը, ապա ճեպով, խճճվելով շորերում, սկսեց հանել համազգեստը և համազգեստի շալվարը, և ամեն ինչ՝ մինչև ամենավերջին ինտիմությունները...

Ես, որքան էլ հարբած, ապշած նայում էի նրան: Իսկ հասարակությունը, սթափ հասարակությունը համարյա թե վեր թռավ, ու տասնյակ աչքերում մի հսկայական «օհո» էր գրված: Նա, այդ հասարակությունը, ամեն ինչ այնպես չէր հասկացել, ինչպես պետք էր հասկանալ...

Պետք է նկատեմ, որ հոմոսեքսուալիզմը մեր երկրում թեկուզև արմատախիլ է արված վերջնականապես, բայց՝ ոչ լիովին: Ավելի ստույգ՝ այսպես. լրիվ ու ամբողջովին, բայց ոչ վերջնականապես: Մեր հասարակության ուշումիտքը հիմա ինչի՞ն է: Հենց զուտ հոմոսեքսուալիզմին: Ու մեկ էլ՝ արաբներն են նրա մտքում, Իսրայելն ու Գոլանի բարձունքները, Մոշե Դայանը: Դե, իսկ եթե Մոշե Դայանին վռնդեն Գոլանի բարձունքից, իսկ արաբներին ու հրեաներին հաշտեցնեն, ի՞նչ կմնա մարդկանց գլուխներում: Կմնա զուտ հոմոսեքսուալիզմը:

Ենթադրենք՝ հեռուստացույց են դիտում. գեներալ դը Գոլն ու Ժորժ Պոմպիդուն հանդիպում են դիվանագիտական ընդունելության ժամանակ: Եվ հասարակությունն սկսում է. «Օհո՛,- ասում է:- Այ քեզ գեներալ դը Գոլ»: Կամ՝ «Օհո՛: Այ քեզ Ժորժ Պոմպիդու»:

Ահա թե նրանք այդ պահին ինչպես էին նայում մեզ: Բոլորի կլորացած աչքերում գրված էր այդ «Օհո՛»-ն:

- Սեմյո՛նիչ, Սեմյո՛նիչ,- ես գրկեցի նրան ու քարշ տվի վագոնի հարթակը:- Մեզ նայում են... Ուշքի՛ արի... Գնա՛նք...

Նա անասելի ծանր էր: Նա կակղած էր ու փխրուն: Ես նրան քարշ տվի հարթակ ու դրեցի մուտքի դռների մոտ:

- Վե՛նյա: Ասա ինձ... Արևելքի կինը... Եթե լրիվ հանի փարաջան... տակը որևէ բան կմնա՞... Որևէ բան կմնա՞ փարաջայի տակ...

Ես չհասցրի պատասխանել: Գնացքը մեխվածի պես կանգ առավ Օրեխովո-Զուևո կայարանում, ու դուռը ավտոմատ բացվեց...

թվայնացրել է 1915.info կայքը

ՕՐԵԽՈՎՈ–ԶՈՒԵՎՈ

Ավագ հսկիչ Սեմյոնովը, որ հետաքրքրությունից վառվում էր հազարմեկերորդ անգամ, կիսակենդան ու շորարձակ շպրտվեց կառամատույց ու գլուխը խփեց բազրիքին... Երկու թե երեք վայրկյան դեռ կանգնած էր, ճոճվում էր, ինչպես բանական եղեգն, իսկ հետո արդեն փլվեց իջնող հասարակության ոտքերի տակ, և անտոմս ուղևորության համար գանձված բոլոր տուգանքները հորդեցին որովայնից ու սփռվեցին կառամատույցով մեկ...

Այդ ամենը ես միանգամայն հստակ տեսա և վկայում եմ աշխարհի առջև: Բայց ահա մնացյալն արդեն չեմ տեսել ու ոչինչ վկայել չեմ կարող: Գիտակցության պոչով, ամենա–ամենապոչով հիշեցի, որ Օրեխովոյում իջնող հասարակության հեղեղը խճճվեց իմ մեջ ու խլեց ինձ, որ ամբարի իր մեջ կեղտոտ թքի նման ու դուրս թքի օրեխովյան կառամատույցում: Սակայն թքացայտ, համենայնդեպս, չստացվեց, քանի որ վագոն մտնող հասարակությունը խցում էր վագոնից ելնողի բերանը: Ես դեսուդեն էի ընկնում, ինչպես քաքը ջրափոսի մեջ:

Իսկ եթե Տերն ինձ ա յ ն տ ե ղ հարցնի. «Մի՞թե, Վե՞նյա, դու ուրիշ ոչինչ չես հիշում: Մի՞թե միանգամից սուզվեցիր այն քնի մեջ, որից սկսվել են քո բոլոր փորձությունները»,– ես կասեմ նրան. «Ո՛չ, Տե՛ր իմ, ո՛չ միանգամից»: Գիտակցության պոչով, հենց այն նույն ամենապոչով դեռ մտապահեցի, որ, այնուամենայնիվ, կարողացել եմ սանձել տարերքն ու դուրս պրծնել վագոնի թափուր տարածությունները և փլվել ինչ–որ մեկի նստարանին, որ առաջինն էր՝ դռնեռից հաշված:

Իսկ երբ փլվեցի, Տե՛ր, անհապաղ տրվեցի երազանքների ու ծույլ նիրհի հզոր հոսանքին:– Օ, ո՛չ: Ես դարձյալ ստում եմ, ես դարձյալ ստում եմ յառաջի Քո, Տե՛ր: Այդ ե՛ս չեմ ստում, այդ ստում է իմ թուլացած հիշողությունը,– ես անմիջապես չէ, որ տրվեցի հոսանքին, ես գրպանումս շոշափեցի կուբանյանի չբացած շիշը ու հինգ թե վեց կում

թվայնացրել է 1915.info կայքը

արեցի,- իսկ հետո արդեն, թիերս ծալելով, տրվեցի երազանքների ու ծույլ նիրհի հզոր հոսանքին...

Մեր բոլոր հորինվածքները ոսկե դարի մասին,- կրկնում էի ես,- ամբողջը սուտ են և ունայնություն: Բայց չէ՞ որ ես, տասներկու շաբաթ առաջ, տեսա նրա նախակերպարը, ու կես ժամից այն աչքերիս առաջ կշողա տասներեքերորդ անգամ: Այնտեղ թռչնի երգը չի դադարում ցերեկ ու գիշեր, այնտեղ ձմեռ թե ամառ ծաղկում է հասմիկը.- իսկ ի՞նչ կա այնտեղ՝ հասմիկի ներսում: Ո՞վ է այնտեղ, պուրպուր ու ոլորուն վիսոն զգեցած, գոցել թարթիչներն ու շուշան է բուրում...

Եվ ես ապուշի պես ժպտալով՝ բացում եմ հասմիկի թփերը...

ՕՐԵԽՈՎՈ ԶՈՒԵՎՈ-ԿՐՈՒՏՈՅԵ

...Իսկ հասմիկի թփերից դուրս է գալիս քնեած Տիխոնովը և կկոցում աչքերը՝ ինձ ու արեգակին նայելով:

- Ի՞նչ ես անում այստեղ, Տի՛խոնով:

- Թեզիսներն եմ մշակում: Ամեն ինչ վաղուց արդեն պատրաստ էր ելույթի համար, բացի թեզիսներից: Հիմա արդեն թեզիսներն էլ են պատրաստ...

- Ուրեմն գտնում ես, որ իրավիճակը հասունացե՞լ է:

- Սատանա՛ն գիտի: Հենց որ մի քիչ խմում եմ, թվում է, թե հասունացել է, իսկ հենց խմածությունս անցնում է՝ չէ՛, մտածում եմ՝ դեռ չի հասունացել, դեռ վաղ է զենքի դիմելու համար...

- Դու էլ գիհոդի խմի, Վա՛դյա...

Տիխոնովը գիհոդի խմեց, կոնչաց ու տխրվեց:

- Հը, ո՞նց է, հասունացա՞վ իրավիճակը:

- Սպասի՛, հիմա կհասունանա...

- Իսկ ե՞րբ ենք սկսում: Վա՞ղը...

- Ո՞վ գիտի: Հենց մի քիչ խմում եմ, թվում է՝ վեր կաց ու հենց հիմա էլ սկսի, որ նույնիսկ երեկ էլ շուտ չէր սկսելու համար: Իսկ հենց

թվայնացրել է 1915.info կայքը

թողնում է, մտածում եմ՝ չէ՛, երեկ էլ էր շուտ և վաղը չէ մյուս օրն էլ ուշ չի լինի:

– Իսկ դու էլի խմի, Վադի՛մչիկ, գիհոդի խմի...

Վադիմչիկը խմեց ու էլի տխրվեց:

– Հը՞: Գտնում ես, որ ժամանա՞կն է...

– Ժամանակն է...

– Նշանաբանը չմոռանաս: Եվ բոլորին ասա, որ չմոռանան. վաղը առավոտ, Տարտինո գյուղի ու Ելիսեյկովո գյուղի արանքում, անասնաբակի մոտ, ըստ Գրինվիչի՝ ինը զրո–զրոյին...

– Այո՛: Ըստ Գրինվիչի՝ ինը զրո–զրոյին:

– Գնաս բարո՛վ, ընկե՛ր: Աշխատիր քնել այս գիշեր:

– Կաշխատեմ քնել, մնա՛ս բարով, ընկե՛ր:

Այստեղ պետք է անմիջապես վերապահություն անեմ. համայն մարդկության խղճի առջև պարտավոր եմ ասել. ես հենց սկզբից դեմ էի թզենու պես ամուլ այս արկածախնդրությանը: (Հրաշալի է ասված՝ «Ամուլ՝ թզենու պես»): Հենց սկզբից ասում էի, որ հեղափոխությունը որևէ պիտանի բանի հասնում է, եթե կատարվում է սրտերում: Բայց մեկ որ առանց ինձ սկսել էին, չէի կարող հեռու մնալ նրանցից, ովքեր սկսել են: Ես կարող էի, համենայնդեպս, կանխել սրտերի անհարկի խստամբերությունն ու նվազեցնել արնահեղությունը...

Գրինվիչով իննին նստել էինք անասնաբակի մոտ, խոտերի մեջ, նստել ու սպասում էինք: Ամեն մոտեցողի ասում էինք. «Նստի՛ր, ընկե՛ր, մեզ հետ. ոտքերի մեջ ճշմարտություն չկա», և ամեն մոտեցող մնում էր կանգնած՝ զնգացնում էր զենքերն ու կրկնում պայմանական խոսքը Անտոնիո Սալյերիից. «Բայց ճշմարտություն չկա նաև ավելի վերը»: Չարաճճի էր այդ նշանաբանը ու երկիմաստ, բայց մեր հոգսը դա չէր. մոտենում էր ինը զրո–զրոն՝ ըստ Գրինվիչի...

Իսկ ինչի՞ց սկսվեց: Ամեն ինչ սկսվեց նրանից, որ Տիխոնովը Ելիսեյկովոյի գյուղսովետի դարպասին մեխեց իր տասնչորս թեզիսները: Ավելի ճիշտ՝ ոչ թե մեխեց դարպասին, այլ կավիճով ցանկապատին գրեց, և դրանք ավելի շուտ բառեր էին, քան թեզիսներ,

թվայնացրել է 1915.info կայքը

կարճուկտրուկ, հստակ բառեր, ոչ թե թեզիսներ, և ընդամենը երկուսը, ոչ թե տասնչորս. սակայն, այսպես թե այնպես, ամեն ինչ դրանից սկսվեց:

Մենք շարժվեցինք երկու շարասյունով, դրոշները պարզած. մի շարասյունը՝ դեպի Ելիսեյկովո, մյուսը՝ դեպի Տարտինո: Եվ անարգել գնացինք ընդհուպ մինչև մայրամուտ. սպանվածներ չկային ոչ մի կողմից, վիրավորներ նույնպես չկային, մի գերի կար՝ լարիոնովյան գյուղսովետի նախկին նախագահը, որին օր ծերության պաշտոնանկ էին արել հարբեցողության ու բնածին թուլամտության համար: Ելիսեյկովոն տապալված էր: Չերկասովոն թավալվում էր մեր ոտքերի տակ: Նեուգոդովոն ու Պեկշան թողություն էին հայցում: Պետուշկինյան գավառի բոլոր կենսական կենտրոնները՝ Պոլոմիի խանութից մինչև գյուղկոոպի անդրեևյան պահեստը, լրիվ բռնված էին ապստամբներով...

Իսկ արևամուտից հետո Չերկասովո գյուղը հռչակվեց մայրաքաղաք, այնտեղ հասցվեց գերյալը, և այնտեղ էլ հանպատրաստից բացվեց հաղթողների համագումարը: Բոլոր ելույթ ունեցողները մեռելի պես հարբած էին, բոլորը նույնն էին բարբաջում. Մաքսիմիլիան Ռոբեսպիեր, Օլիվեր Կրոմվել, Սոնյա Պերովսկայա, Վերա Զասուլիչ, պատժիչ ջոկատներ Պետուշկիից, պատերազմ Նորվեգիայի դեմ, ու նորից՝ Սոնյա Պերովսկայա և Վերա Զասուլիչ...

Տեղից բղավում էին. «Իսկ որտե՞ղ է էդ Նորվեգիան»: «Ո՞վ գիտի՝ որտեղ է,- պատասխանում էին մի ուրիշ տեղից:- Սատանի ծոցն է, գրողի անտակն է»: «Որտեղ էլ լինի,- զսպում էի ես աղմուկը,- առանց ինտերվենցիայի չենք կարող: Պատերազմից քայքայված տնտեսությունը վերականգնելու համար նախ այն պետք է քայքայել, իսկ դրա համար հարկավոր է քաղաքացիական կամ գոնե որևէ ուրիշ պատերազմ, առնվազն տասներկու ռազմաճակատ է հարկավոր...»: «Սպիտակ լեհեր են պետք»,- ծղրտում էր ծռված Տիխոնովը: «Օ՛, ապուշ,- ընդմիջեցի նրան,- շարունակ ինչ-որ բան դուրս կտաս: Դու փայլուն տեսաբան ես, Վադի՛մ, քո թեզիսները մեխել

թվայնացրել է 1915.info կայքը

ենք մեր սրտերին, բայց հենց բանը գործին է հասնում՝ վերջին աղբը՝ քեզ օրինակ: Դե ասա, ապուշիդ ինչի՞ն են պետք սպիտակ լեհերը»: «Ինչի՞, ես վիճում ե՞մ որ,- հանձնվեց Տիխոնովը:- Կարծես թե նրանք ինձ ավելի են պետք, քան ձեզ: Նորվեգիան է, թո՛ղ Նորվեգիա լինի...»:

Իրարանցման ու մոլեգնումի մեջ բոլորը կարծես մոռացել էին, որ արդեն տասներկու տարի Նորվեգիան ՆԱՏՕ-ի կազմում է, և Վլադիկ Ց-սկին բացիկների ու նամակների տրցակով արդեն վազում էր լարիոնովյան փոստատուն: Նամակներից մեկը հասցեագրված էր Նորվեգիայի թագավոր Ուլաֆին՝ պատերազմ էր հայտարարվում, ու հանձնման հավաստագրով էր: Մեկ ուրիշ նամակ, ավելի ճիշտ՝ ոչ թե նամակ, այլ թղթի մաքուր թերթ, ուղարկվեց գեներալ Ֆրանկոյին. թող դրա մեջ ճակատագրի մատը տեսնի էդ պառավ կոճափայտը, թող սպիտակի էդ թղթի պես, քայքայված բ...ակառուդիլիոն: Բրիտանական կայսրության վարչապետ Հարոլդ Վիլսոնից պահանջում էինք մի չնչին բան. քաշի՛ր, վարչապե՛տ, քո ռազմանավը Աքաբի ծոցից, իսկ հետո վարվիր ըստ կամընտրության... Եվ վերջապես, չորրորդ նամակը՝ Վլադիսլավ Հոմուլկային. մենք նրան գրում էինք. դո՛ւ, Վլադիսլա՛վ Հոմուլկա, լիակատար և անկապտելի իրավունք ունես Լեհական Միջանցքի վրա, իսկ, այ, Յուզեֆ Ցիրանկևիչը Լեհական Միջանցքի վրա ոչ մի իրավունք էլ չունի...

Նաև ուղարկեցինք չորս բացիկ. Աբբա Էբանին, Մոշե Դայանին, գեներալ Սուխարտոյին և Ալեքսանդր Դուբչեկին: Բոլոր չորս բացիկներն էլ չափազանց գեղեցիկ էին, դրվագազարդերով ու կաղնետերևներով: Թող, իբր, ուրախանան տղերքը, գուցե մեզ, էդ դանդալոշները, դրա համար միջազգային իրավունքի սուբյեկտ ճանաչեն...

Ոչ ոք այդ գիշեր չքնեց: Բոլորին տիրել էր խանդավառությունը, բոլորը երկինք էին նայում՝ սպասելով նորվեգական ռումբերին, խանութների բացվելուն և ինտերվենցիային, ու պատկերացնում էին, թե ինչպես կուրախանա Վլադիսլավ Հոմուլկան և ինչպես է մազերը պոճոկելու Յուզեֆ Ցիրանկևիչը...

թվայնացրել է 1915.info կայքը

Քնած չէր նաև գերին՝ գյուղսովետի նախկին նախագահ Անատոլի Իվանիչը. թախծող շան պես կլանչում էր իր մարագից.

- Տղե՛րք, ուրեմն վաղը առավոտ ոչ մեկը ինձ խմելիք չի՞ տալու...

- Մի տես, է՛, սիրտն ինչ ուզեց: Շնորհակալ էղի, որ գոնե կերակրում ենք Ժնևի կոնվենցիայի համաձայն...

- Է՛դ ինչ բան է...

- Կիմանաս ինչ բան է: Էդ էն է, որ ոտերդ, Իվանի՛չ, դեռ մի կերպ էլի քաշ կտաս, բայց բ...-յան գնալուց հույսդ կտրի...

ԿՐՈՒՏՈՅԵ-ՎՈՒՆՈՎՈ

Իսկ առավոտյան, դեռ մինչև խանութների բացվելը, տեղի ունեցավ Պլենումը: Այն ընդլայնված էր և հոկտեմբերյան: Բայց քանի որ մեր չորս պլենումներն էլ ընդլայնված ու հոկտեմբերյան էին, որպեսզի չխառնենք, որոշեցինք դրանք համարակալել. 1-ին պլենում, 2-րդ պլենում, 3-րդ պլենում և 4-րդ պլենում...

Ամբողջ առաջին պլենումը նվիրված էր նախագահի ընտրությանը, այսինքն՝ ինձ նախագահ ընտրելուն: Դա մեզնից մեկուկես-երկու րոպե խլեց, ոչ ավելի: Իսկ ամբողջ մնացած ժամանակը կլանեց զուտ մտահայեցողական բանավեճը. ով առաջինը կբացի խանութը՝ մորաքույր Մաշա՞ն՝ Անդրեևսկիում, թե՞ մորաքույր Շուրան՝ Պոլոմիում:

Իսկ ես իմ նախագահությունում նստած՝ ունկնդրում էի այդ բանավեճերն ու մտածում՝ բանավեճերը միանգամայն անհրաժեշտ են, բայց շատ ավելի անհրաժեշտ են դեկրետները: Ինչո՞ւ ենք մոռանում այն, ինչով պիտի պսակվի ցանկացած հեղափոխություն, այսինքն՝ «դեկրետները»: Օրինակ, այսպիսի դեկրետ. մորաքույր Շուրային պարտավորեցնել, որ Պոլոմիում խանութը բացի առավոտյան վեցին: Թվում է՝ ավելի պարզ բան կա՞. մեզ տրված իշխանությամբ վերցնում ու մորաքույր Շուրային ստիպում ենք խանութը բացել ոչ թե ինն անց կեսին, այլ առավոտվա վեցին: Ո՞նց առաջ մտքովս չէր անցել...

թվայնացրել է 1915.info կայքը

Կամ, օրինակ, դեկրետ հողի մասին. գավառի ամբողջ հողը տալ ժողովրդին՝ բոլոր խոտհարքերով ու շարժականով, բոլոր սպիրտային խմիչքներով և առանց որևէ ետգնման: Կամ այսպիսի. ժամացույցի սլաքը երկու ժամ առաջ տալ, կամ՝ ժամուկես հետ, մեկ է, միայն թե տեղաշարժել որևէ ուղղությամբ: Հետո. «դև» բառը նորից գրել «եւ»-ով, իսկ որևէ տառ ընդհանրապես չեղյալ հայտարարել, միայն թե պետք է մտածել՝ ո՞րը: Եվ վերջապես՝ մորաքույր Մաշային ստիպել, որ Անդրեևսկիում խանութը բացի հինգն անց երեսունին ու ոչ իննին...

Մտքերը վխտում էին, այնպես էին վխտում, որ տխրություն իջավ վրաս, ետնաբեմ կանչեցի Տիխոնովին, մենք չամանոցի խմեցինք, ու ես նրան ասացի.

– Լսիր հապա, կանցլե՛ր:

– Հը, ի՞նչ կա:

– Հե՛չ: Ոչմիբանացու կանցլեր ես դու, ահա թե ինչ կա:

– Ուրիշի՞ն գտի,– նեղացավ Տիխոնովը:

– Դրա մասին չի խոսքը, Վա՛դյա: Խոսքն ահա թե ինչի մասին է. եթե լավ կանցլեր ես, նստի ու դեկրետներ գրի: Մի քիչ էլ խմի, նստի ու գրի: Ես լսել եմ, որ համենայնդեպս չես դիմացել ու կմճթել ես Անատոլ Իվանիչի բուդը: Դու էդ ի՞նչ է, տեռո՞ր ես բացում:

– Դե էնպես... Մի քիչ...

– Եվ ինչ տեռոր ես բացում: Սպիտա՞կ:

– Սպիտակ:

– Իզուր ես անում, Վա՛դյա: Ասենք, լավ, հիմա դրա ժամանակը չի: Պետք է նախ դեկրետ գրել, թեկուզ մեկը, թեկուզ ամենանողկալին... Թուղթ ու թանաք կա՞: Նստի ու գրի: Իսկ հետո կխմենք ու՝ իրավունքների դեկլարացիան: Իսկ հետո արդեն՝ տեռորը: Ու հետո արդեն կխմենք ու նոր՝ սովորե՛լ, սովորե՛լ, սովորե՛լ...

Տիխոնովը խմեց, երկու բառ գրեց ու հառաչեց.

– Հա՛ա՛ա՛ա՛... Սխալ բան էր իմ էդ տեռորը... Բայց դե մեր գործում առանց սխալվելու չի լինի, քանի որ չլսված նոր է մեր ամբողջ

թվայնացրել է 1915.info կայքը

գործը, ու նախադեպեր՝ համարի որ չեն եղել... Եղել են, ճիշտ է, նախադեպեր, բայց...

- Ախր դրանք ի՞նչ նախադեպեր են: Հե՛չ բան, անհեթեթությո՛ւն: Իշամեղվի թռիչք է դա, չափահաս չարաճճիների զվարճանքներ, ոչ թե նախադեպ... Թվականությունը, ի՞նչ ես կարծում, փոխե՞նք, թե թողենք ինչ կա:

- Ավելի լավ է՝ թողենք: Ինչ որ ասում են՝ քաքը չբզես, ոչ էլ հոտ կգա...

- Ճիշտ ես ասում, թողենք: Դու փայլուն տեսաբան ես, Վա՛դյա, ու դա լավ է: Գուցե եզրափակե՞նք պլենումը: Մորաքույր Շուրան Պոլոմիում արդեն խանութը բացել է: Ասում են՝ ռուսական ունի:

- Իհարկե փակի: Վաղը առավոտից, մեկ է, 2-րդ պլենումն է սկսվում... Գնանք Պոլոմի:

Պոլոմիում մորաքույր Շուրան իսկապես ռուսական ուներ: Դրա հետ կապված, ինչպես և շրջկենտրոնից պատժիչ արշավանքների սպասելով, որոշվեց մայրաքաղաքը Չերկասովից ժամանակավոր տեղափոխել Պոլոմի, այսինքն՝ տասներկու վերստ դեպի հանրապետության տարածքի խորքը:

Եվ այնտեղ մյուս առավոտ բացվեց 2-րդ պլենումը, որն ամբողջությամբ նվիրված էր նախագահի պաշտոնից իմ հրաժարականին:

- Ես ելնում եմ նախագահական աթոռից,- ասացի իմ ելույթում,- ու թքում եմ նախագահական աթոռի վրա: Ես գտնում եմ, որ նախագահի պաշտոնը պիտի զբաղեցնի այնպիսի մեկը, ում ռեխը խումհարից հետո երեք օրում չես դրստի: Այդպիսի մարդիկ կա՞ն մեր շարքերում:

- Չկան այդպիսիք,- միահամուռ պատասխանեցին պատվիրակները:

- Իմ ռեխն, օրինակ, մի՞թե հնարավոր չէ դրստել երեք օրում և խումհարից հետո:

Մեկ-երկու վայրկյան գնահատող հայացքներով նայում էին երեսիս, հետո միաձայն պատասխանեցին. «Հնարավոր է»:

թվայնացրել է 1915.info կայքը

– Դե որ հնարավոր է,– շարունակեցի,– ես ի՞նչ նախագահ դրանից հետո: Առանց նախագահի էլ կդիմանանք: Ավելի լավ է այսպես անենք. բոլորս գնանք մարգագետինները՝ փունջ պատրաստելու, իսկ Բորյային թողնենք այստեղ, դուռն էլ կողպենք վրան: Քանի որ բարձր որակների տեր մարդ է, թող նստի այստեղ ու կառավարություն ձևավորի...

Իմ ճառն ընդհատվեց օվացիայով, ու Պլենումը մարեց. շրջակա մարգագետինները բռնվեցին կապույտ կրակով: Միայն ես էի, որ չէի կիսում համընդհանուր աշխուժությունը, ես շրջում էի կրակների արանքում՝ կրելով մի տագնապալի միտք. ինչո՞ւ է այսպիսի լռություն տիրում աշխարհում: Գավառը բոցերով է բռնված, իսկ աշխարհը լռել է, ենթադրենք՝ շունչը պահած: Բայց ինչո՞ւ ոչ ոք ձեռք չի պարզում մեզ ո՛չ Արևելքից, ո՛չ Արևմուտքից: Ո՞ւր է նայում Ուլաֆ արքան: Ինչո՞ւ հարավից մեզ չեն ճգմում կանոնավոր զորամասերը...

Ես կամացուկ մի կողմ տարա կանցլերին. նրանից փունջի թունդ հոտ էր փչում:

– Քեզ դո՞ւր է գալիս, Վա՛դյա, մեր հեղափոխությունը:

– Այո,– պատասխանեց Վադյան:– Այն տենդագին է, բայց և հրաշալի:

– Այդպե՞ս... Իսկ Նորվեգիա՞ն: Նորվեգիայի մասին, Վա՛դյա, ոչ մի լուր չկա՞:

– Դեռ չէ... Իսկ քո ինչի՞ն է պետք Նորվեգիան:

– Ինչպես թե՝ ինչիս է պետք Նորվեգիան... Մենք նրա հետ պատերազմի վիճակո՞ւմ ենք, թե՞ վիճակում չենք: Հիմար բան է ստացվում: Մենք նրա հետ պատերազմում ենք, իսկ նա մեզ հետ՝ չի ուզում... Եթե վաղը մեզ չսկսեն ռմբակոծել, նորից կնստեմ նախագահական աթոռին, և այդ ժամանակ կտեսնես ինչ կլինի...

– Նստի՛ր,– պատասխանեց Վադյան,– քեզ ո՞վ է խանգարում, Երոֆե՛յչիկ... Ուզո՞ւմ ես՝ նստի՛ր...

թվայնացրել է 1915.info կայքը

ՎՈՒՆՈՎՈ-ՈՒՄԱԴ

Մեզ վրա առավոտյան էլ ոչ մի ռումբ չընկավ: Եվ այդ ժամանակ, բացելով 3-րդ պլենումը, ես ասացի.

«Սենատորնե՛ր: Աշխարհում, ինչպես տեսնում եմ, ոչ ոք չի ցանկանում գործ ունենալ մեզ հետ՝ ո՛չ բարեկամություն, ո՛չ վեճակոիվ: Բոլորը երես են թեքել մեզնից ու շունչները պահել: Ու քանի որ պատժիչները Պետուշկիից այստեղ կհասնեն վաղը երեկոյան, իսկ մորաքույր Շուրայի ռուսականը կսպառվի վաղն առավոտյան, ես ստանձնում եմ ողջ իշխանությունը. այսինքն՝ ով հիմար է ու չի հասկանում, բացատրում եմ. ես պարետային ժամ եմ մտցնում: Ավելին. նախագահի լիազորությունները հայտարարում եմ արտակարգ և դրա հետ միասին դառնում եմ նախագահ: Այսինքն՝ անձ, որ վեր է օրենքից ու մարգարեներից...»:

Ոչ ոք չառարկեց: Միայն պրեմիեր Բորյա Ս-ն ցնցվեց «մարգարեների» վրա, շլմորած նայեց ինձ, ու նրա վերին մարմնամասերը դողում էին վրեժխնդրությունից...

Երկու ժամ անց նա շունչը փչեց պաշտպանության մինիստրի ձեռքերի վրա: Մեռավ տխրությունից և ընդհանրացման չափազանցված հակումից: Ուրիշ պատճառներ կարծես թե չկային, իսկ մենք նրան այդպես էլ չհերձեցինք, քանի որ զզվելի էր հերձելը: Իսկ նույն օրվա երեկոյան աշխարհի բոլոր հեռագրասարքերը հաղորդագրություն ընդունեցին. «Մահը վրա է հասել բնական պատճառներով»: Թե ում մահը՝ չէր ասվում, սակայն աշխարհը կոահում էր:

4-րդը սգո պլենում էր:

Ես ելույթ ունեցա և ասացի.

«Պատվիրակնե՛ր: Եթե ես երբևէ երեխաներ ունենամ, նրանց համար պատին կկախեմ Հրեաստանի կուսակալ Պոնտացի Պիղատոսի նկարը, որ երեխաները մաքրասեր մեծանան: Կուսակալը կանգնել ու լվանում է ձեռքերը. ահա, թե ինչպիսին կլինի այդ նկարը: Ճիշտ այդպես էլ՝ ես. վեր եմ կենում ու լվանում եմ ձեռքերս: Ես ձեզ միացա զուտ հարբած լինելու պատճառով և ի հեճուկս ամենայն ակնհայտության: Ես

թվայնացրել է 1915.info կայքը

ձեզ ասում էի, որ պետք է հեղափոխականացնել սրտերը, որ պետք է վեհացնել հոգիները՝ մինչև հավերժական բարոյական կատեգորիաների յուրացման աստիճան, և որ մնացածը, ինչ դուք ձեռնարկել եք, ունայնություն է ու ոգու տվայտանք, անպետքություն է ու տականքություն...

Եվ ինչի՞ վրա պիտի հույս դնենք, ինքնե՛րդ մտածեք: Մեզ ոչ ոք ընդհանուր շուկա չի թողնի: Ամերիկյան Յոթերորդ տորմիղի նավերը չեն հասնի այստեղ, ասենք՝ չեն էլ ցանկանա...»:

Այստեղ արդեն բոլորը գոռացին տեղերից.

– Իսկ դու մի՛ հուսահատվի, Վե՛նյա: Տակդ մի՛ լցրու: Մեզ ռմբակոծիչնե՛ր կտան: Բ–52–ներ կտան մեզ:

– Կտա՛ն, բա չէ՛, Բ–52–ներ: Գրպանդ լայն բաց: Ուղղակի ծիծաղելի բաներ եմ լսում ձեզնից, սենատորնե՛ր:

– Ու «Ֆանտոմներ» կտան:

– Հա՛–հա՛: Ո՛վ ասաց «Ֆանտոմներ»: Էլի մի բառ «Ֆանտոմների» մասին, ու ծիծաղից կպայթեմ...

Այստեղ Տիխոնովը տեղից ասաց.

– «Ֆանտոմներ» մեզ գուցե և չտան, բայց ֆրանկի արժեզրկում հաստատ կտան...

– Հիմա՛ր ես դու, Տի՛խոնով, ոնց որ տեսնում եմ: Չեմ վիճում, դու արժեքավոր տեսաբան ես, բայց որ բլթոցըրի՛ր... Ասենք, խնդիրը դա չի: Ինչո՞ւ է այնպես, որ Պետուշկիի ամբողջ շրջանը բռնված է կրակով բայց ոչ ոք, ոչ ոք դա չի նկատում: Կա՛րճ. ես թոթվում եմ ուսերս ու հեռանում նախագահի պաշտոնից: Ես Պոնտացի Պիղատոսի պես եմ. լվանում եմ ձեռքերս ու ձեր աչքի առաջ խմում մեր ռուսականից մնացածը: Այո՛: Ես ոտքում եմ իմ բոլոր լիազորություններն ու հեռանում ձեզնից: Դեպի Պետուշկի:

Կարո՞ղ եք պատկերացնել, թե ինչ փոթորիկ բարձրացավ պատվիրակների մեջ, հատկապես երբ սկսեցի խմել ինչ մնացել էր...

Իսկ երբ սկսեցի հեռանալ, երբ հեռացա՝ ի՛նչ խոսքեր թռան իմ ետևից: Նույնպես կարող եք պատկերացնել. ես այդ խոսքերը ձեզ համար չեմ կրկնի...

թվայնացրել է 1915.info կայքը

Իմ սրտում զղջում չկար: Ես գնում էի մարգագետիններով ու խոտհարքով, մասրենու թփերի ու կովերի նախիրների միջով, դաշտում ինձ խոնարհվում էին հասկերն ու կապույտ տերեփուկն էր ժպտում: Բայց, կրկնում եմ, իմ սրտում զղջում չկար... Արևը մայր մտավ, իսկ ես դեռ գնում ու գնում էի:

«Երկնայի՛ն Տիրուհի, ինչ հեռո՛ւ է դեռ Պետուշկին,- ասացի ինքս ինձ,- գնում եմ, գնում, իսկ Պետուշկին դեռ չկա ու չկա: Արդեն մութն էլ ընկավ, որտե՞ղ է Պետուշկին»:

«Որտե՞ղ է Պետուշկին»,- հարցրի՝ մոտենալով ինչ-որ մեկի լուսավորված ծածկապատշգամբին: Որտեղի՞ց հայտնվեց այս ծածկապատշգամբը: Իսկ գուցե բոլորովին էլ ծածկապատշգամբ չէ, սանդղավանդ է կամ թևաշենք. չէ՞ որ ես դրանցից գլուխ չեմ հանում ու շարունակ խառնում եմ:

Ես թակեցի դուռն ու հարցրի. «Որտե՞ղ է Պետուշկին: Հեռո՞ւ է դեռ մինչև Պետուշկի»: Ի պատասխան բոլորը, ով կար ծածկապատշգամբում, բոլորը քրքջացին ու չասացին ոչինչ: Ես նեղացա ու նորից թակեցի. խրխնջոցը պատշգամբում վերսկսվեց: Տարօրինա՛կ է: Ավելին, ինչ-որ մեկն էլ թիկունքիս էր խրխնջում:

Ես նայեցի շուրջս. «Մոսկվա-Պետուշկի» գնացքի ուղևորները նստել էին իրենց տեղերն ու կեղտոտ ժպտում էին: Ահա՛ թե ինչ: Ուրեմն դեռ շարունակում եմ գնա՛լ...

«Ոչի՛նչ, Երոֆե՛և, ոչի՛նչ: Թող ծիծաղեն, ուշադրություն մի՛ դարձնի: Ինչպես Սաադին է ասել՝ եղիր շիտակ ու պարզ, ինչպես նոճին, ու շռայլ եղիր արմավենու պես: Չեմ հասկանում այստեղ արմավենին ի՞նչ կապ ունի, բայց մեկ է՝ եղիր ինչպես արմավենին: Գրպանումդ կուբանյան մնացե՞լ է: Դե ահա, դուրս եկ հարթակ ու խմիր: Խմիր, որ սիրտդ այդպես չխառնի»:

Չորս կողմից հիմարավուն ժպիտների օղակում սեղմված՝ ելա հարթակ: Տագնապը բարձրանում էր հոգուս ամենահատակից, ու դժվար էր հասկանալ՝ ի՞նչ տագնապ է, որտեղի՞ց և ինչո՞ւ է այդքան անհասկանալի...

թվայնացրել է 1915.info կայքը

- Մոտենում ենք Ուսադին, հա՞:- Ժողովուրդը կանգառի սպասելով՝ խմբվել էր դռների առաջ, ու հենց նրանց էլ ուղղված էր իմ հարցը:- Մոտենում ենք Ուսադի՞ն:

- Հարբած ու հիմար հարցեր տալու փոխարեն ավելի լավ է տանը նստեիր,- պատասխանեց ինչ-որ ծերուկ,- տանը նստեիր ու դասերդ անեիր: Հաստատ վաղվա դասերդ դեռ չես պատրաստել, ու մայրիկդ զայրանալու է:

Իսկ հետո ավելացրեց.

- Բոյը թիզուկես է, բայց արդեն դատողություններ է անում...

Ի՞նչ է, խելագարվե՞լ է էդ պապիկը: Ի՞նչ մայրիկ: Ի՞նչ դասեր: Ի՞նչ թիզուկես... Դե չէ, հաստատ պապին չի խելքը թոցրել, ես եմ թոցրել: Որովհետև ահա երկրորդ ծերուկն էլ, ճերմակ-ճերմակ դեմքով, կանգնեց կողքիս, ներքևից վերև նայեց աչքերիս մեջ ու ասաց.

- Համ էլ ասենք՝ ո՞ւր պիտի գնաս. հարսնանալուդ համար արդեն ուշ է, գերեզմանոց գնալուդ՝ վաղ է դեռ: Ո՞ւր պիտի գնաս, ուխտավո՛ր քույրիկ...

«Ուխտավոր քույրի՞կ»:

Ես ցնցվեցի ու քաշվեցի հարթակի մյուս ծայրը: Աշխարհում ինչ-որ բան այն չէ: Ինչ-որ նեխում կա ողջ թագավորությունում և ուղեղները խախտված են: Ես, համենայնդեպս, կամացուկ կսմթեցի ինձ. սրանից հետո էլ ի՞նչ «ուխտավոր քույրիկ»: Ինչի՞ց ելնելով՝ այդպես որոշեց: Եվ ինչի՞ համար: Կարելի է, իհարկե, կատակել, բայց ոչ այդքան անհեթեթ:

Իմ խելքը տեղն է, իսկ նրանցը՝ ոչ. կամ հակառակը՝ նրանց խելքը տեղն է, ու միայն իմն է, որ տեղը չի: Տագնապը հոգուս խորքից շարունակ բարձրանում ու բարձրանում էր: Եվ երբ մոտեցանք կանգառին, չդիմացա ու մի անգամ էլ հարցրի, իջնողներից մեկին հարցրի.

- Սա Ուսա՞դն է, հա՞:

Իսկ նա (միանգամայն անսպասելի) ձգվեց իմ առջև լարի պես ու գոռաց. «Բնավ ո՛չ»: Իսկ հետո, հետո սեղմեց ձեռքս, կռացավ ու

թվայնացրել է 1915.info կայքը

ականջիս ասաց. «Ես ձեր բարությունը երբեք չեմ մոռանա, ընկե՛ր ավագ լեյտենանտ...»:

Եվ իջավ վագոնից՝ թևքով արցունքը սրբելով:

ՈՒՍԱԴ–105–ՐԴ ԿԻԼՈՄԵՏՐ

Ես մնացի հարթակին՝ կատարելապես մենակ ու կատարելապես տարակուսած: Դա մինչևիսկ այնքան էլ տարակուսանք չէր, նույն տագնապն էր, որ փոխարկվում էր դառնության: Վերջիվերջո, սատանան դրանց հետ, թող որ՝ «ուխտավոր քույրիկ», թող որ՝ «ավագ լեյտենանտ», բայց ինչու է մութ պատուհանից այն կողմ, ասացե՛ք խնդրեմ: Ինչի՞ց է այդ մթությունը, եթե գնացքը դուրս է եկել առավոտյան և անցել ուղիղ հարյուր կիլոմետր... Ինչո՞ւ...

Գլուխս սեղմեցի ապակուն,– օ՜, ի՜նչ խավար է, և ի՞նչ կա այդ խավարում՝ ձյո՞ւն, թե՞ անձրև, թե՞ պարզապես արցունքների միջով եմ նայում այդ խավարին: Աստվա՜ծ իմ:

– Հա՜, այդ դո՞ւ ես,– ասաց ինչ-որ մեկը ետևից, այնպիսի քաղցր, այնպիսի չարախինդ ձայնով, որ նույնիսկ չշրջվեցի: Անմիջապես հասկացա՝ ով է կանգնած թիկունքիս: «Հիմա կսկսի գայթակղել, հիմա՛ր մոռթը: Գայթակղելու ժամանա՜կ է գտել»:

– Ուրեմն դո՞ւ ես, Երոֆե՛և,–հարցրեց Սատանան:

– Իհարկե, ես եմ: Ուրիշ էլ ո՞վ:

– Ծա՞նր է քեզ համար, Երոֆե՛և:

– Իհարկե, ծանր է: Բայց դա քեզ չի վերաբերում: Գնա, քեզ համար ուրիշ հիմար գտի...

Ես ամեն ինչ հենց այդպես էլ ասացի՝ հարթակում ճակատս պատուհանին սեղմած և առանց ետ նայելու:

– Դե, եթե ծանր է,– շարունակում էր Սատանան,– զսպիր պոռթկումդ: Զսպիր քո հոգևոր պոռթկումը՝ կթեթևանաս:

– Ոչ մի դեպքում չեմ զսպի:

թվայնացրել է 1915.info կայքը

– Հիմար ես, ուրեմն:

– Հիմարից եմ լսում:

– Դե, լա՛վ, լա՛վ... սրանց մի բառ չասես... Դու ավելի լավ է այսպես արա. բռնի ու ընթացքի ժամանակ թռի գնացքից...

Ես նախ մտածեցի, հետո պատասխանեցի.

– Հը՛-ը, չե՛մ թռնի, սարսափելի է: Հաստատ ջարդուխուրդ կլինեմ...

Եվ Սատանան հեռացավ՝ խայտառակված:

Իսկ ե՞ս,– ինչ էր մնում ինձ,– շշից վեց կում արի ու նորից ճակատս սեղմեցի ապակուն: Խավարը շարունակում էր լողալ պատուհանից անդին և ավելի տագնապալի էր դառնում: Ու մի սև միտք էր ծնում: Ես ետ էի քաշում գլուխս, որ սրեմ այդ միտքը, բայց դեռ ոչ մի կերպ չէր սրվում, այլ լողզվում էր, ինչպես գարեջուրը սեղանի երեսին: «Դուր չի գալիս ինձ այդ խավարը պատուհանից այն կողմ, բոլորովի՛ն դուր չի գալիս»:

Սակայն կուբանյանի վեց կումերն արդեն սրտիս էին հասնում, կամացուկ, մեկիկ–մեկիկ, մոտենում էին սրտիս. ու սիրտս մենամարտում էր բանականության հետ...

«Բայց ինչո՞վ քեզ դուր չի գալիս, ա յ դ խավարը: Խավարը խավար է, ու ոչինչ անել չես կարող: Խավարին փոխարինում է լույսը, իսկ լույսին՝ խավարը. սա՛ է իմ կարծիքը: Եթե այն մինչևիսկ քեզ դուր չի գալիս, մեկ է՝ չի դադարում խավար լինել: Նշանակում է՝ մնում է մի ելք՝ ընդունել այդ խավարը: Կեցության հավերժական օրենքներին իշխելը հիմարներիս բանը չէ: Ձախը սեղմելով՝ մենք կարող ենք խնչել միայն աջ քթանցքով: Ճիշտ է, չէ՞: Դե, ուրեմն պետք չէ լույս պահանջել պատուհանից այն կողմ, եթե պատուհանից այն կողմ խավար է»:

«Այդպես է... բայց չէ՞ որ մեկնեցինք առավոտյան... Ութն անց տասնվեց, Կուրսկի կայարանից...»:

«Հետո՞ ինչ՝ որ առավոտյան... Հիմա, փառք Աստծու, աշուն է, օրերը կարճացել են, չես հասցնում ուշքի գալ, մեկ էլ, ը՛հը, արդեն մութն ընկավ... Բայց չէ՞ որ դեռ, օ՛օ՛օ՛օ՛օ՛, ինչքան ճանապարհ կա դեռ

թվայնացրել է 1915.info կայքը

մինչև Պետուշկի: Մոսկվայից մինչև Պետուշկի օ՛օ՛օ՛օ՛օ՛ ինչ երկար ճանապարհ է»:

«Ի՞նչ օ՛օ՛օ՛, ի՞նչ ես մի գլուխ օ՛օ՛օ՛ հա օ՛օ՛օ՛: Մոսկվայից Պետուշկի ճանապարհը տևում է ուղիղ երկու ժամ տասնհինգ րոպե: Անցած ուրբաթ, օրինակ...»:

«Դե, ի՞նչ ես ուզում այդ անցած ուրբաթից: Ինչ ասես չի պատահել անցած ուրբաթ: Անցած ուրբաթ գնացքն էլ համարյա առանց կանգառների էր գնում: Եվ ընդհանրապես, գնացքներն առաջներում ավելի արագ էին գնում... Իսկ հիմա, սատանան գիտի, կանգնած է, բայց ինչո՞ւ է կանգնել: Երբեմն սիրտդ ուղղակի խառնում է. ինչո՞ւ է մի գլուխ կանգնում ու կանգնում: Ամեն սյան մոտ: Բացի Եսինոյից»:

Ես դուրս նայեցի պատուհանից ու նորից խոժոռվեցի.

«Այո՛... համենայնդեպս, տարօրինակ է... դուրս ենք եկել առավոտվա ութին... ու դեռ գնո՛ւմ ենք, գնո՛ւմ ենք...»:

Այստեղ արդեն սիրտս պայթեց. «Իսկ մյուսնե՞րը: Մյուսներն, ի՞նչ է, քեզնից վա՞տն են: Մյուսները չէ՞ որ նույնպես գնում են ու չեն հարցնում՝ ինչո՞ւ այսքան դանդաղ և այսպես մութ: Կամաց-կամաց գնում են ու պատուհանից նայում դուրս... Ինչո՞ւ դու պիտի ավելի արագ գնաս, քան նրանք: Ծիծաղելի բաներ ես ասում, Վե՛նյա, ծիծաղելի ու զզվելի... Ինչ էլ վոազո՛ղն ես: Եթե խմել ես, Վե՛նյա, ուրեմն համեստ եղիր, մի մտածիր, թե ավելի խելոք ու լավն ես մյուսներից...»:

Սա արդեն իսկապես ինձ համոզեց: Նորից մտա վագոն ու նստեցի տեղս՝ աշխատելով դուրս չնայել պատուհանից. վագոնի ողջ հասարակությունը, հինգ թե վեց հոգի, ննջում էին գլխակախ, կրծքի երեխաների պես... Քիչ էր մնում իմ քունն էլ տաներ...

Ու հանկարծ վեր թռա. «Ողորմա՛ծ Աստված: Բայց չէ՞ որ առավոտյան 11-ին նա պիտի սպասեր ինձ: Առավոտյան 11-ին նա արդեն սպասելիս կլինի ինձ, իսկ դրսում դեռ մութ է... Ուրեմն ստիպված եմ սպասել նրան, մինչև լույսը բացվի: Ես ախր չգիտեմ՝ որտեղ է ապրում: Ես նրա մոտ հասել եմ տասներկու անգամ ու միշտ ինչոր ետնաբակերով, ու միշտ մեռելի պես հարբած... Ի՞նչ ցավալի է,

թվայնացրել է 1915.info կայքը

որ տասներեքերորդ անգամը նրա մոտ կատարելապես սթափ եմ գնում: Դրա պատճառով ստիպված եմ լինելու սպասել, թե երբ վերջապես լույսը կբացվի: Երբ կծագի իմ տասներեքերորդ ուրբաթի արշալույսը: Ասենք՝ կա՛ց: Չէ՞ որ երբ շարժվում էինք Մոսկվայից, իմ ուրբաթի արշալույսն արդեն ծագել էր: Նշանակում է՝ այսօր արդեն ուրբաթ է: Ինչո՞ւ է, ուրեմն, այդպես մութ պատուհանից այն կողմ»

«Նորի՛ց: Նորից դու քո այդ մթությամբ: Ինչի՞դ է պետք այդ մութը»:

«Բայց չէ՞ որ անցած ուրբաթ...»:

«Նորից սկսեցիր քո անցած ուրբաթով: Տեսնում եմ, Վե՛նյա, որ դու լրիվ անցյալում ես: Տեսնում եմ, որ բոլորովին չես ուզում մտածել ապագայի մասին...»:

«Չէ՛, չէ՛, լսի՛ր... Անցած ուրբաթ, ուղիղ 11–ին նա կանգնած էր կառամատույցին, ծամը՝ ծոծրակից մինչև հետույքը... ու շուրջը շատ լույս էր, ես լավ եմ հիշում, ու ծամն էլ լավ եմ հիշում»:

«Բայց «ծամն» ի՞նչ կապ ունի: Հասկացի՛ր, հիմա՛ր, կրկնում եմ. օրը հիմա կարճանում է, որովհետև աշուն է: Անցած ուրբաթ, ժամը 11–ին, չեմ վիճում, լույս էր: Իսկ այս ուրբաթ, ժամը 11–ին, գուցե և լրիվ մութ լինի, թեկուզ մատդ մեկնումեկի աչքը կոխես: Գիտե՞ս օրը հիմա ինչպես է կարճանում: Գիտե՞ս: Տեսնում եմ, որ ոչ մի բան էլ չգիտես, մենակ գլուխ ես գովում, թե գիտես... Բա՛ն գտար՝ «ծա՛մը»... Ծամը գուցե և երկարում էլ է. անցած ուրբաթ օրվանից գուցե արդեն քամակից էլ իջել է ներքև... Իսկ աշնան օրն ընդհակառակը, արդեն շան քթի չափ է...

Ի՞նչ անճարակն ես, համենայնդեպս, Վե՛նյա»:

Ես ոչ այնքան ուժեղ խփեցի թշիս, էլի երեք կում արի, ու աչքերս արցունքակալեցին: Հոգուս հատակից տագնապի փոխարեն սերն էր բարձրանում: Ես լրիվ նվաղեցի. «Դու նրան պուրպուր ու շուշաններ էիր խոստացել ու երեք հարյուր գրամ «Վասիլյոկ» կոնֆետ ես տանում: Եվ ահա քսան րոպեից կհասնես Պետուշկի, և արևով ողողված կառամատույցին կշփոթվես ու նրան կպարգես այդ «Վասիլյոկը»: Եվ

թվայնացրել է 1915.info կայքը

բոլորը կասեն. «Տասներեք անգամ շարունակ հենց զուտ «Վասիլյոկ» է, որ տեսնում ենք: Ու ոչ մի անգամ ո՛չ պուրպուր տեսանք, ո՛չ շուշաններ: Իսկ նա կծիծաղի ու կասի...»:

Այստեղ ես համարյա լրիվ քուն մտա: Գլուխս գցեցի ուսիս ու մինչև Պետուշկի չէի ուզում բարձրացնել: Ես դարձյալ տրվեցի հոսանքին...

105-ՐԴ ԿԻԼՈՄԵՏՐ-ՊՈԿՐՈՎ

Բայց չթողեցին տրվեմ հոսանքին: Մի քիչ էի մոռացության գիրկն ընկել, երբ մեկը պոչով խփեց մեջքիս:

Ես ցնցվեցի ու շրջվեցի. իմ առջև կանգնած էր մի ո մ ն՝ անոտք, անպոչ և անգլուխ:

- Դու ո՛վ ես,- ապշած հարցրի ես:

- Կռահիր, թե ով եմ,- ու նա ծիծաղեց, մարդակերի պես ծիծաղեց:

- Չէ՛ մի: Է՛դ էր պակաս...

Ես նեղացած շրջվեցի, որ դարձյալ մոռացության գիրկն ընկնեմ: Բայց այդ պահին ինչ-որ մեկը գլխով թափընթաց խփվեց մեջքիս: Ես նորից շրջվեցի: Իմ առջև էլի նույն ոմնն էր՝ անպոչ ու անգլուխ...

- Ինչո՞ւ ես խփում,- հարցրի:

- Իսկ դու գուշակիր՝ ինչու,- պատասխանեց նա մարդակերի նույն ծիծաղով:

Այս անգամ համենայնդեպս վճռեցի՝ արի՛ գուշակեմ: «Թե չէ կարող է շրջվեմ՝ այս անգամ երկու ոտքով կխփի մեջքիս...»:

Ես հայացքս խոնարհեցի ու մտքի մեջ ընկա: Նա սպասում էր մինչև կգուշակեմ ու սպասելիս հսկայական բռունցքը տարուբերում էր պնչերիս տակով: Ասես իմ՝ հիմարիս, փսլինքը սրբելիս լիներ...

Առաջինը, համենայնդեպս, նա խոսեց.

- Պետուշկի՞ ես գնում: Այն քաղաքը, որտեղ ամառ թե ձմեռ ծաղկում է և ա՛յլն... Որտեղ...

թվայնացրել է 1915.info կայքը

– Այո: Որտեղ ամառ թե ձմեռ ծաղկում է և այլն:

– Որտեղ քո լիրբը փռվել է հաամիկի ու վիսսոնի մեջ, և թռչնակները թևում են վրան ու լպստում՝ ուր խելքներին փչի՞:

– Այո, խելքներին փչի:

Նա նորից ծիծաղեց ու խփեց սրտագդալիս:

– Դե ուրեմն լսիր: Քո առջև Սֆինքսն է: Եվ թույլ չի տա՝ մտնես այդ քաղաքը:

– Ինչո՞ւ թույլ չի տա: Այդ ինչո՞ւ ինձ թույլ չես տա: Ի՞նչ է, մահաբեր խո՞ց կա Պետուշկիում: Մեկնումեկին պսակել են սեփական դստեր հե՞տ, և դու...

– Այնտեղ ավելի վատ բան կա, քան դուստրն ու խոցը: Ես ավելի լավ գիտեմ՝ ինչ կա այնտեղ: Բայց քեզ ասացի՝ չեմ թողնի, ուրեմն չեմ թողնի: Ավելի ճիշտ՝ կթողնեմ, բայց մի պայմանով, որ լուծես իմ հինգ հանելուկները:

«Այս տականքի ինչի՞ն են պետք հանելուկները»,– մտածեցի իմ մեջ, իսկ բարձրաձայն ասացի.

– Դե լավ, մի՛ չարչարի, ասա հանելուկներդ: Դենը տար բռունցքդ, մի՛ խփի սրտագդալիս, հանելուկնե՛րդ տուր:

«Այդ վիժվածքի ինչի՞ն են պետք հանելուկները»,– նորից մտածեցի ես, բայց նա արդեն սկսել էր առաջինը.

«Նշանավոր հարվածային Ալեքսեյ Ստախանովը օրը երկու անգամ դուրս էր գնում փոքր կարիքով և երկու օրը մեկ անգամ՝ մեծ կարիքով: Իսկ երբ խումհարի մեջ էր լինում, օրը չորս անգամ դուրս էր գնում փոքր կարիքով և ոչ մի անգամ՝ մեծով: Հաշվիր՝ տարին քանի՛ անգամ էր նշանավոր հարվածային Ալեքսեյ Ստախանովը դուրս գնում փոքր կարիքով և քանի անգամ՝ մեծով, եթե նկատի ունենանք, որ նա տարվա երեք հարյուր տասներկու օրը խումհարի մեջ էր»:

Ես իմ մեջ մտածեցի. «Ի՞նչ է ակնարկում այս անասունը: Երբեք զուգարան չի գնում: Աչք չի բացում խմելուց: Ո՞ւմ նկատի ունի սողունը»:

Ես նեղացա և ասացի.

թվայնացրել է 1915.info կայքը

- Վատ հանելուկ էր, Սֆի՛նքս, խոզություն էր դրա ենթատեքստը: Ես այդ վատ հանելուկը չեմ լուծի:

- Ախ, չե՛ս լուծի: Լա՛վ, լա՛վ: Տեսնենք հետո ինչ ես երգելու: Երկրո՛րդը լսիր.

«Երբ ամերիկյան Յոթերորդ տորմիղի նավերը խարիսխ ձգեցին Պետուշկի կայարանի մոտ, այնտեղ կուսակցական օրիորդներ չկային, բայց եթե կոմերիտուհիներին կուսակցական համարենք, ապա նրանցից ամեն երրորդը շիկահեր էր: Ամերիկյան Յոթերորդ տորմիղի մեկնումից հետո պարզվեց հետևյալը. ամեն երրորդ կոմերիտուհի բռնաբարված էր, ամեն չորրորդ բռնաբարվածը կոմերիտուհի էր, ամեն հինգերորդ բռնաբարված կոմերիտուհին շիկահեր էր, ամեն իններորդ բռնաբարված շիկահերը կոմերիտուհի էր: Եթե Պետուշկիի բոլոր օրիորդների թիվը 428-ն է, պարզիր, թե նրանց մեջ քանի՞ կուսական թխահեր անկուսակցական է մնացել»:

«Հ ի մ ա՞ ում է ակնարկում շունը: Ինչո՞ւ են բոլոր թխահերները ողջ ու անվնաս, իսկ շիկահերները ծայրեծայր բռնաբարված են: Դրանով ի՞նչ է ուզում ասել պարագիտը»:

- Ես այդ հանելուկն էլ չեմ լուծի, Սֆի՛նքս: Կներե՛ս, բայց չեմ լուծի: Դա շատ տգեղ հանելուկ է: Ավելի լավ է երրորդն ասես:

- Հա՛-հա՛: Երրորդն ասենք:

«Ինչպես հայտնի է՝ Պետուշկիում Ա կետեր չկան: Գ կետեր՝ առավել ևս: Կան միայն Բ կետեր: Եվ այսպես. Պապանինը, ցանկանալով փրկել Վոդոպյանովին, դուրս եկավ Բ1 կետից դեպի Բ2 կետը: Այդ նույն վայրկյանին Վոդոպյանովը, ցանկանալով փրկել Պապանինին, դուրս եկավ Բ2 կետից՝ դեպի Բ1 կետը: Հայտնի չէ՝ ինչու, երկուսն էլ հայտնվեցին Բ3 կետում, որը Բ1-ից Վոդոպյանովի 12 թքացայտի և Բ2-ից՝ Պապանինի 16 թքացայտի հեռավորության վրա էր: Եթե նկատի ունենանք, որ Պապանինը թքում էր երեք մետր յոթանասուներկու սանտիմետր, իսկ Վոդոպյանովն ընդհանրապես թքել չգիտեր, ստացվո՞ւմ է, որ Պապանինը դուրս էր եկել փրկելու Վոդոպյանովին»:

թվայնացրել է 1915.info կայքը

«Աստված իմ: Սա ի՞նչ է, խելքը գցե՞լ է այս քոսոտ Սֆինքսը: Ի՞նչ է ստացվում: Ինչո՞ւ Պետուշկիում ոչ Ա կետ կա, ոչ Գ, այլ միայն՝ Բ: Ո՞ւմ է ակնարկում այս ստորը...»:

– Հա՛-հա՛,- ձեռքերը շփելով՝ գոչեց Սֆինքսը:- Սա է՞լ չես լուծի: Սա է՞լ: Մաղվե՞լ է խելքդ, լոլո՛զ խելքավոր: Դե առ, ուրեմն, ա՛ռ քեզ չորրորդը.

«Լորդ Չեմբեռլենը՝ Բրիտանական կայսրության վարչապետը, Պետուշկի կայարանի ռեստորանից դուրս գալով, սայթաքեց ինչ-որ մեկի ետ տված վրա և ընկնելիս շուռ տվեց հարևան սեղանը: Սեղանի վրա, մինչև շուռ գալը, կար. երկու կարկանդակ՝ հատը 35 կոպ., երկու բաժին բեֆստրոգանով՝ հատը 73 կոպ., երկու բաժին կուրծ՝ հատը 39 կոպ. և երկու խեցաման խերես՝ 800-ական գրամ յուրաքանչյուրը: Բոլոր խեցիներն անվնաս էին: Ամբողջ սպասքը՝ ոչ պիտանի: Իսկ խերեսի բանն այսպես եղավ. մի խեցին չջարդվեց, բայց ամբողջ խերեսը թափվել էր, մյուս խեցին փշուր-փշուր եղավ, բայց նրանից ոչ մի կաթիլ չթափվեց: Եթե նկատի ունենանք, որ դատարկ խեցամանի արժեքը վեց անգամ ավել է կուրծի գնից, իսկ խերեսի գինը երեխան էլ գիտի՝ իմացի՛ր, թե ինչ հաշիվ ներկայացվեց լորդ Չեմբեռլենին՝ Բրիտանական կայսրության վարչապետին, Կուրսկի կայարանի ռեստորանում»:

– Ո՞նց թե «Կուրսկի կայարանի»:

– Հենց այդպես էլ թե՝ «Կուրսկի կայարանի»:

– Բայց նա, ախր, որտե՞ղ սոթ տվեց: Ախր, Պետուշկիում սոթ տվեց: Լորդ Չեմբեռլենն, ախր, Պետուշկիի ռեստորանում սոթ տվեց...

– Իսկ հաշիվը փակեց Կուրսկի կայարանում: Ինչպիսի՞ն էր այդ հաշիվը:

«Աստվա՛ծ իմ: Որտեղի՞ց են հայտնվում այսպիսի Սֆինքսները: Անոտք, անգլուխ, անպոչ ու հետն էլ այսպիսի բանդագուշանք են շաղ տալիս: Եվ ավազակի մռութով... Ի՞նչ է ակնարկում սրիկան»:

– Դա հանելուկ չէ, Սֆի՛նքս: Դա ծաղրուծանակ է:

– Ո՛չ, ծաղրուծանակ չէ, Վե՛նյա: Հանելուկ է: Եթե սա էլ քեզ դուր չի գալիս, այդ դեպքում...

թվայնացրել է 1915.info կայքը

- Այդ դեպքում՝ վերջի՛նն ասա, վերջի՛նը:

«Ահա. գնում է Մինինը, իսկ նրան ընդառաջ է գալիս Պոժարսկին: «Այսօր մի տեսակ ես երևում, Մի՛նին,- ասում է Պոժարսկին,- ասես այսօր շատ խմած լինես»: «Դու էլ ես մի տեսակ, Պոժա՛րսկի, քայլելիս քնում ես ու քնած քայլում»: «Զեռքդ դիր խղճիդ ու ասա, Մի՛նին, այսօր ինչքա՞ն ես խմել»: «Հիմա կասեմ. սկզբում 150 գրամ ռուսական, հետո՝ 580 կուբանյան, 150 մայրաքաղաքային, 125 պղպեղօղի ու յոթհարյուր գրամ յորշ: Իսկ դո՛ւ»: «Ես էլ ճիշտ այդքան, Մի՛նին»:

«Եվ հիմա ո՛ւր ես գնում, Պոժա՛րսկի»: «Ինչպե՞ս թե՝ ուր, իհարկե, Պետուշկի: Իսկ դո՛ւ, Մի՛նին»: «Ես էլ եմ Պետուշկի գնում: Բայց դու, իշխա՛ն, լրիվ ուրիշ կողմ ես գնում ախր»: «Ո՛չ, այդ դու ես ոչ այն կողմ գնում, Մի՛նին»: Կարճ ասած, միմյանց համոզեցին, որ պետք է ետ դառնալ: Պոժարսկին գնաց այն կողմը, ուր գնում էր Մինինը, իսկ Մինինն՝ այն կողմ, ուր գնում էր Պոժարսկին: Ու երկուսն էլ ընկան Կուրսկի կայարան:

Այսպե՛ս: Իսկ հիմա ասա. եթե երկուսն էլ չփոխեին երթուղին, այլ գնային նախկին ճանապարհով, որտե՞ղ կհայտնվեին: Ո՞ւր կհասներ Պոժարսկին, ասա՛:

- Պետուշկի՛,- դեռ հույս տածելով՝ ասացի ես:

- Չէ՛ մի: Հա՛-հա՛: Պոժարսկին կընկներ Կուրսկի կայարան:

Եվ Սֆինքսը ծիծաղեց ու կանգնեց երկու ոտքերի վրա.

- Իսկ Մինի՞նը: Մինի՞նն ուր կընկներ, եթե գնար իր ճանապարհով ու ընդուներ Պոժարսկու խորհուրդներին: Ո՞ւր կհասներ Մինինը...

- Գուցե Պետուշկի՛,- ես արդեն համարյա հույս չունեի ու լացս գալիս էր:- Պետուշկի, հա՞:

- Իսկ Կուրսկի կայարան չե՞ս ուզում: Հա՛-հա՛:- Եվ Սֆինքսը, ասես շոգած լիներ, ասես քրտնմխած լիներ հաղթանակից ու չարախնդությունից, իրեն հովհարեց պոչով:- Մինինն էլ կգա Կուրսկի կայարան... Եվ ուրեմն, նրանցից ո՞վ կհասնի Պետուշկի, հա՛-հա՛: Իսկ Պետուշկի, հա՛-հա՛, ընդհանրապես ոչ ոք չի հասնի...

թվայնացրել է 1915.info կայքը

Ինչպե՜ս էր ծիծաղում սրիկան: Ես կյանքում այդպիսի սպանդանոցային ծիծաղ լսած չկայի: Դեռ լավ է, որ միայն ծիծաղով պրծներ. նա ախր, ծիծաղելով, երկու հոդերով բռնեց քիթս ու քաշ տվեց ինչ-որ տեղ...

– Ո՞ւր, ո՞ւր ես տանում, Սֆի՛նքս: Ո՞ւր ես տանում...

– Կտեսնես, թե ուր: Հա՜-հա՜: Կտեսնե՜ս...

ՊՈԿՐՈՎ – 113-ՐԴ ԿԻԼՈՄԵՏՐ

Նա ինձ դուրս քաշեց հարթակ, դեմքով դարձրեց դեպի պատուհանը ու լուծվեց խավարի մեջ... Նրա ինչի՞ն էր պետք այս ամենը:

Ես դուրս նայեցի պատուհանից: Իսկապես, նախկին սևությունն արդեն չկար: Քրտնած ապակու վրա ինչ-որ մեկի մատով գրված էր. «...», և ահա այդ բացվածքի միջով տեսա քաղաքի լույսերը, բազում լույսեր ու լողացող կայարանային մակագրությունը՝ «Պոկրով»:

«Պոկրով: Պետուշկիի շրջանի քաղաքը: Երեք կանգառ ու՝ Պետուշկին է: Դու ճիշտ ճանապարհին ես, Վենեդի՛կտ Երոֆեև»: Եվ ահա իմ տագնապը, որ առ այդ շարունակ բարձրանում էր հոգուս հատակից, միանգամից իջավ հոգուս հատակն ու այնտեղ սկվեց...

Երեք թե չորս վայրկյան խաղաղված պառկած էր: Հետո՜, հետո ոչ թե սկսեց բարձրանալ հոգու հատակից, ո՜չ, հոգու հատակից վեր ց ա տ կ ե ց մի միտք, հրեշավոր մի միտք մտավ իմ ներսը, այնպես, որ նույնիսկ ծնկներս թուլացան.

Ահա հեռանում եմ Պոկրով կայարանից: Ես տեսա «Պոկրով» գրությունն ու պայծառ լույսերը: Այդ ամենը լավ է՝ և՛ Պոկրովը, և՛ պայծառ լույսերը: Բայց ինչո՞ւ են դրանք հայտնվել մեր ընթացքի աջից... Ես ընդունում եմ, որ գիտակցությունս, հնարավոր է, մի փոքր մթագնած լինի, բայց ես երեխա չեմ, ես չէ՞ որ գիտեմ՝ եթե Պոկրովն աջից է, ուրեմն ես գալիս եմ Պետուշկիից, ոչ թե Մոսկվայից մեկնում եմ Պետուշկի... Օ՜, զզվելի՜ Սֆինքս:

թվայնացրել է 1915.info կայքը

Ես կորցրի խոսելու ունակությունը ու դեսուդեն ընկա վագոնով մեկ, մանավանդ, որ այնտեղ ոչ մեկն արդեն չկար: «Կա՛ց, Վե՛նիչկա, մի՛ շտապիր: Այդպես մի զարկիր, հիմա՛ր իմ սիրտ: Գուցե պարզապես մի քիչ շփոթե՛լ ես, գուցե Պոկրովը, համենայնդեպս, ձախի՞ց է, ոչ թե աջից: Նորից ել հարթակ, ավելի լավ նայիր, թե գնացքի ո՞ր կողմից է ապակու վրա գրված «...»:

Ես դուրս թռա հարթակ ու նայեցի աջ. քրտնած ապակու վրա պարզորոշ ու գեղեցիկ գրված էր «...»: Ես նայեցի ձախ. այնտեղ նույնպես գրված էր «...»: Աստվա՜ծ իմ, բռնեցի գլուխս ու վերադարձա վագոն, ու կրկին համրացա, ու դարձյալ դեսուդեն ընկա...

«Սպասի՛ր, սպասի՛ր... Իսկ դու հիշի՛ր, Վե՛նիչկա, հիշի՛ր, Մոսկվայից մինչև այստեղ ամբողջ ճանապարհին նստած էիր գնացքի ձախ կողմից, և բոլոր սևաբեղները, բոլոր միտրիչները, բոլոր դեկաբրիստները, բոլորը նստած էին ձախ կողմից: Նշանակում է, եթե դու ճիշտ ես գնում, ճամպրուկդ պիտի գնացքի ընթացքի ձախակողմում լինի: Տեսնո՞ւմ ես՝ ամեն ինչ որքան պարզ է...»:

Ես, ճամպրուկս որոնելով, վազքով կտրեցի ամբողջ գնացքը. ոչ մի տեղ ճամպրուկ չկար, ո՛չ աջից, ո՛չ ձախից:

Ո՞ւր է իմ ճամպրուկը:

«Դե, լա՛վ, լա՛վ, Վե՛նյա, հանգստացի՛ր: Թող որ այդպես: Ճամպրուկը հիմարություն է, ճամպրուկը հետո կգտնվի: Գլխավորը՝ պարզիր միտքդ՝ ո՞ւր ես դու գնում: Իսկ հետո արդեն որոնիր ճամպրուկդ: Սկզբում հոկիր միտքդ, իսկ ճամպրուկն արդեն հետո: Սկզբում մի՞տքը, թե՞ միլիոնը: Իհարկե, սկզբում միտքը, իսկ հետո արդեն միլիոնը: Եվ ճամպրուկը»:

«Դու վեհանձն ես, Վե՛նյա: Խմիր կուբանյանի ամբողջ մնացորդն այն բանի կենաց, որ դու վեհանձն ես»:

Եվ ահա ես հետ գցեցի գլուխս՝ խմելով իմ մնացորդը: Եվ անմիջապես ցրվեց խավարը, որի մեջ սուզվել էի, ու ցայտեց արշալույսն ամենախորերից հոգու և բանականության, և շողշողացին

թվայնացրել է 1915.info կայքը

լուսաբացները՝ ամեն կումի հետ մի լուսաբաց և մի լուսաբաց՝ ամեն մի կումին:

«Մարդը մենակ չպիտի լինի՝ սա է իմ կարծիքը: Մարդն իրեն պիտի տա մարդկանց, անգամ եթե վերցնել չեն ուզում: Իսկ եթե համենայնդեպս մենակ է, պիտի անցնի վագոններով: Պիտի գտնի մարդկանց և ասի. «Ահա՛: Ես մենակ եմ: Ես ինձ անմնացորդ տալիս եմ ձեզ (որովհետև մնացորդը հենց նոր խմեցի, հա՛-հա՛): Իսկ դուք ինձ տվեք ինձ ու տալով՝ ասացեք. իսկ մենք ո՞ւր ենք գնում, Մոսկվայից Պետուշկի՞, թե՞ Պետուշկիից Մոսկվա»:

«Եվ քո կարծիքով՝ մարդ հենց այդպե՞ս պիտի վարվի»,- հարցրի ինքս ինձ՝ գլուխս ձախ հակելով:

«Այո, հենց այդպես,- գլուխս աջ հակելով՝ պատասխանեցի ինքս ինձ:- Հո մի ամբողջ կյանք չե՞նք նայելու քրտնած ապակիների «...»-ին ու տառապելու հանելուկներից...»:

Եվ ես նորից քայլեցի վագոնից վագոն: Առաջինում ոչ ոք չկար, միայն անձրևն էր բաց պատուհանից ցայտում ներս: Երկրորդում՝ նույնպես ոչ մի շունչ. նույնիսկ անձրևը չէր ցայտում...

Երրորդում ինչ-որ մեկը կար...

113-ՐԴ ԿԻԼՈՄԵՏՐ-ՕՄՈՒՏԻՇՁԵ

...Կինը, ոտից գլուխ սև հագած, կանգնել էր պատուհանի առաջ և անտարբեր հայելով խավարը պատուհանից այն կողմ՝ շուրթերին էր սեղմել ժանեկազարդ թաշկինակը: «Ո՛չ ավել, ո՛չ պակաս՝ «Անամոք վշտի» պատճենն է, քո՛ պատճենը, Երոֆե՛ևա»,- անմիջապես մտածեցի իմ մեջ և անմիջապես էլ իմ մեջ ծիծաղս եկավ:

Կամացուկ, թաթերիս ծայրերին, որ չփախցնեմ կախարդանքը, մոտեցա ու տապ արի: Կինը լալիս էր...

Ահա՛: Մարդը առանձնանում է, որ լաց լինի:

թվայնացրել է 1915.info կայքը

Սակայն ի սկզբանե նա մենակ չէ: Երբ մարդը լալիս է, չի ցանկանում՝ որևէ մեկը հաղորդակցվի իր արցունքներին: Եվ ճիշտ էլ անում է, քանզի կա՞ աշխարհում անսփոփությունից վեհ մի ուրիշ բան... Օ՜, ասեի՜, ասեի՜ հիմա մի այնպիսի խոսք, որ ցայտեին արցունքները բոլոր մայրերի աչքերից, որ սգավորվեին պալատներն ու խրճիթները, դշլաղներն ու աուլները...

Ի՞նչ ասեմ, համենայնդեպս:

- Իշխանուհի՜,- կամացուկ կանչեցի ես:

- Հը, ի՞նչ ես ուզում,- պատասխանեց իշխանուհին՝ պատուհանից դուրս նայելով:

- Ոչի՞նչ: Մեջքիդ նայելիս ինչ-որ շրթնահարմոն է երևում, ահա թե ինչ...

- Ոտերդ մի՜ օրորի, ջահե՛լ: Հարմոն չի, քթարմատ է... Ավելի լավ է՝ նստի ու սուս մնա՝ խելոքի տեղ կանցնես...

Ի՞նձ է ասում, ու ես այս վիճակում լռե՞մ պիտի: Ես, որ հանելուկի լուծումը փնտրելով՝ անցել եմ բոլոր վագոններով... Ափսոս, որ մոռացել եմ՝ հանելուկն ինչի մասին էր, բայց հիշում եմ, որ՝ մի կարևոր բանի... Ասենք, լա՛վ, հետո միտս կբերեմ... Կին է լալիս, ու դա շատ ավելի կարևոր է.. Օ՜, ամոթապարտնե՛ր: Վերածել են երկիրս մի կեղտոտ դժոխքի և ստիպում են արցունքները թաքցնել մարդկանցից, և ծիծաղը հանել ի ցույց... Օ՜, ստոր սրիկանե՛ր: Չեն թողել ոչինչ մարդկանց, «վշտից» ու «վախից» բացի,- և այդ ամենից հետո նրանց համար ծիծաղը հրապարակային է, իսկ լացն՝ արգելանքի տակ...

Օ՜, ասե՛լ հիմա մի այնպիսի բան, որ ճզմեի նրանց բոլորի՛ն, սողունների՛ն, իմ խոսքով: Այնպիսի մի բան, որ խռովքի մատնվեին հնադարի բոլոր ժողովուրդները...

Ես միտք արի և ասացի.

- Իշխանուհի՜, ա՛յ իշխանուհի...

- Հը՞, էլի՞ ինչ ես ուզում:

- Հարմոնդ չկա արդեն: Չի՜ երևում:

թվայնացրել է 1915.info կայքը

– Իսկ ի՞նչ է երևում այդ դեպքում:

– Հենց մենակ թփիկներ են: (Նա շարունակում էր պատասխանել՝ պատուհանից նայելով դուրս և առանց իմ կողմը շրջվելու):

– Դու ինքդ ես թփիկ, ոնց որ տեսնում եմ...

«Ինչ արած, թփիկ է, թող թփիկ լինի»: Ես անմիջապես մի տեսակ կակղեցի, տեղավորվեցի նստարանին ու թալկացա: Ոչ մի կերպ, կուզես մեռի, ոչ մի կերպ չէի կարողանում մտաբերել՝ ինչու էի շրջում վագոններով ու հանդիպեցի այս կնոջը... Ինչի՞ մասին էր, համենայնդեպս, այդ «կարևորը»:

– Լսի՛ր հապա, իշխանուհի՛... Իսկ որտե՞ղ է քո սպասավոր Պյոտրը: Անցյալ օգոստոսից չեմ տեսել նրան:

– Ի՞նչ ես դուրս տալիս:

– Ազնիվ խոսք, այդ ժամանակից չեմ տեսել... Որտեղ է նա՝ քո սպասավորը:

– Նա նույնքան իմն է, որքան որ՝ քոնը,– գոմռաց իշխանուհին: Ու հանկարծ պոկվեց տեղից ու գնաց դեպի դուռը՝ քղանցքով վագոնի հատակն ավլելով: Հենց դռների մոտ կանգ առավ, իմ կողմը դարձրեց խոպոտ ու ճաքճքած դեմքը և ճչաց.

– Ատո՛ւմ եմ քեզ, Անդրե՛յ Միխայլովիչ: Ա՛-տ-ո՛ւ-մ-ե՛մ...

Եվ անհետացավ:

«Ա՛յ քեզ գո՛րծ,– հիացած ծոր տվեցի ես, ինչպես բոլորովին վերջերս՝ դեկաբրիստը:– Լա՛վ եկավ հախիցս»: Բայց չէ՞ որ հեռացավ՝ այդպես էլ չպատասխանելով ամենագլխավոր հարցին... Երկնայի՞ն Տիրուհի, բայց ո՞րն էր այդ գլխավորը... Վասն շռայլությանց Քո, թույլ տուր, որ հիշեմ... Սպասավո՛ր...

Ես զնգացրի զանգակը... Մի ժամից դարձյալ զնգացրի:

– Սպա-սա-վո՛ր:

Մտավ ոտից գլուխ դեղին հագած ծառան՝ իմ սպասավորը, Պյոտր անվանյալ: Ես նրան մի խմած ժամանակ խորհուրդ էի տվել ցմահ բացառապես դեղին հագնել,– և ահա լսել ու մինչև օրս էլ այդ տեսքով է շրջում հիմարը:

թվայնացրել է 1915.info կայքը

- Գիտե՞ս ինչ, Պյո՛տր: Քո կարծիքով՝ ես նոր քնա՞ծ էի, թե՝ ոչ: Ի՞նչ ես կարծում: Քնա՞ծ էի:

- Այն վագոնում՝ այո՛, քնած էիք:

- Իսկ սրանում՝ ո՞չ:

- Իսկ սրանում՝ ոչ:

- Զարմանք բան է, Պյո՛տր... Վառիր հապա աշտանակները: Ես սիրում եմ, որ աշտանակները վառվում են, թեկուզև կարգին չգիտեմ՝ ինչ են դրանք... Թե չէ, նորից, գիտե՞ս, սկսում եմ տագնապել... Նշանակում է, Պյո՛տր, եթե հավատամ քեզ. այն վագոնում քնած էի, իսկ այստեղ արթնացա: Այո՞:

- Չգիտեմ: Ես ինքս էի քնած, այս վագոնում:

- Հը՛մ: Բայց ինչո՞ւ վեր չկացար և չարթնացրիր ինձ: Ինչո՞ւ:

- Բայց ինչո՞ւ պիտի արթնացնեի քեզ: Այս վագոնում պետք չէր քեզ արթնացնել, քանի որ դու մյուսում էիր քնած: Եվ այնտե՞ղ ինչու արթնացնեի, եթե այստեղ ինքդ արթնացար:

- Դու ինձ մի՛ շփոթեցնի, Պյո՛տր, մի՛ շփոթեցնի... Թոդ մտածեմ: Տեսնո՞ւմ ես, Պյո՛տր, ոչ մի կերպ չեմ կարողանում մի միտք լուծել: Այնքան մեծ է այդ միտքը:

- Իսկ ի՞նչ միտք է:

- Ահա թե ինչ միտք. մոտս խմելու որևէ բան մնացե՞լ է...

ՕՄՈՒՏԻՇՉԵ-ԼԵՈՆՈՎՈ

...Չէ, չէ, չկարծես, թե դա բուն միտքն է, պարզապես այդ միտքը մտածելու միջոցն է դա: Հասկանո՞ւմ ես՝ երբ գինովությունը հեռանում է սրտից, հայտնվում են վախն ու գիտակցության խախուտությունը: Եթե հիմա խմեի, չէի լինի այսպես տրոհված ու տարտղնված... Շա՛տ նկատելի է տրոհվածությունս:

- Ոչ մի բան էլ նկատելի չէ: Միայն մռութդ է ուռել:

- Դե, դա ոչինչ: Մռութը՝ ոչինչ...

թվայնացրել է 1915.info կայքը

– Խմելու էլ՝ ոչինչ,- հուշեց Պյոտրը, վեր կացավ ու վառեց աշտանակները:

Ես սթափվեցի: «Լավ է, որ վառեցիր, լա՛վ է, թե չէ մի քիչ տագնապալի էր: Մենք բոլորս ահա գնո՛ւմ ենք, գնո՛ւմ ենք մի ամբողջ գիշեր, ու ոչ ոք չկա մեզ հետ, բացի մեզնից»:

– Իսկ որտեղ քո իշխանուհին, Պյո՛տր:

– Նա վաղուց է իջել:

– Որտե՞ղ:

– Խրապունովոյում: Պետուշկիից մեկնում էր Խրապունովո: Օրեխովո-Զուևոյում նստեց, իսկ Խրապունովոյում իջավ:

– Ի՞նչ Խրապունովո: Ի՞նչ ես դուրս տալիս, Պյո՛տր... Դու մի՛ շփոթեցնի ինձ, մի՛ շփոթեցնի... Այդպե՛ս, այդպե՛ս... ամենագլխավոր միտքը... Չգիտես ինչու՝ գլխիս մեջ Անտոն Չեխովն է պտտվում: Այո՛, և Ֆրիդրիխ Շիլլերը, Ֆրիդրիխ Շիլլերն ու Անտոն Չեխովը: Իսկ թե ինչու՝ գաղափար չունեմ: Այո՛, այո՛... ահա, հիմա ավելի պարզ է. Ֆրիդրիխ Շիլլերը, երբ նստում էր ողբերգություն գրելու, միշտ ոտքերը դնում էր շամպայնի մեջ: Ավելի ճիշտ՝ ո՛չ, ո՛չ այդպես: Այդ գաղտնի խորհրդական Գյոթեն էր տանը շրջում հողաթափերով ու տնային խալաթով... Իսկ ես՝ ոչ... Ես և՛ տանն եմ առանց խալաթի, և՛ դրսում՝ հողաթափերով... Բայց Շիլլե՞րն ինչ կապ ունի: Հա՛, ահա թե ինչ կապ ունի. երբ օղի խմելիս էր լինում, ոտքերը դնում էր շամպայնի մեջ: Կդներ ու կխմեր: Լա՛վ է: Իսկ Անտոն Չեխովը մեռնելիս ասաց. «Խմել եմ ուզում»: Ու մեռավ...

Պյոտրը, գլխավերևս կանգնած, շարունակում էր նայել վրաս:

– Ինչո՞ւ ես այդպես նայում, Պյո՛տր: Մի՛ նայի այդպես, տափակի՛ մեկը, մի՛ նայի: Ես մտքերս եմ ի մի բերում, իսկ դու նայում ես... Ահա, դեռ Հեգելն էլ կար: Դա ես շատ լավ եմ հիշում. կա՛ր Հեգելը: Նա ասում էր. «Չկան տարբերություններ, բացի աստիճանի տարբերությունից տարբեր աստիճանների և տարբերության բացակայության միջև»: Այսինքն՝ եթե թարգմանվի մարդավարի լեզվով՝ «Այդ ո՞վ է, որ հիմա չի խմում»... Խմելու որևէ բան ունե՞նք, Պյո՛տր:

թվայնացրել է 1915.info կայքը

- Ոչինչ չունենք: Ամբողջը խմված է:
- Եվ ամբողջ գնացքում էլ ոչ ոք չկա՞:
- Ոչ ոք:
- Այդպե՛ս:

Ես դարձյալ մտքի մեջ ընկա: Եվ տարօրինակ էր այդ միտքը: Պարուրվում էր այնպիսի մի բանի շուրջ, որն ինքնին ինչ-որ բանի շուրջ էր պարուրվում: Եվ այդ «ինչ-որ բանը» նույնպես տարօրինակ էր: Եվ միտքը. ծա՜նր էր այդ միտքը...

Ի՞նչ էի անում ես այդ պահին. ննջո՞ւմ, թե՞ արթնանում էի: Ես չգիտեմ ու որտեղի՞ց իմանամ: «Կա կեցությունը, բայց ի՞նչ անունով ն ր ա ն կոչես. ո՛չ քուն է, ո՛չ արթնություն»: Ես այդպես ննջեցի 12 թե 35 րոպեի չափ:

Եվ երբ սթափվեցի, վագոնում ոչ մի շունչ չկար, և Պյոտրն էլ չքվել էր ինչ-որ տեղ: Գնացքը դեռ սուրում էր անձրևի ու խավարի միջով: Տարօրինակ էր լսել դռների շխկշխկոցը բոլոր վագոններում. տարօրինակ էր, քանզի չկար ոչ ոք և ոչ մի վագոնում...

Ես պառկել էի դիակի նման, սառը քրտինքի մեջ, ու սրտիս տակ շարունակում էր խտանալ վախը...

- Սպա-սա-վո՛ր:

Դռների մեջ հայտնվեց Պյոտրը՝ կապտած ու չար դեմքով: «Մոտեցի՛ր, Պյո՛տր, մոտեցի՛ր: Դու էլ լրիվ թրջված ես, ինչո՞ւ: Այդ դո՞ւ էիր շխշխկացնում դռները, այո՞»:

- Ես ոչ մի բան էլ չէի շխկշխկացնում: Ես քնած էի:
- Այդ դեպքում ո՞վ էր շխկշխկացնում:

Պյոտրը անթարթ վրաս էր նայում:

- Բայց դա ոչի՛նչ, ոչի՛նչ: եթե սրտիդ տակ շատանում է տագնապը, նշանակում է՝ պետք է խլացնել այն, իսկ խլացնելու համար պետք է խմել: Մենք խմելու որևէ բան ունե՞նք:
- Ոչինչ չկա: Ամբողջը խմված է:
- Եվ ամբողջ գնացքում էլ՝ ոչ ոք, ոչ մի շո՞ւնչ:
- Ոչ ոք:

թվայնացրել է 1915.info կայքը

– Խաբում ես, Պյո՛տր, դու խաբո՛ւմ ես ինձ... Եթե ոչ ոք չկա, այնտեղ ո՞վ է շխկշխկացնում դռներն ու պատուհանները: Հը՞: Դու գիտե՞ս... Լսո՞ւմ ես... Երևի խմելիք էլ ունես, բայց խաբում ես ինձ ու խաբում...

Պյոտրն առաջվա պես անթարթ ու չարությամբ էր նայում: Իսկ հետո,- այո՛, այո՛,- ընկավ աշտանակի վրա և մոմերը մարեց իրենով և այդպես էլ գնաց վագոններով՝ լույսը մարելով: «Նա ամաչո՛ւմ է, ամաչո՛ւմ է»,- մտածեցի ես: Բայց արդեն դուրս էր թռել պատուհանից:

– Վերադարձի՛ր, Պյո՛տր,- ես այնպես ճչացի, որ չկարողացա ճանաչել իմ ձայնը,- վերադարձի՛ր:

– Ստահա՛կ,- պատասխանեց նա պատուհանի մյուս կողմից:

Եվ հանկարծ նորից ճախրեց ներս, քաշքշեց՝ մազերս ճանկած, նախ՝ առաջ, ապա՝ ետ, հետո՝ նորից առաջ, և շարունակ՝ մոլեգին չարությամբ...

– Ի՞նչ է պատահել, Պյո՛տր, ի՞նչ է պատահել...

– Ոչ մի բան: Մնա՛: Մնա էստեղ, տատի՛: Մնա, պառա՛վ քած: Հասի Մոսկվա: Ծախի՛ արևածաղիկդ: Ես էլ չե՛մ կարող, չե՛մ կարող...

Ու նորից ճախրեց, հիմա արդեն ընդմիշտ:

«Սատանան գիտի՝ սա ինչ բան է: Ի՞նչ է կատարվում մեզ հետ»: Ես ամուր սեղմեցի քունքերս, ցնցվեցի ու մոռացության գիրկն ընկա: Ինձ հետ ցնցվեցին ու մոռացության գիրկն ընկան նաև վագոնները: Պարզվում է՝ նրանք վաղուց արդեն զարկվում իրար ու դողդողում էին...

ԼԵՌՆՈՎՈ-ՊԵՏՈՒՇԿԻ

Վագոնների դռները շխկացին, ապա գվվացին՝ ավելի ու ավելի հստակ և ուժգին: Եվ ահա, ներս թռավ վագոն ու թևեց վագոնի երկայնքով, սարսափից կապտած դեմքով, տրակտորիստ Եվտյուշկինը: Իսկ մեկ տասնյակ վայրկյաններ անց նույն եղանակով ներս

թվայնացրել է 1915.info կայքը

խուժեցին էրինիների բազմություններն ու սլացան նրա ետևից: Դողդացին դափերն ու ծնծղաները...

Մազերս բիզ-բիզ կանգնեցին: Ինձ կորցրած՝ վեր թռա ու թփթփացրի ոտքերս.

«Սպասե՛ք, աղջիկնե՛ր: Վրիժառությա՛ն աստվածուհիներ, սպասե՛ք: Աշխարհում մեղավորներ չկա՛ն...»: Իսկ նրանք շարունակում էին վազել:

Եվ երբ վերջինը հավասարվեց ինձ, փրփրեցի, ճանկեցի մեջքը, իսկ նա վազելուց շնչահեղձ էր լինում:

- Ո՛ւր: Ո՛ւր եք վազում բոլորդ, ո՛ւր:

- Ի՞նչ ես ուզում մեզնից: Հեռո՛ւ՛ւ՛ւ: Թռ՛ռ՛ռ՛ղ:

- Ո՛ւր: Ո՛ւր ենք գնում բոլորս, ո՛ւր:

- Բայց քո՛ ինչ գործն է, կատաղա՛ա՛ա՛ծ:

Եվ հանկարծ դարձավ իմ կողմը, բռնեց գլուխս ու համբուրեց ճակատս,- այնքան անսպասելի, որ խպնեցի, նստեցի ու սկսեցի արևածաղկի կողր կրծել:

Ու քանի դեռ կրծում էի, մի քիչ հեռու վազեց, հեռվից նայեց ինձ, մոտեցավ ու շխկացրեց ձախ թշիս: Շխկացրեց, ճախրեց դեպի առաստաղն ու նետվեց հասնելու ընկերուհիների ետևից: Ես հանցավոր կերպով պարանոցս ձգած՝ վազեցի, որ նրան հասնեմ...

Հրդեհվում էր մայրամուտը, և նժույգները ցնցվում էին, և ինչոր տեղ երջանկությո՛ւնն էր, որի մասին գրում են թերթերում: Ես վազում ու վազում էի մրրիկների և խավարի միջով, ծխնիներից պոկելով դռները, ես գիտեի, որ «Մոսկվա-Պետուշկի» գնացքը խորտակվում է: Վագոնները ցատկում էին վեր ու թափվում էին ցած, թմրախոտից խենթացածի պես: Եվ այդ ժամանակ ես պատեպատ խփվեցի ու գոռացի.

- Օ՛օ՛օ՛օ՛: Կա՛նգ առե՛ք... Ա՛ա՛ա՛...

Գոռացի ու ծվարեցի. էրինիների խումբը վազում էր հետ՝ առաջին վագոնից ուղիղ ինձ վրա, խառնիճաղանջ երամակով: Նրանց ետևից սուրում էր գազազած Եվտյուշկինը: Այս ամբողջ հեղեղը շուռ տվեց ինձ և առավ իր տակ...

թվայնացրել է 1915.info կայքը

Իսկ ծնծղաները շարունակում էին զնգալ: Եվ դափերը դեռ դղրդում էին: Եվ աստղերն ընկնում էին գյուղսովետի սանդղամուտին: Եվ քրքջում էր Սուլամիթը:

ՊԵՏՈՒՇԿԻ: ԿԱՌԱՄԱՏՈՒՅՑ

Իսկ հետո, իհարկե, ամեն ինչ քուլա–քուլա բարձրանալ սկսեց: Եթե ասեք, թե դա մշուշ էր, ես գուցե և համաձայնեմ. այո՛, կարծես մշուշ էր: Իսկ եթե ասեք՝ ո՛չ, մշուշ չէր, կրակ էր ու սառույց, փոխնիփոխ՝ մե՛րթ սառույց էր, մե՛րթ կրակ, ապա ես կասեմ ի պատասխան. գուցե և՝ այո, սառույց ու կրակ, այսինքն՝ սկզբում սառչում է արյունը և սառչելուն պես սկսում է եռալ ու եռքն անցնելուն պես դարձյալ սառչում է:

«Տենդ է,– մտածեցի ես:– Այս շոգ մշուշը ամենուրեք՝ տենդից է, քանի որ ինքս ջերմում եմ, և ամենուրեք շոգ մշուշ է»: Եվ մշուշից մի շատ ծանոթ կերպար է լողում դուրս. Աքիլլեսը չէ, իհարկե, բայց շատ է ծանոթ: Հա՛, ճանաչեցի. Պոնտոսի արքա Միհրդատն է: Մոութը փալինքով լողոված, ձեռքին՝ փոքրիկ դանակ...

– Միհրդա՛տ, դո՞ւ ես, հա՛,– այնքան ծանր էր ինձ համար, որ համարյա անձայն էի խոսում:– Դու ես, հա՛, Միհրդա՛տ:

– Ես եմ,– պատասխանեց պոնտացի արքա Միհրդատը:

– Բա ինչի՞ ես այդպես լողված:

– Իմը միշտ էլ այսպես է: Լիալուսին է թե չէ՝ փալինքներս սկսում են հոսել:

– Իսկ մյուս օրերին չե՞ն հոսում:

– Պատահում է, որ հոսում են: Բայց ոչ այնպես, ինչպես լիալունի ժամանակ:

– Ու բոլորովին չե՞ս մաքրում,– ես համարյա անցա շշուկի:– Չե՞ս մաքրում:

– Ոնց ասեմ. պատահում է, որ մաքրում էլ եմ, բայց լիալունի ժամանակ ախր ոնց մաքրես, այնքան չես մաքրում, ինչքան լողում ես:

թվայնացրել է 1915.info կայքը

Չէ՞ որ ամեն մեկն իր ճաշակն ունի. մեկը փալինք թափել է սիրում, մյուսը մաքրել, երրորդը՝ լողալ: Իսկ լիալուսնի ժամանակ...

Ես ընդհատեցի.

- Գեղեցիկ ես խոսում, Միհրդա՛տ, իսկ դանա՞կդ ինչի համար է...

- Ոնց թե՝ ինչի, քեզ մորթելու համար, ահա թե ինչի... Բա՞ն գտավ հարցնելու՝ ինչի՞... Իհարկե՝ մորթելու...

Եվ ինչպե՞ս փոխվեց միանգամից. մինչ այդ հաշտ էր խոսում, իսկ հիմա ժանիքները բացեց, մթնեց,- և փալինքնե՞րն ուր չքացան,- ու դեռ մի բան էլ քրքջո՛ւմ է...

Նորից դողս բռնեց. «Ի՞նչ ես անում, Միհրդա՛տ, ի՞նչ ես անում,- շշնջում թե ճչում էի՝ չգիտեմ:- Դեն տար դանակդ, դե՛ն, ինչո՛ւ»: Իսկ նա արդեն չէր լսում ոչինչ ու թափահարում էր դանակը, նրա մեջ ասես հազարավոր սևակնած չարքեր լինեին նստած... «Մոլագա՛ր»: Եվ այստեղ սուր ծակոց զգացի ձախ կողիս ու կամաց տնքացի, քանի որ դանակից պաշտպանվելու համար նույնիսկ ձեռքս շարժելու ուժ չունեի... «Վե՛րջ տուր, Միհրդա՛տ, վե՛րջ տուր...»...

Բայց այստեղ ծակեց աջ կողս, հետո նորից ձախը, հետո կրկին աջը,- հասցնում էի միայն ուժահատ վնգվնգալ,- ու ցավից վազում էի կառամատույցով մեկ: Արթնացա ջղակծկումից: Շուրջս՝ ոչինչ, բացի քամուց, խավարից և անտանելի ցրտից: «Ի՞նչ է կատարվում ինձ հետ ու որտե՞ղ եմ, ինչո՞ւ է մաղում այս անձրևը: Աստվա՛ծ իմ...»:

Ես նորից քուն մտա, ու կրկին սկսվեց նույնը՝ և՛ դողէրոցքը, և՛ տենդատապը, և՛ ջերմաջեռը, և հեռվից, այնտեղից, ուր մառախուղն էր, դուրս լողացին Մուխինայի արձանաքանդակի երկու աժդահաները՝ բանվորը՝ մուրճով և գեղջկուհին՝ մանգաղով, ու կիպ մոտենալով ինձ՝ քմծիծաղ տվին երկուսն էլ: Եվ բանվորը մուրճով խփեց գլխիս, իսկ հետո գեղջկուհին մանգաղով՝ ձ.....երիս: Ես ճչացի,- երևի բարձր ճչացի,- ու արթնացա նորից, այս անգամ արդեն գալարվելով, քանի որ ամեն ինչս էր ցնցվում՝ և՛ դեմք, և՛ հագուստ, և՛ հոգի, և՛ մտքեր:

Օ՛, այդ ցավը: Օ՛, այդ անտանելի ցուրտը: Օ՛, անհնարինություն: Եթե իմ բոլոր ուրբաթներն այսուհետ այսպիսին են լինելու,

թվայնացրել է 1915.info կայքը

կկախվեմ մի հինգշաբթի... Այսպիսի ջղաձգումնե՛ր էի ակնկալում քեզնից, Պետուշկի՛: Քանի դեռ գալիս էի քեզ, ո՞վ մորթոտեց թոչնակներիդ ու տրորեց հաամիկդ... Երկնայի՛ն Տիրուհի, ես Պետուշկիում եմ...

«Ոչի՛նչ, ոչի՛նչ, Երոֆե՛և... Տալիթա կումի, ինչպես ասել է Փրկիչը, այսինքն՝ վեր կաց ու գնա: Ես գիտե՛մ, գիտե՛մ՝ դու ճզմված ես, ճզմված ես բոլոր անդամներով ու հոգով, և կառամատույցը թաց է ու դատարկ, և ոչ ոք քեզ չդիմավորեց, և ոչ ոք քեզ երբեք չի դիմավորի: Բայց, համենայնդեպս, վեր կաց ու գնա: Փորձի՛ր... Իսկ ճամպրուկդ, Աստվա՛ծ իմ, որտե՞ղ է ընծաներով ճամպրուկդ... երկու բաժակ ընկույզ տղայի համար, «Վասիլյոկ» կոնֆետ ու դատարկ շշեր... որտե՞ղ է... ո՞վ և ինչո՞ւ գողացավ... չէ՞ որ այնտեղ ընծաներն էին... Նայիր՝ փող կա՞, գուցե դեռ կա մի քիչ... Այո՛, այո՛, մի քիչ կա, շա՛տ քիչ, բայց ի՞նչ արժե հիմա փողը... Օ՛, վաղանցություն: Օ՛, ունայնություն: Օ՛, ամենանողկալի, ամոթալի ժամանակ իմ ժողովրդի կյանքում՝ խանութները փակվելուց մինչ լուսաբացը ժամանակ...

«Ոչի՛նչ, ոչի՛նչ, Երոֆե՛և... Տալիթա կումի, ինչպես ասել է քո Թագուհին, երբ պառկած էիր դագաղում,- այսինքն՝ վեր կաց, թափ տուր վերարկուդ, մաքրիր շալվարդ, ուշքի բեր քեզ ու գնա: Փորձիր գոնե երկու քայլ, իսկ հետո հեշտ կլինի: Ինչքան գնաս՝ կհեշտանա: Չէ՞ որ ինքդ էիր հիվանդ տղային ասում. «Մեկ-երկու-հագի-կոշիկներդ-շուտ, ամոթ-է-էդքան-քնած-մնաս-դու»... Ամենագլխավորը՝ հեռանալ ռելսերից, այստեղ անընդհատ գնացքներ են անցնում, Մոսկվայից՝ Պետուշկի, Պետուշկիից՝ Մոսկվա: Հեռանա՛լ ռելսերից: Հիմա դու ամեն ինչ կիմանաս. և՝ ինչու ոչ մի տեղ ոչ ոք չկա, և՝ ինչու նա քեզ չդիմավորեց, և ամեն ինչ կիմանաս... Գնա՛, Վե՛նիչկա, գնա՛...»:

Ողջույն սիրելի ընթերցող: Այս գրքի էլեկտրոնային տարբերակը պատրաստել է 1915.info կայքը ընթերցողի խնդրանքով: Դուք ևս կարող եք առաջարկել գրքեր և մենք անվճար կթվայնացնենք դրանք Ձեզ համար:

թվայնացրել է 1915.info կայքը

ՊԵՏՈՒՇԿԻ: ԿԱՅԱՐԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿ

«Եթե ուզում ես ձախ գնալ, Վե՛նիչկա, գնա ձախ: Եթե աջ ես ուզում՝ աջ գնա: Մեկ է՝ տեղ չունես գնալու: Այնպես որ, ավելի լավ է գնաս առաջ, ուր աչքդ կտրի...»:

Ինչ-որ մեկն ինչ-որ ժամանակ ինձ ասում էր, որ մեռնելը շատ հեշտ է, որ դրա համար պետք է քառասուն անգամ անընդհատ խոր, ինչքան հնարավոր է խոր շունչ քաշել և արտաշնչել նույնքան անգամ, սրտի ամենախորքերից,- ու հոգիդ կտաս: Գուցե փորձե՞մ...

Բայց սպասի՛ր, սպասի՛ր... Գուցե նախ ժա՞մն իմանամ: Իմանամ ժամը քանի՞սն է... Բայց ումի՞ց, երբ հրապարակում շունչ-շնչավոր չկա, այսինքն՝ բացարձակապես ոչ ոք... Բայց եթե նույնիսկ հանդիպեր որևէ շնչավոր արարած, կկարողանայի՞ր բերան բանալ՝ ցրտից ու վշտից: Այո՛, վշտից ու ցրտից... Օ՜, համրություն...

Եվ եթե ես երբևէ մեռնեմ,- իսկ ես շատ շուտով կմեռնեմ, գիտե՞մ,- կմեռնեմ՝ այդպես էլ չընդունելով այս աշխարհը, հասու լինելով մոտիկից թե հեռվից, դրսից ու ներսից հասու լինելով, բայց չընդունած՝ կմեռնեմ, և Նա ինձ կհարցնի. «Այնտեղ լա՞վ էր քեզ համար, թե այնտեղ վատ էր քեզ համար», և ես կլռեմ, կխոնարհեմ աչքերս ու կլռեմ, և այդ համրությունը ծանոթ է բոլորին, ով գիտի տևական ու ծանր խումհարի վերջը: Քանզի մարդկային կյանքը մի՞թե վայրկենական հոգեվարքը չէ հոգու, և խավարումը չէ հոգու՝ նույնպես: Մենք բոլորս ասես հարբած լինենք, միայն՝ յուրաքանչյուրը յուրովի. մեկը շատ է խմել, մյուսը՝ քիչ: Եվ ամեն մեկի վրա մի կերպ է ազդում. մեկը ծիծաղում է այս աշխարհի երեսին, մյուսը՝ լալիս՝ գլուխն այս աշխարհի կրծքին դրած: Մեկն արդեն սիրտ թափել և արդեն լավ է զգում, մյուսի սիրտը դեռ նոր է սկսում խառնել: Իսկ ե՞ս՝ ե՞ս ինչ. ես ճաշակելո՛վ ճաշակեցի ու՝ ոչ մի արդյունք, ես ոչ մի անգամ նույնիսկ կարգին չծիծաղեցի, ու սիրտս չխառնեց ոչ մի անգամ: Ես՝ այս աշխարհում ճաշակած այնքան, որ կորցնում եմ հաշիվն ու հերթը,- ես ամենաաթափն եմ այս աշխարհում. ինձ վրա պարզապես դժվար է

թվայնացրել է 1915.info կայքը

ազդում... «Ինչո՞ւ ես, ուրեմն, լռում»՝ կհարցնի Տերը՝ ոտից գլուխ կապույտ կայծակներ հագած: Դե՛, և ինչ պիտի պատասխանեմ: Կլռեմ, ուրեմն, կլռե՛մ, կլռե՛մ...

Գուցե, համենայնդեպս, բանա՛մ բերանս, որևէ շնչավոր գտնեմ ու հարցնեմ ժամը քանի՞սն է...

Բայց ինչի՞դ է պետք ժամանակը, Վե՛նիչկա: Ավելի լավ է գնա՛ս, գնա՛ս, քեզ փակես քամուց ու գնաս... Մի ժամանակ դու երկնային դրախտ ունեիր. իմանայի՛ր, ուրեմն, ժամանակն անցյալ ուրբաթ, իսկ հիմա երկնային դրախտն այլևս չկա, ինչի՞դ է պետք ժամանակը: Թագուհին չեկավ կառամատույց, թագուհին՝ խոնարհ թարթիչներով, աստվածությունը մեջք դարձրեց քեզ, ուրեմն, ինչի՞դ է պետք ժամանակը: «Ոչ թե կին է, այլ՝ բլամանժե». չեկա՛վ կառամատույց՝ քեզ մոտ: Մարդկային ցեղի ցնծություն, դաշտերի շուշան՝ չեկավ ու չդիմավորեց: Ի՞նչ իմաստ ունի դրանից հետո ժամն իմանալդ, Վե՛նիչկա...

Քեզ ի՞նչ է մնացել. առավոտյան՝ տնքոց, երեկոյան՝ լաց, գիշերը՝ ատամների կրճտոց... Եվ ո՞ւմ, ո՞ւմ է հարկավոր աշխարհում քո սիրտը: Ո՞ւմ... Ահա, մտիր ցանկացած պետուշկինյան տուն, հարցրու ցանկացած շեմի վրա. «Դուք ի՞նչ գործ ունեք իմ սրտի հետ»: Աստվա՛ծ իմ...

Ես շրջվեցի անկյունադարձին ու թակեցի առաջին իսկ դուռը:

ՊԵՏՈՒՇԿԻ: ՍԱԴՈՎՈՅԵ ԿՈԼՅՈ

Թակեցի ու, ցրտից սարսռալով, սպասեցի, որ բացեն... «Զարմանալի բարձր տներ են կառուցել Պետուշկիում. ասենք՝ միշտ այդպես է ծանր ու տևական խումհարից հետո, մարդիկ թվում են զայրացած, փողոցները՝ չափից դուրս լայն, տները՝ ահավոր մեծ... Խումհարից ամեն ինչ խոշորանում է ճիշտ այնքան, որքան ամեն ինչ սովորականից փոքր ու չնչին էր թվում, երբ հարբած էիր... Հիշո՞ւմ ես սևաբեղի լեմման»:

թվայնացրել է 1915.info կայքը

Նորից թակեցի, նախորդից մի քիչ ուժեղ.

«Մի՞թե այդքան դժվար է դուռը բանալ մարդու առաջ ու ներս թողնել նրան՝ մի երեք րոպե տաքանալու: Չեմ հասկանում: Նրանք՝ լրջախոհները, դա հասկանում են, իսկ ես՝ թեթևամիտս, երբեք չեմ հասկանա... Մանե, թեկեղ, փարես,- այսինքն՝ նժարված ես կշեռքի վրա ու հայտարարված թեթևքաշային, այսինքն՝ «թեկեղ»... Բայց և թո՛ղ, թող այդպես լինի...

Բայց այնտեղ կշեռք կա, թե՝ ոչ,- միևնույն է,- այդ կշեռքին հոգոցն ու արցունքը ծանր կլինեն հաշվարկից ու դիտավորությունից: Ես շատ ավելի հաստատ գիտեմ, քան դուք՝ որևէ բան: Ես շատ եմ ապրել, շատ եմ խմել և մտածել ու գիտեմ՝ ինչ եմ ասում: Ձեր բոլոր ուղեցույց աստղերը գլորվում են դեպի մայրամուտ, իսկ եթե չեն գլորվում, ապա հազիվհազ առկայծում են: Ես ձեզ չեմ ճանաչում, մարդի՛կ, ես ձեզ վատ եմ ճանաչում, ես քիչ եմ ուշադրություն դարձրել ձեզ, բայց խնդիր ունեմ ձեզ հետ, ինձ հետաքրքրում է՝ ինչից է շինված ձեր հոգին, որպեսզի ստույգ իմանամ՝ նորից վառվում է Բեթղեհեմի աստղը կամ նորից սկսում է մարել, իսկ դա ամենագլխավորն է: Որովհետև մնացած բոլորը գլորվում են դեպի մայրամուտ կամ եթե չեն գլորվում, ապա հազիվհազ առկայծում են, իսկ եթե շողշողում են նույնիսկ, ապա ոչինչ էլ չարժեն:

Կշեռք կա այնտեղ, այնտեղ կշեռք չկա՝ այնտեղ թեթևաքաշ ենք մենք, կծանրանանք ու կհաղթահարենք. ես ավելի հաստատ եմ դրան հավատում, քան դուք՝ որևէ բանի: Հավատում եմ, գիտեմ և վկայում եմ աշխարհին: Բայց ինչո՞ւ են այսպես տարօրինակ լայնացրել փողոցները Պետուշկիում...»:

Ես ետ քաշվեցի դռնից ու ծանր հայացքս սահեցրի տնից տուն, շքամուտքից շքամուտք: Ու քանի դեռ իմ ներսն էր սողում մի ծանր միտք, որը սարսափելի է բարձրաձայնել, ծանր կռահման հետ միասին, որը բարձրաձայնելը նույնպես սարսափելի է,- ես գնում ու գնում էի՝ ամեն տուն սևեռուն զննելով, բայց լավ տեսնել չէի կարողանում. ցրտից, թե ինչից՝ աչքերս գոցում էին արցունքները...

թվայնացրել է 1915.info կայքը

«Մի՛ լա, Երոֆե՛և, մի՛ լա... Դե, ինչի՞ համար: Եվ ինչո՞ւ ես այդպես դողում, ցրտի՞ց, թե ուրիշ բանից... պետք չէ...»:

Եթե ես գոնե քսան կում կուբանյա՛ն ունենայի: Նրանք կհասնեին սրտիս, ու սիրտս կկարողանար բանականությանս համոզել, որ Պետուշկիում եմ: Բայց կուբանյան չկար. ես շրջվեցի, մտա նրբանցքը, նորից սրթսրթացի ու լաց եղա...

Եվ այստեղ սկսվեց այդ պատմությունը, որ ամենասարսափելին էր երազում ոեսածներից: Հենց այդ նրբանցքում ինձ ընդառաջ ելան չորս հոգի... Ես անմիջապես ճանաչեցի նրանց, չեմ բացատրի, թե ովքեր էին այդ չորսը... Ես ավելի ուժգին դողացի, ես ամբողջովին վերածվեցի դողէրոցքի...

Իսկ նրանք մոտեցան ու շրջապատեցին ինձ: Ձեզ ինչպե՞ս բացատրեմ, թե ինչ մռութներ ունեին: Չէ՛, բոլորովին էլ ավազակային մռութներ չէին, ավելի շուտ՝ հակառակը, ինչ-որ դասական երանգով, բայց չորսի աչքերում էլ,- գիտե՞ք, դուք երբևէ նստե՞լ եք Պետուշկիի կայարանի զուգարանում: Հիշո՞ւմ եք, այնտեղ, ահռելի խորության մեջ, կլոր անցքերի տակ, ինչպես է ծփում ու պսպղում այդ շագանակագույն խյուսը,- ահա այդպիսին էին չորսի աչքերն էլ: Իսկ չորրորդը նման էր... ասենք, հետո կասեմ, թե ինչի էր նման:

- Դե, ահա և բռնվեցիր,- ասաց մեկը:

- Այսինքն՝ ո՛նց թե... բռնվեցի,- ձայնս սարսափելի դողում էր՝ խումհարից ու դողէրոցքից: Նրանք մտածեցին՝ վախից:

- Հենց այդպես՝ բռնվեցիր: Էլ ոչ մի տեղ չես գնա:

- Իսկ ինչո՞ւ...

- Որովհետև...

- Լսե՛ք...- ձայնս խզվում էր, քանի որ դողում էր ոչ միայն ձայնս, այլև՝ յուրաքանչյուր ջիղ: Գիշերով ոչ ոք չի կարող ինքնավստահ լինել, այսինքն՝ ուզում եմ ասել՝ ցուրտ գիշերով: Եվ առաքյալը ուրացավ Հիսուսին, երբ դեռ աքաղաղը երեք անգամ չէր կանչել: Ես գիտեմ՝ ինչու ուրացավ.- որովհետև դողում էր ցրտից, այո՛: Նա գոնե տաքանում էր կրակի մոտ, դ ր ա ն ց հետ: Իսկ ես խարույկ

թվայնացրել է 1915.info կայքը

էլ չունեմ և՝ մի շաբաթվա խումհարից հետո: Ու եթե հիմա ինձ փորձեին, կուրանայի յոթ անգամ յոթանասունյոթ անգամ, և ավելի՛ անգամ կուրանայի...

- Լսե՛ք,- ասում էի նրանց, որքան կարողանում էի,- ինձ բաց թողեք... Ես ձեզ ի՞նչ եմ... ես պարզապես չհասա աղջկաս մոտ... գնում էի ու չհասա... ես պարզապես քնով էի ընկել, ճամպրուկս գողացան, քանի դեռ քնած էի... մեջը դատարկ բաներ էին, բայց, մեկ է, ափսոս գալիս է... «Վասիլյոկ»...

- Դա՞ ինչ բան է,- չարությամբ հարցրեց մեկը:

- Կոնֆետ, «Վասիլյոկ» կոնֆետ... ու երկու հարյուր գրամ ընկույզ, երեխային էի տանում, խոստացել էի, որովհետև լավ գիտի տառը... բայց դա անհեթեթություն է... այ, միայն դիմանամ մինչև լուսաբաց, ես նորից կգնամ, ճիշտ է՝ անփող, առանց ընծաների, բայց նրանք այդպես էլ կընդունեն ու բան չեն ասի... նույնիսկ հակառակը:

Չորսն էլ լուռ ու սևեռուն նայում էին ինձ, և չորսն էլ հավանաբար մտածում էին. «Ինչ վախկոտն ու պարզունակն է այս տականքը»: Օ, թո՛ղ, թող մտածեն, միայն թե բաց թողնեն:

- Ես նորից ուզում եմ գնալ Պետուշկի...

- Ոչ մի Պետուշկի էլ չես գնա...

- Դե... թեկուզև չգնամ, Կուրսկի կայարան եմ ուզում....

- Ոչ մի կայարան չի լինի:

- Բայց ինչո՞ւ...

- Որովհետև...

Մեկը թափ առավ ու ձեռքով խփեց երեսիս, մյուսը՝ բռունցքով դեմքիս, մյուս երկուսը նույնպես վրա եկան,- ես ոչինչ չէի հասկանում: Համենայնդեպս, ոտքի վրա էի ու սկսեցի կամաց նահանջել, կամաց-կամաց, իսկ նրանք՝ չորսով, կամաց գրոհում էին:

«Վազի՛ր, Վե՛նիչկա, ուր կուզես վազիր, միևնույն է՝ ուր... Վազիր Կուրսկի կայարան: Ձախ կամ աջ, կամ ետ. միևնույն է՝ կհասնես այնտեղ: Վազի՛ր, Վե՛նիչկա, վազի՛ր...»:

Ես բռնեցի գլուխս ու վազեցի: Նրանք՝ իմ ետևից:

թվայնացրել է 1915.info կայքը

ՊԵՏՈՒՇԿԻ: ԿՐԵՄԼ: ՄԻՆԻՆԻ ԵՎ ՊՈԺԱՐՍԿՈՒ ԱՐՁԱՆԸ

«Իսկ գուցե սա, այնուամենայնիվ, Պետուշկի՞ն է... Ինչո՞ւ փողոցներում մարդ չկա, մահը բոլորին տարե՞լ է... Եթե նրանք ետևիցս հասան՝ կսպանեն... ո՛ւմ ձայն տամ, ոչ մի պատուհանում լույս չկա... լապտերներն էլ ֆանտաստիկ են վառվում, վառվում ու չեն թարթում»:

«Կարող է հենց իսկապես էլ Պետուշկին լինի... Այ այս տունը, որի վրա վազում եմ, չէ՞ որ շրջսոցապն է, իսկ դրանից այն կողմ՝ խավար... Պետուշկիի շրջսոցապը, իսկ դրանից այն կողմ՝ հավերժական խավար ու մեռյալների հոգվոց կացարան... Օ՜, ո՛չ, ո՛չ...»:

Ես վազքով մտա հրապարակ, որ պատած էր խոնավ սալաքարերով, շունչս տեղը բերի ու նայեցի շուրջս:

«Չէ՝, Պետուշկին չի սա, չէ՛... Եթե Նա, եթե Նա ընդմիշտ թողել է երկիրը, բայց տեսնում է մեզնից յուրաքանչյուրին,- ես գիտեմ, որ այս կողմը Նա ոչ մի անգամ էլ չի նայել... Իսկ եթե Նա երբեք իմ երկիրը չի լքել, եթե ծայրեծայր չափել է այն բոկոտն ու ստրկատեսք,- Նա շրջանցել է այս վայրը ու անցել կողքով...»:

«Ո՛չ, սա Պետուշկին չէ: Նա Պետուշկիի կողքով չի անցել: Նա, հոգնած, գիշերել է այնտեղ խարույկի մոտ, ու ես շատերի հոգում տեսել եմ Նրա գիշերակացի մոխիրն ու ծուխը: Կրակ պետք չէ, լինեն միայն մոխիրն ու ծուխը...»:

Ո՛չ, Պետուշկին չէ սա, ո՛չ: Կրեմլը շողշողում էր իմ առաջ իր ողջ փառահեղությամբ: Ես թեկուզև արդեն լսում էի հետապնդման ոտնատրոփը, հասցրի մտածել. «Ես՝ լայնքով ու երկայնքով, սթափ ու խումհարի մեջ ողջ Մոսկվան հատածս, ես ոչ մի անգամ Կրեմլը չեմ տեսել, իսկ Կրեմլը որոնելիս միշտ հայտնվել եմ Կուրսկի կայարանում: Եվ հիմա ահա, ահա տեսա, երբ Կուրսկի կայարանն ինձ հարկավոր է աշխարհում ամեն ինչից ավելի...»:

«Անքննելի են ուղիները Քո...»

թվայնացրել է 1915.info կայքը

Ոտնատրոփը գնալով մոտենում էր, իսկ ես ոչ մի կերպ չէի կարողանում շունչ առնել, որ շարունակեմ փախչել, կարողացա միայն քաշեքաշ հասնել Կրեմլի պատին ու փլվեցի... Ես լրիվ սառել ու տանջահար էի վախից: Ինձ համար ամեն ինչ մեկ էր...

Նրանք մոտենում էին, հրապարակով, երկուական՝ երկու կողմից: «Ի՜նչ մարդիկ են, և ես ինչ եմ արել այս մարդկանց,- իմ մեջ նման հարց չկար:- Մեկ է: Կնկատեն ինձ կամ թե չեն նկատի,- դարձյալ մեկ է: Ինձ պետք չէ այս դողը, ինձ խաղաղություն է հարկավոր, ահա և իմ բոլոր ցանկությունները... Փրկեա՛, Տե՛ր...»:

Նրանք, համենայդեպս, ինձ նկատեցին: Մոտեցան ու շրջապատեցին՝ ծանր փնչալով: Լավ է, որ հասցրի ոտքի կանգնել՝ կսպանեի՜ն...

- Դու մեզնի՛ց, դու մեզնի՛ց էիր փորձում փախչել,- ֆշշացրեց նրանցից մեկն ու ճանկեց մազերս և, որքա՜ն ուժ ուներ, գլուխս խփեց Կրեմլի պատին: Ինձ թվաց՝ կտոր-կտոր եղա ցավից, արյունը հոսեց երեսովս և օձիքիցս ներս... Համարյա ընկնում էի, բայց դիմացա... Սկսվեց ծեծը:

- Դու փորի՜ն խփի, փորի՜ն, սապոգո՛վ: Թոող կոկվի:

Տե՛ր Աստված... Ես դուրս պրծա ու փախա՝ հրապարակով ներքև: «Վազի՛ր, Վե՜նիչկա, եթե կարող ես՝ վազիր. կփախչե՛ս, նրանք բոլորովին վազել չգիտեն»: Մի վայրկյան կանգնեցի հուշարձանի մոտ, արյունը մաքրեցի հոնքերիցս, որ ավելի լավ տեսնեմ. նախ նայեցի Մինինին, հետո Պոժարսկուն, հետո նորից Մինինին,- ո՛ւր, ո՛ր կողմը վազեմ: Որտե՛ղ է Կուրսկի կայարանը, և ո՛ւր փախչեմ. մտածելու ժամանակ չկար,- ես թռա այն կողմը, ուր նայում էր իշխան Դմիտրի Պոժարսկին...

ՄՈՍԿՎԱ-ՊԵՏՈՒՇԿԻ: ԱՆՀԱՅՏ ՇՔԱՄՈՒՏՔ

Բայցևայնպես, մինչև վերջին ակնթարթը դեռ հույս ունեի, որ կպրծնեմ նրանցից: Եվ երբ վագքով մտա անհայտ շքամուտքը, և սողեսող հասա վերջին սանդղահարթակին ու նորից փլվեցի,- դեռ

թվայնացրել է 1915.info կայքը

հույս ունեի... «Օ՛, ոչի՛նչ, ոչի՛նչ, սիրտս մի ժամից կխաղաղվի, կմաքրվի արյունս, պառկի՛ր, Վե՛նիչկա, պառկիր մինչև լուսաբաց, իսկ հետո՝ Կուրսկի կայարան... Այդպես մի դողա, ասել եմ, չէ՞, պետք չի...»:

Սիրտս այնպես էր խփում, որ խանգարում էր ականջ դնելուն, բայցևայնպես, լսեցի. շքամուտքի դուռը ներքևում դանդաղ բացվեց ու հինգ վայրկյան չէր փակվում:

Ամբողջ մարմնով ցնցվելով՝ ինձ ասացի. «Տալիթա՛, կումի՛, այսինքն՝ վեր կաց ու պատրաստվիր վախճանին... Սա արդեն տալիթա կումի չէ, ես ամեն ինչ զգում եմ, սա լ ա մ ա ս ա բ ա թ հ ա ն ի է, ինչպես ասել է Փրկիչը... Այսինքն՝ «Ինչի՞ համար, Տե՛ր, դու թողեցիր ինձ»: Ինչի՞ համար, համենայնդեպս, Տե՛ր, դու ինձ թողեցիր...

Տերը լուռ էր:

Երկնայի՛ն հրեշտակներ. նրանք բարձրանո՛ւմ են. ի՞նչ անեմ. ի՞նչ անեմ հիմա, որ չմեռնեմ, հրեշտակնե՛ր...

Եվ հրեշտակները ծիծաղում էին: Դուք գիտե՞ք ինչպես են ծիծաղում հրեշտակները: Այդ խայտառակ արարածները,- ես հիմա գիտեմ,- ասե՛մ ձեզ՝ նրանք ինչպես են ծիծաղում: Ժամանակներ առաջ, վաղուց, Լոբնայում, կայարանի մոտ, գնացքը կտոր-կտոր էր արել մի մարդու և անտանելի էր կտոր-կտոր արել՝ նրա ամբողջ ստորին կեսը աղել, դարձրել էր մանր փշուրներ ու ցրել ուղեգծով մեկ, իսկ վերին կեսը, գոտկատեղից վեր, ասես ողջ մնացած լիներ, կանգնել էր ռելսերի մոտ, ինչպես կանգնած են լինում զանազան սրիկաների կիսանդրիները: Գնացքը գնաց, իսկ նա, այդ կեսը, այդպես էլ մնաց կանգնած, ու դեմքին ինչ-որ մտահոգության արտահայտություն կար, ու բերանը կիսաբաց էր: Շատերը չէին կարողանում նայել, շրջվում էին՝ գունատված ու մահվան խոնջանքը սրտերում: Իսկ երեխաները մոտ վազեցին, երեք թե չորս երեխա, ինչ-որ տեղից ծխախոտի դեռ ծխացող քնթուկ գտան ու դրեցին մեռածի կիսաբաց բերանը: Եվ քնթուկը շարունակ ծխում ու ծխում էր, և երեխաները վազվզում էին շուրջը ու ծիծաղում այդ զվարճանքի վրա...

թվայնացրել է 1915.info կայքը

Ճիշտ այդպես էլ հիմա երկնային հրեշտակներն էին ծիծաղում ինձ վրա: Նրանք ծիծաղում էին, իսկ Աստված լուռ էր... Իսկ այդ չորսին ես արդեն տեսա. բարձրանում էին վերջին հարկից... և երբ նրանց տեսա, ցանկացած վախից ուժեղ էր (ազնիվ խոսք՝ ուժեղ) զարմանքը. նրանք, չորսն էլ, բարձրանում էին բոկոտն ու կոշիկները պահել էին ձեռքներին. ինչի՞ համար էր դա. որ աղմուկ չանե՞ն շքամուտքում կամ որ անաղմո՞ւկ մոտենան ինձ. չգիտեմ, բայց դա վերջին բանն էր, որ հիշում եմ: Այսինքն՝ ահա այդ զարմանքը:

Նրանք նույնիսկ չսպասեցին, որ շունչ առնեն, ու վերջին աստիճանից նետվեցին ինձ խեղդելու, միանգամից հինգ թե վեց ձեռքով, ես, որքան կարողանում էի, պոկում էի ինձ կառչած ձեռքերը ու պաշտպանում կոկորդս, որքան կարող էի: Եվ այստեղ ահա կատարվեց ամենասարսափելին. նրանցից մեկը, ամենից կատաղի ու դասական կիսադեմով, գրպանից դուրս քաշեց հսկայական, փայտե կոթով բիզը, նույնիսկ ոչ թե բիզ, այլ պտուտակահան, թե դրա նման մի բան,- չգիտեմ: Նա մյուսներին հրամայեց բռնել ձեռքերս, և որքան էլ պաշտպանվում էի, նրանք ինձ՝ իսպառ խելագարվածիս, մեխեցին հատակին...

- Ինչո՞ւ, ինչո՞ւ... ինչո՞ւ-ինչո՞ւ-ինչո՞ւ...- մրմնջում էի ես:- Ինչո՞ւ, ինչո՞ւ...

Ն ր ա ն ք բ ի զ ը խ ր ե ց ի ն ու ղ ի ղ կ ո կ ո ր դ ս...

Ես չգիտեի, որ այդպիսի ցավ կա աշխարհում... Ես կոկվեցի տառապանքից, թանձր կարմիր «յու» տառը տարածվեց ու թրթռաց աչքերիս մեջ: Եվ այդ պահից ի վեր ուշքի չեմ գալիս և ուշքի չեմ գա երբեք:

Մալուխ փռելու աշխատանքներին,
Շերեմետևոյում, 69 թվականի աշնանը

թվայնացրել է 1915.info կայքը

ՎԱՍԻԼԻ ՌՈՋԱՆՈՎԸ ԷՔՍՑԵՆՏՐԻԿԻ ԱՉՔԵՐՈՎ

ԷՍՍԵ

թվայնացրել է 1915.info կայքը

1. Տնից դուրս եկա՝ երեք ատրճանակ վերցրած. մի ատրճանակը խրեցի թևատակս, մյուսը՝ նույնպես թևատակս, երրորդը՝ չեմ հիշում ուր:

Եվ մտնելով նրբանցք՝ ասացի. «Մի՞թե սա կյանք է: Սա կյանք չի, սա անձրևաշիթերի ծփանք է ու հոգեհաշմություն»: Աստծու «մի՛ սպանիր» պատվիրանը, հարկ է կարծել, պատվիրանվողին էլ է վերաբերում («Մի՛ սպանիր քեզ, ինչքան էլ նողկալի լինի»), բայց այսօրվա նողկանքն ու այսօրվա օրը դուրս են պատվիրանից: «Քանզի լավ է մեռնեմ, քան ապրեմ»,- ասել է Հովնան մարգարեն: Իմ կարծիքով էլ:

Անձրևը մաղում էր ամեն տեղից, իսկ գուցե ոչ մի տեղից էլ չէր մաղում, թքած ունեի: Ի նշան վշտի՝ երբեմնակի աչքերս կկոցելով ու պպզելով՝ գնացի Գագարինի հրապարակի կողմը: Հոգիս փքվել էր դառնությունից, ու ես դառնությունից փքվել էի ամբողջովին, նվում էր սրտիցս ձախ ու սրտիցս աջ նույնպես նվում էր: Բոլոր հարազատներս լքել էին ինձ: Ո՞վ է մեղավոր, ե՞ս, թե՞ նրանք: Դատաստանի օրը կպարզի Նա, Ով և այլն, և այլն: Պարզապես իմ շաբաթների վրա ծիծաղելն ու իմ երկուշաբթիներին լալը զզվեցրել էր նրանց: Եզակի մեկ-երկու գաղափարները, որ դեռ ջերմացնում էին, նույնպես չքվել էին, լուծվել պարապի մեջ: Եվ ի լրումն՝ ինձնից փախավ միակ էակը, որ ինձ կարող էր պահել Երկրի վրա: Հեռանում էր. սանդուղքների վրա հասա ետևից: Ասացի. «Մի՛ լքիր ինձ, ճերմակապորտի՛կս», հետո կես ժամ լալիս էի, հետո նորից հասա ետևից, ասացի. «Օրհնյալածոցի՛կս, մնա՛»: Նա շրջվեց իմ կողմը, թքեց կոշիկիս ու հեռացավ ընդմիշտ:

Ես կարող էի խեղդել ինձ սեփական արցունքներիս մեջ, բայց չստացվեց: Կես տարի շարունակ ինձ ոչնչացնում էի. նետվեցի բոլոր գնացքների տակ, բայց գնացքները կանգ էին առնում՝ ազդրերիս չհասած: Նաև՝ տանը: Գլխավերևս կախաղանի կեռիկ էի խփել, ֆլյոր-դ-օրանժի ճյուղը մերակիս մեջ՝ երկու շաբաթ պարան փնտրեցի քաղաքով մեկ, այդպես էլ չգտա: Մինչևիսկ այսպես. գնում էի

թվայնացրել է 1915.info կայքը

խոշոր զորավարժանքներին, կանգնում գլխավոր թիրախի կողքին, ու խփում էին բոլոր թնդանոթները Վարշավյան պայմանագրի բոլոր երկրներից, ու բոլոր արկերը կողքովս էին անցնում: Ո՛վ էլ լինես, դո՛ւ, որ ճարեցիր ինձ համար այս երեք ատրճանակները, չորիցս օրինյալ լինես դու:

Դեռ հրապարակ չհասած՝ շնչահեղձ եղա, փլվեցի ծաղկաթմբին՝ այլակերպ ու անբարբառ: Հոգիս շարունակում էր փքվել, արցունքներս հոսում էին իմ առջևից ու ետևից, այնպես ծիծաղելի էի ու դառնացած, որ ինձ նայող բոլոր տատիկները սրտի կաթիլներ ու քլորաֆորմ էին տալիս հոտոտելու:

«Նախ սրբիր քրտինքը երեսիդ»: Ո՞վ է քրտնած մեռել: Ոչ ոք քրտնած չի մեռել: Աստված լքել է քեզ, բայց որևէ կազդուրիչ բան հիշիր, որևէ այնպիսի՛ կազդուրիչ, օրինակ, այսպիսի.

Ռենանն ասել է. «Բարոյական զգացումը բոլորի գիտակցության մեջ է, ուստի սարսափելի չէ Աստծուց լքվելը»: Նուրբ է ասված: Բայց չի կազդուրում: Ո՞ւր է իմ բարոյական զգացումը: Չունե՛մ:

Բոցաշունչ Հաֆիզն էլ (բոցաշունչ գոեհիկ Հաֆիզը. տանել չեմ կարողանում), բոցաշունչ Հաֆիզն էլ ասել է. «Ամեն մարդ աչքերում իր աստղն ունի»: Իսկ ես ոչ մի աստղ չունեմ, ոչ մի աչքում:

Իսկ Ալեքսեյ Մարեսևն ասել է. «Յուրաքանչյուրի հոգում պիտի լինի իր կոմիսարը»: Իսկ իմ հոգում կոմիսար չկա: Մի՞թե սա կյանք է: Սա կյանք չի. կղանքաջրեր են, կեղտաջրերի պտտան, սրտի փլուզում: Աշխարհը թաղվել է խավարի մեջ ու մերժվել Աստծուց:

Առանց վեր կենալու հանեցի ատրճանակներս. երկուսը թևատակերիցս, մեկը՝ չեմ հիշում որտեղից, երեքից միանգամից կրակեցի բոլոր քունքերիս ու դիտապաստ ընկա ծաղկաթմբին՝ միջաթափանց խոցված հոգով:

2. «Մի՞թե սա կյանք է,- վեր կենալով՝ ասացի ես,- սա քամիների սյուք է, քուլա-քուլա մուժ, սա թքացայտ է ուսի վրայով. ահա թե ինչ է: Վրիպեցի՛ր, խեղկատա՛կ: Անդո՛ւր ախտավոր, վրիպեցիր բոլոր երեք ատրճանակներից, ու դրանցից ոչ մեկում ոչ մի լիցք չկա»:

թվայնացրել է 1915.info կայքը

Բերանից թուք հոսեց, գուցե՝ ոչ միայն թուք: «Հանգի՛ստ, դեռ մի միջոց կա, արմատակա՛ն միջոց, ամենասիրելի իտալական ճաշատեսակը՝ թույներ ու քիմիկատներ»: Մնում է դեղագործ Պավլիկը, հենց Գագարինի հրապարակում էլ ապրում է, գիրք կրծող, տնակյաց Պավլիկը, չռաչք դանդալոշը: Մի՛ տխրիր. շարունակ տխրում ես: Չեմ հիշում՝ ով, Ավերինցևը թե Արիստոտելը, ասել է՝ «Omnia animalia post coitum opressus est», այսինքն՝ «Ամեն արարած տխուր է մերձեցումից հետո», իսկ ես, ահա, միշտ տխուր եմ՝ մերձեցումից և՛ առաջ, և՛ հետո:

Իսկ կոմերիտականներից լավագույնը՝ Նիկոլայ Օստրովսկին, ասել է. «Մի աչքով արդեն ոչինչ չեմ տեսնում, իսկ մյուսով՝ միայն իմ սիրելի կնոջ ուրվագծերը»: Իսկ ես չեմ տեսնում արդեն ոչ մի աչքով, և իմ սիրելի կինն էլ ուրվագծերը հետը տարավ:

Իսկ Շոպենհաուերն ասել է. «Երևույթների այս աշխարհում...» (թո՛ւ, չեմ կարողանում խոսել. ջղակծկումներ են): Երկու անգամ ցնցվեցի ու գնացի առաջ, դեպի Գագարինի հրապարակ: Բոլոր երեք ատրճանակները նետեցի այնտեղ, ուր պարսկական մանուշակներ, շահպրակներ ու սատանան գիտի էլ ինչեր են ծաղկում:

«Պավլիկը հաստատ տանն է: Թույներն ու քիմիկատները խառնում՝ բլենորեայի դարման է սարքում»,- այսպես մտածեցի ու թակեցի դուռը:- Բա՛ց արա, Պա՛վլիկ:

Նա բացեց՝ չթրթռացնելով այտերից ոչ մեկը և առանց հոնքերը վեր քշտելու. այնքան հոնք ուներ, որ գոնե մի քիչը կարող էր քշտել, բայց չարեց:

«Գիտե՞ս, զբաղված եմ,- ասաց նա,- թույներ ու քիմիկատներ եմ խառնում, որ բլենորեայի դարման սարքեմ»:

«Ես՝ մի բոպեո՛վ: Որևէ բան տուր, Պա՛վլիկ, որևէ մոլախինդ, որևէ ստրիխնին, տո՛ւր, քեզ համար վատ կլինի, եթե սրտի պայթյունից սատկեմ հենց էստեղ, քո փափկաթոռին:- Փուլ էի եկել փափկաթոռին ու պաղատում էի:- Ցիանակալիում ունե՞ս: Ացետո՞ն: Մկնդե՞ղ: Գլաուբերյան ա՞ղ: Բեր՝ ինչ ունես. բոլորը կխառնեմ, ամբողջը

թվայնացրել է 1915.info կայքը

կխմեմ, քո բոլոր էսենցիաները, բոլոր կալիումներն ու միզանյութերը, բեր՝ ինչ ունես»:

Նա պատասխանեց.

- Չեմ տա:

- Լա՛վ, հրաշալի՛ է, հրաշալի՛: Վերջիվերջո, Պա՛վլիկ, ինչի՞ս են քո՝ կապտաթթունե՞ր են, ինչ են: Իմ ինչի՞ն են քո քիմիկատները, իմ, որ Վեներայի թույներն է ճաշակել: Էսպես էլ կպայթեմ՝ փափկաթոռիդ նստած, իսկ դու էդ ընթացքում բլենորեա բուժիր:

Իսկ պրոֆեսոր Բոտկինն, ի դեպ, ասել է. «Պետք է գոնե մի քանի հոնոկոկ ունենալ՝ բլենորեա վաստակելու համար»: Իսկ ես՝ ապուշս, ոչ մի հոնոկոկ չունեմ:

Իսկ Միկլուխո-Մակլայն ասել է. «Եթե մինչև 30 տարեկանս ոչինչ չանեի, ոչինչ չէի անի նաև 30-ից հետո»: Իսկ ե՞ս. ի՞նչ եմ արել մինչև 30, որ հետո անելու հույսեր ունենամ:

Իսկ Շոպենհաուերն ասել է. «Երևույթների այս աշխարհում...»: (չէ՛, էլի չեմ կարող, դարձյալ ջղակծկումներ են);

Դեղագործ Պավլիկն իր բոլոր հոնքերը սևեռեց վրաս, ավելի չռաչքվեց՝ ինչպես պատանության տարիներին, ու շարունակեց խոսքս.

- Իսկ Վասիլի Ռոզանովն ասել է. «Ամեն ոք կյանքում իր Զարչարանաց շաբաթն ունի»: Հիմա քոնն է:

- Հիմա իմն է, հա՛, հա՛, Պա՛վլիկ, հիմա իմ Զարչարանաց շաբաթն է, որ յոթ Զարչարանաց ուրբաթ ունի: Փառահե՛ղ է: Ո՞վ է էդ Ռոզանովը:

Պավլիկը չպատասխանեց. խառնում էր թույներն ու քիմիկատները և խորհում ինչ-որ նվիրական բանի մասին:

- Ի՞նչ նվիրական բանի մասին ես խորհում,- հարցրի. դրան էլ չպատասխանեց, շարունակեց խորհել նվիրականի մասին: Գազազեցի ու վեր թռա փափկաթոռից:

թվայնացրել է 1915.info կայքը

3. Կես ժամ անց շեմին նրան հրաժեշտ տալիս թևատակիս էի սեղմել Վասիլի Ռոզանովի երեք հատորն ու թղթե խցանով փակում էի մոլախինդով շշի բերանը:

– Մոլի հետադիմակա՞ն է, անշուշտ:

– Էն էլ ինչպիսի՜:

– Եվ ավելի սանձարձակը չկա՞:

– Չկա առավել սանձարձակ ոչինչ:

– Ավելի հետադեմ, ավելի խորշելի՝ նույնպե՞ս չկա:

– Դրանից ավելի հետադեմ ու խորշելի՜:

– Հրա՜շք: Խավարամո՞ղ է:

– «Մինչև ուղնուծուծը»՝ ինչպես աղջիկներն են ասում:

– Եվ կործանել է կյանքը հանուն կրոնական պատրանքների՜:

– Կործանել է: Աստված հոգին լուսավորի:

– Հոգի՜ մարդ է: Սևհարյուրյակային էր, անշուշտ, ջարդե՛ր, բանե՛ր:

– Ինչ-որ չափով՝ այո:

– Կախարդի՜չ մարդ: Ոնց էլ մաղձ ու նյարդեր ու ժամանակ է գտել: Եվ ոչ մի խոհ՝ ամբողջ կյանքո՛ւմ:

– Միայն հորինվածքներ: Եվ բացառապես՝ ստահոդ ու չարախոսող:

– Եվ ամբողջ կյանքում, և կյանքից հետո՝ ոչ մի ճանաչո՛ւմ:

– Ոչ մի ճանաչում: Զուտ անճանաչություն:

– Հա՜, հա՜, լսել եմ («Սպասի՛ր, Պա՛վլիկ, հիմա գալիս եմ») վաղ պատանությանս օրերին, մեր վարժուհի Սոֆյա Սոլոմոնովնա Գորդոյից, ուրացողների այդ խառնախմբի, այդ նողկալի դավի մասին՝ Նիկոլայ Գրեչ, Նիկոլայ Բերդյաև, Միխայիլ Կատկով, Կոնստանտին Պոբեդոնոսցև, «տարածեց բվի թևերն իր», Դև Շեստով, Դմիտրի Մերեժկովսկի, Ֆադդեյ Բուլգարին, «վատը այն չէ, որ լեհ ես դու», Կոնստանտին Դեոնտև, Ալեքսեյ Սուվորին, Վիկտոր Բուրենին. «Նևսկիով վազում է շունը», Սերգեյ Բուլգակով և էլի մի կույտ դիակապուտներ: Մթին ու կործանիչ լույս արձակող խավարամիտների

թվայնացրել է 1915.info կայքը

այդ համաստեղության մասին, Պա՛վլիկ, արդեն լսել եմ իմ վարժուհի Սոֆյա Սոլոմոնովնա Գորդոյից: Գիտեմ այդ ավազակախումբը:

- Փառահեղ կին է Սոֆյա Սոլոմոնովնա Գորդոն, իսկ ավազակախմբի հարցում չեմ վիճում: Ծանոթ է ու չի վիրավորում լսելիքը. ո՛չ դասերը, ո՛չ էլ մոլախինդի շիշը, բայց այ «համաստեղությունը» վիրավորում է լսելիքը,- ո՛չ պիտանի է, ո՛չ էլ՝ ստույգ, իսկ Յոհան Կեպլերն ասել է. «Ցանկացած համաստեղություն, ոչ ավելի, ոչ պակաս, աստղերի պատահական խումբ է, որոնք ընդհանուր ոչինչ չունեն ոչ կառուցվածքով, ոչ արժեքով, ոչ չափերով, ոչ հասանելիությամբ»:

- Ճիշտն ասած, էդ էլ լսել եմ մեր վարժուհի Բելա Բորիսովնա Սավներից, ի՞նչ կին էր, շշմելու... («Սպասիր, Պա՛վլիկ, հիմա գալիս եմ»): Ուրեմն, քո ասելով՝ աստիճանավոր Վասիլի Ռոզանովը դրանց բոլորին հաղթե՞լ է չարագործությամբ, բոլորին կերե՞լ, դրել գրպա՞նը:

- Միանգամայն:

- Տվել-անցե՞լ է

- Տվել-անցել է:

- Մարդակե՛ր: Իսկ ինչպե՞ս է, համենայնդեպս, մահացել, ո՞նց է մեռել էդ արնախումը: Երկու բառով, ու գնում եմ:

- Ոնց որ պետքն է: Դարձել է ճշմարիտ հավատին՝ վախճանից ժամուկես առաջ: Հասցրել է խոստովանել ու հաղորդություն ստանալ: Շատ պրպտունն ես, պարազի՛տ: Բարի գիշեր:

- Բարի գիշեր:

4. Նախ կում անել մոլախինդից, հետո՞ կարդալ: Թե՞ նախ կարդալ, հետո կում անել մոլախինդից: Չէ՛, համենայնդեպս, կարդալ, հետո կում անել: Բախտաբերի բացեցի ու սկսեցի մեջտեղից (միշտ այդպես են սկսում, երբ ձեռքի տակ բարձր հարգանիշի ընթերցելիք է): Եվ ահա թե ինչ մեջտեղ էր.

«Գիրքը պիտի թանկ լինի, և առ այն սիրո առաջին վկայությունը՝ գնելու պատրաստակամությունն է: Գիրքը չի կարելի «տալ կարդալու»: «Կարդալու տրված» գիրքը անառակ է: Ինչ-որ բան կորցրեց իր

թվայնացրել է 1915.info կայքը

ոգուց ու մաքրությունից: Ընթերցասրահներն ու հանրային գրադարանները հասարակաց վայրեր են, որ այլասերում են ժողովրդին, ինչպես հասարակաց տները»:

Ա՛յ քեզ սրիկա: Ասենք, չէ՛, մի քանի էջ էլ՝ ու խոսքն արդեն ոչ թե անառակ գրքերի, այլ պարզապես անառակների մասին էր. «Կարելի է թույլատրել պոռնկության մաքրագործված տեսակը «ամուսնացած այրիներին», այսինքն՝ այն կարգի կանանց, որոնք անընդունակ են մենամուսնության, հասու չեն մենամուսնության ճշմարտությանը, վեհությանն ու մշտականությանը»:

Հետո մի զվարճալի անհեթեթություն սկսվեց քրիստոնեական սկզբունքների ու «անառակության սնարների» համատեղելիության և այն մասին, որ քրիստոնեությունը, եթե միայն ուզում է դիմանալ հրեականության մրցակցությանը, մասամբ պիտի ֆալլոսական դառնա: Գլուխս սկսեց ուռչել ինչ-որ անդուր բանից, վեր կացա ու միջանցքամու համար մեկական անցք բացեցի չորս պատերի մեջ: Հետո փռվեցի օթոցին ու շարունակեցի. «Աստվա՛ծ իմ, հավերժությո՛ւն իմ, ինչո՞ւ ինձ այսքան տխրություն տվիր: Տառապում է հոգիս: Տառապում է անպատմելի տառապանքով: Առավոտս՝ անլույս: Եվ գիշերս՝ անքուն»: Խավարամիտ ու՝ հանկարծ տառապում է հոգի՞ն: «Կա՞ կարեկցանք այս աշխարհում: Գեղեցկություն՝ այո՛, իմաստ՝ այո՛: Բայց կարեկցա՛նք»: «Կարեկցանք ունե՞ն աստղերը արդյոք: Մայրը կարեկցում է, և թող վեր լինի նա աստղերից»: «Կոպիտ են մարդիկ, անասելի կոպիտ,- ու հենց դրանից կամ գերազանցապես դրանից՝ ցավոտ է կյանքը. այսքա՛ն ցավ»: «Ա՛խ, ինչպես են իմ թույլ ջղերը դիմանում այս ահռելի ջղաձգումին»:

(Չէ՛, այս «չարագործի» հետ լավ էլ խոսելու բան կա. վաղուց չեմ հանդիպել մի արարածի, ում հետ այսքան «խոսելու բան լիներ»):

«Միայն վիշտն է մեզ համար բացահայտում վեհն ու սրբազանը»: «Ցավն ամենակալ է և անառիթ, և համարյա անընդմիջում: Ինձ թվում է՝ ծնվել եմ ցավի հետ: Երբեմն այնքան ծանր է, որ մի քիչ էլ ծանրանա՝ այլևս անհնար կլինի ապրել, «շարժակազմը չի դիմանա»:

թվայնացրել է 1915.info կայքը

«Ես ճշմարտություն չեմ ուզում, ես հանգիստ եմ ուզում»: «Օ՜, իմ տխուր փորձառություն: Եվ ինչո՞ւ ցանկացա ամեն ինչ իմանալ»:

«Ես միայն ծիծաղում կամ լալիս եմ: Խորհո՞ւմ եմ արդյոք, որպես այդպիսին: Երբե՛ք»:

«Տխրությունն իմ հավերժական հյուրն է»: «Ծիծաղը չի կարող սպանել ոչ ոքի, ծիծաղը միայն կարող է ճզմել»: «Համբերությունը հաղթահարում է ցանկացած ծիծաղ»: «Ծիծաղն ընդհանրապես անվայելուչ բան է: Ծիծաղը Կալիբեկից է, ոչ թե՝ Արիէլից»:

«Նա լալիս էր: Եվ բաց էր միայն արցունքների համար: Ով երբեք չի լալիս, չի տեսնի Հիսուսին»: «Քրիստոսը մարդկության արցունքներն է»: «Աստվա՜ծ հավերժող, կանգնիր իմ կողքին, չհեռանաս»:

(Ահա՛, ահա՛: Մարեսևն ու Կեպլերը, Արիստոտելն ու Բոտկինը բոլորովին էլ այն չէին ասում, իսկ սա ասում է հենց այն: Կոլեգիական խորհրդական Վասիլի Ռոզանովը, որ գրքեր էր գրում: Շոպենհաուերն ու Սոֆյա Գորդոն, Հաֆիզն ու Միկլուխո-Մակլայը վտիտորս էին բերում, և ապստամբում էր հոգին, իսկ այստեղ հոգիս չի ապստամբում և արդեն չի ապստամբի՝ ինչի հետ էլ գործ ունենա՝ պարադոքսի, թե տափակության):

«Ռուսական պարծենկոտությունն ու ռուսական ծուլությունը. ահա հեղափոխությունը»: «Այն երկու չափում ունի՝ երկարություն ու լայնություն, բայց երրորդը՝ խորությունը, չունի»: «Հեղափոխություն է, երբ մարդը փոխարկվում է խոզի, փշրում է ամանեղենը, թրքոտում փարախը, հրդեհում տունը»: «Ինքնահիացում ու չարություն. սրանցով է շաղախված ամբողջ հեղափոխությունը»:

Եվ՝ դեկաբրիստների մասին, իմ սիրելի դեկաբրիստների.

«Եվ գրո՛ւմ, գրո՛ւմ են այդ խեղկատակության պատմությունը: Է՛լ հուշեր, է՛լ սիրամարգի գույնզգույն փետուրներ, է՛լ Նեկրասովը՝ իր «Ռուս կանանցով»»:

Եվ Նիկոլայ Չերնիշևսկու մասին (նրա, որ կոչված էր,- տառապյա՛լը,- «ցարերին Քրիստոսի մասին հիշեցնելու»).

թվայնացրել է 1915.info կայքը

«Հասկանո՞ւմ եք, արդյոք, որ քաղաքակրթությունը Բոկլիկն ու Դարվինիկը չեն, Սպենսերիկը չի՝ քսան հատորանոց, ձեր Նիկոլայ Գավրիլովիչը չի, ռուսական լուսավորչության այդ բոլոր տրեխներն ու փաթաթանները, որոնց քամակին վաղուց պիտի քացով տված լինեին»: «Հասկանո՞ւմ եք, արդյոք, որ պետք էր քաշել Սպենսերիկի ականջները, իսկ Նիկոլայ Գավրիլովիչի մոութին հասցնել, ինչպես սենյակը գարշահոտող ձիապանին: Որ նրանց հետ ոչ մի զրույց պետք չէր վարել, պարզապես հարկավոր էր դուրս անել՝ ձեռքից բռնած, ինչպես սեղանի մոտից՝ պարոններին, որոնք ուտելու փոխարեն սկսում են գարշահոտել (տառապյալն ինչպե՞ս կարող է գարշահոտել):

Եվ կոմս Տոլստոյի մասին.

«Հատկապես չեմ սիրում Տոլստոյին ու Սոլովյովին: Չեմ սիրում նրանց մտքերը, չեմ սիրում նրանց կյանքերը, չեմ սիրում բուն հոգին: Տրամվայի տակ ճզմված ամենահետին շունն անգամ ավելի հոգու շարժում է արթնացնում, քան սրանց «փիլիսոփայությունն ու հրապարակախոսությունը»: Այս ճզմված շունը, թերևս, ինչ-որ բան բացատրում է: Նրանց (Տոլստոյի ու Սոլովյովի) մեջ բացարձակապես ճզմվածություն չկա, հակառակը՝ իրենք են հույժ ճզմում»:

Եվ Մաքսիմ Գորկու մասին (կարծում եմ, համենայնդեպս՝ Մաքսիմ Գորկու).

«Անվերջ ինչ-որ տեղ ինչ-որ բան է որսում, ինչ-որ պղտոր ջրում՝ ինչ-որ ինքնասիրահարված ձկնիկ: Սակայն առավել հաճախ պոկվում-փախչում է. թե՛ խայծն է անպետք, թե՛ կեռիկը՝ բութ: Բայց չի վհատվում: Նորից է նետում»:

Եվ «Ռուսաստանում քաղաքական դատարկաբանության հիմնադիր» Ալեքսանդր Գերցենի մասին.

«Ողջ կյանքում՝ ոչ մի բնական ու վեհ խոհ. միայն փոդ դիզի ու խրատ կարդա մեկնումեկին: Գիմնազիստ ժամանակ նամակներով խրատում էր մորը: Եվ հոգու բոլոր մղումներն անկիրք են, դանդաղ ու ծորուն: Ասես զեռուն է սողում»:

թվայնացրել է 1915.info կայքը

Ահա այս սողացող զեռունի վրա էլ քնեցի լուսաբացին՝ հետադեմիս հետ գիրկընդխառն: Նախ իմ էության հոգևոր կողմը քնեց, ապա և, հետո, մահկանացուն նույնպես քուն մտավ:

5. Եվ երբ հոգևորն արթնացավ, մահկանացուն քնած էր դեռ: Բայց բոլորից վաղ իմ հետադեմն էր արթնացել, ու եթե արդեն ծանոթ չլինեի, կթվար՝ իրեն տարօրինակ է պահում:

Նախ, դեմքին ջուր շփելով, երգեց «Աստվա՛ծ, պահպանիր թագավորին»: Անստույգ ու անճարակ երգեց, բայց՝ սրտանց ու բնական, ավելի, քան Ռուսական կայսրության բոլոր հպատակները միասին վերցրած՝ չարաբաստիկ Խոդինկայի ժամանակից ի վեր: Հետո համբուրեց աշխարհի բոլոր երեխաներին ու գնաց եկեղեցի: Աղոթողների մեջ կանգնած՝ մերթ դրամագետ-արտասահմանցու էր նման, մերթ «խաչը վախվորած բռնող դևի», մերթ Աբադոննային, որ հենց նոր է դուրս սողացել իր անդունդից, մերթ էլի ինչ-որ բանի, որ չափազանց շատ մոլություններ ունի, բայց դժվար է պարզել՝ ինչ կարգի մոլություններ են և ինչ են արժենում Աբադոննային: (Իսկ ես դեռ իմ օթոցին պառկած՝ հետևում էի): Ելնելով գավիթ՝ նա ողորմություն տվեց երկու աղքատի, իսկ մնացածին,- զննելով,- չգիտես ինչու՝ չտվեց: Ինչ-որ բանի համար շնորհակալություն հայտնեց Կլեյնմիխելին, հընթացս ապտակեց Ժելյաբովին, արցունքակալվեց ու թաղային տեսուչին ասաց, որ աշխարհում ոստիկանական գործառույթից սրբազան բան չկա:

Հետո կծկվեց: Ետևից շրջանցելով սոցիալիստների ու նարոդավոլեցների տողանը՝ կսմթեց «ասպետակերպ տիկին» Վերա Ֆիգների հետույքը (սա աչքն էլ չթարթեց) ու խոհուն շխկացրեց մյուսների վզակոթերին: (Ա՛յ քեզ ստահակ՝ ասացի ես՝ խճճվելով ցնծություններիս մեջ):

Իսկ նա այդ ընթացքում, վերջին կոթոցը հասցնելով, խոժոռվեց ու վերադարձավ իմ խրճիթը՝ գրպանում մի բուռ մանրադրամ: Քանի դեռ հանում էր, շուռումուռ տալիս ու փչում յուրաքանչյուրի վրա, կամացուկ վեր կացա օթոցից ու շշուկով հարցրի.

թվայնացրել է 1915.info կայքը

– Մի՞թե հետաքրքիր է փչել յուրաքանչյուր մանրադրամի վրա: Եվ նա ասաց.

– Շա՜տ հետաքրքիր է, ինքդ փորձիր: Իսկ ինչի՞ ես էս ժամին շնթռած: Վա՜տ ես, թե՞ մինչև լույս լրբերի հետ ես խառնակվել:

– Խառնակվել եմ ու մինչևիսկ՝ երեքի հետ: Երեկ երեկոյան տվեցին կարդալու, որովհետև երեկ վատ էի: «Գրքերը, որ տվել են կարդալու...» և այսպես շարունակ: Չէ՛, այսօր մի քիչ լավ եմ: Իսկ այ երեկ էնքան վատ էի, որ վրաս նայող քաղխորհրդի պատգամավորները գլխներին մոխիր մաղեցին, պատառոտեցին հանդերձներն ու պրկվեցին քրջագոտիներով: Իսկ նայող տատիկները հոտոտելիք էին տալիս...

Ու պատովե՛ց-գնա՛ց. հատ-հատ պատմեցի ամբողջ նախորդ օրս՝ ատրճանակներից մինչև սողացող զեռունը: Եվ այստեղ արդեն լրիվ իմ ճաշակով էր դրամագետ-հյուրս. նա էլ պատովեց, վրաս հեղեղեց ծամծմված ճշմարտություններ ինքնաոչնչացման սրբապղծության մասին, հետո ինչ-որ բան՝ «ցեխից, քնքշությունից ու թախծից հյուսված» հոգիների մասին և «ամոթխած էությանց, որ ուրախ զավեշտի են վերածում իրենց խորունկ պարտասումները», և Գրինբերգի Շերնվալի, և Ամբրոսիյ Օպտիմցու, հրեայի գաղտնաթաքույց պաթոսների, Գոգոլի սեռական գաղտնիքների և Աստված գիտի՝ էլ ինչերի մասին:

Նրբանուրբ սրտով խառնակիչ, սևամաղձոտ, մարդատյաց, բոի, ամբողջովին ջղերից հյուսված, անխառնուրդ՝ նա հասնում էր ծանակումի, հենց խոսքը վերաբերում էր այն ամենին, ինչին վարժվել ենք ակնածել, և ներբողյաններ շռայլում բոլորին, ում ծաղրում էինք,- և այդ ամենը՝ մտածողության կատարյալ համակարգումով ու շարադրման համակարգի կատարյալ բացակայությամբ, չարացած կենտրոնացածությամբ, քնքշությամբ, որ թրմված էր սև մաղձով ու «բնազանցական ցինիզմով»:

Չիմանալով՝ էլ ինչով արտահայտեմ ցնծությունս (հո նորից չէի՞ գոչելու «Այ՛ քեզ ստահակ»), տեղափոխվեցի աթոռին՝ թողնելով, որ

թվայնացրել է 1915.info կայքը

նա փովի օթոցիս: Եվ երեք հազար բառով պատմեցի ամենը, ինչ նա չէր կարող գիտենալ. Դնեպրոհէկի ու Ռիբենտրոպի, Օսվենցիմի և Օսոավիաքիմի, Եկատերինբուրգում՝ արքայազունների կոտորածի, համառող վերանորոգյալների (այստեղ նա խնդրեց՝ ավելի մանրամասն, բայց ավելի մանրամասն չգիտեի), Պավլիկ Մորոզովի ու նրան մորթած կուլակ Դանիլկայի մասին:

Դա ճզմեց նրան. սևակնեց ու ընկճվեց: Եվ ապա միայն խոսեց կրկին. մարդկային ուղիների ձևախեղման մասին, իր մեղքերի՝ մարդու հանդեպ, բայց ոչ Աստծու՝ Եկեղեցում, Գեթսեմանյան քրտինքի ու նախածին մեղքի մասին:

Եվ ես էլ իրեն՝ նախածին մեղքի ու ետմահու արդարացվածների, Պեկինի ու Կիզլյարի արոտավայրերի, Թայմիրի ու Նյուրնբերգի, բոլոր երաշխիքների և բոլոր իմաստների բացակայության մասին:

- Երբ իսրայելցիները գնում էին հարավ՝ իսմայիլցիների մոտ, իրենց ամբողջ ինչքը փոխանակեցին բալասանող խեժով: Իսկ մենք, ի՞նչն ենք մենք փոխելու բալասանող խեժի, երբ գնանք հարավ՝ իսմայիլցիների մոտ: Երդում, երաշխիք, խոստում, գրավ՝ ի՞նչ ենք գտնելու այդ ամենին ի տրիտուր: Ինչո՞վ երդվենք, ո՞ւմ համար երաշխավորենք և ո՞ւր է թեկուզ մեկ գրավ: Ահա. նույնիսկ ծերունազարդ Դավանը, ամենայն ինչում հավատակորույս, երդվում էր իր դուստրերով՝ չիմանալով այլ ինչ գտնել: Իսկ մեկնումեկը մեզնից, թեկուզ ամբողջ Ռուսաստանում, գոնե մի դուստր ունի՞: Եվ եթե ունի, կկարողանա՞նք երդվել մեր դուստրերով:

Դուստրասեր զրուցակիցս խնչեց ու ասաց. «Միանգամա՛յն»:

6. Եվ այստեղ ես սև ու հիմարավուն դարձվածքների մի ամբողջ հեղեղ փսխեցի.

- Ամեն ինչ փոխվել է մեզ մոտ: «Բոլորից» ոչ խոսք է մնացել, ոչ հառաչանք: Զավեշտախաղի բոլոր միմոնները, միստիկները բոլոր, ճղճղանները, աճպարարները, ջղագարները, աստղաբաշխները,- բոլորը շաղ եկան աշխարհով մեկ՝ դեռ մինչև քո մահը: Կամ արդեն մահից հետո: Տանը՝ Ռուսաստանում, մեռան-վերջացան,

թվայնացրել է 1915.info կայքը

կախվեցին-պրծան: Ու երևի՝ փառք Աստծու: Մնացին խելացիները, հասարակները, ազնիվներն ու բանողները: Քաքը չկա՝ հոտն էլ չկա, մնացել են ադամանդներն ու զմրուխտները: Միայն ես եմ բուրում: Ու էլի մի քանի հերձվածողներ,- բուրում են...

Մենք սրընթաց ու հիմար ենք ապրում, նրանք՝ տևական ու խելացի: Մենք դեռ չծնված՝ արդեն սատկում ենք: Իսկ նրանք, սրիկաները, երկարակյաց են ու կլինեն հավետ: Ջհուդը, չգիտես ինչու, հավերժական է: Կոշչեյը, չգիտես ինչու, անմահ է: Նրանց ցանկացած գաղափար անանցողիկ է: Նրանք պիտի աճեն, մենք՝ սակավանանք: Պրոմեթևսը մեզ՝ մակաբույծներիս համար չի գողացել կրակն Օլիմպոսից, կրակը գողացել է նրանց՝ սրիկաների համար...

- Ա՛խ, մի՛ շարունակիր,- ասաց Ռոզանովն ի պատասխան,- վերջ տուր բարբաջանքին...

- Եթե լռեմ ու վերջ տամ բարբաջանքին,- ասացի,- քարերը կխոսեն: Ու կսկսեն բարբաջել: Այո՛,- ես խնչեցի ու շարունակեցի,- նրանք կատարյալ անգիտության մեջ են, «Էդիպի հրեշավոր անգիտությունը», բայց՝ ճիշտ հակառակ: Էդիպն անգիտությամբ մորթեց հորն ու ամուսնացավ մոր հետ. չգիտեր, որ իր հայրն ու մայրն են, չէր անի, եթե իմանար: Իսկ նրանք՝ ոչ, նրանցը էդպես չի: Նրանք ամուսնանում են մայրերի հետ ու մորթում հայրերին առանց գիտենալու, որ դա առնվազն տգեղ է:

Եվ եթե իմանայիր՝ ի՛նչ պինդն են հիմիկվա ռուսները: Ռուսաստանում ոչ ոք չի վախենում խուտուտից. ամբողջ Ռուսաստանում միայն ես եմ քրքջում, երբ խուտուտ են տալիս: Ինքս էլ խուտուտ եմ տվել երեք աղջկա ու մի տասնյակ տղամարդու. ոչ մեկը չարձագանքեց՝ ո՛չ ծամածռությամբ, ո՛չ ծիծաղով: Ձեռքիս կողով խփեցի բոլորի ծնկածալերին. ոչ մի ջլային ռեֆլեքս: Բիբերը լույսին, ճիշտ է, արձագանքում են, բայց՝ թույլ: Ոչ ոք երիկամներում ոչ մի հատիկ քար չունի, ոչ մի սարսուռ՝ անդամներում, ոչ մի նվաղում՝ սրտում, սպիտակուց՝ մեզի մեջ: Իմ սերնդից միայն ինձ չտարան Կարմիր բանակ, այն էլ որովհետև այրուցք ունեի ու երկու պզուկ՝ մեջքիս...

թվայնացրել է 1915.info կայքը

(Հո՛-հո՛,- ասաց զրուցակիցս:- Փառահե՛ղ է) - Եվ ահա ինձ չարչարում է իմ ու նրանց այդ հակադրականությունը: «Ի ծնե ապուշները լալիս են,- ասում էր Դարվինը,- իսկ թերամիտները երբեք արցունք չեն թափում»: Նշանակում է՝ նրանք թերամիտ են, իսկ ես՝ ի ծնե ապուշ:

Ավելի շուտ՝ ո՛չ. մենք տարբերվում ենք, ինչպես ապուշի արցունքն ու թերամիտի ժպիտը, փորլուծն ու փորկապությունը, իմ թեթև խելառությունն ու նրանց խորունկ խփնվածությունը (հարյուր հազար ներողություն): Նրանք ինձ զրկել են ներշնչումից ու արտաշնչումից, տագնապներն են պատել հոգիս բոլոր կողմերից, ես նրանցից ոչինչ չեմ սպասում, ավելի ճիշտ՝ վերստին ո՛չ. նրանցից սպասում եմ հեքիաթային գազանություններ և անասելի բռիություններ. ուր որ է՝ կլինի, արևելքի՞ց կլինի, թե արևմուտքի՞ց, բայց ուր որ է կլինի:

Ու երբ սկսվի, ես կհեռանամ, անհապաղ և առանց երկմտելու կհեռանամ. դրա փորձն ունեմ, թույն ունեմ, փառք Աստծու: Կհեռանամ, որ չտեսնեմ խելահեղությունը մարդոց որդիների...

Այս ամենն ասացի՝ արցունքից խեղդվելով: Եվ ասելով՝ ետ ընկա թիկնակին, թարթեցի աչքերս ու ցնցվեցի: Զրուցակիցս մի րոպեի չափ հետևում էր ինձ, հետո ասաց.

7. - Մի՛ տառապիր, բարեկա՛մս, ինչո՞ւ տառապել: Վերջ տուր ցնցվելուն, դյուրագրգի՛ռս: Ինքդ էլ ամեն օր երեսուն ակամա մեղք ունես, հարյուր երեսուն՝ կամա. դրանց հոգսը հոգա նախևառաջ: Դո՞ւ ես, որ պիտի տրտնջաս աշխարհի մեղքերից ու ծանրաբեռնես քեզ նրանցով. նախ քոնոնցով զբաղվիր: «Մարդոց որդիների խելահեղության» մեջ տեղ կա նաև քո (ինչ անո՛ւշ ասացիր) «խփնվածության» համար: «Աշխարհը հավերժ տագնապահար է ու դրանո՛վ կա»: Եվ նույնիսկ՝ հակառակ դրան: «Մենք հաճախ ստում ենք, որ իրար ավելորդ ցավ չպատճառենք»: Իսկ Նա միշտ ճշմարիտ է: Փա՛ռք քեզ, եթե տեսնես Նրան և ապավինես: Խաչի երկրպագման ուղին, ըստ էության, դեռ նոր է սկսվում: Ահա՛. երկա՛ր ես ապրել, բարեկա՛մս: Մի չնչին ժամանակ: Իսկ Խաչելությունից ընդամենը վաթսուն այդպիսի

թվայնացրել է 1915.info կայքը

փոքրիկ ժամանակ է անցել: Վերջերս էր: «Եվ թո՛ղ վերամբարձությունը քո». ամեն ինչ նոր-նոր է սկսվում:

Թողող ասեն՝ աղոթքի տունը, որ ավազակները որջ են սարքել, վերստին աղոթատուն չես դարձնի: «Սակայն նուրբ գաղափարը կթաղի երկաթե գաղափարները: Կխզվեն երկաթգծերը: Կջարդվեն մեքենաները: Իսկ այն, որ հավերժ բաժանման վախից լալիս է մարդու մեջ, չի խզվի երբեք, չի սակավանա»: «Պետք է թողնել երկաթը,- սարդոստայն է,- ու հավատալ անհրաժեշտ գաղափարին»: «Իսկական երկաթը արտասուքն է, հառաչանքն ու թախիծը: Ազնվականն է ճշմարիտ միայն, որ երբեք չի կործանվի»:

Դեռ էլի խոսեց, բայց ոչ այդքան լավ և այդպես հաճույքով: Եվ անհաստատուն, ինչպես վաղորդյան մուժը, վեր կացավ օթոցից, և ինչպես վաղորդյան մուժը՝ կոհակվեց ու էլի մի քանի լավագույն բառ ասաց,- հառաչանքի, կերատաշտի ու խոզերի մասին,- ու չքացավ, ինչպես վաղորդյան մուժը:

Հրաշալի է ասված՝ «Ամեն ինչ նոր է սկսվում»: Չէ՛, դրա մասին չեմ ասում, իմ մասին չի, ինձ համար ամեն ինչ վաղուց է սկսվել, ո՛չ Վասիլի Ռոզանովից. նա պարզապես իմ մեջ հույս բորբոքեց: Ինձ համար դեռևս տասը տարի առաջ է սկսվել. պատանության տարիներից մեջս լցվածը ճղփում էր իմ ներսում, թերմացքների պես լեփ-լցրել էր փորս ու հոգիս և դուրս էր մղվում. մնում էր դիմել ամենափորձված միջոցին՝ փսխել այդ ամենը երկու մատի օգնությամբ: Մատներից մեկը Նոր Կտակարանը եղավ, մյուսը՝ ռուս պոեզիան, այսինքն՝ ամբողջ ռուսական պոեզիան՝ Գավրիլա Դերժավինից մինչև Մարինան (Մարինան, որ Փորձանքը մեծատառով է գրում):

Թեթևացա: Բայց դրանից հետո էլ երկար ժամանակ դեռ թույլ էի ու գունատ: Ուղեղիս բարձրագույն գործառույթները մարել էին նրանից, որ գործուն ու գրգռված էր միայն մի մասը՝ երկարավուն ուղեղի փսխման կենտրոնը: Կազդուրիչ մի բան էր պետք, և ահա դրամագետն ինձ կազդուրեց՝ այն օրը, երբ թույլ էի ու գունատ չափազանց:

թվայնացրել է 1915.info կայքը

Նա կատարեց գործառույթը բոնիացի ուսանողի, որ գնդակը մխրճել էր էրցհերցոգ Ֆրանց Ֆերդինանդի մեջ: Նրանից առաջ պատճառների կուտակում կար, բայց այդպես էլ պատճառների կուտակում կմնար: Նրանից, ճիշտն ասած, ոչինչ էլ չսկսվեց. ամեն ինչ հանգուցալուծվեց ընդամենը, բայց առանց նրա՝ էրցհերցոգին սպանողի, ճիշտն ասած, ոչինչ էլ չէր սկսվի: Եթե նա ինձ հիմա հարցներ՝ զգո՞ւմ ես ինչպես է փորձ առնում պիղծ հոգիդ, կպատասխանեի.

- Զգում եմ: Փորձառում է,- և կպատասխանեի այլ կերպ, քան երեկ չէ առաջին օրը կպատասխանեի: Առաջ հիմարավուն ու խղճուկ ձայնով էի խոսում, որի մեջ միայն զնգոց էր ու մայուն, մոլորված ոչխարի մայուն՝ մեջընդմիջված կորած դրահմի զնգոցով: Հիմա արդեն որոշ բան գիտեի նոր նմուշի քարոզչության մասին ու պատրաստ էի հետևել դրան, եթե նույնիսկ չխնդրեին: «Անհմուտ» բարեգործել և «բանադրել չնչին առիթով»:

Հրաշալի է ասված. «Մարդի՛կ, ինչո՞ւ չեք հետևում նուրբ գաղափարներին»: Դա հիշեցնում է բրիտանացու հարցը կալիմանտանյան մարդակերների առաջնորդին. «Սը՛ր, ինչո՞ւ եք ուտում ձեր կանանց»: Իմ օթոցին փռված Վասիլի Ռոզանովից լավ քարոզիչ չգիտեմ:

Հա՛, ինչ ասաց հեռանալի՛ս: Հառաչանքի՛ մասին: Խոզերի՛: Հառաչանքը հարուստ է թագավորությունից, հարուստ է Ռոտշիլդից: Հառաչանքը համաշխարհային պատմությունն է, սկիզբը նրա ու հավիտենական կյանք: Մենք սուրբ ենք, իսկ նրանք՝ բարեկիրթ: Հառաչանքին կգա Աստված: Մեզ մոտ կգա: Բայց ասացեք խնդրեմ, մի՞թե Աստված կգա բարեկիրթ մարդու մոտ: Մենք հառաչանք ունենք: Նրանք հառաչանք չունեն:

Եվ այդ ժամանակ հասկացա՝ որտեղ են կերատաշտն ու խոզերը:

8. Իսկ որտե՞ղ են փշեպսակը և մեխերը և տառապանքը: Եվ եթե հարկ լինի, ես կպաշտպանեմ այդ ամենը կարեցածիս չափ: Իսկ եթե ինձ ասեն, թե Ռոզանովը մի քիչ վախկոտ էր առօրեականի ոլորտում, նախևառաջ կասեմ, որ դա փչոց է. չէ՞ որ մեր իմացածից բացի ընդհանրապես ոչինչ չգիտենք: Բայց եթե դա իրոք էլ այդպես է,

թվայնացրել է 1915.info կայքը

կարելի է գլուխն ազատել որևէ խղճուկ բառախաղով, օրինակ, որ վախկոտությունը լավ, դրական բան է ու հիմնվում է իրողությունների խորիմացության, հետևաբար և՝ դրանցից զգուշանալու վրա: Իսկ ցանկացած խիզախություն, ըստ էության, բացասական հատկություն է, որի բնությունը վախկոտության բացակայությունն է: Եվ տխմար է նա, ով հակառակը կպնդի:

Եթե ինձ ասեն՝ պատահել է, նա ստորություն է արել մանրուքներում, երբեմն հակվել է ուրացողության և, սկզբունքների թվացյալ անսասանությամբ հանդերձ, «ձեռնոցների պես համոզմունք է փոխել»՝ վստահեցնելով միևնույն ժամանակ, թե ամեն ուրացումի հետևում է վերածնունդը.- եթե ինձ ասեն, կպատասխանեմ իրենց ոճով՝ այդ ամենը հոչակագիրն է մի մարդու, ով դժգոհում էր սեփական «մանրուքների ֆետիշիզմից» և ում (գուցե միակին՝ Ռուսաստանում) երբեք ոչ մի մանրուք չկուրացրեց:

Այո՛, այդ մարդը երբեք առաքինի չի ձևացել, ինչպես բոլորն էին ձևանում: Իսկ կրակոտ առաքինության համար կարելի է ներել հույլ արատը: Մաքրամոլների դատավճռից խուսափելու համար հարկ է, որ արատը զերծ լինի ցանկացած արտակարգից: Արքայազն Համլետի կարգի զանազան գլուխ հարթուկողների հանդիմանություններից ազատվելու համար Հերթրուդ թագուհին պսակվելուց առաջ պարզապես պիտի հասցնի մաշել ոտնամանները: Փրկիչը փորձառու էր ամեն ինչում, բացի մեղքից: Իսկ մենք չենք կարող փորձել բոլոր մեղքերը՝ դրանց գինն իմանալու և բոլորից խույս տալու համար:

Կարելի է հաղորդակից լինել փոքրիկ ստին, կարելի է փորձվել չնչին անիրավություններում,- թո՛ղ որ,- դա ծաղկախտի դեմ պատվաստման պես է՝ փրկում է ահռելի ստից (բոլոր տխմարները գիտեն՝ ինչ եմ ասում):

Ու եթե կնանիք ինձ ասեն, թե նողկալի տեսք ուներ, քիթը մոտ էր, իսկ մանրիկ աչքերը շարունակ վազվզում էին, ու վատ հոտ էր գալիս բերանից և այլն, և այլն, նրանց այսպես կպատասխանեմ. «Հետո՞ ինչ, որ շարունակ վազվզում էին: Ազնիվ մարդուն հենց

թվայնացրել է 1915.info կայքը

դրանով կարելի է տարբերել. աչքերը վազվզում են, ուրեմն մարդը ամաչկոտ է և ընդունակ չէ մեծ բռիության: Մեծ հանցագործների աչքերն անշարժ են. իմ ծանոթների լավագույն մասինը վազվզում են, Բոնապարտի աչքերը չէին շարժվում: Իսկ Ռոզանովն ասել է՝ եթե հանդիպեր, կկծեր-կպոկեր Բոնապարտի գլուխը: Ի՞նչ հոտ կարող է գալ մի մարդու բերանից, որը, թեկուզ մտովի, կծել-պոկել է Բոնապարտի գլուխը»:

Նա ինքնամփոփ չէր, վայրագ չէր. թող ցնդաբանություններ չմոգոնեն նրանք, ովքեր գիտեն, որ աշխարհում հանաք բան չկա (իսկ նա բոլորից լավ գիտեր),- այդ մարդիկ ուրախ են ու բարի, իսկ նա բոլորից ուրախն ու բարին է: Միայն թեթևամիտներն են վայրագ ու ինքնամփոփ:

Իսկ եթե (ի՞նչ գարշանք է), իսկ եթե խոսեն Ռոզանովի տխրահռչակ «էրոտիկ անառողջությունների» մասին, այստեղ արդեն առարկելու բան էլ չի լինի: Նա, ում հոգում,- պատանությունից մինչ մահ,- վանքն է ամուր կանգնած, ինչո՞ւ երբեմն չզվարճանա հեթանոսական ցուցքերով, եթե դրանք իսկապես ցուցք ու զվարճանք են:

Եվ ինչո՞ւ դեպի սեռական ախտաբանություն էքսկուրսներ չթույլատրել նրանց, ում սրտում Անարատ կույսն է անփոփոխ կեցած: Ոչ մի վնաս՝ ո՛չ Ռոզանովին, ո՛չ էլ Անարատ կույսին:

Ինչ էլ որ ասեն՝ պետք է նրան հուշարձան կանգնեցնել: Երեք հուշարձան պիտի կանգնեցնել՝ հայրենիքում, Պետերբուրգում և Մոսկվայում: Եթե ինձ հիշեցնեն, թե հանգուցյալն ինքն էր պնդում. «Մարդուն մեն-միակ հուշարձան է արժանի՝ հողաթումբն ու խաչը, իսկ կոթողներին շունն է միայն արժանի», կասեմ նրանց՝ հիմարներին, որ եթե իսկապես որևէ բանի պետք են կոթողները, ապա բացառապես՝ որ հիշեցնեն, թե ովքեր են,- իրենցից անկախ կամ կախյալ պատճառներով,- անարդարաբար վրիպել մեր հիշողությունից: Անտոն Չեխովին պետք չէ հուշարձան կանգնեցնել Յալթայում. առանց այդ էլ ամեն շուն գիտի նրան: Իսկ այ Անտոն Դենիկինին՝

թվայնացրել է 1915.info կայքը

Վորոնեժում, պե՛տք է. այնտեղի ամեն շուն նրան մոռացել է, իսկ հարկ է, որ ամեն շուն հիշի:

9. Կարճ ասած՝ այսպե՛ս: Այդ նողկալի, թունոտ ծերուկը, չէ՛, ինձ բարոյական անկարողունակության դեմ բալասան չտվեց, բայց փրկեց պատիվս ու շունչս (ոչ ավելի, ոչ պակաս՝ պատիվս ու շունչս):

Նրա բոլոր երեսունվեց ստեղծագործությունները՝ ամենաչաղերից մինչև ամենապատիկները, խրվեցին հոգուս մեջ ու ցցված են այնտեղ, ինչպես երեք դյուժին նետերը՝ սուրբ Սեբաստիանի փորում:

Եվ ես այդ գիշեր, վրաս սալոպի պես մի բան գցելով ու գրքերը թևատակիս, դուրս եկա տնից: Այդ ուշ ժամին ոչ ոք վրան սալոպ գցում՝ դուրս չի գալիս տնից՝ դեղագործ ընկերների մոտ՝ շովինիստները թևատակին: Իսկ ես գնացի: Բռնեցի ճամփան, որ դեռ լուսավորված չէր ոչնչով, բացի աղոտ համաստեղություններից: Կենդանակերպի նշանները փոփոխվում էին, ու ես հառաչեցի, այնպես խորունկ հառաչեցի, որ քիչ էր մնում ունեցած-չունեցածս դուրս թափվեր: Եվ հառաչելով՝ ասացի.

«Թքած Միկլուխո-Մակլայի վրա, ինչ էլ որ դուրս տված լինի: Մինչև երեսուն տարեկանը, երեսուն տարեկանից հետո՝ ի՞նչ տարբերություն: Ի՞նչ էր, օրինակ, իմ տարիքում արել կայսր Ներոնը: Ոչինչ էլ չէր արել: Հասցրել էր, ճիշտ է, կտրել եղբոր՝ Բրիտանիկի գլուխը, բայց հիմնականն առջևում էր. դեռ չէր բռնաբարել զարմուհիներից ոչ մեկին, դեռ չորս կողմից կրակի չէր տվել Հռոմը ու մայրիկին չէր խեղդել ատլասե բարձով: Ահա և իմն էլ՝ ամեն ինչ առջևում է»:

Հո՛-հո՛, թող որ մենք շան քաք ենք ընդամենը, իսկ նրանք՝ ադամանդներ, թքա՛ծ: Գիտե՛մ ինչ ադամանդներ են: Ու գիտեմ՝ դեռ ինչեր են անելու՝ առավել նողկալի, քան արել են: Խանձի՛ր նրանց կոկորդն ու հոգին, Արարի՛չ, չեն էլ նկատի, որ խանձել ես իրենց կոկորդն ու հոգին, բայց, մեկ է, խանձի՛ր:

Ահա՛, ահա՛: Ահա թե ինչ է հարկավոր նրանց. հրաժարիմքի և անեծքի մի հին բանաձև հիշեցի. «Անիծված լինեք ձեր տանը և ձեր անկողնում, քնի մեջ և ճանապարհին, զրույցի պահին և լռության մեջ:

թվայնացրել է 1915.info կայքը

Թող անիծված լինեն ձեր բոլոր զգայությունները. տեսողությունը, լսողությունը, հոտառությունը, համառությունը և ամբողջ ձեր մարմինը՝ գագաթից գարշապար» («Սքանչելի՛ բանաձև է»):

Անիծված լինեք ձեզ տուն բերող և տնից տանող ճանապարհներին, անտառներում ու լեռների վրա, վահանով և վահանին, մահճակալին և մահճակալի տակ, վարտիքով և անվարտիք: Եղո՛ւկ ձեզ, եթե ցանկացած օրը գարշելի է ձեզ համար: Եթե ցանկացած օր լավ է ձեզ համար՝ եղո՛ւկ ձեզ: (Եթե լավ է՝ չորի՛ցս եղուկ): Ձեր գրագիտությամբ և անգրագիտությամբ, ձեր գիտություններում և բանագիտություններում բոլոր՝ անիծվա՛ծ լինեք: Սիրո մահճում և նիստերի դահլիճում, շուկաներում ու նոտակալների առջև, մահվանից հետո ու հղացվելուց առաջ՝ անիծվա՛ծ լինեք: Եղիցի՛: Ամե՛ն:

Ասենք, եթե համաձայնեք այսպիսի մի պայմանի, թանկագիններիդ մենք սիրով կխնամենք, իսկ դուք կփայփայեք մեզ. եթե պատրաստ եք հալվել իմ բարության ճառագայթներից, ինչպես Յարիլոյի ճառագայթներից հալվեց էդ պառվաբոզ Զյունանուշիկը,- եթե համաձայն եք՝ հանում եմ անեծքը: Ավելի քիչ կմտահոգվեի՝ ինչ կպատահի Երկրին իմ, եթե համաձայնեիք: Բայց մի՞թե ձեզ՝ պոռնկորդիներիդ, հնարավոր է համոզել: Ուրեմն անեծքն ուժի մեջ է: Թող որ դուք զմրուխտ եք, իսկ մենք՝ հակառակը: Կլինեք-կանցնեք, հարկ է ենթադրել, իսկ մենք կկենանք: Զմրուխտները կիջնեն հատակը, իսկ մենք կլողանք՝ չափավոր դատարկ, չափավոր նեխող՝ կլողանք:

Այ հիմա նման էի Պետրոս Անապատակյացի մոտից դուրս եկող դմբո ասպետներին, լեփ-լցված՝ ինչով ասես, լվացված ուղեղներով ու դեմքերով՝ հառած Տիրոջ Գերեզմանին: Փոխփոխվում էին Կենդանակերպի նշանները: Համաստեղությունները պտտվում ու առկայծում էին: Ու ես հարցրի նրանց. «Համաստեղությունն ե՛ր, գոնե հիմա, բարեհա՛ճ եք իմ հանդեպ»: «Բարեհաճ ենք»,- պատասխանեցին համաստեղությունները:

թվայնացրել է 1915.info կայքը

ՋՐՈՒՅՑՆԵՐ

ՎԵՆԵԴԻԿՏ ԵՐՈՖԵԵՎԻ ՀԵՏ

թվայնացրել է 1915.info կայքը

ՄՈՍԿՎԱՅԻՑ ՄԻՆՉԵՎ ՊԵՏՈՒՇԿԻ

Վենեդիկտ Երոֆեևի հետ հանդիպմանը պատրաստվելիս արդեն գիտեի, որ գրողը ծանր հիվանդ է, դժվարությամբ է խոսում, և հայտնի չէ՝ գրույցն ընդհանրապես կստացվի՞, թե՝ ոչ: Դրա համար էլ որոշեցի համենայնդեպս նամակ ուղարկել՝ հարցերը ներկայացնել, այսպես ասած՝ գրավոր տեսքով:

1978 թվականին կարդացել էի նրա «Մոսկվա-Պետուշկի» վիպակը, որը հրապարակվել էր արտասահմանում և ձեռքից ձեռք էր անցնում այստեղ, ու շատ էի ուզում որևէ բան իմանալ հեղինակի մասին: Բայց նույնիսկ գործընկերներից քչերը ստույգ բան գիտեին Երոֆեևի մասին: Այնպես, մայրաքաղաքում լուրեր էին պտտվում...

Ժամանակն անցնում էր, «Մոսկվա-Պետուշկի» վիպակը մեր Հայրենիքի սահմաններից անդին թարգմանվում ու հրատարակվում էր մեկ այս, մեկ այն լեզվով. Վենեդիկտ Երոֆեևի հոչակն այնտեղ անփոփոխ էր: Նրա ստեղծագործության, հիմնականում՝ նույն «Պետուշկիի» մասին հոդվածներ ու ատենախոսություններ էին գրվում: Հետազոտողները համակարծիք էին, որ Երոֆեևը «կրթված, լեզվի առումով օժտված գրող է...»: Եվ ավելացնում էին. «Նրա հետագա ճակատագիրն անհայտ է...»:

Անորսալի Երոֆեևը «դուրս լողաց» երկու տարի առաջ. Կավերինի հետ հանդիպումներից մեկի ժամանակ Վենիամին Ալեքսանդրովիչն ինձ պատմեց «Լուր» ալմանախի ստեղծման գաղափարի մասին, որ հեղինակներից մեկն էլ նա էր եղել: Ալմանախի առաջին համարում, ի թիվս այլևայլ գործերի, որոնք նախկինում մեր երկրում չէին տպագրվել, նախատեսվում էր նաև «Մոսկվա-Պետուշկի» վիպակի հրապարակումը: Այն ժամանակ դա աներևակայելի էր թվում. ինչ-որ նախաձեռնող խումբ, ալմանախ, վերադիր՝ «Պետուշկին», որը ոմանք «հանճարեղ», «անմահ» էին համարում, ոմանք էլ՝ «այլանդակություն»...

թվայնացրել է 1915.info կայքը

1989 թվականի ամռանը «Լուրը», համենայնդեպս, լույս տեսավ: Երոֆեևի վիպակը կարդացին հարյուր հազարավոր սովետական մարդիկ: Այն ոչ մեծ կրճատումներով տպեց նաև «Սթափություն և կուլտուրա» ամսագիրը:

Եվ ահա գրողի հյուրն եմ: Պարզվում է՝ վերջին բոլոր տարիներին նա ապրել է Մոսկվայում: Նախապես գրած հարցերս պետք չեկան, սակայն խոսակցությունը ընդհատուն ու ծանր էր: Շարունակ ներսուդուրս էին անում ինչ-որ մարդիկ: Երոֆեևը հանկարծ պահանջված էր դարձել բոլորի համար՝ և՛ լրագրողների, և՛ հեռուստատեսության աշխատակիցների, և՛ հրատարակիչների՝ մեր ու արտասահմանյան: Դուռն, ըստ էության, չէր փակվում: Երոֆեևն ինքը տառապագին ժպտալով շշնջում էր. «Ասացեք, խնդրեմ, ում է պետք այս ամենը»: Ես, որ արդեն լրիվ գրոտել էի հաստլիկ նոթատետրս, համերաշխ համաձայնեցի. «Պարզապես դուռը փակեք ու մերժեք բոլորին»: Ինձ նայեցին կապույտ, բյուրեղյա, մանկական աչքերը. «Բայց այդ դեպքում ձեզ էլ պիտի մերժեի...»:

Երոֆեևի ամենաջերմ ցանկությունը հիմա՝ «դադարել այսքան ուրբանիզացված լինելուց», կնոջ հետ մեկնել Աբրամցևո, որտեղ ընկերները մինչև գարուն նրանց տուն են տրամադրել, և ապրել ու գրել... Սկսված են ու իրենց ավարտին են սպասում երկու պիես՝ «Ֆաննի Կապլանն» ու «Այլախոհները»: «Մի կույտ գաղափարներ կան երեսունից ավելի նոթատետրերում...»:

– Գզրոցներս լեփ-լեցուն են սևագրերով,– ասում է գրողը,– ավելի ճիշտ՝ նույնիսկ սևագիր չի կարելի համարել, դեռ պարզ չի՝ ինչ կստացվի: «Ֆաննի Կապլանը» համարյա պատրաստ է ու կհրապարակվի «Կոնտինենտ» ամսագրում: Երկրորդը՝ «Այլախոհները», պատրաստվում է բեմադրության ընդունել Մալայա Բրոննայայի թատրոնը: Դա մաքուր կատակերգություն է՝ և՛ ուղիղ, և՛ փոխաբերական իմաստով: Գործողությունները տեղի են ունենում 60-ական թվականներին՝ «զրահահար» շշերի ընդունման կետում (չկան Լեպաժի հրանոթները. կան շշեր): Հերոսներից ոչ ոք ողջ չի մնում, ոչ

թվայնացրել է 1915.info կայքը

մեկը, նույնիսկ սրիկաները: Ինձ արդեն զանգել են, հանդիմանում էին, թե՝ լսի՛, Երոֆե՛և, ինչի՞ ես էդպիսի նյութին էդպես երգիծանքով վերաբերվում: Կամ՝ «Վալպուրգյան գիշերում» էլ բոլորին սպանեցիր, գոնե էստեղ մի քանի լավ մարդու կենդանի թող... Բայց մի՞թե ես եմ սպանել...

«Վալպուրգյան գիշեր կամ Կոմանդորի քայլերը» պիեսը, որը հրապարակվել է «Թատրոն» ամսագրի 1989 թ. ապրիլյան համարում, արդեն ներկայացվել է Մալայա Բրոննայայի բեմում և դրամարկղային զգալի հաջողություն է ունեցել: Չնայած հեղինակն ինքը համարում է, որ այն չափազանց պարզունակացրել են: Սակայն, ինչպես հայտնի է, հեղինակների սրտով գնալն անհնար է: Պիեսը դյուրընկալելի չէ (ասենք, նույնը կարելի է ասել նաև «Մոսկվա–Պետուշկի» վիպակի, «Վասիլի Ռոզանովը էքսցենտրիկի աչքերով» էսսեի մասին) և անսովոր է գործողությունների վայրի ընտրությամբ՝ հոգեբուժարան: Երոֆեևը պնդում է, որ դրամատիկական գործերը ստեղծել է կլասիցիզմի սկզբունքով, միայն թե՝ շատ ծիծաղելի: Չգիտեմ՝ ով ինչպես, բայց ես կարդալիս տառացիորեն տենդում էի: Ասենք՝ եզրափակիչ դարձվածքներն էլ հույս չեն թողնում. «Վարագույրն արդեն իջել է, և, ըստ էության, կարելի է ցրվել: Բայց այնտեղ, վարագույրից այն կողմ, շարունակվում է նույնը և՝ առանց գթասրտության: Ոչ մի ծափահարություն»:

Հիմա շատերն են ասում, թե ոչինչ չեն իմացել՝ երեսունականներին, քառասունականներին, հիսունականներին, յոթանասունականներին,– ոչինչ չե՞ն իմացել: Մեկը հեռու է եղել այդ խնդիրներից, մյուսը բազում սողանցքներ է գտել տհաճ մտքերը վանելու համար: Ո՞վ կույր չէր: Ավագ սերո՞ւնդը: Նրանք, ովքեր անցել էին ճամբարներո՞վ... Ինչպես ավանդաբար վարժվել ենք համարել՝ կույր էր գավառը: Եվ այդ իրավիճակում, երբ շատերը չգիտեին, շատերն էլ՝ համարվում էր, որ «չգիտեին», սարսափելի է թվում, որ խուլ գավառից (եթե կարելի է, իհարկե, Անդրբևեռը գավառ համարել) եկած պատանին, պարզվեց, բացարձակ տեսանող է: Նա չէր երազում «լուսավոր կյանքի» մասին,

թվայնացրել է 1915.info կայքը

բնականոն կյանք էր պահանջում՝ պնդելով, որ ապրել այնպես, ինչպես հիմա ապրում են, չի կարելի այլևս ոչ մի ժամ, ոչ մի րոպե... Հիմա էլ նույնն է պնդում: Նրա քննադատությունը համընդգրկուն է, ինչը կարող է ցնցել անփորձ, անպատրաստ ընթերցողին, որը կսկսի գոռալ, թե զրպարտություն է: Երբ քննադատում ես ամեն ինչ, նույնիսկ ապագա կիսամիջոցները, քեզ կմեղադրեն զրպարտության համար, որովհետև այդպիսի քննադատությունն ապշեցնում և նույնիսկ առժամանակ բարոյալքում է: Վիրավորվում ես գրողից, որ մեր կյանքի ստվերոտ կողմերը մատնացույց անելով՝ չի ասում, թե ինչպես պիտի շտկվի:

Իսկ ինքը՝ Երոֆեևը ինչպե՞ս դարձավ տեսանող...

- Ես էլ չեմ հասկանում: Նաև՝ այնքան էլ շուտ չեմ սկսել հասկանալ, միայն՝ տասներորդ դասարանում: Եվ ավելի՝ Մոսկվայի պետական համալսարան ընդունվելուց հետո:

- 1988 թվականին Լոնդոնում վերահրատարակվեց Ռուս գրականության հանրագիտարանային բառարանը՝ սկսած 1917 թվականից: Դա, երևի թե, միակ տեղեկատուն է, որտեղ խոսվում է Ձեր մասին: Բայց, չնայած նրան, որ հեղինակը՝ Վոլֆգանգ Կազակը, գրում է, որ դա 1976 թ. գերմանական հրատարակության վերամշակված ու ընդլայնված թարգմանությունն է, տեղեկությունները գրող Վենեդիկտ Երոֆեևի մասին, սկսած արդեն ծննդյան օրվանից, մոտավոր են ու գերազանցապես անստույգ: Բառարանի հեղինակը գրում է, որ Երոֆեևի մասին «համարյա անհնար է կենսագրական տեղեկություններ ստանալ»: Ուրեմն եկեք օգնենք գրական բառարանի հաջորդ հրատարակությանը: Մեջբերեմ մի քանի արտահայտություն այդ բառարանից. Երոֆեևն «ըստ երևույթին որոշ ժամանակ սովորել է Մոսկվայի համալսարանի պատմության ֆակուլտետում ու Վլադիմիրի մանկավարժական ինստիտուտում, ըստ լուրերի՝ գիտի լատիներեն, երաժշտություն է սիրում: Մեր ունեցած տվյալներով՝ վաղ է հարբեցող դարձել...»:

- Դե ինչ: Ծնվել եմ 1938 թվի հոկտեմբերի 24-ին: Մինչև դպրոցն ավարտելը ապրել եմ Մուրմանսկի մարզի Կիրովսկ քաղաքում:

թվայնացրել է 1915.info կայքը

Հայրիկիս երկու անգամ նստացրին (նրանց մոտ դա ընդունված էր՝ նստացնելը), նստացրին, թողեցին, նորից նստացրին: Բայց կարևորն այն է, որ 1954 թվականին հորս լրիվ ազատեցին: Նա ինձ այնպիսի բաներ էր պատմում, որ դուք երազում էլ չեք տեսել: Գիտե՞ք ինչ է նշանակում լինել երկաթուղային կայարանի պետ, որը մեկ ռուսներն են գրավում, մեկ գերմանացիները, մեկ ֆինները, հետո նորից ռուսները, ֆինները, գերմանացիները... և այդ ընթացքում հնար գտնել կատարելու պարտականությունները: Իսկ ես՝ հիմարս, երկնքում ֆիննական կամ գերմանական ինքնաթիռներ տեսնելուն պես սկսում էի թաշկինակս թափահարելով պար գալ: Ուղիղ երեքուկես տարեկան էի: Ի վերջո, հորս Հայրենիքի դավաճան հայտարարեցին: Հիմա դա երևի դժվար է հասկանալ...

ՄՊՀ-ի մասին արդեն ասել եմ, միայն ավելացնեմ, որ սովորում էի «ռուսաց լեզու և գրականություն» մասնագիտությամբ: Բայց շուտով ինձ «բացահայտեցին»...

Սովորել եմ նաև Վլադիմիրի մանկավարժական ինստիտուտում, նույնպես գերազանց ու ոչ երկար: Սուսուփուս պահարանիկիս մեջ Աստվածաշունչ էի պահում: Ինձ համար այն գիրքն է, առանց որի անհնար է ապրել: Ես նրանից ստացել եմ ամենը, ինչ մարդկային հոգին կարող է ստանալ, ու չեմ ափսոսում: Իսկ նրանց, ով ծանոթ չի այդ գրքին, չափազանց դժբախտ ու աղքատ եմ համարում: Աստվածաշունչը ես անգիր գիտեմ ու կարող եմ պարծենալ դրանով:

Որոշ ժամանակ անց գիրքը հայտնաբերեցին իմ պահարանիկում, ու այնպիսի՛ պատմություն սկսվեց... Հիշում եմ ինստիտուտի հսկայական ընդհանուր ժողովը, դասախոսների և ուսանողների սարսափը: Այդ սարսափն ինձ անհասկանալի էր...

Իսկ փողոցում մոտեցավ մի սև լիմուզին, ինձ հանեցին ինչ-որ շինության չորրորդ թե հինգերորդ հարկ ու ասացին. «Երկու օր ժամանակ ենք տալիս, որ դուք, Երոֆե՛և, չքվեք մեր մարզից»:

Պետք է ասել, որ այն ժամանակ երիտասարդների մի խումբ էի ղեկավարում, որոնց չգիտեմ ինչու «տերտերներ» էին ասում: Եվ

թվայնացրել է 1915.info կայքը

ահա, ինստիտուտի կոմսոմոլների հետ ճակատ ճակատի էինք տալիս, պատահում էր՝ բանը տուրուդմփոցի էր հասնում:

Վլադիմիրից ինձ հանեցին մոտոցիկլետով ու զգուշացրին. «Զգուշացեք, Երոֆե՛և, ձեր բոլոր ծանոթները տհաճություններ կունենան»:

Ինչ վերաբերում է լատիներենին, երաժշտությանն ու հարբեցողությանը... Լատիներենի հետ միշտ լավ եմ եղել: Վատ գիտեմ, բայց սիրահարված եմ: Եթե ինձ հարցնեին՝ որ լեզվին եմ սիրահարված, հենց լատիներենը կընտրեի: Համարձակվում եմ վստահեցնել, որ ձեր այդ բառարանի հեղինակը բան չի հասկանում ո՛չ երաժշտությունից, ո՛չ էլ հարբեցողությունից: Նրա կառուցիկ համակարգում չի տեղավորվում, որ կարելի է միաժամանակ և՛ խմելուց գլուխ հանել, և՛ բարդ երաժշտություն սիրել, և՛ հետաքրքրվել Նամիբիայի գործերով: Այդ ամենը միավորելը նա երազում էլ չի տեսել:

Իմ մասին հոդվածների հեղինակները բաց են թողնում ամենագլխավորը. ես համարում եմ, որ մարդիկ ընդհանրապես «պատենավորված» չպիտի լինեն:

- Դուք հիմա լրագրողներին շոայլորեն հարցազրույցներ եք տալիս: Ձեր դատողություններից շատերը, նույնիսկ այս ժամանակի համար, անսովոր են, շատերն էլ հարազատ են «Պետուշկիին»: Եվ ոմանք արդեն ասում են՝ դա մաքսիմալիզմ է:

- Ինչ-որ չափով: Եթե ապրում ես այսպիսի մաքսիմալիստական ժամանակներում, ինչո՞ւ մաքսիմալիստ չլինես: Սակայն, երբ էլ ապրես, պետք է ամեն գնով ազնիվ մարդ մնալ:

- Բայց ցանկացած գրող իր ժամանակը, որտեղ ապրել ու ապրում է, կարող է հենց այդպիսին՝ ծայրահեղ համարել...

- Ճիշտ է: Նույն Բլոկին թվում էր, որ իր ժամանակը ծայրահեղ է, վերջին: Բոլոր ժամանակներն էլ ծայրահեղ ու վերջին են, բայց և այնպես, ոչինչ չի ավարտվում: Դրա համար էլ՝ գլխավորը՝ պետք չէ էժանանալ: Ասում են՝ Բլոկի տանը, կյանքի վերջում, ուզել են կարմիրգվարդիականների բնակեցնել: Զինաիդա Գիպպիուսը այդ առիթով խայթել է՝ ափսոս կլինի, եթե չբնակեցնեն, նրա մոտ պետք է լրիվ տասներկուսը

թվայնացրել է 1915.info կայքը

բնակեցնել: Ես շատ եմ սիրում Զինաիդա Գիպպիուսին՝ և՛ որպես բանաստեղծ, և՛ հատկապես որպես անհատականություն: Եթե հարցաթերթիկ լրացնեի՝ «Ռուս կին գրողներից ո՞րն է ձեզ հոգեհարահազատ», երկար դեսուդեն կընկնեի իմ անխելք գլխում ու նրա անունը կտայի:

– Իսկ տղամարդ գրողների՞ց:

– Վասիլի Ռոզանովը: Վերջապես սկսել են հասկանալ և ընդունել: Իսկ նրա մասին խոսել եմ դեռևս այն ժամանակ, երբ անունը հիշատակել անգամ չէր կարելի:

Մեծ ազդեցություն է ունեցել Գոգոլը: Եթե Նիկոլայ Վասիլևիչը չլիներ, ես էլ որպես գրող չէի լինի: Խոստովանելն ամոթ չի: Մի քիչ՝ Մոպասանը. նրա «Ջրի վրա» գործը շատ եմ սիրում: Բայց ընդհանրապես չեմ սիրում Զոլային. տանել չեմ կարող անհոգիությունը, իսկ նրա մեջ անմիջապես տեսա: 20-րդ դարում՝ Կաֆկան, ում շատ բանով եմ պարտական, Ֆոլքները («Առանձնատունը»): Շատ եմ սիրում Նաբոկովին: Երբեք նախանձ չեմ եղել, բայց այստեղ նախանձում եմ, նախանձո՛ւմ եմ... Իսկ ժամանակակիցներից հոգևոր մերձություն եմ զգում հզոր բելոռուս Վասիլ Բիկովի հետ:

– Բայց եկեք վերադառնանք բառարանին: «Ուսանողական տարիներին,– շարունակում եմ մեջբերել,– Երոֆեևը սկսել է գեղարվեստական արձակ գրել, ոչ մի անգամ չի կարողացել տպագրվել ՍՍՀՄ-ում»: Հոդվածում այսպիսի դարձվածքներ էլ կան. «...նրա ստեղծագործություններից մի քանիսը կորած են համարվում»: Կամ «...պատմում են Երոֆեևի այլ ստեղծագործությունների մասին, օրինակ՝ «Շոստակովիչ» վերնագրով վեպի, բայց դրանց տեքստերն անհայտ են»...

– Երբ ինձ դուրս արին ՄՊՀ-ից, արդեն գրում էի՝ զուտ պատանեկան «Հոգեգարի նոթերը»: Համակուրսեցիներս, նրանք, որ կարդացել էին, ասում էին, որ անտանելի բան է, այդպես գրել չի կարելի: «Երոֆե՛և, ուզում ես հոչակվել ինստիտուտով մե՞կ»: Իսկ ես՝ ի պատասխան. «Իմ նպատակները շատ ավելի մեծ են»: Իսկ ձեռագրերս իսկապես կորել են: «Շոստակովիչը» կորցրի էլեկտրագնացքում,

թվայնացրել է 1915.info կայքը

ավելի ճիշտ՝ գողացան ցանցատոպրակս, որտեղ դրանից բացի երկու շիշ վերմուտ կար: Վեպը դարձյալ հարբեցողների մասին էր:

– Գիրքը վերականգնելու ցանկություն չե՞ք ունեցել:

– Եղել է, փորձել եմ: Բայց ստացվեց այն, ինչը, պատկերավոր ասած, ահռելի ռուսական կասրությունից ստացվեց 1918 թվի ամռանը՝ պստլիկ ոչ սևահողային գոտին: Ու ես «փորձս» սուսուփուս գրասեղանիս դարակը դրեցի:

– Երազում ձեր տեքստերը տեսնո՞ւմ եք:

– Էն էլ ո՞նց: Ինչպե՞ս կռահեցիք: Ըստ էության, ամեն գիշեր տեսնում եմ, չեմ չափազանցնում:

– Իսկ ձեր գործերը վերընթերցո՞ւմ եք:

– Երբեմն: Բայց գրածիցս ինձ ամենաշատը դուր է գալիս «Մոսկվա–Պետուշկին»: Կարդում ու երեխայի պես ծիծաղում եմ: Այսօր երևի այդպես գրել չկարողանայի: Այն ժամանակ հեղեղի պես հորդեց: Հինգ շաբաթում գրեցի վիպակը:

– «Վալպուրգիական գիշեր» պիեսն էլ է հարբեցողների մասին ու նույնպես կարճ ժամանակում է գրվել: Դարձյա՞լ հորդեց...

– Այսպես եղավ: Մի անգամ մոտս եկան ծանոթներս՝ մի շիշ սպիրտով: Գլխավորապես նրա համար, որ ասեմ՝ ինչ սպիրտ է: Ասում են՝ «Երոֆե՛և, պարզիր ինչն ինչոց է»: «Պետուշկիից» հետո մեծ մասնագետի համբավ ունեմ: Իսկ մեթիլային սպիրտն ու սովորականը, պետք է ասեմ, համարյա նույն համի են: Դե, մտածում եմ, գնահատում են շներն իրենց կյանքը, ի տարբերություն ինձ: Հոտառությամբ, ասեմ՝ ներքին հոտառությամբ, հասկացա, որ լավ սպիրտ է: Մի բաժակ խմեցի. նայում են, թե ոնց եմ ոտերս տնկելու: Ասում եմ՝ մի հատ էլ լցրեք: Էդ էլ գլորեցի: Ուշադիր նայում են ինձ ու չնայած դողում են անհամբերությունից, բայց, չէ՞, մատով էլ չեն կպնում: Այ էսպիսի ապուշ ռացիոնալիզմ: Այդ ժամանակից սկսեցի դա ատել...

Ու մի անգամ գիշերը, երբ տանջվում էի անքնությունից, մտածեցի դրա մասին, ու ծագեց պիեսի գաղափարը: Մի ամսում գրեցի: Հիմա արդեն թատրոնում գնում է: Միայն թե նրանց ինչին է պետք

Այս գրքի էլեկտրոնային տարբերակը պատրաստել է 1915.info կայքը

թվայնացրել է 1915.info կայքը

եղել հրեական թեման հանելը՝ չգիտեմ: Իսկ այ էս կարգի մի քանի դարձվածք, ասենք՝ «հրեաները շատ են սիրում խմել արաբական ժողովուրդների թիկունքում», թողել են...

– «Թատրոն» ամսագրում, որտեղ տպվել է ձեր պիեսը, փոքրիկ հարցազրույց էլ կա, որտեղ ասվում է. «Լեզվի հարցում ամեն ինչ պարզ է. իմ հակալեզուն հակակյանքից է գալիս»: Վոլֆգանգ Կազակն էլ գրում է, որ «Մոսկվա–Պետուշկի» վիպակի հերոսի մտորումները շարադրվում են «անսովոր, հանդիսավոր լեզվով՝ գրական ալյուզիաների խառնուրդով»: Ի՞նչ կարծիքի եք դրա մասին:

– Ինչ վերաբերում է «Թատրոնին», ապա ես նման բան չեմ ասել: Ինչո՞ւ ինձ վերագրել արտահայտություններ, որոնք ընդհանրապես ինձ հատուկ չեն: Ու հետո, ի՞նչ են մի գլուխ հակալեզու, այլաբանություններ, ալյուզիաներ փնտրում... Մի՞թե հնարավոր չէ մարդավարի արտահայտվել: Ե՞րբ ենք դրանց հիշեցնելու, որ գոյություն ունի պարզապես լավ ռուսերեն: Իսկ ամենագլխավորն այն չէ, որ սխալ է նրանց ոճը, նրանց հաղթականությունն է սխալ...

Վենեդիկտ Երոֆեևի մասին վերջերս հրապարակված հոդվածներից մեկում այսպիսի արտահայտություն կա. նա «Ռուսաստանի մասին խոսել է ճշգրիտ, խոր, մեծ սիրով, բանաստեղծականությամբ, գթասրտությամբ, ինչպես ոչ ոք մերօրյա գրողներից»: Եվ այսօր արդեն նրա ճակատագիրը հայտնի է: Չնայած ինքը մոայլ կատակում է. «1986 թվին «Գերմանական ալիք» ռադիոկայանը հաղորդումներից մեկում տեղեկացրեց, որ «մահացել է ռուս գրող Վենեդիկտ Երոֆեևը»: Այն ժամանակ վերցրի հայելին ու շնչեցի վրան: Իսկապես՝ ոչինչ: Ես մտածեցի ու ասացի. «Եթե ինձ դատապարտեն կախաղանի ու դատավճիռն ի կատար ածեն, մի ժամ անց վեր կկենամ ու կքայլեմ առաջ»: Ինչպես «Պետուշկիի» հերոսն էր ասում. «Ամբողջ աշխարհում... ամբողջ աշխարհում, Մոսկվայից մինչև Պետուշկի, չկա մի բան, որ ինձ համար չափազանց շատ լինի»:

Իրինա Թոսունյան

«Լիտերատուրնայա գազետա», 1990 թ., N 1

թվայնացրել է 1915.info կայքը

«ՄԵՌՆԵՄ ԷԼ ՉԵՄ, ՀԱՍԿԱՆԱ ԱՅԴ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻՆ...»

Վենեդիկտ Երոֆեևի հետ վերջին հարցազրույցներից մեկն է, որի կրճատ տարբերակը գրողի մահվանից քիչ առաջ հրապարակվել է «Մոսկովսկիյե նովոստի»-ում: Եկել է ժամանակը ներկայացնելու ամբողջական հարցազրույցը, առանց որևէ կրճատման, առանց անհարմար զգալու ռուս մեծ գրողի առանձին սուր դատողություններից ու բնութագրումներից:

- Վենեդի՛կտ Վասիլևիչ, ինչով էիք, այսպես ասած, զբաղվում մինչև 1985 թվականը:

- Ինչով եմ զբաղվե՞լ: Ավելի լավ է հարցնեք՝ ինչո՞վ չեմ զբաղվել: Որմնադիր եմ եղել, ծեփագործ, սևագործ բանվոր Չերյոմուշկիի շինարարությունում, երկրաբանահետախուզական արշավախմբում՝ Ուկրաինայում, գրադարանավար՝ Բրյանսկում, Գորկու մարզի Չերժինսկում ցեմենտի պահեստի վարիչ... Ի՞նչ ասես: Ոմանք երազում էլ չեն տեսել:

- 1969 թվականին գրեցիք «Մոսկվա-Պետուշկին»:

- 70-ի հունվարին եմ վերջացրել, բայց դա արդեն նշանակություն չունի, ի՞նչ տարբերություն...

- Եվ այդ ընթացքում ձեզ չնայած չէին տպում, բայց կարդում էին...

- Ոնց թե՝ չէին տպում, երբ գործնականում բոլոր պետություններում... Սկզբում ինձ վրա գրոհեցին ՆԱՏՕ-ի երկրները, մոտավորապես 76-ից 81 թվականներին, հետո հետ քաշվեցին: Ու վրա տվին Վարշավյան պայմանագրի երկրները:

- Բայց Ռուսաստանում... Եկեք խոսենք Ռուսաստանի մասին...

- Նորից Ռուսաստանի, միշտ նրա, խեղճ Ռուսաստանի մասին...

- Մեզ մոտ էլ էին կարդում ու՝ շատերը: Հիշում եմ՝ 80 թվականին ձեր «Պետուշկին» կարդացել եմ ՄՖՏԻ-ի՝ գրականությունից

թվայնացրել է 1915.info կայքը

բավական հեռու մի հաստատության հանրակացարանում: Այդ բոլոր տարիներին զգո՞ւմ էիք ձեր ընթերցողին:

– Չէ, հարցը նույնիսկ դա չի: Շատ գեշ ճաշակի ընթերցողներ կային: Թքած ունեին էության վրա, գլխավորը՝ որ արգելվածության երանգ կար: Այդպիսիք երբեք չեն նայի Ռաֆայելի գործերը, բայց Կուրսկի կայարանի զուգարանի պատերի գրությունները կուսումնասիրեն ամենայն ուշադրությամբ:

– Ներեցեք անհամեստ հարցի համար. ինչո՞վ էիք ապրում: Եվ որտեղի՞ց էիք գրելու ժամանակ գտնում:

– Բայց հո միշտ չէի՞ աշխատում: Իսկ երբ գրում էի՝ շինարարական վագոնի երկրորդ հարկի թարեքին պառկած, մոտենում ու հարցնում էին՝ էդ ի՞նչ ես խզբզում: Ի՞նչ է՝ ուզում ես ինստիտո՞ւտ ընդունվես: Մեկ է, չես ընդունվի, էնտեղ մենակ ծանոթով են ընդունում, էնպես որ, իզուր մի խզբզի, արի գնանք արաղ խմենք: Դրանով լուծվում է ցանկացած խնդիր: Այսինքն՝ փառահեղ բանվոր դասակարգ ունենք: Կամ էլ մի այսպիսի ոչ վատ վրձնահարված...

– Ձեր կենսագրությա՞նը:

– Չէ, վերջին հաշվով թքած իմ կենսագրության վրա: Նկատի ունեմ ռուս ժողովրդին: Այսպես ուրեմն, կանգնած է մալուխ ձգող մեքենան, բայց ինչ-որ խայտառակ կերպով դրա հիմնական մասը՝ հրեշավոր մետաղյա սլաքը, անընդհատ ընկնում է ու՝ վերջ: Թե ինչու է ընկնում՝ ոչ ոք չգիտի, բայց, համենայնդեպս, ընկնում է: Ու մեկնումեկը պիտի, չէ՞, մտնի դրա տակ ու կպցնի մալուխը: Եվ ամենատարօրինակը՝ ոչ ոք չի համարձակվում: Նայում եմ գործընկերներիս՝ ո՛չ մեկը: Բա հանկարծ ու էդ անտերը իսկականից ընկնի՞: Ժամանակ առ ժամանակ, իրոք, ընկնում էր: Ու ոչ թե նրա համար, որ խիզախ մարդ եմ, պարզապես զզվելի էր նրանց նայելը՝ վեր կացա, մտա ուր որ պետք էր, կախեցի էդ մալուխը, ու հենց դուրս եկա հսկա երկաթե սլաքի տակից, անմիջապես ընկավ...

Այսպիսի մի դեպք էլ պատահեց: Մալուխն ընկել էր սառցաջրով խանդակը, ու մտա, որ հանեմ: Իսկ այդ ժամանակ կողքից մի մայրիկ է անցնում՝ երեխայի հետ, մատով ցույց է տալիս ինձ, ով կյանքում

թվայնացրել է 1915.info կայքը

մի չորս անգամ ստացած չկա, ու ասում է՝ տե՛ս, եթե վատ սովորես, հետո էս քեռու նման փոսերով ես սողալու:

– Վենեդի՛կտ Վասիլևիչ, իսկ այդ ի՞նչ պատմություն էր՝ Սորբոնի հետ կապված:

– Հրավիրել էին Փարիզի համալսարանի բանասիրական ֆակուլտետ, միաժամանակ՝ հրավեր էի ստացել Սորբոնի գլխավոր վիրաբույժ-ուռուցքաբանից, հիմա ազգանունը չեմ հիշում, մանավանդ, որ հրավերներն ինձ չվերադարձրին: Իսկ այնքա՜ն գեղեցիկ էին տպված, փարիզյան թղթի վրա և այլն, և այլն... Եվ այստեղ, չգիտես ինչու, սկսեցին հետաքրքրվել իմ աշխատանքային գրքույկով: Ինչների՞ն էր պետք աշխատանքային գրքույկը, երբ մարդուն պետք է բաց թողել որոշակի գործով: Մանավանդ, երբ Սորբոնի գլխավոր վիրաբույժն է կանչում. հո կատակի համար չի՞ կանչում, կարծում եմ՝ կարելի էր հասկանալ: Իսկ նրանք փորփրո՛ւմ էին, փորփրո՛ւմ էին, 1986 թվի մայիս, հունիս, հուլիս, օգոստոս, ու վերջապես հայտարարեցին, որ 63-ին աշխատանքիս մեջ չորս ամսվա ընդհատում է եղել, դրա համար էլ ինձ Ֆրանսիա թողնելու ոչ մի հնար չունեն: Ապշել էի: Խոսքը որևէ տուրիստական ուղևորության մասի՞ն լիներ, բայց պատճառ բռնել քսաներեքամյա վաղեմության աշխատանքային ընդհատումը, երբ մարդը ուռուցքաբանի օգնության կարիք ունի, դա արդեն... Մեռնեմ էլ, չեմ հասկանա այդ անասուններին:

– Ձե՛ք առարկի, եթե խոսենք ռուս մտավորականության մասին:

– Տե՛ր Աստված, ինչի մասի՞ն...

– Դուք ձեզ մտավորական համարո՞ւմ եք:

– (Ծիծաղում է): Տես, է՛, ինչեր կհորինեն... Ես, իհարկե, կպատասխանեմ բոլոր հարցերից ամենանողկալի այդ հարցին, որը... Ու նաև՝ ոչ մի մտավորականություն էլ չեմ տեսնում:

– Իսկ ինչպե՞ս եք վերաբերվում նրան, որ սովետական մտավորականությունը պետք է ժառանգի ռուս մտավորականության լավագույն ավանդույթները:

թվայնացրել է 1915.info կայքը

– Զուտ դատարկաբանություն է: Ի՞նչը ժառանգեն: Սովետական մտավորականությունը ոչնչացրեց ռուս մտավորականությանը ու դեռ հավակնում է ինչ-որ ժառանգությա՞ն...

– Իսկ սովետական գրականություն գոյություն ունի՞: Դուք սովետակա՞ն գրող եք:

– Ուզածդ մարդ կծիծաղեր ի պատասխան: Բայց ես նույնիսկ չեմ ծիծաղի, որովհետև բժիշկներն արգելել են:

– Կարելի՞ է խոսել ռուսական մշակույթի ճգնաժամի մասին:

– Ոչ մի ճգնաժամ էլ չկա, ու նույնիսկ ճգնաժամի կատարյալ բացակայություն է: Այսինքն՝ ընդհանրապես ոչինչ չկա: Լավ կլիներ, եթե գոնե տարրական ճգնաժամ լիներ, թե չէ՝ ընդհանրապես ոչինչ չկա, ո՛չ մշակույթ, ո՛չ ճգնաժամ, բացարձակ ոչինչ:

– Հիմա որևէ հետաքրքիր բան հայտնվո՞ւմ է ժամանակակից գրականության մեջ:

– Հայտնվո՛ւմ է, հայտնվո՛ւմ է: Բայց, իմ կարծիքով, ամենահեռանկարային ուղղությունը նրանք են, որ քաշ են գալիս օբէրիուտների ետևում:

– Դուք այդ ուղղությունն ամենահեռանկարայի՞նն եք համարում:

– Այո, իսկ մնացածը... Մի՞թե Զինգիզ Այթմատովը հեռանկարային է, ծիծաղելի է նույնիսկ խոսել դրա մասին: Ալես Ադամովիչի, Վասիլ Բիկովի հանդեպ ամենայն հարգանքով հանդերձ՝ մեկ է, ամենահեռանկարայինը համարել եմ այն ուղղությունը, որը գալիս է օբէրիուտների հետևից: Կորկիի, Իրտենևի, Դրուկի, Պրիգովի նման բանաստեղծները: Նրանք երբեմն չարաճճի երեխաներ են թվում, բայց բոլորովին էլ չարաճճի երեխաներ չեն, լավ էլ խելոք են՝ բառի լավագույն իմաստով:

– Իսկ արձակո՞ւմ:

– Իսկ արձակում ոչ մեկին չեմ տեսնում: Արձակում ինձ դուր են գալիս Միխայիլ Գասպարովի, Սերգեյ Ավերինցևի տիպի կուլտուրտրեգերները: Իսկ արձակագիրների մեջ ոչ մեկին չեմ գտնում: Իմ կարծիքով, նրանց լավ եմ շոշափել ու առայժմ չեմ գտել ոչ ոքի:

թվայնացրել է 1915.info կայքը

– Վենեդի՛կտ Վասիլևիչ, իսկ ձեր գործերից ի՞նչը դեռ չի տպագրվել:

– Չգիտեմ, որովհետև «Հոգեգարի նոթերը» հազիվ թե համարձակվեն տպել: Դժվար թե գնան դրան, որովհետև այնտեղ այնքան,– անպարկեշտությունների մասին չեմ խոսում,– մեղմ ասած՝ անսպասելի դարձվածքներ կան: Անպարկեշտությանը վարժվել ենք, հերոուստացույցով նայում եմ՝ արդեն բաց քամակներով են ման գալիս, բայց այ բառի անսպասելիության հետ նրանք երբեք չեն հաշտվի:

– Հիշատակեցիք նաև «Դմիտրի Շոստակովիչը»:

– Դա արդեն ընդմիշտ կորած է... Հետո՝ «Ավետիսը», պետք է վերակականգնել: Հետո՝ հոդվածները նորվեգացիների մասին՝ Քնուտ Համսունի, Բյոռնսոնի, ուշ շրջանի Իբսենի, այդ ամենը, ախր, ինչ-որ կերպ պետք է գտնել...

– Իսկ երբևէ բանաստեղծություններ գրե՞լ եք:

– Գրել եմ: Մեկ Մայակովսկու նմանությամբ, մեկ Իգոր Սևերյանինի, երբ տասնվեց-տասնյոթ տարեկան էի: Ու մեկ ստացվում էր, մեկ չէր ստացվում: Հետո որոշեցի, որ պետք է վերջ տալ հիմարություններին:

– Ու «սկսեցիք խոսել շեքսպիրյան յամբերով»...

– Մոտավորապես:

– Իսկ ձեր պոետական նախասիրությունները: Ասում էիք, որ ձեզ ավելի հարազատ է ռուսական Արծաթե դարը, դարի սկիզբը:

– Սկիզբն, իհարկե, ավելի հարազատ է, քան կեսը:

– Իսկ Արծաթե դարո՞ւմ՝ ով:

– Ջահել ժամանակ հերթով սիրահարվում էի բոլորին: Սկզբում Կոնստանտին Բալմոնտին սիրահարվեցի, հետո, երկու ամիս անց՝ Իգոր Սևերյանինին, երեք ամսից՝ Անդրեյ Բելիին, և այսպես շարունակ: Շատ սիրահարվող էի: Ինչպես Օլեգ Կոշևոյի մայրն է ասում. նա պարզապես սիրահարվող է: Իմ մասին էլ կարելի է նույնը ասել:

– Իսկ այդ պատանեկան սիրահարություններից որևէ սեր մնա՞ց:

թվայնացրել է 1915.info կայքը

– Բանն էլ հենց այն է, որ բոլորն էլ մնացել են: Բոլորին երախտապարտ եմ: Թե չէ մարդիկ սովորաբար արագ հաշվեհարդար են տեսնում նրանց հետ, ում պարտական են: Մարդիկ, որ վերցրել են ամենաանհրաժեշտը, ասենք, Աննա Անդրեևնայից կամ Մարինա Իվաննայից, արդեն նրանց մի տեսակ վերևից են նայում, պարզապես թքում են վրաները: Այ դա չեմ հասկանում: Ես, օրինակ, անդարձ սիրում եմ ցանկացածին, ում թեկուզ մի քիչ պարտական եմ: Բալմոնտը լինի, թե Սևերյանինը. գիտեմ, որ նրանք մի քիչ խենթ են, բայց, մեկ է, սիրում եմ:

– Ինչպես եք ռուսական Արծաթե դարի հետ ծանոթացել Կոլայի թերակղզում: Գրքերո՞վ:

– Ի՜նչ գրքեր: Կային, իհարկե, իմ սիրելի Նիկոլայ Օստրովսկու «Ինչպես էր կոփվում պողպատը» գրքի տիպի: Ու էլի ինչ-որ զգվանք կար: Հենց դրանով էլ մեծանում էինք, այսինքն՝ այ այդպիսի վերամբարձ գարշանքով... Կասեի՛ հիմա, բայց ժամանակավրեպ հայհոյանք չեմ սիրում:

– Իսկ որտե՞ղ եք ծանոթացել ձեր սիրեցյալներին:

– Բնականաբար, երբ ընդունվեցի ՄՊՀ առաջին կուրս: Չնայած դեռ ոչինչ չէր հրատարակվել, բայց ուսանողների մեջ,- ուսանողության հիմնական մասն այնքան նողկալի էր, որ նույնիսկ հիշելուց զզվում եմ,- բայց, մեկ է, ինչպես միշտ, ինչպես Ցարսկոսելսկի լիցեյում, կգտնվի յոթ-ութ մարդ, որոնք ինչ-որ բանից ինչ-որ բան հասկանում են: Եվ ահա, բախտս բերեց, նրանց հանդիպեցի:

– Իսկ ում եք դասում ձեր ուսուցիչների թվին:

– Իհարկե, Սալտիկով-Շչեդրինին, Ստեռնին, Գոգոլին, վաղ շրջանի Դոստոևսկուն, և այսպես շարունակ, կարող եմ շատերին թվել: Բայց, վերջիվերջո, նույնիսկ Սևերյանինն ուսուցիչ է, նույնիսկ Աֆանասի Ֆետը ուսուցիչ է:

– Իսկ կյանքում հանդիպե՞լ է մեկը, ում ուսուցիչ եք համարել:

– Հանդիպել է: Իմ դասընկեր Վլադիմիր Մուրավյովը (ներկայումս՝ թարգմանիչ, անգլիական գրականության պատմաբան, գրաքննադատ – Ի.Բ.): Համալսարանում ինձ ասացին. «Երոֆե՛և, այ դու ինչ-որ

թվայնացրել է 1915.info կայքը

ոտանավորներ ես գրում, բանասիրականի առաջին կուրսում էլ մեկն ունենք, որ ոտանավորներ է գրում»: Ասում եմ. «Այ էդ արդեն հետաքրքիր է, հապա ցույց տվեք, ինձ մոտ բերեք այդ մարդուն»: Ու նրան, էդ շանը, բերեցին, ու պարզվեց՝ իսկապես այնքան գերգիտակ է, որ ջահել գլուխս սկզբում պտտվեց: Հետո հաղթահարեցի գլխապտույտն ու սկսեցի լսել նրան: Եվ եթե խոսելու լինենք ոչ գրական ուսուցչի մասին՝ Վլադիմիր Մուրավյովն է: Այդ դաստիարակչությունը տևեց ընդամենը մեկուկես տարի, բայց, մեկ է, այսպես թե այնպես, հետքն անջնջելի է: Հենց դրանից էլ, ինչպես ասում են, ամեն ինչ սկսվեց:

– Վենեդի՛կտ Վասիլևիչ, իսկ դուք աշակերտներ ունե՞ք: Ասում էիք, որ տղաները, որոնք «քարշ են գալիս օբէրիուտների ետևում», ձեզ բանաստեղծությունների ժողովածու են նվիրել՝ «Մենք բոլորս ելել ենք Պետուշկիից» մակագրությամբ...

– Դարձյալ առանց որևէ գոռոզության համարում եմ, որ դա ռուսական պոեզիայի լավագույն ուղղությունն է: Իսկ արձակի մասին խոսելու բան էլ չկա. կործանվել է:

– Համարում եք, որ՝ անդառնալի՞:

– Իմ կարծիքով՝ անդառնալի: Ամեն ինչ, որ կատարվում է Ռուսաստանում, անդառնալի է: Նույնիսկ գերեզմանները չեն գտնի: Մե՞նք է, որ պիտի կատակենք անդառնալիության կապակցությամբ:

– Իսկ եթե խոսենք ոչ միայն «երիտասարդների» արձակի մասի՞ն:

– Մի անգամ խոսում էինք արձակի մասին, ու ինձ հարցրին՝ ի՞նչ չափորոշիչով գնահատել: Ու ես ասացի՝ շատ պարզ չափորոշիչով. ում բաժակը կլցնեի. բացարձակ ճշգրիտ չափորոշիչ է: Աստաֆևին՝ ոչ մի գրամ, Բելովին՝ ոչ մի կաթիլ, Ռասպուտինին, մի կերպ, լա՛վ, հա՛, հարյուր գրամ, Վասիլ Բիկովին՝ լիքը բաժակ, մի մատ էլ ավել, Ալես Ադամովիչին՝ մատից էլ ավել, և այսպես շարունակ:

– Վենեդի՛կտ Վասիլևիչ, Մալայա Բրոննայայի թատրոնում ձեր «Վալպուրգյան գիշեր»-ի պրեմիերան էր: Ձեզ դուր եկա՞վ ներկայացումը:

թվայնացրել է 1915.info կայքը

– Ահավոր վատ էր: Նույնիսկ թատրոնի գլխավոր ադմինիստրատորին գլխանց շարքի աջ ծայրի տոմս էի պատվիրել, որ թողնեմ-գնամ:

– **Բայց, համենայնդեպս, մինչև վերջ նայեցիք:**

– Նայեցի:

– **Ուրեմն այնքան էլ ահավոր չէր, կարելի էր նայել:**

– Ես, գիտե՞ք, ամեն ինչից բացի, նաև մանրախնդիր եմ: Բայց չի կարելի, չէ՞, այդքան կտրել, այդպես մորթել.. Ամբողջ իսրայելյան թեմա՛ն... Երկխոսությունն՝ը...

– **Սանիտարուհի Թ-ամարոչկայի ռեպլիկներն է՞լ:**

– Որ դա հանվել է, դատարկ բան է, չնայած, ըստ էության՝ դատարկ բան չի: Երբ Չորրորդ բաժանմունքում էի, ստիպված էի մի քանի շաբաթ շարունակ լսել այդ դարձվածաբանությունը: Ու ոչ մեկին խորհուրդ չեմ տա լսել: Իսկ երբ ասացի. «Տիկի՛ն, դուք համենայնդեպս կին եք, մի՞թե չեք կարող առանց դրա», նա ասաց. «Իսկ դո՛ւ ով ես»: Դե, ամեն ինչ պարզ է: Իսկ հետո մոտ երկու բոպե ասում էր ինչ ասում էր...

– **Պիեսո՞ւմ:**

– Չէ, ի՞նչ պիես: Լավ է, եթե պիեսում լիներ, հենց Կաշչենկոյի հիվանդանոցի Չորրորդ բաժանմունքում: Պիեսում դեռ լավ է:

– **Վենեդի՛կտ Վասիլևիչ, թույլ տվեք հիմար հարց տամ: Դուք գիտե՞ք՝ «ով է մեղավոր»:**

– Գաղափար չունեմ: Մնում էր նաև հարցնեիր՝ «Ի՞նչ անել»: Կորի-գնա քո հարցերով: Ես այդպիսի հարցեր չեմ սիրում: Եվ ընդհանրապես այդ դարձվածաբանությանը վերջ տալու ժամանակն է: Սկզբի համար պետք է գոնե մի քիչ ուրիշն ընտրել, մեկ էլ տեսար՝ մնացածն էլ ստացվեց:

– **Իսկ ի՞նչ կասեք վերակառուցման մասին:**

– Ես վերակառուցվելու բան չունեմ: Մնում եմ ստատուս քվո և ընդմիշտ կմնամ:

– **Իսկ ընդհանրապե՞ս:**

թվայնացրել է 1915.info կայքը

– Իսկ ընդհանրապես վատ չի: Այ հիմա տվեք ձեր վերջին հարցը: Ես վերջին հարցերը շատ եմ սիրում, ինչքան որ չեմ սիրում առաջին ու երկրորդները:

– Լա՛վ: Այ դուք այսօր բոլորին պետք եք: Երեկ հեռուստատեսությունն էր ձեզ մոտ, հիմա՝ հարևան սենյակում մի աղջիկ է սպասում «Էկրանից»: Այդ «ուշացած ծաղիկները»... Ի՞նչ կասեք:

– Ի՞նչ հարց է, խիստ բանաստեղծական ու անպետք: Չէ՛, «ուշացած ծաղիկներ» չեն, բոլորովի՛ն: Հակառակը, ինձ ոչ թե դրանց ուշացածությունն է կատաղեցնում, այլ դրանց այ էս ուշացած ժրաջանությունը: Ահա թե ինչն է ինձ կատաղեցնում ամենից ավելի:

– Շնորհակալություն:

Իգոր Բոլիչև

«Ակոռ», 1991, մայիս, թիվ 18

թվայնացրել է 1915.info կայքը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄՈՍԿՎԱ–ՊԵՏՈՒՇԿԻ 3

ՎԱՍԻԼԻ ՌՈԶԱՆՈՎԸ ԷՔՍՑԵՆՏՐԻԿԻ ԱԶՔԵՐՈՎ 145

ԶՐՈՒՅՑՆԵՐ ՎԵՆԵԴԻԿՏ ԵՐՈՖԵԵՎԻՀԵՏ 167

թվայնացրել է 1915.info կայքը

ՎԵՆԵԴԻԿՏ ԵՐՈՖԵԵՎ

ՄՈՍԿՎԱ–ՊԵՏՈՒՇԿԻ

ՎԱՍԻԼԻ ՌՈԶԱՆՈՎԸ ԷՔՍՑԵՆՏՐԻԿԻ ԱԶՔԵՐՈՎ

ԶՐՈՒՅՑՆԵՐ

ՎԵՆԵԴԻԿՏ ԵՐՈՖԵԵՎԻ ՀԵՏ

Թարգմանիչ՝ Ներսես Աթաբեկյան

Հրատ. խմբագիր՝ Արքմենիկ Նիկողոսյան
Տեխն. խմբագիր՝ Արարատ Թովմասյան
Համակարգչային էջադրումը՝ Արփինե Գուլոյանի
Շապիկը՝ «Անտարես» մեդիա հոլդինգի

«Անտարես» հրատարակչատուն
ՀՀ, Երևան-0009, Մաշտոցի պ. 50ա/1
Հեռ.՝ (+374 10) 58 10 59
Հեռ. / ֆաքս՝ (+374 10) 58 76 69
antares@antares.am
www.antares.am